ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
7

ԵՐԵՎԱՆ 2006

947.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
A COLLECTION OF SCENTIFIC ARTICLES
СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

7

II
A 91458

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
15

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
15

ԵՐԵՎԱՆ 2006

ՀԱՅԿ. ԴՊՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Հ 282

Ժողովածուն հրատարակության է հանձնարարել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը:

Խմբագրական կոլեգիա՝

պ.գ.դ. Ա. Ա. Մելքոնյան (նախագահ)
պ.գ.դ. Է. Լ. Դանիելյան
պ.գ.թ. Կ. Հ. Խաչատրյան
պ.գ.թ. Ա. Ռ. Խոսրոևա

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ / Գիտական հոդվածների ժողովածու /.- Եր.: Պատմ. ինստ., 2006,- 278 էջ:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» խորագրով գիտական հոդվածների յոթերորդ ժողովածուում զետեղված են աշխատություններ, որոնք աղբյուրագիտական լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց հին, միջնադարյան, նոր և նորագույն պատմության մի շարք հիմնահարցերի վրա:

Ժողովածուն նախատեսված է պատմաբանների և հայագետների համար:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99941-991-3-7 *ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2006թ.*

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտն իր երախտագիտությունն է հայտնում Հայ-Ամերիկյան ընկերակցության կենտրոնի նախագահ, բարերար Օննիկ Մեհրաբյանին և ընկերակցության գործադիր տնօրեն Արսեն արք. Բերբերյանին ժողովածուի տպագրությունը հովանավորելու համար:

Institute of History of NAS RA expresses deep gratitude to the Chairman of the Center of the Armenian-American society Omk Mehrabyan and the executive Director Arsen Arch. Berberyan for sponsoring the publication of the Collection of the articles.

Институт истории НАН РА выражает благодарность председателю Центра Армяно-американского общества Оннику Меграбяну и исполнительному директору Арсену арх. Берберяну за осуществление издания сборника.

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԱՅՈՑ ՀԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՐՑԸ

Ինչպես վկայում են շումերական, աքքադական և խեթական գրավոր աղբյուրները, մ.թ.ա. III-II հազարամյակներում Հայկական լեռնաշխարհում և Միջագետքում կազմավորվել են քաղաք-պետություններ: Այդպես էին Միջագետքում պատմական ասպարեզ մտել Շումերի և ապա Աքքադի թագավորությունները:

Նույն ձևով մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ քառորդում խեթական թագավորությունն է ձևավորվել կենտրոնական Փոքր Ասիայում:

Կարծում ենք այդ գործընթացն արագացել է որոշ երկրներում նաև հարևան ցեղերի հարձակումների հետևանքով: Դա պատճառ է դարձել որպեսզի քաղաք-պետություններն ինքնապաշտպանության նպատակով կամովին միավորվեն ու ստեղծեն պետություն:

Խեթական սեպագիր աղբյուրն են առաջին անգամ մ.թ.ա. XV դ. վերջին վկայում են Ճորոխի ավազանում պատմական ասպարեզ մտած Հայասա պետական կազմավորման մասին, որո աստիճանաբար իր կազմի մեջ է ընդգրկում վերին Եփրատի և Արածանիի ավազանների գավառներն ու նահանգները: Դա, կարծում ենք, տեղի է ունեցել կամովին, քանի որ խիստ կարիք է զգացվել երկիրը պաշտպանել արտաքին թշնամիներից:

Խեթական թագավոր Արնուվանդաս III-ը (մ.թ.ա. XIII դ. վերջին քառորդ) մի դաշնագիր է կնքել Դուկամա քաղաքի (Ազի երկիր՝ Ճորոխի ավազան) առաջնորդ Ասիայի հետ:

Այդ վավերագրում պատմվում է, որ Արնուվանդասը նվաճել է Իսուվա (Արածանիի ստորին ավազան), Պախուվա (Դերսիմից մինչև Բյուրակնի լեռների արևելյան լանջերը ներառյալ), Ծուխմա (նույն լեռների արևելյան և հարավային շրջաններ) և Կումախա (Եփրատի ոլորանից մինչև ակունքներ) երկրները:

Նա պայման է առաջարկում Ասիային, որ եթե այդ երկրներն ապստամբեն Խատի պետության դեմ, ապա վերջինս

պարտավոր է ճնշել նրանց ռազմական ընդվզումները: Խատիի թագավորն ավելացնում է. «[Եթե] ձեր բերանը բաց[վում] և [ձեր] տոհմակիցին, ցեղակիցին [չեք սաստում, ապա կդառնաք թշնամի Խատիի թագավորի համար]»[1]:

Բերված տեքստը վկայում է, որ թվարկված երկրների բնակչությունը Աղի երկրի առաջնորդի ցեղակիցներն են: Ուրեմն Աղին (Ձորոխի ավազան) և դրանք միևնույն էթնոսն են ներկայացրել: Սակայն միևնույն ժամանակ ըստ վավերագրի վկայության Իսուռա, Պախուվա, Կումախա և Ծուիմա երկրների Առաջնորդներն Աղիի տիրակալի տոհմակիցներն են:

Կարծում ենք, որ այդ երկրների ղեկավարները սերված են եղել Աղիի արքայատոհմից: Այսինքն նրանք Հայասա թագավորության արքայազներ են, որոնց նախնիները նշանակվել են ղեկավարներ նշված երկրներում:

Այդպես է եղել նաև Խեթական Հին թագավորության ժամանակաշրջանում /մ.թ.ա. XVI դ./: Դրա վերջին տիրակալ Տելեպինուսը իր մի վարերագրում պատմում է Խեթական Հին թագավորության ժամանակաշրջանում տիրած յոթ թագավորների և նրանց կատարած գործերի մասին սկսած Լաբարնասից մինչև իր ժամանակը:[2]

Խեթական պետությունը ստեղծվել է Լաբարնասի կողմից, որի անունը դարձել է տիտղոս նրան հաջորդող բոլոր տիրակալների համար: Լաբարնասի մասին նշված փաստաթղթում գրված է, որ նրա որդիները, եղբայրները, տոհմը, ցեղը և բանակը միասնական էին: Դրա պատժառով էլ նա հաջող նվաճումներ է կատարել և Խատիի համար ծովերն է դարձրել սահման (նկատի ունի Սև և Միջերկրական ծովերը): Լաբարնասի որդիներն էին ղեկավարում Խուպիսնա, Տուվանուվա, Նենասա, Լանդա, Ծալարա, Պարսուխանդա, Լուսնա և այլ երկրներում:[3]

Պարզ է դառնում, որ Լաբարնասն իր որդիներին է հանձնել նշված նահանգները:

Այս բոլորը հուշում է, որ Հայասայի առաջին տիրակալ Մարիան նույնպես, որի անունը դարձել է տիտղոս նրան հա-

---

[1] Keilschrifturkunden aus Boghazköi (=KUB), Berlin, 1920-1986, I-XXX, XXIII, 1, II, 36-41.

[2] Keilschrifttexte aus Bogazköi (=KBO), Leipzig, 1921-1980, I-XX, III, 1, 1, 142 + II, 1-41.

[3] KBO III, 1, 1, 1-10.

ջորդող բոլոր թագավորների համար[4], իր որդիներին նշանակել է նախարար Խուվա, Պախուվա, Ծուխմա, Կումախա /բարձր/ նահանգներում, որպեսզի իր թագավորությունը միասնական և ուժեղ դարձնի:

Բնական է, որ այդ նախարարների ժառանգները հաջորդականությամբ պետք է իշխելիս լինեին նշված վարչական միավորներում: Ժամանակի ընթացքում նրանցից ամեն մեկն իր որդիներին պետք է դարձներ գավառապետեր: Դրա մասին վկայում են մ.թ.ա. XIII դարի ասուրական արձանագրությունները:

Հայասա թագավորությունը Խատիի տիրակալ Թուդխալիյաս IV-ի ժամանակ /մ.թ.ա. 1234-1211թթ./ ընդգրկում էր Հայկական Տավրոս լեռների, Եփրատ գետի և Սև ծովի միջև ընկած տարածքները :

Նրան ժամանակակից Ասորեստանի արքա Թուքուլթի-Նինուրտա I-ը մ.թ.ա. 1233 թ. ձեռնարկում է արշավանք դեպի Հայկական լեռնաշխարհ: Այդ առիթով նա իր վավերագրերում նշում է, որ Նաիրի 43 թագավորներ իրենց միասնական զորքով դուրս են եկել իր դեմ[5]: Վերջինիս հիշատակած Նաիրի երկրները ըստ նրա սեպագիր արձանագրությունների ընձեռած տվյալները նույնպես գտնվել են Հայկական Տավրոսի, Եփրատ գետի և Սև ծովի միջև: Դա հաստատում է, որ խեթա-կան սեպագիր աղբյուրներում հիշատակված Հայասա երկիրը Թուքուլթի-Նինուրտա I-ը վկայում է Նաիրի անունով: Վերջինս ասուրերեն բառ է և նշանակում է «լեռնային երկիր» : Կարծում ենք, որ նշված տարածաշրջանի Խուվա, Պախուվա, Կումախա, Ծուխմա և Ազի երկրների առաջնորդները իրենց որդիներին դարձրել են գավառապետեր: Եվ դրանց բոլորին, որոնք սերված էին Հայասայի արքայատոհմից, Ասորեստանի տիրակալը համարում է թագավորներ:

Որոշ մասնագետներ, նկատի ունենալով, որ Նաիրին աշխարհագրական անուն է, կարծում են, թե այն չի կարող փոխարինել Հայասային: Այդ դեպքում ինչպես է լինում, որ աս-

---

[4] Хачатрян В.Н., Мария-титул хайасских царей, Древний восток, N 5, Е., 1988, с. 57-62.

[5] Дьяконов И.М., Ассиро-вавилонские источники по истории Урарту (АВИИУ), Вестник древней истории, Москва, 1951, N 2,3,4, текст N 6.

[6] Хачатрян В. Н., Хайаса и Наири, ԼՀԳ., Ե., 1973, N11, էջ 37-47:

սուրական թագավորները հետագայում այդ Նաիրի տերմինով կոչել են նաև Ուրարտուն, վերին Տիգրիսի արևմտյան ավազանի Բիթ-Զամանի (Դիյարբեքիրի շրջան), Խուրուշկիա (Վանա լճի հարավ-արևմտյան ավազան) երկրները: Բիչ չեն փաստերը, երբ աշխարհագրական անունը փոխարինում է էթնիկ տերմինին և հակառակը:

Ինչ վերաբերում է Նաիրիի տվյալ դեպքում հոգնակի թվով կիրառությանը, ապա այն հիշեցնում է խեթական տեքստերում հաճախակի հանդիպող Խատի թագավորության անունը, որը շատ դեպքերում հանդես է գալիս հոգնակի ձևով: Դա ցույց է տալիս, թե նրա կազմի մեջ մտել են մի շարք նահանգներ ու գավառներ:

Վերը նշված մեր տեսակետն այն մասին, թե Թուքուլթի-Նինուրտա 1-ի հիշատակած Նաիրի երկրների 43 թագավորները ներկայացնում են Հայասայի տիրակալին և նրա տոհմից սերված նահանգապետերին ու գավառապետերին, հաստատվում է նաև Մովսես Խորենացուն հասած տվյալներով: Վերջինիս հաղորդումների համաձայն հայոց առաջնորդ Հայկ նահապետի ախոյանը Ասորեստանի տիրակալ Ներբովթն էր՝ Բելը: Նա առաջինն էր իր նախորդների մեջ, որը մուտք է գործել արշավանքով հայկական լեռնաշխարհի խորքերը: Ասսուրական արձանագրությունների տեղեկությունների համաձայն Թուքուլթի-Նինուրտա 1-ն է եղել առաջին մուտք գործողը Արածանի դետի ավազան: Նրա անունը ասսուր. նշանակում է «հզոր Նինուրտա», որը և հայ պատմիչի աշխատության մեջ ներկայացված է Ներբովթ ձևով:

Մովսես Խորենացին Ներբովթի դեմ կռվի մասին գրում է, որ Հայկը հավաքում է իր որդիներին, թոռներին, քաջ աղեղնավորների և դիմավորում Ներբովթի բանակին երկրից դուրս գալու ճանապարհին՝ Վանա լճի արևմտյան ափին[7]: Դա իր հերթին հաստատում է մեր տեսակետը, որի համաձայն Նաիրի 43 թագավորները Հայկազունյաց տոհմից սերված այդ ժամանակի նահանգապետեր և գավառապետեր են եղել:

Հայոց արքայազններին նահանգներ ու գավառներ բաժանելու գործընթացը շարունակվել է նաև հետագա դարերի ընթացքում:

Մովսես Խորենացու հաղորդումների համաձայն Արմենակը իր եղբայր Մանավազին հանձնում է Հարքգավառը

---

[7] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I, ԺԱ:

(Արածանի գետի միջին ավազան), իսկ որդի Բազին տալիս է Բզնունիքը (Վանա լճի հյուսիսարևմտյան ափին առընթեր): Խոռին բաժին է ընկնում նույն լճից հյուսիս ընկած Խորխոռունիքը[8]:

Արմենակը նախարարներ չի կարգում ոչ Ծովքում, ոչ Բարձր Հայքում, ոչ Տայքում և ոչ էլ մնացած գավառներում, որտեղ արդեն վաղուց տիրում էին հայոց արքայազններ: Նա լրացման կարգով է իր եղբորը և որդիներին հանձնում նշված գավառները ավարտելով Հայաստանի արևմտյան շրջաններում վաղուց սկսված այդ գործընթացը:

Ինչպես գրում է Մովսես Խորենացին, Արմենակն այնուհետև իր տոհմով տեղափոխվում է Հայաստանի արևելյան տարածաշրջանը, բնակություն հաստատում Արադածոտն գավառում: Դա մեր թվագրմամբ տեղի է ունեցել մ.թ.ա. 1085 թ.: Նրա որդի Արամայիսը կառուցում է Արմավիրը և դարձնում մայրաքաղաք: Վերջինս իր որդի Շարային հանձնում է Շիբակը: Արամայիսիից հետո Արմավիրում իշխում է Ամասիան, որն իր որդիներ Ցոլակին և Փառոխին հանձնում է Մասիսի հյուսիս-արևելյան փեշերի Փառախոտ և Ցոլակերտ բնակավայրերը: Նրա հաջորդը՝ Գեղամը, իր որդի Հարմային թողնելով Արմավիրում, գնում է Սևանա լճի ավազան, դառնում այնտեղ նախարար և գավառը կոչում է Դեղարքունիք[9]:

Եթե նշված գավառների բնակչությունը հայ չլիներ, խաղաղ ճանապարհով հնարավոր չէր լինի, որ հայ թագավորներն այդ տեղերում նախարարներ նշանակեին: Դա հաստատվում է նաև նրանով, որ Մովսես Խորենացու այդ առիթով հիշատակած Հայաստանի արևելյան հատվածի տեղանունները պարունակում են հայերենի արմատներ ու ածանցներ[10]:

Հայ պատմիչը գրում է, որ նշված գավառներն ու նահանգները կոչվել են այդ տեղերում նշանակված արքայազնների անուններով[11]:

Սակայն մեկ այլ առիթով նա նշում է, թե հայոց Վաղարշակ թագավորը, գտնելով Հայկի զարմից մարդիկ, նրանց

---

[8] Նույն տեղում, ԺԲ:
[9] Նույն տեղում:
[10] Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Ե., 1998, էջ 102-105:
[11] Մովսես Խորենացի, Նշվ. աշխ., I, ԺԲ:

համար ստեղծում է նախարարություններ, որոնց կոչում է այդ դավառների անուններով[12]:

Մովսես Խորենացու վկայությամբ Գեղամը իր որդի Ակսակին հանձնում է Սիսական նահանգը մինչև Երասխ գետը: Գեղամի թոռ Գառնիկը ժառանգում է Գառնին, որի սերունդներից մեկը՝ Վարուժը, ստանում է Վարաժնունիքը: Վազարշակի օրոք Շարայի սերունդներից Գուշարը նախարար է դառնում Գուգարքում, իսկ Սիսակից սերված Առանը՝ Արցախում:

Այս վկայությունները ցույց են տալիս, որ նախարարական տների ստեղծման գործընթացը երկար է տևել: Կարծում ենք, որ բոլոր արքայազններն են դարձել նախարարներ: Դա տեղի է ունեցել հնարավորության սահմաններում լավագույնների ընտրությամբ:

Այժմ անդրադառնանք մեկ այլ կարևոր հարցի քննությանը: Հին Հայաստանի նահանգներն ու գավառները նախքան հայոց պետականության հանդես գալն անշուշտ ունեցել են իրենց տեղական իշխանները, որոնցով դրանք կառավարվել և պաշտպանվել են:

Կարելի է կարծել, որ այդ վարչական միավորներն արտաքին թշնամուց ավելի հուսալի կերպով պաշտպանվելու նպատակով կամովին են ընդունել հայոց արքայատոհմի ներկայացուցիչներին որպես իրենց նախարարներ:

Սակայն ինչպես են դա հանդուրժել տեղի իշխանները: Չէ որ դա բերում էր նրանց իրավունքների որոշակի սահմանափակումների:

Այդ հարցի պատասխանը մեզ տալիս են V դ. ավանդված հայոց «Գահնամակ» և «Զորանամակ» փաստաթղթերը[13]:

Դրանցից առաջինը՝ «Գահնամակը», իրենից ներկայացնում է հայոց նախարարներ և նրանց նահանգների ու գավառների անունները: Օրինակ՝ Սյունյաց տեր, Արծրունյաց տեր, Ծոփաց տեր, Ռշտունյաց տեր, Կասպեից տեր և այլն: Նկատի ունենալով, որ Գահնամակ անունը (դրանք պարսկական արքունիքից սերված փաստաթղթեր են) նշանակում է «գահերի ցուցակ», պետք է եզրակացնել, թե դրանց տերերը՝ նախարար-

---

[12] Նույն տեղում, II, Ը:

[13] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987, էջ 280-283:

ները, սերված են հայոց արքայական տոհմից: Այդ պատճառով էլ նրանց պաշտոնը թագավորական է համարվել:

Նման մի ցուցակ մենք հանդիպում ենք խեթական սեպագիր աղբյուրներում, որի հեղինակը Տելիպինոս թագավորն է: Այդ վավերագրում թվարկված են Խատուսաս մայրաքաղաքի խեթական Հին թագավորության ժամանակ տիրած յոթ թագավորների և քսանվեց արքայազնների անուններ: Վերջին տեքստն ավարտվում է «ընդամենը 44 թագավոր» արտահայտությամբ[14]: Տելիպինուսը, ինչպես երևում է տեքստից, նրանց բոլորի հիշատակին զոհեր է մատուցել:

Ստացվում է, որ խեթերը Խատի պետության բոլոր նահանգներում ու գավառներում իշխող արքայազններին թագավոր են կոչել:

Զորանամակում նունպես թվարկված են Հայաստանի նույն նահանգներն ու գավառները, սակայն տեր բառը այնտեղ փոխարինված է իշխան տերմինով: Օրինակ՝ Սյունյաց իշխան, Տոփաց իշխան, Ռշտունյաց իշխան, Վանանդացի իշխան, Գնունյաց իշխան և այլն:

Նշված է նաև ամեն մի իշխանի կողմից դուրս բերվելիք զինվորների քանակը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Գահնամակում» և «Զորանամակում» քիչ շեղումներով թվարկված են Հայաստանի նահանգներն ու գավառները, կարելի է եզրակացնել, թե հայոց թագավորները նախարարներ նշանակելիս տեղերում թողել են իշխանական տներին՝ նրանց հատկացնելով միայն ռազմական գործը: Բնական է, որ վերջիններս պետք է ազատվեին հարկ ու տուրքից, ունենային իրենց կալվածքները, որոնց եկամուտներով պետք է կարողանային զորախմբեր պահել ու վարժեցնել հարկ եղած դեպքում արքունի բանակին միանալու համար: Իսկ նախարարները պետք է ստանձնեին ներքին գործերը, սահմանեին կարգ ու կանոն, զբաղվեին հարկ ու տուրքի գործերով և այլն:

Այսպիսով, Հին Հայաստանում պետականություն ստեղծվելուց սկսված՝ ավելի քան երկու հազար տարի շարունակ հայոց արքայատոհմը լեռնաշխարհի հայաբնակ նահանգներն ու գավառները բաժանել է արքայազններին որպես նախարարություններ: Դա կատարվել է պետության միասնականությունը ապահովելու նպատակով:

---

[14] КИВ, XI, 4,7,8,9,10,11.

VALERI KHACHATRYAN

Institute of History, NAS RA

THE PROBLEM OF THE STRUCTURE OF THE ANCIENT ARMENIAN STATEHOOD

Summary

The 3rd and 2nd millennia of the history of the countries of Western Asia were marked by the formation and development of the state systems in the Armenian Highland and Mesopotamia. This process was accelerated by the necessity of protection from the attacks of the neighbouring tribes. Therefore, it resulted in centralization of the political and economic power around the cities and towns which activated the emergence of the statehood.

The process of formation of the Armenian statehood is attested by the archeological data, the Hittite and Assyrian and other cuneiform inscriptions and early medieval Armenian sources, particularly, "The History of Armenia" by Movses Khorenatsi.

According to the Hittite sources, the Armenian state formation, the Kingdom of *Haiasa* (the end of the 15th -13th centuries BC) included the territory of the basin of the Tchorokh River (reaching the shores of the Black Sea), the Upper Euphrates and the valley of Aratsani (the Eastern Euphrates). Later the Assyrian sources mention the country-name of Haiasa in the form of the country-name of Nairi.

The Armenian royal dynasty during centuries distributed the regions of the Armenian Highland among the progenies of the royal family forming princely houses. Movses Khorenatsi preserved the Armenian toponymics which testify that Armenians had been the natives of different regions of the Highland and they had their Armenian local princes. Therefore, in the course of time they accepted peacefully the rule of the representatives of the royal family, which resulted in the formation of the nakharar (princely)

system. The names of the Haikid generations mentioned by Movses Khorenatsi are identified with the names of the nakharar families.

According to the opinion of the article's author, all royal princes became nakharar-princes. It occured through the election of the best ones and it is attested by the cuneiform sources of the period of the Kingdom of Haiasa. Its royal princes were appointed in different regions of the Kingdom where their ancestors ruled since ancient times. Thus the whole structure of the ancient Armenian statehood system was based on the aboriginal kinship. This fact is reflected in "The History of Armenia" by Movses Khorenatsi.

The author of the article supposes that the administrative units which had been ruled by the local Armenian rulers accepted voluntarily the rule of the representatives of the Armenian royal family in order to protect more safely their land. This policy was aimed at the guaranteeing of the Armenian state's unity.

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԵՊՀ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

ԺԴ դարի առաջին կեսին հայոց կաթողիկոսության հետ աղերսվող կարևորագույն հիմնախնդիրներից մեկը դավանաբանական կազմակերպման հարցն էր: Բանն այն էր, որ Կիլիկյան Հայաստանի պետական համակարգի մեջ ներառված կաթողիկոսությունը ի վիճակի չէր պահպանել նախորդ շրջանում յուրացրած իրավունքները, ուստի ստիպված էր հարմարվել պատմականորեն ձևավորված նոր ժամանակին ու միջավայրին: Հիմնախնդրի բարդությունը ամբողջության մեջ պատկերացնելու նկատառումով ավելացնենք նաև, որ նախորդ շրջանում ևս Հայոց կաթողիկոսությունը չկարողացավ վերջնականորեն ճշգրտել հոգևոր իշխանության կազմակերպման կանոնական-դավանաբանական սահմանները: Պատմական նոր ժամանակաշրջանում և միջավայրում ձևավորված Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ իշխանության և Հայոց կաթողիկոսության փոխհարաբերությունների հիմքում չգրվեց միայն ձևավորված եկեղեցաքաղաքական ավանդույթը, այլև յուրացվեցին նոր հատկանիշներ, որոնք փոխեցին դրանց բնույթը և բովանդակությունը:

Եկեղեցու ներսում ձևավորված թեմական կառույցի վերափոխումներից անկախ, Սսի կաթողիկոսությունը շարունակում էր ներկայանալ որպես համահայկական եկեղեցական կենտրոն, ուստի աշխատում էր պահպանել նրան բնորոշ հատկանիշները:

Կաթողիկոսության դավանաբանական կազմակերպումը բավական բարդ ու բազմաշերտ կառույց էր, քանզի հանգրվանում էր տարաբնույթ հատկանիշների վրա: Սովորաբար տեղագրական-դավանաբանական կազմակերպումը միշտ ներկայանում էր միասնության մեջ, այլ խոսքով կաթողիկոսության կանոնական գերակայությունը դրսևորվում էր տարածքային կառույցների միջոցով: Խնդրո առարկա ժամանակաշրջանում այս սկզբունքը միշտ չէ որ միասնության մեջ գտնում էր իր համապատասխանության ձևերը, քանզի եկեղեցական առանձին կենտրոններ աշխատում էին դառնալ անկախ և ձևավորել

սեփական տեղադրական կառույցները: Սրանց հիմնական խնդիրն էր ձևավորել հարաբերականորեն անկախ գաղափարախոսություն, այսինքն այնպիսի համակարգ, որ գործուն ազդեցություն ունենար տվյալ կենտրոնի հոգևոր-քաղաքական կյանքի վրա: Փաստորեն ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, երբ պայքար էր գնում համահայկական եկեղեցական նոր կենտրոն ձևավորելու համար, որի խնդիրը պետք է լիներ կենտրոնի և մյուս թեմերի միջև բաժանել նույնատիպ դավանաբանական-մշակու-թային կողմնորոշում, որպեսզի բոլորը հավասարազոր փոխներգործեին կենտրոնի վրա: Ձևավորվող կենտրոնի մյուս կարևոր խնդիրն էր ապահովել դավանաբանական փոխկախվածությունը տարահարթ քաղաքական միջավայրում գտնվող եկեղեցական համակարգերի միջև:

Հասկանալի է, որ նվիրապետական կառույցը պետք է ունենար կենտրոն, որը պարտադիր չէ, որ աշխարհագրական դրսևորում ունենար, այլ արժեքների, խորհրդանիշների ու պատկերացումների հետ առնչվող երևույթ էր, և համակարգում էր հոգևոր միջավայրը ներկայացնող խնդիրները:

Սույն հոդվածի շրջանակներում կփորձենք պարզաբանել Հայոց կաթողիկոսության դավանաբանական կազմակերպման մի շարք հատկանիշներ, մասնավորապես ավանդույթի, ժողովների և թուղթ-նամակների նշանակությունը:

Հայոց եկեղեցական ավանդույթը իր արմատներով գնում էր պատմության խորքերը, և ընդգրկում էր այն ամենը ինչը ձևավորել էր նրա հիմնական հատկանիշները: Եկեղեցական ավանդույթի մի մասը դարձել էր հասարակական-քաղաքական գիտակցության անբաժան մասը, ուստի հոգևոր գործունեության ընթացքում անընդհատ ենթարկվում էր փոփոխությունների, սակայն միշտ հանդես էր գալիս որպես համախմբող համակարգ ու ձևավորում սեփական միջավայրը: Եթե ավանդույթը աշխատում էր յուրացնել նոր միջավայր, սակայն այնտեղ չէր կարողանում հանգրվան գտնել, ապա կորցնում էր որոշ հատկանիշներ և փորձում էր յուրացնել նորերը:

Կաթողիկոսության դավանաբանական կազմակերպման հիմքում նախ և առաջ դրված էր առաքելական ժառանգության ավանդույթ-սկզբունքը, որը նրա իշխանությանը տալիս էր կանոնական-դավանաբանական գերագահություն և առանձնակի հեղինակություն: Եթե առաքյալները եկեղեցին հանձնել էին եպիսկոպոսներին, ապա վերջիններս յուրացրել էին նաև նրա կանոնական կազմակերպման իրավունքները:

նման իրավասություններ յուրացրել էր նաև Հայոց կաթողիկոսությունը, որի ղրսևորման ձևերից մեկը եկեղեցական ժողովն էր, որն ուներ բավական հին ավանդույթ, և հանգրվանում էր տիեզերական և հայոց եկեղեցու շրջանակներում մշակած կանոնների վրա:

Հայոց եկեղեցին յուրացրել էր ժողովներին յուրահատուկ երկու կարևորագույն հատկանիշներ. ա) նրանց հրավիրումը, սովորաբար, նախաձեռնում էր աշխարհիկ իշխանությունը, բ) որի ներկայացուցիչները ևս ակտիվ մասնակցում էին այդ ժողովներին[15]: Փաստորեն դավանաբանական բնույթի ժողովը բաղկացած էր երկու փոխկապակցված միջավայրերից՝ հոգևոր և աշխարհիկ: Սա նախ և առաջ բխում էր այն հանգամանքից, որ եկեղեցին պետական համակարգի անբաժան մասն էր, ուստի աշխարհականները ևս ակտիվ մասնակցում էին նրա կառավարմանը: Ոչ պակաս նշանակալից գեր էր խաղում նաև այն, որ դավանաբանական բնույթի ժողովների որոշումները վերաբերում էին հավատացյալների ողջ հանրությանը, ուստի աշխարհիկ իշխանությունը իր վրա էր վերցնում հասարակական ներկայացուցչության ապահովումը: Այս դեպքում կաթողիկոսության դավանաբանական կազմակերպումը հանգրվանում էր այն սկզբունքի վրա, որ հոգևոր իշխանության ենթակայության շրջանակներում էր մնում դավանաբանական խնդիրների մշակման իրավունքը: Մյուս կարևոր հանգամանքը, անկախ նրանից, որ որոշումները իրավական էին համարվում այն դեպքում, երբ ժողովին մասնակցել էին և՝ հոգևորականներ, և՝ աշխարհականներ այն էր, որ քվեարկության իրավունքը հիմնականում վերապահվում էր հոգևորականությանը[16]:

Քրիստոնեության շրջանակներում մշակվել էր այն սկզբունքը, որ Աստված հասարակությանը պարգևել է քահանայություն և թագավորություն, որոնցից առաջինը պետք է տնօրիներ հոգևոր, իսկ երկրորդը՝ նյութական կյանքը: Այստեղ էականն այն է, որ երկուսն էլ հանգրվանում էին միևնույն սկզբունքի վրա, ուստի աշխարհիկ իշխանությունը պարտավոր

---

[15] Գալանոս Կղ., Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ, հ. I, Հռոմ, 1650, էջ 459:

[16] Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, Հավաքական տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Գալստյանի, Ե., 1958, էջ 30:

էր հոգ տանել հոգևորականության բարոյության, հավատքի մաքրության և անխախտության մասին, փոխարենը հոգևորականությունը նրանց հոգիների փրկության համար պետք է Աստծուն աղոթեր: Այս հիմքի վրա էլ մշակվել էր երկու իշխանությունների համաձայնության և համամտության գաղափարախոսությունը: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ աշխարհիկ իշխանությունը ինքն էր պարտավորվում հանուն սեփական և հպատակ ժողովրդի փրկության հետևել ընդունված հավատքին, ապա հասկանալի է նրա հետաքրքրությունը դավանաբանական խնդիրների նկատմամբ: Սակայն կաթողիկոսության դավանաբանական կազմակերպման տրոհումը միշտ չէ որ անհրաժեշտ արձագանք էր գտնում հայ իրականության մեջ: Սսի 1307 թ. ժողովի ընդունած Սահմանադրության կապակցությամբ գրված թղթերից մեկում արձանագրված է. «Իսկ աստ ասէ Գրիգորիւ և Կոստանդիւ. Հեթմիւ և Ալինախիւ իշխանօք և ռամիկ ժողովրդօք զորոց գործ աստուած գիտէ որ ծածկագէտն է. իշխանօք և թագաւորօք կարգք և կանոնք եկեղեցոյ երբէք ոչ եղեալ և չէ պարտ լինել, զի յառաջին թագաւորքն վասն ճշտութեան միայն ժողով հրամայէին սուրբ հարց լինել, իսկ զընտրութիւն ի ձեռն նոցին թողուին...»[17]: Այս հարցադրումը առավելապես ընդդիմական բնույթ ունի, քանզի «վասն ճշտութեան» դավանաբանական հասկացությունը միշտ ճշգրտվում էր աշխարհիկ և հոգևոր իշխանությունների համաձայնության ու հավատացյալների գիտակցության շրջանակներում: «Հավատքի ճշտություն» հասկացությունը ուներ սուբյեկտիվ և օբյեկտիվ դրսևորում: Առաջին դեպքում այն ճշմարիտ էր, եթե արտահայտում էր հասարակության որոշ շրջանակների հետաքրքրությունները, իսկ երկրորդ դեպքում եթե ուներ սահմանային բովանդակություն: Այս դեպքում ճշտության ամենակարևոր չափանիշը հայոց եկեղեցու շրջանակներում մշակված ավանդույթն էր, ուստի ավանդականությունը դիտվում էր որպես գերակա գաղափարախոսություն և մշտապես փորձեր էին արվում կաթողիկոսության դավանաբանական իրավասությունները պարփակել նրա շրջանակներում: Ինչ վերաբերում է նորամուծությունների խնդրին, ապա ընտրությունը թողնվել էր ժողովի հոգևոր միջավայրին այնքանով, որքանով միայն նրանց

---

[17] Մատենադարան, ձեռագիր N 8075, էջ 252ա:

ստորագրություններով էր վավերացվել Սահմանադրությունը: Այլ էր խնդիրը, որ ժողովին չէին մասնակցել Հայաստանի բարձրաստիճան հոգևորականները, չհաշված մի քանի եպիսկոպոսների, որոնց մասնակցությունը չփոխեց նրա միջավայրը: Առայժմ դժվար է պարզել այն հարցը, թե Մեծ Հայքի նշանավոր թեմերի առաջնորդները հրավիրվել էին մասնակցելու ժողովին, թե ոչ: Մի բան պարզ է, որ Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսը (1293-1307) դավանաբանական նորաձևությունների մասին տեղյակ էր պահել Հայաստանի չորս թեմակալների (Այրարատ, Արտազ, Սյունիք, Աղթամար), որը հայոց եկեղեցական միջավայրում հավասարակշռություն պահպանելու նպատակ էր հետապնդում, և պետք է ստեղծեր այնպիսի պատկերացում, որ թեկուզ և խորհրդանշական նրանք ևս մասնակցում էին կենտրոնի գործերին:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում հայոց եկեղեցական կյանքում նկատելի էր դարձել այն հանգամանքը, որ Մեծ Հայքում դժգոհությունը կաթողիկոսության դավանաբանական գործունեությունից վերածվել էր որոշակի քաղաքականության. «Եւ հաստատեցաք ասէ յեկեղեցիս հայոց. ի գրոց յառաջին Հայք և երկրորդ և երրորդ և չորրորդ անուանին և Կիլիկէ յայսցանէ ոչ է և ի սոցանէ ի ժողովդ ձեր ոչ ոք էր յոր եկեղեցիս հայոց ասէք հաստատել...»[18]: Հարցադրումը իր մեջ պարունակում է հայոց կաթողիկոսության դավանաբանական-տեղագրական կազմակերպման սահմանների ճշգրտման խնդիրը: Եթե «Կաթողիկոս հայոց» հասկացությունը ուներ տեղադրական հատկանիշ, ապա հասկանալի է, որ Աում հաստատված կաթողիկոսությունը պետք է ներառեր նաև Հայաստանի և գաղթօջախների եկեղեցական միջավայրերը, հակառակ դեպքում անհասկանալի կմնար «հայոց» հասկացության տեղագրական-գավանաբանական բովանդակությունը: Այս տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում 1327 թ. գրանցված հիշատակարանի հետևյալ տողերը. «...ի հայրապետութիւն Կիլիկեցւոց տեառն Յակովբայ, և ի մերոյ հայրապետութեան Աղթամարեցոյ տեառն Զաքարիա, և ի թագաւորութեան Կիլիկեցւոց Նահանգին քրիստոսապսակ և բարեպաշտ Լեւոնի...»[19]: «...ի հայրապետութիւն Կիլիկեցւոց», «...ի թագա-

---

[18] Նույն տեղում, էջ 251ա - 251բ:

[19] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Ե., 1950, էջ 202:

Ա 91458

ւորութեան Կիլիկեցւոց» այլ ոչ թե «հայոց» հասկացությունների օգտագործումը տվյալ ենթատեքստում բովանդակազուրկ չէ, այլ արձանագրում է ձևավորված իրավիճակը: Այս տեսակետից պատահական չէ նաև հայոց եկեղեցուն ներկայացված «117 մոլորությունների» ցանկում տեղ գտած 37-րդ կետը. «Թէ հայերը երեք տարրեր կաթողիկոսներ ունին, որոնք տարրեր հաւատք եւ տարրեր մկրտութիւն ունին...»[20]: Շրջանառվող հարցադրումներում կարևորագույնը հայոց կաթողիկոսության կանոնական-դավանաբանական կազմակերպման խնդիրն է, քանզի տարահարթ քաղաքական միջավայրերում գտնվող եկեղեցական կառույցը ստացել էր հորիզոնական ձև, որը խախտել էր ձևավորված ավանդույթը և կաթողիկոսության կազմակերպման հիմնական սկզբունքները:

Եթե փորձենք համակարգել կաթողիկոսության դավանաբանական կազմակերպման հատկանիշները կապված 1307 թ. Սսի ժողովի հետ, ապա կունենանք հետևյալ պատկերը.

ա) Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի կտակը հասցեագրված Հեթում Բ թագավորին, որտեղ արծարծված հիմնախնդիրներից կարևորագույնը երկուսն են. դավանաբանական նորաձևությունների ցանկը և եկեղեցական ժողով հրավիրելու անհրաժեշտությունը:

բ) Կաթողիկոսի դավանաբանական նամակները ուղղված եկեղեցական նշանավոր թեմերի, մասնավորապես Մեծ Հայքի չորս արքեպիսկոպոսներին:

գ) Կաթողիկոսի նամակը հասցեագրված Լևոն Դ թագավորին:

Աշխարհիկ իշխանության դավանաբանական կազմակերպումը ներառում էր.

ա) Կանոնական-դավանաբանական խնդիրներ քննարկող Սսի ժողովը հրավիրվում է աշխարհիկ իշխանության նախաձեռնությամբ, բ) որը ակտիվ մասնակցում է նրա աշխատանքներին:

Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների դավանաբանական կազմակերպման որոշ սկզբունքների համադրումը ստեղծում էր բարդ իրավիճակ: Պատկերն ամբողջության մեջ ներկայացնելու համար բերենք Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում» առկա երկու հոդված. ա) «...Եւ Պաւղոս ասէ՝ կարգեաց Աստուած եւ եդ յեկեղեցւոջ նախ զառաքեալս

---

[20] Օրմանեան Մ., Ազգապատում, Բ հ., մասն Ա, Պէյրութ, 1960, էջ 1881:

և. երկրորդ զմարդարէս եւ երրորդ զվարդապետս, որ լնուն զեկեղեցիս միաբանութեամբ եւ սիրով ի փրկութիւն հոգւոյ եւ մարմնոյ»[21]: Սրանք այն անձերն են, որոնք պետք է զբաղվեին հավատքի խնդիրներով: Ինչպես տեսնում ենք աշխարհիկ իշխանության մասին հիշատակություն չկա: Միաժամանակ. բ) «Եւ գործ է նոցա աւծել զդասս թագաւորացն, որ են նման Քրիստոսի ի վերայ երկրի: Վասն որոյ պարտական են ամենայն կերպով Քրիստոսի նմանութեամբն վարել սրբութեամբ եւ արդարութեամբ եւ ճշմարտութեամբ...»[22]: Թագավորին հատկացվում է սրբազան իշխանության որոշ հատկանիշներ (Rex et sacerdos), որոնք հագնվում են օծման խորհրդի վրա:

Խնդիրն այն է, որ Աստված թագավորին հատկացրել էր սրբազան իշխանություն ոչ միայն նրա համար, որ նմանվի իրեն, այլև հովվի իր հոտը[23]:

Մյուս կարևորագույն հիմնախնդիրը կապված է կաթողիկոսության դավանաբանական կազմակերպման տեղագրական հատկանիշի հետ: Կաթողիկոսության դավանաբանական դերագահությունը հանգրվանում էր նաև հայոց եկեղեցում ձևավորված տեղագրական աստիճանակարգության վրա, որը խնդրո առարկա ժամանակաշրջանում հոլովվում էր երկու սկզբունքի շրջանակներում: Մի դեպքում տեղադրական-դավանաբանական կազմակերպման աստիճանակարգությունը փորձում էին ներառել տիեզերական եկեղեցու կազմակերպման շրջանակներում[24], իսկ մյուսը հանգրվանում էր այն սկզբունքի վրա, որ հայոց եկեղեցին ինքնամփոփ նվիրապետություն էր: Պատմական հանգամանքների բերումով հայոց եկեղեցական միջավայրում ձևավորվել էր այնպիսի իրավիճակ, որը խախտել էր կաթողիկոսության դավանաբանական կազմակերպման որոշ սկզբունքներ. «...և ի գլխոյ այլ ատելութիւն է պատճառ բաժանման և ոչ մեք կամ գործք մեր ապա թէ ոչ ընդէ՞ր ազգս հայոց երիս մասունս բաժանեալ է. Ո՞ բաժանեաց զԱխթամարի Աղուանից և կամ զՍուրբ Լուսաւորչէն աթոռոյ զնոսա և զայն ոչ կարէք ասել, թէ վասն կրօնից բաժանեցան, որպէս և յայժմ կարկատեն. զի մի հաւատ և օրէնք ունէին. ապա ոչ վասն հաւատոյ և ոչ վասն օրինացն թողին զմիմիանս.

---

21 Սմբատ Սպարապետ, նշվ. աշխ., էջ 40:
22 Նույն տեղում, էջ 67-68:
23 Նույն տեղում, էջ 7:
24 Նույն տեղում, էջ 83:

այլ վասն ազահութեան և հպարտութեան, զի օրէնքն աստուծոյ զամենեսեան միաւորէ ընդ Քրիստոսի»[25]: Հասկանալի է, որ խնդիրն այստեղ «ազահութեան և հպարտութեան» մեջ չէ, ինչպես փորձում է ներկայացնել հեղինակը: Հավատքին վերապահված էր իրագործելու մի շարք ֆունկցիաներ, որոնցից յուրաքանչյուրը ներառնում էր որևէ բնագավառ: Վերոբերյալ հատվածում խոսքը գնում է հավատքի քաղաքական դերի մասին:Ձևավորված նմանատիպ վիճակի իրավական արձագանք կարելի է համարել Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» հետևյալ հատվածը. «Եւ յայլ իշխանութիւներ, թէ լինի առաքելական աթոռ եւ թէ չլինի, նա կայ հրամանք որ կարեն կաթուղիկոսք լինիլ»[26]: Այստեղ «յայլ իշխանութիւններ» տեղադրական հասկացությունը առաջին հերթին ունի քաղաքական-դավանաբանական բովանդակություն, քանզի հոգևոր իշխանության որոշ հատկանիշներ ձևավորվում էին քաղաքական միջավայրում: Այս դեպքում կաթողիկոսության կանոնական գերագահությունը տրոհվում է մի շարք եկեղեցական կենտրոնների միջև: Հասկանալի է, որ որոշ դեպքերում կաթողիկոսության և նշանավոր թեմերի փոխհարաբերությունները հանգրվանում էին նաև քաղաքական հատկանիշների վրա:

Կաթողիկոսության դավանաբանական կազմակերպման տեսանկյունից կանոնական փոխհարաբերությունները կարգավորվում էին եկեղեցու շրջանակներում ձևավորված ավանդույթի հիման վրա, ուստի շատ դեպքերում աստիճանակարգությունը խախտվում էր, երբ փորձեր էին անում վերափոխել այդ համակարգի որևէ հատկանիշ: Պարզ է, որ ԺԴ դարի սկզբին հայոց եկեղեցու ներսում ձևավորված իրավիճակի պայմաններում Սսում կայանալիք եկեղեցական ժողովին պետք է ներկայանային այն թեմական առաջնորդները, որոնք ընդունում էին կաթողիկոսության կանոնական գերագահությունը: Սսի ժողովում հոգևորականության դասաշարը գլխավորում էր Կեսարիայի «Մեծ» հորջորջված արքեպիսկոպոսը (ապագա կաթողիկոս Կոստանդին Կեսարացին (1307-1322)) այն դեպքում, երբ աշխարհականների ցանկի վերին հատվածը ներկայանում է այսպես. «Իսկ իշխանք, որ կային ընդ արքային Լևոնի և թագաւորահօրն Հեթմոյ էին այսոքիկ...»[27]: Մենք

---

[25] Մատենադարան, ձեռագիր N 3522, էջ 172բ:
[26] Սմբատ Սպարապետ, նշվ. աշխ., էջ 57:
[27] Գալանոս Կղ., նույն աշխ., էջ 460:

միայն այն կարծիքին չենք, որ աշխարհականների մասնակցությունը միջոց էր բարձրացնելու դավանաբանական նորաձևությունների հեղինակությունը և ապահովել նրանց կենսագործումը: Այս դեպքում առկա էին նաև այլ պատճառներ: Աշխարհիկ իշխանությունը աշխատում էր կանոնական իրավունքը ներառել ընդհանուր իրավական համակարգի մեջ, ըստ այդմ էլ թագավորական իշխանությունը հանդես կգար որպես համընդհանուր և բացարձակ օրենսդիր: Կարծում ենք պատահական չէ Նիկողայոս Դ Պապի (1288-1292) Հեթում Բ թագավորին հասցեագրված նամակի այս տողերը. «...զի ըստ ամենայնի պատրաստ լիջիս մտօք ընդունել և գործով կատարել զփրկչական վարդապետութիւն ասացեալ Պատրոյն և այլոց ընկերաց իւրոց. և ջանիւ հոգասջիս ածել ի սոյն զամենայն հայրապետս և ժողովուրդս Հայաստանեաց...»[28]: Մինչդեռ Բոնիֆացիոս Ը Պապի (1294-1303) Գրիգոր Է Անավարզեցի կաթողիկոսին հղած նամակում խնդիրը այլ ձևով էր դրված. «...զի ջանասջիս ուսուցանել եկեղեցոյդ և ժողովրդեանդ հայոց զուղղափառ հաւատս, զոր քարոզէ, ուսուցանէ, և դաւանէ ամենասուրբ եկեղեցիս Հռովմայ...»[29]: Ինչպես պարզ երևում է «հոգասջիս ածել», «ջանասջիս ուսուցանել» հասկացությունները համահունչ են այնքանով, որքանով շոշափում են նույն խնդիրը, սակայն զատորոշում են աշխարհիկ և հոգևոր իշխանությունների դավանաբանական կազմակերպումը:

Եթե հանրագումարի բերենք կաթողիկոսության և առավել աչքի ընկնող քաղաքական կենտրոնները ներկայացնող եկեղեցական վիճակների փոխհարաբերությունները, ապա կարելի է առանձնացնել երկու կողմնորոշում տարածքային և մայրաքաղաքային: Առաջին դեպքում աշխատում էին ձևավորել կենտրոնից հարաբերականորեն անկախ թեմեր, որոնք պետք է զբաղվեին տվյալ տարածքի հոգևոր-դավանաբանական խնդիրներով: Նման փոխհարաբերությունների շրջանակներում էլ ձևավորվում էր «մեծ ավանդույթը» և «փոքր ավանդույթը», որոնք դրվում էին կաթողիկոսության և առանձին թեմերի դավանաբանական կազմակերպման հիմքում: Ինչ վերաբերում է երկրորդ կողմնորոշմանը, ապա անկախ ձևավորված իրավիճակից նրա կրողները շարունակում էին ընդունել կաթողիկոսության կանոնական գերագահությունը:

---

[28] Նույն տեղում, էջ 405:
[29] Նույն տեղում, էջ 424:

Բավական բարդ ու խճճված է Սսի 1307 թ. ժողովի ընդունած Սահմանադրության տակ ստորագրողների գասաշարը: Բանը ոչ միայն այն է, որ մասնակիցների և ստորագրողների ցանկերը տարբերվում են, այլ բոլորը ստորագրել են «եպիսկոպոս» տիտղոսով. «Կոստանդին եպիսկոպոս Կեսարոյ կամեցայ և գրեցի...» և այլք: Հիմնահարցի հետ աղերսվող խնդիրները կարելի է ստորաբաժանել երկու կանոնական և դավանաբանական խմբերի: Առաջինի առնչությամբ անհրաժեշտ ենք համարում կանգ առնել կաթողիկոսի խնդրի վրա: Անկախ այն հանգամանքից, որ աղբյուրներում նշվում է, որ Աի ժողովը հրավիրել է Կոստանդին Կեսարացի կաթողիկոսը, մեր կարծիքով, նա ընտրվել է Սահմանադրության ընդունումից հետո: Բանն այն է, որ փորձ էր արվում ժողովը ներկայացնել նրա կաթողիկոսության ժամանակահատվածի շրջանակներում, քանզի Գր. Անավարզեցի կաթողիկոսը գահընկեց էր արվել: Այս դեպքում անհասկանալի է մնում Կոստանդին Կեսարացու ներկայությունը «արքեպիսկոպոս» և ստորագրությունը «եպիսկոպոս» տիտղոսներով: Հարցի պարզաբանման մեջ որոշակի պարզություն կարող է մտցնել աղբյուրներում պահպանված հետևյալ վկայությունը. «Եւ սկսեալ այժմ ասէ՛ ի ձեռն եպիսկոպոսապետին Գրիգորի և Կոստանդեայ...» [30]: Միայն «եպիսկոպոս» տիտղոսով ստորագրությունը, հավանաբար, նպատակ էր հետապնդում ցույց տալ, որ Սահմանադրության ընդունման ժամանակ տեղի էր ունեցել կանոնական գերագահության իրավունքի տրոհում, քանի որ «Հայոց կաթողիկոս» տիտղոսի կանոնական կազմակերպման շրջանակներում տեղի էր ունեցել նկատելի փոփոխություններ: Այս դեպքում Աի հայոց կաթողիկոսությունը պետք է համատեղեր երկու սկզբունք. համահայկական և կիլիկյան: Այս առումով հետաքրքիր է Ագանայի ժողովի Սահմանադրության մեջ պահպանված երկու վկայություն, որոնցից առաջինը վերաբերում է Սսի, իսկ երկրորդը՝ Ագանայի ժողովին. «Բարէպաշտ թագաւորն Լևոն, և քրիստոսասէր պարոն Հեթում որպէս զի ունայնասցի սիրոյ և միաբանութեան գործն. հրովարտակ արձակեցին ընդ ամենայն տեղիս տէրութեան իւրեանց որպէս զի եպիսկոպոսք, և վարդապետք, և հարք, ուր և իցեն. ժողովեսցին ի մի...» [31]: «...և նոյն ժամայն հրաման ժողովոյ հանեալ ընդ ամենայն տեղիս տէրու-

---

[30] Մատենադարան, ձեռագիր N 8075, էջ 252ա:
[31] Գալանոս Կղ., նշվ. աշխ., էջ 500:

տէրութեան իւրեանց որպէս զի եպիսկոպոսք, և վարդապետք, և հարք, ուր և իցեն. ժողովեսցին ի մի...»[31]: «...և նոյն ժամայն հրաման ժողովոյ հանեալ ընդ ամենայն տեղիս տէրութեան իւրոց. զի ուր իցէն եպիսկոպոսք, և վարդապետք, և հարք ի մի վայր եկեալ հոգասցեն յաղագս ճշմարտութեանն...»[32]: Փաստորեն «տէրութեան իւրոց» միջավայրը կրում էր ոչ միայն քաղաքական, այլև եկեղեցական բովանդակություն, քանզի այն, ինչպես պարզ երևում է ներառում է նաև եկեղեցական կառույցը, ուստի անհամապատասխանություն է առաջանում «հայոց կաթողիկոս» և «հայոց թագավոր» տիտղոսների դավանաբանական կազմակերպման միջև: Դավանաբանական բնույթի ժողովներ հրավիրելու աշխարհիկ իշխանության իրավունքը զուգորդվում էր վարչաքաղաքական իշխանության հետ, ուստի հասկանալի է «...ընդ ամենայն տեղիս տէրութեան իւրոց» հատվածը: Պատահական չէ, որ ժամանակակիցները 1307 թ. Սսի ժողովը դիտում էին որպես կիլիկյան երևույթ. «...եւ ժողովեալ զեպիսկոպոսունս երկրին Կիլիկիոյ աւագ պարոնն, որ Հեթում կոչի, ի Սիս, եւ հրամանաւ նորա սահմանեցին...»[33]: Այլ էր հայոց կաթողիկոսության ձգտումները, քանզի աշխատում էր պահպանել տիտղոսի դավանաբանական կազմակերպման համընդհանրականությունը և փորձում էր ժողովներին մասնակից դարձնել Հայաստանի թեմական առաջնորդներին: Այս քաղաքականությունը հանգրվան էր փնտրում էթնո-մշակութային միջավայրի միասնության շրջանակներում: Փաստորեն խնդիրը միասնության ընկալման տարաբնույթ սկզբունքների մեջ էր, քանզի այն ակունքները, որոնց վրա հանգրվանում էր միասնության գաղափարը որոշակի վերափոխումներ էին կրել: Եթե այն արդեն չէր ընկալվում միայն ակունքների շրջանակներում, քանզի դուրս էր եկել ձևավորված միջավայրից, ապա աշխատում էին գտնել այլ ճանապարհներ: Ագանայի ժողովի երկու ստորագրություն՝ «Կոստանդին կաթուղիկոս ամենայն հայոց», «Օշին բարէպաշտ թագաւորն հայոց» պարզորոշ վկայում են աշխարհիկ և հոգևոր իշխանությունների դավանաբանական կազմակերպման ձգտումների մասին: Կաթողիկոսության կազ-

---

[31] Գալանոս Կդ., նշվ. աշխ., էջ 500:
[32] Նույն տեղում, էջ 503:
[33] Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, կազմեց՝ Ն. եպիսկոպոս Պողարեան, հ. IV, Երուսաղեմ, 1969, էջ 536:

մակերպման երեք սկզբունքի (կանոնական, դավանաբանական, տեղագրական) օրգանական միասնությունը դրսևորվում էր «Հայոց կաթողիկոս» տիտղոսի միջոցով և պետք է ներառեր Կիլիկյան Հայաստանի, Մեծ Հայքի և գաղթօջախների հայկական եկեղեցական միջավայրերը:

Աշխարհիկ իշխանության կազմակերպման երեք սկզբունքի (վարչաքաղաքական, սրբազան, տեղագրական) օրգանական միասնությունը հանգրվանում էր միայն Կիլիկյան Հայաստանի վարչաթեմական համակարգի շրջանակներում, քանզի նրանից դուրս գտնվող միջավայրը «Հայոց թագավոր» տիտղոսի մաս չէր կազմում: Երկու տիտղոսի փոխհարաբերություններում զգալի դեր էին խաղում մի կողմից քաղաքական սահմանները, իսկ մյուս կողմից դավանաբանական: «Կաթողիկոս ամենայն հայոց» տիտղոսը բովանդակային առումով առավել ընդգծում էր Աի կաթողիկոսության կանոնական-դավանաբանական գերագահության ձգտումները: «Ամենայն» տիտղոսը որպես խորհրդանիշ ներկայանում էր խնդրի տեսքով, որի լուծման ժամանակ գլխավոր դերը խաղալու էր միասնության գաղափարը, որը կարող էր իրեն գանել երեք տիեզերական, Կիլիկյան Հայաստանի և Մեծ Հայքի եկեղեցական միջավայրերում: Հասկանալի է, որ ամբողջականությունը որպես նպատակ անիրագործելի խնդիր է, քանզի այն միշտ կատարելության կարիք է զգում: Այս պատկերացումների համաձայն նույն ակունքներից սկիզբ առած եկեղեցական համակարգերը, որոնք միշտ ձգտում էին ինքնամփոփության այժմ պետք է միավորվեին. «Եւ ընդունիմք զամենայն քրիստոնեայք Հռոմայ եկեղեցոյն. զի այնք մերձ են առ աստուծոյ, որպէս և առաջին աթոռոյն...»[34]:

Մարդու սահմանային հետաքրքրությունները միշտ հանգրվանում են ձևավորված խորհրդանիշներում, քանզի սրանք, սովորաբար, մատնացույց են անում այն ինչ գտնվում է իրականությունից դուրս և ի հայտ են բերում նրանց իրագործելիության աստիճանը: Այս դեպքում մտածողությունը ոչ թե պատճառահետևանքային, այլ միստիկական կապեր է փնտրում խորհրդանիշների միջև, ուստի պատկերացումները նրանց միջև եղած տարբերությունների վերաբերյալ գիտակցաբար շրջանցվում են, իսկ նմանությունները կամ նրանց պատկանելությունը նույն ակունքներին անընդհատ

---

[34] Գալանոս Կղ., Նշվ. աշխ., էջ 450:

ընդդծվում են: Հայոց կաթողիկոսության կազմակերպման կանոնական-անդադրական բազմակենտրոնությունը այնքան նկատելի էր դարձել, որ ԺԴ դարի 30-40-ական թթ. դարձել էր նրան ներկայացվող դլխավոր մեղադրանքներից մեկը. «ԺԴ. Հնազանդին երկուց պատրիարդաց. որոց իւրաքանչիւր ստորադրէ դինքն գոլ պատրիարգ ամենայն Հայոց...»[35], «...Թէ հայերը երեք տարրեր կաթողիկոսներ ունին...»[36]: Առաջին հատվածում խոսքը վերաբերում է Սսի և Աղվանքի կաթողիկոսություններին, իսկ երկրորդ հատվածում ավելանում է Աղթամարինը: Խոսքը այստեղ միայն թվերի հարաբերակցության մեջ չէ, այլ հայոց եկեղեցու կազմակերպման սկզբունքների:

Յուրաքանչյուր սոցիալ-քաղաքական համակարգ, սովորաբար, աշխատում է ձևավորել արժեքների, խորհրդանիշների և կողմնորոշման իր կենտրոնը, ապա փորձում է նրան համընդհանրականություն հաղորդել, իսկ արդյունքում առաջանում են տարբեր աստիճանակարգություններ և կաթողիկոսության կազմակերպման շրջանակներում ձևավորվում է «կարգավիճակային անհամապատասխանություն»: Նման իրավիճակում Սսի հայոց կաթողիկոսությունը փորձում էր ներկայանալ որպես համընդհանուր կենտրոն, քանզի տարաբնույթ քաղաքական կառույցներում գտնվող հայոց եկեղեցին կարող էր կորցնել սեփական միջավայրերը:

Այժմ քննարկենք հայոց կաթողիկոսության դավանաբանական կազմակերպման հետ կապված ևս մի հիմնախնդիր: 1341 թ. Լևոն Ե թագավորը գահընկեց է անում Հակոբ Սսեցի կաթողիկոսին. «Տէր Յակոբ ի Սըսոյ, կացեալ ամս ԺԷ, եւ վասն թագաւորին Լեւոնի յանդիմանելոյ ի նմանէ ընկեց յաթոռուն...»[37]: Եթե «յանդիմանելոյ ի նմանէ» հասկացությունը քննարկենք ձևավորված եկեղեցական հարաբերությունների համատեքստում, ապա կաթողիկոսի գահընկեցության հանգամանքների մեջ որոշակի դեր են խաղացել նրա ձգտումները յուրացնել հայոց եկեղեցու կանոնական-դավանաբանական կազմակերպման ողջ իրավունքները և այն ազատել Կիլիկյան Հայաստանի քաղաքական միջավայրի ազդեցությունից: Հարցադրման պարզաբանմանը օգնում է հայոց եկեղեցուն ներկայացվող «մոլորությունների» ցանկում Հակոբ Սսեցուն վերա-

---

[35] Նույն տեղում, էջ 516:
[36] Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 1881:
[37] Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, էջ 228:

բերող երեք կետերը. «Դարձեալ գրեալ էին և ամբաստանութիւնս վասն Յակոբայ կաթուղիկոսի Սսեցւոյ՝ զոր ընկէց Լևոն արքայ յաթոռոյ, և էր տակաւին կենդանի, իբր թէ նա հալածեալ իցէ զուղղափառս և թէ՝ արգելեալ իցէ զլատինս չառնել քարոզութիւն ի Հայս. և մի ասել զպապն գոլ գլուխ եկեղեցւոյ. այլ թէ ինքն կաթուղիկոսն իցէ պապ յարևելս...»[38]: Ինչ վերաբերում է «...այլ թէ ինքն կաթուղիկոսն իցէ պապ յարևելս...» հատվածին, ապա այն բազմիմաստ նշանակություն ունի: Նախ և առաջ անհրաժեշտ է նկատի առնել այն հանգամանքը, որ խոսքն այստեղ ոչ թե «պապ» անվան յուրացման մեջ է այլ հայոց կաթողիկոսության եկեղեցաքաղաքական գործունեության շրջանակներում ձևավորված այն միտումների, որոնք հանդրվանում էին համընդհանրականության գաղափարի շրջանակներում: Նման ձգտումների հիմքերը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել Մերձավոր Արևելքի եկեղեցական միջավայրում ձևավորված իրավիճակը: ԺԱ դարի վերջերից Բյուզանդիան սկսեց կորցնել Փոքր Ասիան, ուստի Կոստանդնուպոլսի պատրիարքության ազդեցությունը երկրամասում անկում էր ապրում, որին զուգահեռ ուժեղանում էր հայոց եկեղցու դիրքերը:

Խաչակրաց տիրույթների անկումից հետո Արևելքում թուլանում էր նաև պապականության դիրքերը: Տեղադրական կազմակերպման առումով Սսի հայոց կաթողիկոսությունը նեռրառում էր այնպիսի միավորներ, որոնք Կիլիկյան Հայաստանից դուրս էին գտնվում: Փաստորեն հայոց կաթողիկոսության կազմակերպման ձևը նմանվում էր պապականությանը, որը և իրավունք էր տվել Հակոբ Սսեցի կաթողիկոսին փորձելու յուրացնել «պապ» տիտղոսը:

Հայոց կաթողիկոսության համընդհանրականության գաղափարը արտացոլվել է նաև «Դաշանց թղթում». «Եւ զի պատրիարգարանքն երեքին Երուսաղեմայ, Անտիոքայ և Աղէքսանդրոյ յորժամ զպատրիարք ձեռնադրիցեն համահաճութեամբ և ընտրութեամբ հայոց հայրապետին արասցեն. և որոք նստցի յաթոռ հայրապետութեան զդաւանութիւն հաւատոյց զոր պարտէր ինձ Սեղբեստրոսիս և յաջորդաց իմոց ծանուցանել զնոյնն հայոց հայրապետին ծանուսցէ զի նա կարգեցի ինձ փոխանորդ և հրամանահան ի վերայ ամենից

---

[38] Չամչյանց Մ., Հայոց պատմություն, հ. Գ, Ե., 1984, էջ 344:

արևելականացն դաւառաց»[39]: Այստեղից կարելի է մի շարք եզրակացություններ անել.

ա) Շրջանառության մեջ դնելով «Ամենայն» տիտղոսը Սսի հայոց կաթողիկոսությունը փորձում էր ամբողջացնել նրա իրավական կազմակերպման բովանդակությունը, ըստ այդմ էլ բոլոր թեմերը պետք է ճանաչեին նրա դերագահությունը:

բ) Այս դեպքում հայոց եկեղեցական միջավայրը կունենար կանոնական-դավանաբանական ուղղահայաց ձև, ուստի պատահական չէ, որ այդ ձգտումները ներկայացվում էին որպես «պապ» տիտղոս յուրացնելու քաղաքականություն:

գ) Տարահարթ քաղաքական միջավայրերում հայոց եկեղեցական թեմերի առկայությունը և նրանց հետ Սսի կաթողիկոսության տարաբնույթ փոխհարաբերությունները կամ թե ակամա ճանապարհ էին հարթում, որպեսզի հայոց կաթողիկոսությունը յուրացներ քաղաքական միջավայրին յուրահատուկ որոշ հատկանիշներ, և հակառակը աշխարհիկ իշխանությունը աշխատում էր ընդլայնել դավանաբանական կազմակերպման սահմանները:

ԺԴ դարի առաջին կեսին Սսի հայոց կաթողիկոսության կանոնական-դավանաբանական կազմակերպման շուրջ ձևավորվել էին տարաբնույթ տրամադրություններ, սակայն բոլորի համար նույնը թերևս միասնության ձգտումն էր: Կիլիկյան Հայաստանի եկեղեցաքաղաքական շրջանակների մի մասը և նրանց կողմնակիցները Մեծ Հայքում և հայկական եկեղեցական մյուս միջավայրերում աշխատում էին հայոց կաթողիկոսությունը ներառել տիեզերական եկեղեցու համակարգի մեջ: Հակոբ Սսեցի կաթողիկոսի գործունեությունից պարզորոշ երևում է հայոց եկեղեցում խմորվող մեկ այլ ծրագրի մասին, որի նպատակն էր Սսի կաթողիկոսության գերադահությունը հաստատել Մերձավոր Արևելքում և յուրացնել «պապ» տիտղոսը: Վերջապես ավանդականության կողմնակիցները փորձում էին անխախտ պահել հայոց կաթողիկոսության տեղադրական-դավանաբանական կառույցը:

---

[39] Թուղթ սիրոյ և միաբանութեան, Վենետիկ, 1695, էջ 24:

GAGIK HARUTYUNYAN

EREVAN STATE UNIVERSITY

THE PROBLEMS OF THE CONFESSIONAL ORGANIZATION OF THE ARMENIAN CATHOLICATE IN THE FIRST HALF OF THE 14th CENTURY

Summary

In the first half of the 14th century the question of the confessional organization was one of the fundamental problems of the Armenian Catholicate. In that period the Armenian Catholicate was within the state system of the Armenian Kingdom of Cilician and it was very difficult to retain its former rights, thus it had to adapt itself to the historically formed new conditions.

The Sis Catholicate continued to present itself as the See of the All-Armenian Church thus trying to preserve its specific features. During the first half of the 14th century different approaches emerged concerning the canonical-confessional organization of the Armenian Catholicate in Sis. Anyhow the aspiration of unity was main concern of the Armenian clergy. Part of the clergy of Cilician Armenia and their supporters in Great Armenia and other localities (within the canonical jurisdiction of the Armenian Church) tried to involve it in the system of the General Church.

The author of the article tries to clarify certain aspects of the confessional organization of the Armenian Catholicate, particularly in relation to the Armenian Church tradition, councils and epistles.

Since the end of the 11th century the Byzantine Empire had begun to lose territories in Asia Minor. consequently, the influence of the Constantinople Patriarchate declined in the region and parallel to it the position of the Armenian Church was strengthened. Meanwhile, the positions of the papacy weakened with the fall of the rule of the Crusaders in some regions of Near East

In the 30-40s of the 14th century canonical-territorial polycentral character of the organization of the Armenian Catholicate became exceptionally vivid, because, from point of view of the territorial organization, the Armenian Catholicate of Sis included such units which were out of Cilician Armenia. The Armenian Catholicate of Sis was presenting itself as the All-Armenian centre, otherwise the Armenian Apostolic Church (which appeared to be in different political structures) would lose its own territories. In fact, the organizational form of the Armenian Catholicate acquired the likeness of papacy and Catholicos Hakob of Sis even tried to assume the title of "pope." It also shows that there was a program of the establishment of supremacy of the Armenian Catholicate of Sis in the countries of Near East.

The followers of the Armenian Church tradition tried to preserve the indestructibility of the territorial-confessional structure of the Armenian Catholicate.

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՎԱՐԱՆԴԱՅԻ ՄԵԼԻՔ-ՄԻՐԶԱԲԵԿԻ ՄԱՀԱՊԱՏԺԻ ՊԱՏՃԱՌԸ

Արցախի մելիքները, ներքին կառավարման հարցերում ունենալով գործելու լիակատար ինքնուրույնություն, պատասխանատու էին պետական հարկերի գանձման և ժամանակին շահական գանձարանը մուծելու համար: Ընդ որում, «եթե տարեկան հարկը մելիքը չէր վճարում շահական գանձարանին, նշանակում էր նա ապստամբել է»[40]:

Այնուհանդերձ, Արցախի մելիքությունների պատմության մեջ հայտնի է մի դեպք, երբ Վարանդայի 1730-1736 թթ. տիրակալ Մելիք-Հուսեինը, օգտվելով թուրք-պարսկական պատերազմի ժամանակ ստեղծված խառը իրավիճակից, հարկ չի վճարել: Ժամանակակիցները այնքան են կարևորել այս փաստը, որ այդ մասին արձանագրել են մելիքի շիրմաքարին.

«Սա ոչ ետ հարկ թագաւորի,
Ամուր պարիսպ էր աշխարհի,
Թագ, պարծանք հայոց ազգի,
Պատերազմեաց հետ օսմանցի,
Ցոյժ կոտորեաց ազգէն տաճկի»[41]:

Սույն հոդվածը նվիրված է նմանատիպ մեկ այլ դեպքի պարզաբանմանը, որի վերաբերյալ մի տեղեկության հանդիպեցինք Մատենադարանում 7429 թվահամարի տակ պահպանվող XIX դ. կեսերի հեղինակ Միքայել-բեկ Մելիք-Շահնազարյանի «Վասն ծագման Մելիք-Շահնազարյան տոհմին» ձեռագիրը

---

[40] Պողոսյան Ֆ., Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, թիվ 1, էջ 204:
[41] Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1987, էջ 441; Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. 2, Թիֆլիս, 1907, էջ 45; Դիվան հայ վիմագրության, V, Արցախ, Ե., 1982, էջ 149:

ուսումնասիրելիս: Նկատենք, որ թեև Բ. Ուլուբաբյանը սույն երկը իրավացիորեն համարել է «հիշյալ տոհմի զարմիկների երևակայության մարզին վերաբերող ետնաստեղծ պատմություն»[42], սակայն ձեռագրի մանրակրկիտ ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ այն, գրված լինելով հիմնականում ավանդազրույցների հիման վրա և ունենալով Մելիք-Շահնազարին արդարացնելու անթաքույց միտում, այնուհանդերձ պարունակում է նաև մի քանի ուշագրավ դրվագներ, որոնք կարող են որպես բանալի ծառայել Արցախի մելիքությունների պատմության որոշ չբացահայտված հարցերի լուսաբանման համար: Այդ հարցերից մեկն էլ վերաբերվում է Վարանդայի Մելիք-Միրզաբեկի մահապատժի հանգամանքների պարզաբանմանը: Ձեռագրում այդ մասին կարդում ենք. «Մելիք-Միրզաբեկն ապստամ[բ]վում է Նատիրից և հարկ չի տալիս. կարծում է թէ շահ Հուսէյին[ն] է ու ինքն Մելիք-Հուսէյինն»[43]:

Հարկ է ճշտել, որ Վարանդայում Մելիք-Հուսեինի իշխանության ժամանակ Իրանի շահը ոչ թե Սուլթան Հուսեինն (1694-1722) էր, ինչպես գրված է ձեռագրում, այլ նրա որդի Թահմասպ Բ-ը, որը «Սպահանի պաշարման ընթացքում կարողանում է աֆղանական զորքերի օղակը ճեղքելով հեռանալ Ղազվին, որտեղ 1722 թ. նոյեմբերի 10-ին իրեն շահ է հռչակում, նաև իր անունով խութբա է հնչեցնում, դրամներ հատում և հրամանագրեր հրապարակում: Թեև նրա իշխանությունը ավելի շատ ձևական էր, այն տևում է շուրջ 10 տարի»[44]: Ժամանակակիցները նրան բնութագրել են որպես «անբաղդ և անարի և գինեմոլ» անձնավորության[45]: Եվ հենց այս զուտ

---

[42] Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Ե., 1975, էջ 404:

[43] Միքայէլ-բեկ Մելիք-Շահնազարեան, Վասն ծագման Մելիք-Շահնազարեան տոհմին, Մատենադարան, ձեռ. 7429, էջ 43 ա:

[44] Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III, կազմեց Ք. Կոստիկյանը, Ե., 2005, էջ 23, նույնի՝ Թահմասպ II-ի հայերին ուղղված հրովարտակները և 1730-1731 թթ. նրա արշավանքը դեպի Երևան, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», 2004, XXIII, էջ 356:

[45] Տեր-Ավետիսյան Ա., Նադիր շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցու), Ե., 1940, էջ 36, նույնի՝ Походы Тамас-Кули-хана (На-

ձևական իշխանություն ունեցող շահին է, որ հարկ չէր վճարում նրա իսկ 1142հ. թ. զի հեջջե ամսի (1730 թ. հունիսի 17 – հուլիսի 17) հրովարտակով Վարանդա զավառի տիրակալ նշանակված Մելիք-Հուսեինը[46]:

Սակայն, Թահմասպ Բ-ի պարտությունները թուրքական բանակից առիթ են ընձեռում շահի զորավար Թահմազ-Ղուլի խանին (ապագա Նադիր շահին) նրան գահընկեց անելու համար, որից հետո «ի տեղի նորա կարդեաց թագաւոր զփոքրագոյն մանուկ որդի նորա և անուանեաց զնա Շահ Արաս: Յայսմ ամի թուական մեր էր ՌՃՁԱ (1732) յօգոստոսի ԻԲ (22)»[47]: Նադիրը մանկահասակ շահին առնում է իր խնամակալության տակ, սակայն չբավարարվելով այդքանով, 1736 թ. փետրվարին Մուզանի անապատում իրեն շահ է հռչակում, իսկ հետագայում հրամայում մահապատժի ենթարկել Թահմասպ Բ-ին և նրա փոքրահասակ որդուն[48]:

Իսկ Վարանդայում 1736 թ. վախճանված Մելիք-Հուսեինին հաջորդում է նրա եղբայր Մելիք-Բաղու որդի Մելիք-Միրզաբեկ Բ-ը:

Նադիր շահը Հնդկաստան արշավելուց և 1739-ին Դելին գրավելուց հետո[49], տիրանալով այդ երկրի անբավ հարստություններին, 1151հ. թ. զի հեջջե ամսի (1739 թ. մարտի 12-ապրիլի 10) հրովարտակով Իրանի բնակիչներին երեք տարով ազատել է հարկերի զգալի մասից[50]: Այս հրովարտակը չէր տա-

---

дир-шаха) и избрание его шахом в описании Акопа Шамахеци, Тифлис, 1932, с. 9.

[46] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 173, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III, էջ 184:

[47] Տեր-Ավետիսյան Ս., Նադիր շահի արշավանքները, էջ 37:

[48] Նրանց մահապատժի մասին տես Քյուչուք Արութին, Պատմություն Թահմազ Ղուլու, «Մատենադարանի գիտ. նյութերի ժողովածու», 1941, թիվ 1, էջ 127:

[49] Այդ արշավանքի մասին տես Мухаммад-Казим, Поход Надир-шаха в Индию, М., 1961; Кишмишев С., Походы Надир-шаха в Герат, Кандагар, Индию и события в Персии после его смерти, Тифлис, 1889, с. 179-211.

[50] Հրովարտակի բնագիրն ու ռուսերեն թարգմանությունը տես Арунова М., Фирман Надир-шаха, Советское востоковедение, 1958, N 2, с.

բածվում ալաֆե և ուլուֆե ու սուրսաթ [**] *կոչված հարկերի վրա*[*]: *Ինչպես նաև Մելիք-Միրզաբեկի հպատակներին:*

Պետական հարկապահանջությունը նոր թափով վերսկսվեց «1742 թ., երբ Նադիրը նվաճել էր նաև Միջին Ասիան և պատժիչ արշավանքի դուրս եկել դեպի Դաղստան... Աղբյուրները վկայում են, որ հարկերի գանձումը կատարվում էր բաղմապատկված չափերով»[52]: *Հատկապես հարկերի կտրուկ բարձրացում է նկատվում Նադիր շահի կառավարման վերջին տարիներին*[53]: *Այսպես, ըստ 1745 թ. գրված մի հիշատակարանի «յոյժ նուազեաց ազգս Հայոց վասն հարկապահանջութեան սորա (Նադիրի-Ա.Մ.), և բնաւք ոչ մնաց գիւղ, գաւառք, և ոչ ապրանք, և զամենեսեան ցրուցան եղեալ, նաև ոչ մնաց վանք և յանապատ վասն ևս հարկապահանջութեան»*[54]: *Հավանաբար այդ ժամանակ է, որ Մելիք-Միրզաբեկը տեսնելով իր հպատակների թշվառությունը, խուսափել է հարկային պարտավո-*

116-119; Арунова М., Ашрафян К., Государство Надир-шаха Афшара, М., 1958, с. 87-93:

[*] Ալաֆե և ուլուֆե գյուղերում իջևանող պետական պաշտոնյաների գրաստներին տրվող կերը: Այս տուրքը մեծ մասամբ հատուցվում էր մթերքով (խոտ, դարման, գարի և այլն): Շատ դեպքերում, սակայն, այն փոխարինվում էր դրամական տուրքով (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, ե., 1972, էջ 272):

[**] Սուրսաթները ռազմական արշավանքների ժամանակ հարկատու բնակչության վրա դրվող այն պարտավորություններն էին, որոնք հատուցվում էին մեծ քանակությամբ հացահատիկով և այլ մթերքներով: Ռայաթները ոչ միայն պարտավոր էին կարճ ժամկետում տալ պահանջված քանակությամբ մթերքները, այլև սեփական գրաստներով տանել այն և բանակատեղիում հանձնել զորամասի հրամանատարությանը (նույն տեղում, էջ 271):

[51] Арунова М., Фирман Надир-шаха, с. 119.

[52] Փափազյան Հ., Հայ-իրանական զինակցությունը 1726-1736թթ. և Արևելյան Հայաստանի քաղաքական իրավիճակը Նադիր շահի օրոք, «Բանբեր Երևանի համալսարանի», 1972, թիվ 2, էջ 83, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 188:

[53] Тер-Мкртчян А., Положение армянского народа под игом Надир-шаха, «Տեղեկագիր հաս. գիտ.», 1956, թիվ 10, էջ 95:

[54] «Արարատ», 1888, թիւ Ա, էջ 32-33:

ությունները կատարելուց, մի հանցանք, որի համար ենթարկվել են դաժան պատիժների: Այս խորապատկերում հավաստի է թվում նաև ձեռագրի հաղորդումը Մելիք-Միրզաբեկի հարկային պարտավորությունները չկատարելու համար մահապատժի ենթարկվելու մասին:

Այդ ըմբոստությունը, ըստ նույն ձեռագրի ավարտվում է նրանով, որ Նադիր շահը Մելիք-Միրզաբեկին ներում խոստանալով կանչում է արքունիք, որտեղից, ինչպես դիպուկ նկատել է հայ մեծ պատմաբան Մ. Չամչյանցը, «գրեթէ երբէք անվնաս ոչ թողոյր զոք գնալ»[55]: Մելիք-Միրզաբեկը ես չի խուսափել Նադիրի դատաստանից: Շարունակելով պատմությունը, ձեռագրի հեղինակը իրեն բնորոշ գեղջկական ոճով ներկայացնում է նաև նրա դատաստանը. «մին կիշեր հանկարծ վերան են հասնում 10 հոգով, քանդիր քցում չիլինքն խեղդում»[56]:

Վերջին տեղեկության իսկությունը հաստատվում է նաև XIX դ. պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովի (Հովսեփ Ներսիսյանց) տվյալներով. «Նադիր շահը նրանցից (Մելիք-Շահնազարյաններից - Ա.Մ.) ոմն Միրզաբեկի, հանցանք վերագրելով, պարանով խեղդամահ է անում և ասում. «Սա Շիրույեների ցեղից է»[57]: Ի դեպ, Ռաֆֆու գրչի տակ պարանը վերածվել է գահճի սրի[58]: Այս դեպքը, ինչպես վկայում է Մելիք-Միրզաբեկի տապանագիրը[59], տեղի է ունեցել 1744 թ. նոյեմբերի 10-ին, այսինքն՝ այն ժամանակաշրջանում, երբ բռնակալներին հատուկ հիվանդագին կասկածամտությունը Նադիրին մղում էր անլուր գազանությունների նույնիսկ իր հարազատների, այդ թվում և որդու՝ Ռզակուլի Միրզայի նկատմամբ[60]:

---

[55] Չամչյանց Մ., Հայոց պատմություն, հ. Գ, Ե., 1984, էջ 815:
[56] Մատենադարան, ձեռ. 7429, էջ 43ա:
[57] Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Ե., 2000, էջ 42:
[58] Ռաֆֆի, նշվ. աշխ., էջ 451; Մուսայէլեան Հ., Ղարաբաղի նուաճման հարիւրամեակը, «Արարատ», 1914, թիւ Գ, էջ 240:
[59] Դիվան, V, Արցախ, էջ 149:
[60] Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 189:

Ասվածից հետո նոր իմաստ և բովանդակություն է ստանում Մելիք-Միրզաբեկին մահապատժի ենթարկելուց առաջ Նադիր շահի ասած. «Սա Շիրույեների ցեղից է» արտահայտությունը: Շերոյեն կամ Կավադ Բ-ը Սասանյան շահերից է եղել, որը գահ է բարձրացել 628 թ. փետրվարի 28-ին, իր հայր Խոսրով Փարվեզին գահընկեց անելով: «Կավադ Շերոյեի համաձայնությամբ՝ Խոսրով Բ-ի ամենամոտիկ «մերձավորները» 628 թ. փետրվարի 29-ին սպանեցին նրան: Առհասարակ գոյություն ունի այն կարծիքը, որ Արևելքի պատմության մեջ Կավադը ամենաարյունախում տիրակալներից մեկն է եղել: Գահի համար պայքարի ընթացքում նա կյանքից զրկեց նաև իր տասնյոթ եղբայրներին»[61]: Բնականաբար Դոփյանների տոհմից սերված Մելիք-Շահնազարյանների տան անդամ Մելիք-Միրզաբեկը ոչ մի կապ չուներ Շիրույեների ցեղի հետ: Այսինքն՝ վերոհիշյալ արտահայտությամբ Նադիր շահը Մելիք-Միրզաբեկին մեղադրել է անհավատարմության և անհնազանդության մեջ:

Ամփոփելով՝ նշենք, որ փաստորեն Մելիք-Միրզաբեկը, հետևելով իրեն նախորդած Մելիք-Հուսեինի օրինակին, հարկ չի մուծել շահական գանձարանը, ինչի համար էլ Իրանի գահակալ Նադիր շահի կողմից ենթարկվել է մահապատժի:

ARTAK MAGHALYAN

Institute of History, NAS RA

THE CAUSE OF THE EXECUTION OF MELIK-MIRZABEK OF VARANDA

Summary

The princes (meliks) of Artsakh were completely independent in their internal governance. At the same time they were responsible for the collection of the state taxes and their

[61] Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Ե., 2005, էջ 149:

payment to the Shah treasury. According to a special decision of the Persian court, any melik who escaped the annual tax payment to the Shah treasury would be considered as a rebel. Anyhow, there was a case of not paying taxes in the history of the Artsakh meliks. In 1730-1736 the sovereign of the region of Varanda in Artsakh Melik-Huseyn refused to pay taxes taking advantage of troubled times caused by the Turkic-Persian wars. As follows from the epitaph of his gravestone, he was considered a heroic person by his contemporaries.

The article is devoted to the research of such a case described in the manuscript N7429 of the Matenadaran. It helps to understand the circumstances of the cause of the execution of Melik-Mirzabek, the prince of Varanda in Artsakh. It is written in the manuscript: "Melik-Mirzabek has rebelled against Nadir and is not paying taxes."

The state taxation became heavier after 1742 when Nadir Shah conquered the Middle East and marched against Dagestan. According to historic sources taxes and tributes enormously increased. Especially it became unbearable during the last years of the rule of Nadir Shah. Perhaps, just at that time Melik-Mirzabek refused to fulfill his duties of paying taxes, because he learnt about miserable state of his subjects. His disobedience was considered as a rebellion by the Persian court.

Thus, on the background of such an event, the manuscript's information about the execution of Melik-Mirzabek becomes understandable. Nadir Shah had invited Melik-Mirzabek to the Persian court under the pardoning pretext, but the Armenian prince couldn't escape the execution. According to the manuscript, ten executioners attacked and killed him by strangling with a rope (1744).

Before execution Nadir Shah said: "He is from the clan of the Shiroyens." Sheroye or Kavad II led the plot against his father - Khosrov Parvez whom the conspirators forcibly dethroned and killed (February 29, 628). Kavad Sheroye, for his bloody cruelty, had been known as a notorious ruler in the history of the eastern countries. Naturally, Melik-Mirzabek, who was of the Armenian Dopyan family origin, had no relation to the clan of the Shiroyens. Nadir Shah used that expression in order to accuse Melik-Mirzabek in infidelity and disobedience.

It is possible to conclude that Melik-Mirzabek, following the example of his predecessor Melik-Huseyn. didn't pay taxes to the Shah treasury and consequently Nadir Shah executed him.

ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ
ՀՊՄՀ

Լ.-Ֆ. ՖԵՐԻԵՐ-ՍՈՎԲԵՖԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՄԱՍԻՆ (XVIII դ. վերջին քառորդ)

XVIII դ. վերջին քառորդի Արևելքի պատմության եվրոպական աղբյուրներից է ֆրանսիացի քաղաքական գործիչ և դիվանագետ Լուի-Ֆրանսուա Ֆերիեր-Սովբեֆի ուղեգրությունը:

Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովբեֆը ծնվել է 1750 թ. Շամպայնի Մուլեն դ՝Արնակ բնակավայրում[62]: 1782-1789 թթ. նա Լյուդովիկոս XXVI-ի կառավարության կողմից դիվանագիտական առաքելությամբ ուղարկվում է Կ.Պոլիս և այստեղից երկու անգամ (1784-1785 թթ. և 1787 թ.) մեկնում է Իրան՝ Սպահան[63]: 1789 թ. վերադառնալով Ֆրանսիա՝ հարել է յակոբինյաններին, բայց որոշ քաղաքական բանտարկյալների նկատմամբ իրեն չափազանց ներողամիտ է դրսևորել և հեռացվել է ակումբից, նույնիսկ բանտ նստեցվել Լյուքսեմբուրգում: Բրյումերի 18-ի պետական հեղաշրջումից հետո Ֆերիեր-Սովբեֆը հեռանում է քաղաքական դաշտից և վերադառնում հայրենի Շամպայն: 1814 թ. ցանկանում է պայքարել օտարերկրյա ներխուժման դեմ և կազմակերպում է կամավորական ջոկատ: Սակայն շու-

---

[62] La Grande Encyclopédie inventaire raisonne des sciences, des lettres et des arts, t. 17, p. 326, Biographie Universelle ancienne et moderne, nouvelle édition, tome septième, Bruxelles, 1843-1847, p. 367, Larousse du XX e siecle en six volumes, Publie sous le direction de Paul Augé, tome troisième, Paris, 1930, p. 458 (այստեղ նրա ծննդյան թվական է նշված 1762 թ.):

[63] Полиевктов М., Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу, Тифлис, 1935, с. 106, Զուլալյան Մ., Հայ ժողովրդի XIII-XVIII դդ. պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա., Քաղաքական պատմություն, Ե., 1990, էջ 62:

տով Մոնմորի մի փողոցում որը ցերեկով սպանվում է ինչ-որ անծանոթի կողմից[61]:

Ֆերիեր-Սովբեֆի ճանապարհորդության նպատակը քաղաքական-դեսպանագնացական էր: Նա ֆրանսիական կառավարության հանձնարարությամբ դիվանագիտական գործունեության է ուղարկվում Կ.Պոլիս, ապա նաև Սպահան:

1788 թ. սեպտեմբերի 18-ին Ֆերիեր-Սովբեֆը մեկնում է Կ.Պոլսից դեպի Ֆրանսիա և հոկտեմբերի 15-ին ափ իջնում Տուլոնում: Վերադառնալով Փարիզ նա Արևելքի մասին ճանապարհորդական իր հիշողությունները հրատարակում է 1790 թ. Մասստրիխտում (2 հատոր), ապա նաև Փարիզում (1790 թ., 2 հատոր):

Ֆերիեր-Սովբեֆի ուղեգրությունը երրորդ անգամ հրատարակվում է Փարիզում 1807 թ. "Voyages faits en Turquie, en Perse et en Arabie" վերնագրով, 2 հատորով:

Ուղեգրության XXI-XXIV գլուխները նվիրված են Հայաստանի, Վրաստանի, Դաղստանի, Շիրվանի, Ադրբեջանի (Ատրպատական) նկարագրությանը: Հեղինակը տեղեկություններ է հաղորդում տարբեր բնակավայրերի, այցելած երկրների քաղաքական, տնտեսական դրության, բնական հարստությունների, արտադրողական ուժերի, բնակչության էթնիկական կազմի, սովորույթների ու հավատալիքների, պատմական ու ռազմական անցուդարձերի մասին: Ֆերիեր-Սովբեֆի ուղեգրությունը հետաքրքիր և արժեքավոր է, որովհետև գրված է նկարագրվող դեպքերին մասնակից և ականատես, երբեմն նաև ականջալուր հեղինակի կողմից, այնուամենայնիվ նրա հաղորդած տեղեկություններին պետք է մոտենալ զգուշորեն և քննադատաբար:

Ի թիվս այլ քաղաքների՝ Ֆերիեր-Սովբեֆը տեղեկություններ է հաղորդում նաև Տրապիզոնի մասին: Վերջինիս մասին Ֆերիեր-Սովբեֆը գրում է հետևյալը. «Տրապիզոնը հայտնի է եղել հունական կայսրության (Բյուզանդիայի -Ա.Մ.) անկման ժամանակ. օսմանները՝ Փոքր Ասիայի տերերը, գրավել էին Կ. Պոլսի գահը. Տրապիզոնում մի փոքրիկ կայսրություն է ձևավորվում, որն, ի վերջո, կարճ ժամանակ անց փլուզվում է՝

[61] La Grande Encyclopedie inventaire, p. 327, Biographie Universelle, p. 263.

ամրողջ Հունաստանը (Բյուզանդիան -Ա.Մ.) նվաճած Թուրքերի հզորության տակ: Այս քաղաքը, թեպետ, զրկված իր նախկին պերճանքից, դեռևս մնում է Անատոլիայի ամենանշանակալից [քաղաքներից] մեկը. տեղադրված է ծովեզերքին, վատ խնամված նավահանգիստ [ունի], կարող է ընդունել միայն փոքրիկ նավեր, բայց նրա առևտուրը բավական ընդլայնված է այն ժամանակից, ինչ ռուսները նավարկում են Սև ծովում. Մեգրելիայի, Վրաստանի և Պարսկաստանի քարավանները հաջորդաբար այնտեղ են դալիս և շատ մեծ ակտիվություն են հաղորդում Տրապիզոնի առևտրին: Նրա բնակիչները մեծ մասամբ զբաղված են պղնձադործությամբ, որի արտադրանքը մեծ սպառում ունի. փաշան, որը կառավարում է քաղաքը, իր հրամանատարության տակ ունի մեծ թվով ենիչերիներ, որոնք համարվում են կայսրության ամենաանհնազանդները. շարունակաբար տրվելով վիճաբանությունների և բռնարարքների երկու կողմ կազմող խռովարար խմբերի պատճառով, շաբաթ չկա, որ այս կատաղի զինվորները կռիվներ չանեն, որոնք միշտ ավարտվում են նրանցից շատերի մահով և հավասարապես տաղնապ են տարածում բոլոր թաղամասերում»[65].

Ըստ Ֆերիեր-Սովբեֆի վկայության՝ XVIII դ. վերջին քառորդին Տրապիզոնը, թեպետ զրկված իր նախկին պերճանքից, դեռևս մնում էր Անատոլիայի ամենանշանակալից քաղաքներից մեկը, և հետագայում նրա դերն էլ ավելի մեծացավ: Այսպես, 1808-1809 թթ. Թուրքիայով անցած անգլիացի Ջեյմս Մորիերը գրում է, որ «Սև ծովի նավահանգիստն է Տրապիզոն, որտեղից տարվում է Կ. Պոլսի առևտուրը»[66]: Իսկ ավելի ուշ Ֆ. Էնգելսը գրում է, որ «Կ.Պոլիսը և հատկապես ասիական Թուրքիայում գտնվող Տրապիզոնը հանդիսանում են ներքին Ասիայի, Տիգրիսի և Եփրատի հովիտների, Պարսկաստանի և Թուրքեստանի քարավանային առևտրի գլխավոր շուկաները: Եվ այդ առևտուրն արագորեն աճում է.... իր դիրքի շնորհիվ Տրապիզոնն ավելի է համակերպված այդ առևտրին, քան որևէ այլ

---

[65] Ferrieres-Sauvebœuf, Memoires historiques, politiques et geographiques des voyages du comte de Ferrieres-Sauvebœuf, fait en Turquie, en Perse et en Arabie, depuis 1782 jusqu'en 1789,t.1. Maestricht. 1790, p. 207-208.

[66] Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. Զ., Ե., 1934, էջ 285:

կետ»[67]: Ինչպես դիպուկ նկատել է Ֆերիեր-Սովբեֆը, Տրապիզոնի դերի և նշանակության բարձրացումը սերտորեն կապված էր Սև ծովում ռուսական ծովային առևտրի սկզբնավորման և զարգացման հետ: Կարևոր գործոն էր նաև Տրապիզոնի աշխարհագրական բարենպաստ դիրքը: Ըստ Ս. Ծոցիկյանի «Այս նաւահանդիստ քաղաքն ունեցած է մեծ վաճառականութիւն, հին ժամանակներէն սկսած մինչեւ վերջին ատեններս: Քիւրտիստանի, Լազիստանի, Թուրքիոյ ու Հայաստանի ներքին գաւառներու, եւ Պարսկաստանի ու Կովկասի առեւտրական ճամբաները կ'անցնին Տրապիզոնէ: Այս քաղաքը կուգան եւ ասկէ կը մեկնին ճամբորդներու մեծ խմբեր եւ խոշոր կարաւաններ, ապրանքներ բեռցուցած ուղտերու ու ջորիներու վրայ»[68]: Բացի տեղական բերքից (եգիպտացորեն, ծխախոտ, կիտրոն, լորի, ձիթապտուղ, կաղին, ընկույզ, շագանակ, խոզակաղին, ծվաղ և այլն) Տրապիզոնից արտահանում էին նաև կտավ, կապար, երկաթ, «այլև պղինձ Արզնոյ զոր քաջ զտեալ առաքեն ի Կոստանդնուպոլիս և Ցիսլիմեա. նաև կերպասեայ գործածք Հալպայ, Շամայ, Տիարպէքիրոյ, զորս տանին ի Մոսկովս: Յարուեստաւորս սորա երևելի են պղնձագործք, զորոց զգործ տանին ի Մոսկովս, ի Կոստանդնուպոլիս, և անտի աստ և անդ մինչև յԵգիպտոս. նաև հրահանագործք այս է՝ չախմախճիք, և մորթեգործք զորոց զվաճառ տանին մինչև յէրզիռում»[67]: Ծովային առևտրում բարգավաճում ցուցաբերելով հանդերձ՝ Տրապիզոնը, ըստ Ֆերիեր-Սովբեֆի, ուներ վատ խնամված նավահանգիստ: Ինճիճյանը ևս նշում է, որ «Նաւահանդիստ Տրապզունոյ ծանծաղ է և անպատսպար ի հիւսիսային հողմոց, ուստի նաւք ձմերեն ի Փլադանա»[70]:

1847 թ. Տրապիզոնում եղած Ֆերուխանը ևս նշում է, որ Տրապիզոնի նավակայքերը հյուսիս-արևմտյան սաստիկ քամի-

---

[67] Маркс К. и Энгельс Ф., Сочинения, т. IX, с. 384, հմմտ. Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Ե., 1967, էջ 212:

[68] Ծոցիկեան Ա., Արևմտահայ աշխարհ, Նիւ Եորք, 1947, էջ 771-772:

[69] Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն առաջին, հ. Ա., էջ 383:

[70] Նույն տեղում, էջ 390:

ներից անպաշտպան լինելու պատճառով նավերը գնում էին ձմեռնում Սյուրմենե կամ Պլատանա[71]:

Ավելի ուշ Ֆրանսիացի նշանավոր աշխարհագրագետ է. Ռեկլյուն Տրապիզոնի մասին գրում է հետևյալը. «Այս քաղաքն է եղել մշտապես Իրան գնացող վաճառականների և նրանց վաճառքի իջման նաւահանգիստը, ուր բերուել են նաև Պարսկասանից Արևմուտք ուղարկուած ապրանքները կարաւաններով: Քաղաքի նաւակայքը շատ վատն է, և անյահաջող եղանակին նաւերը ստիպուած են գնալ աւելի արևմուտք մրգաստաններով շրջապատուած շնորհագեղ Պլատանայի առջև կանգնելու»[72]: Նույն վիճակն է նշում նաև Ս. Ծոցիկյանը, գրելով, որ «Տրապիզոնի նաւահանգիստն այցելող մարդատար եւ ապրանքատար շոգենաւերը, ասկէ առաջ, խարիսխ կը ձդէին ծովուն բացերը, եզերքէն բաւական հեռու, ջրերուն մշտապէս ալէկոծ ու յորձանուտ վիճակին եւ կանոնաւոր քարափի չգոյութեան պատճառաւ»[73]:

Ֆերիեր-Սովրեֆը, ցավոք, Տրապիզոնի բնակչության թվի և ազգային կազմի մասին տվյալներ չի հաղորդում:

1813-1814 թթ. Փոքր Ասիայում եղած ուղեգիր Ջոն Մակդոնալդ Քիննեյրը հետևյալ ուշագրավ տեղեկությունն է հաղորդում. «Բնակչությունը (Տրապիզոնի -Ա.Ս.) հասնում է, ասում են, 15 հազար շնչի Թուրքերի, հույների, հրեաների, հայերի, վրացիների, մեգրելների, չերքեզների և թաթարների համասեռ խառնուրդի»[74]: Սակայն, ի տարբերություն Քիննեյրի հաղորդածի, Ղ. Ինճիճյանը գրում է, որ «Թիւ համօրէն բնակչաց է 8000 տուն. յորոց իբրև 500 տունք հայոց, 1500 յունաց, և 6000 տաճկաց. թաղք նորա 36, յորոց զուիթ թաղս

---

[71] Բարունակ Պէյի Ֆերուիխան, Ճանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան, յամի տեառն 1847, տպ. ի վանս Չ.Ս. Աստուածածնի յԱրմաշ, 1876, էջ 232:

[72] Ռեկլիւ էլիզէ, Լազիստան, Հայաստան եւ Քուրդիստան, Կիլիկիա, Փոքր Ասիա, Միջագետք, Ասորիք եւ Պաղեստին, թարգմանեց՝ Միաբան, Վաղարշապատ, 1893, էջ 47:

[73] Ծոցիկեան Ս., նշվ. աշխ., էջ 772:

[74] John Macdonald Kinneir, Voyage dans l'Asie-Mineure, l'Armenie et le Kourdistan, dans les annees 1813 et 1814, traduit de l'Anglais, par N. Perrin, tome deuxieme, Paris, 1818, p.86.

տան հայոց, իսկ մնացեալսն աւճկաց»[75]: 1836 թ. ճանապարհորդած Սենեքերիմ Տեր-Մինասյանը հաղորդում է, որ Տրապիզոնի «բնակիչներն են Հայ, Յոյն ու Տաճիկ: Հայերը հիմայ 3 եկեղեցի ու մէկ դպրատուն մը ունին. իրենք քաղաքին մէջը 500 տունի չափ կան, բայց գեղերուն մէջը 1000 տունի չափ, 200 տունի չափ ալ կաթոլիկ ըսված Հայերը ունին»[76]: Իսկ Մինաս վրդ. Բժշկյանը նշում է. «Հին ատենը շատ երևելի և բազմամարդ քաղաք էր Տրապիզոն, փառաւոր մարդիկ և փառաւոր շէնքեր ալ շատ կային. Սուլ. Ահմէտին ժամանակը տասնըութ հազար տուն կար, առաջ շատ աւելի էր. բայց հիմա հազիւ կէսը կելլէ: Քաղաքացիք երկու հարիւր տուն հազիւ կելլեն, առաջ շատ էին. իսկ գեղացիք հինգ հարիւրէն աւելի են»[77]:

Իսկ 1829-1830 թթ. Փոքր Ասիայում ճանապարհորդած Ժան-Շառլ Բեսը հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Որոշ ճանապարհորդներ Տրապիզոնի բնակչությունը շատ սխալմամբ հաշվում են 250 հազար հոգի, այնինչ այն կազմում է մոտավորապես 45 հազար հոգի: Արվարձանները բավական ընդարձակ են և զբաղեցված են բացառապես հույներով և հայերով: Բուն քաղաքը բնակեցված է թուրքերով»:[78] Ավելի ուշ շրջանի վերաբերող տվյալ է տալիս Արել վրդ. Մխիթարյանցը: Ըստ նրա՝ Տրապիզոնում «դիւղացւոց հեազհետէ գաղթելովը՝ հիմա չորս հարիւր տուն լուսաւորչակրօն հայք կան»[79].

Ըստ Ն. Ուշակովի՝ Տրապիզոնի բնակչության թիվը հասնում է մինչև 20 հազար հոգու. նրանց մեծ մասը թուրք են,

---

[75] Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն առաջին, հ. Ա., էջ 387:

[76] Օրագրութիւն ճանապարհորդութեան պարոն Ա. Սենեքերիմայ Տէր Մինասեան Կոստանդնուպօլսեցւոյ Յամի Տեառն 1836, Եղանակ (օրացոյց), 1839 ամին ի Զմիւռնիա, էջ 117:

[77] Հ. Մինաս վրդ. Բժշկեան, Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեաւ ծով, Վենետիկ,1819, էջ 91, 82:

[78] Besse Jean-Charles ,Voyage en Crimee, au Cavcase, en Georgie, en Armenie, en Asie-Mineure et a Constantinople, en 1829 et 1830 . Paris, 1838, p. 302:

[79] Աբէլ վրդ. Մխիթարեանց, Վէպ գաղթականութեան Հայոց Տրապիզոնու, Կոստանդնուպօլիս, 1857, էջ 55:

600 աուն հայ և մոտ 1000 տուն հույն[80]: Ուշակովին կրկնում է Ֆրանսիայի Ֆ. Ֆոնտոնը[81]: Իսկ 1839-1840 թթ. Արևմուտքում ճանապարհորդած ֆրանսիացի Շ. Տեքսիեն նշում է, որ Տրապիզոնի քրիստոնյա բնակչության թիվը հասել է մոտ 18 հազար հոգու, այնքան հայ կա, որքան հույն: Վերջիններիս մեջ կան մի քանի ընտանիք Լազիստանի բնիկներից, որոնք հայտնի են մեցո անունով[82]: Իսկ 1847 թ. ճանապարհորդած Ֆերուհիանը գրում է, որ «Տրապիզոնն ունի 33 հազար բնակիչ՝ տաճիկ, հայ ու յոյն. 5000-էն աւելի տուն. 3000 տաճկի, 1000 յունաց, 588 հայ, 140 հռովմէական և 9 բողոքական հայոց»[83]:

Այսպիսով՝ համադրելով վերը բերված հեղինակների տեղեկությունները, կարելի է ասել, որ XVIII դ. վերջին քառորդին և XIX դ. առաջին կեսին Տրապիզոնի բնակչությունը կազմել է մոտ 30-40 հազար մարդ, և որ հայերն իրենց թվաքանակով գրավել են երրորդ տեղը, թուրքերից և հույներից հետո, ունեցել են մոտ 400-500 տուն, 2000-3000 հոգի: Սակայն հայոց թիվը հաճախակի է շեշտակի փոփոխվել: Հայ ազգաբնակչության թվաքանակի այդ վայրիվերումները պայմանավորված էին Տրապիզոնում և շրջակայքում տիրող անկայուն իրավիճակով:

Իր իրավիճակը Տրապիզոնում և շրջակայքում անկայուն է եղել, վկայում է նաև Ֆերիեր-Սովբեֆը, գրելով, որ փաշայի հրամանատարության տակ գտնվող մեծ թվով ենիչերիները կայսրության մեջ ամենաանհնազանդներն են, շարունակ վիճում և բռնություններ են գործադրում, և այդ կռիվները միշտ ավարտվում են մահերով և տագնապ են տարածում քաղաքի թաղամասերում: 1805-1806 թթ. Հայաստան և Պարսկաստան

---

[80] Ушаков Н., История военных действий в Азиатской Турции в 1828 и 1829 годах, Санкт Петербург, ч. I, 1836, с. 132.

[81] La Russie dans L'Asie-Mineure, ou campagnes du maréchal Paskévitch en 1828 et 1829; et tableau du Caucase, envisagé sous le point de vue geographique, historique et politique; par Felix Fonton, Paris, 1840, p. 187.

[82] Texier Charles, Description de l'Arménie, la Perse et la Mesopotamie, Parise, 1852, t. I, p. 52.

[83] Բարունակ Պէյի Ֆէրուհիան, Ճանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան, յամի տեառն 1847, ի վանս Զ.Ս. Աստուածածնի յԱրմաշ, 1876, էջ 224:

ճանապարհորդած Ֆրանսիացի ուղեգիր Պ.-Ա. Ժոբերը հիշատակում է, որ «Տրապիզոնի աղան պատերազմի մեջ էր հին Լազերի երկրի բնակիչների դեմ»[84]: Իսկ Հ. Հովակիմյանը հաստատում է, որ «Ճանիկի գաւառին մէջ, մինչեւ ԺԹ. դարու կէսերը կ՚իշխէին տէրէպէյիները, որոնք մինչեւ վերջը պատերազմի մէջ էին իրարու եւ կեդրոնական իշխանութեան հետ»[85]: Իսկ Աբել վարդապետը գրում է, որ «... 1765-էն մինչեւ 1772 թուականները՝ Տրապիզոնի քաղաքական խաղաղութիւնը կը խռովի եւ ժողովուրդը տակնուվրայ կըլլայ Տէրէպէկներու պատերազմաց երեսէն, որոնք Տրապիզոնի մէջ քանի մը կարգ ըլլալով, այսինքն հարիւրք, որք են բուն քաղաքացիք, իննուսուն եւ հինգք եւ քսան եւ հինգք, այսինքն եկամուտք, այս կարգերը քաղաքին առանձին առանձին մասերուն իշխելով, մէկ մէկու դէմ կռիւ կը բանային մէկզմէկ յաղթահարելու... Անատոլուի ներքին քաղաքները եւ Տրապիզոնի գիւղերն անգամ, ուր որ ինքնագլուխ իշխաններ կը նստէին, աւելի հանգստութիւն կար քրիստոնեայ ժողովրդոց համար, քան թէ Տրապիզոն եւ անոր նման Սեւ ծովու հարաւային ափանց վրայ եղած ու որիշ քաղաքները»[86]: Ահա այս ամենի հետևանքով Տրապիզոնի քրիստոնյա բնակչությունը հեռացավ քաղաքից դեպի Ղրիմ, Կ. Պոլիս, Ջանիկ: Երկյուղն այնքան էր տիրել քաղաքին, որ քրիստոնյաները նույնիսկ եկեղեցի չէին կարողանում գնալ և թաղից թաղ անցնել: Եվ ըստ Աբել վարդապետի՝ «աս հալածանաց երեսէն Հայոց եկեղեցիներն ալ Ս. Օգսէնտ, Զարխափան եւ Ս. Յովհաննէս ամայի մնացին: ... մնացորդ ազգին երկու մասն ալ այնքան քիչցան, որ Աստուածամայր եկեղեցին հազիւ կը հաւաքուէին»[87]: Բարեբախտաբար, հետագայում դերեբեյների իշխանությունը թուլացավ և վիճակը փոխվեց: Դրան նպաստեց նաև եվրոպական տերությունների հյուպատոսների և առևտրականների ներկայությունը քաղաքում: Քրիսաոնյանե-

---

[84] P.- Am. Jaubert, Voyage en Armenie et en Perse, Fait dans les annees 1805 et 1806, Paris (s.d.), p. 7.

[85] Պատմութիւն Հայկական Պոնտոսի, պատմագրեց Յովակիմ Յովակիմեան (Արշակունի), Պէյրութ, 1967, էջ 710-711:

[86] Աբէլ վրդ. Մխիթարեանց, նշվ. աշխ., էջ 45-46, 53:

[87] Նույն տեղում, էջ 46,76:

ը տակավ առ տակավ գլուխ բարձրացրին, քաղաքից հեռացածների մի մասը վերադարձավ, ամայի մնացած եկեղեցիները սկսեցին գործել:

Տրապիզոնում հայերն ունեին չորս եկեղեցի[88], *որոնց պատերին, ինչպես նաև տապանաքարերին եղած արձանագրությունները վերաբերում են XIV-XV դդ.: Այդ չորս եկեղեցիներն էին Աստվածամայր, Զարխափան (կամ Ս. Ստեփանոս), Սբ. Հովհաննես, Սբ. Օգսենտ:*

ARMAN MALOYAN
Armenian State Pedagogic University

THE FACTS ABOUT TREBIZOND BY L.F. FERRIERES-SAUVEBOEF (THE LAST QUARTER OF THE 18th CENTURY)

Summary

Among the European sources the voyage memoirs of the French political figure and diplomat L.F. Ferrieres-Sauvebœuf *(1750-1814)* contain information about the history of the Orient of the last quarter of the 18th century. He was sent on a diplomatic mission to Constantinople and Spahan by an assignment of the French government.

L.F. Ferrieres-Sauvebœuf returned home in 1788. He published twice his memoirs in Maastricht and Paris (1790). For the third time his memoirs were published in Paris (1807) in two volumes: "Voyages faits en Turquie, en Perse et en Arabie."

---

[88] Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն առաջին, հ. Ա., էջ 387, նաև Մինաս վրդ. Բժշկեան, Նշվ. աշխ., էջ 79, Աբել վրդ. Մխիթարեանց, Նշվ. աշխ., էջ 29-31, Յովակիմեան Յ., Նշվ. աշխ., էջ 83, Համազասպ Ոսկեան Հ., Աեբաստիայի, Խարբերդի, Տիարպէքիրի եւ Տրապիզոնի նահանգներու վանքերը, Վիեննա, 1962, էջ 234:

The Chapters XXI-XXIV are devoted to the description of Armenia, Georgia, Dagestan and Iranian Aderbaigan (Atropatene). The author gives information about different inhabited areas, political and economic state of the countries which he had visited, natural resources, productive forces, the ethnic structure of the population, customs and traditions, religious aspects, historic and military situation.

This work is interesting and valuable, because it had been written by a participant and a witness of the described events. Anyhow, it is necessary to be cautious and critical in regard to its information.

Along with other cities L.F. Ferrieres-Sauvebœuf informs also about Trebizond, especially concerning its history. Unfortunately his work doesn't contain information about the number of the population and its ethnic structure. Other authors (who visited Trebizond) gave such information, particularly, about the Armenian population.

In the last quarter of the 18th century and the first half of the 19th century approximately 30-40 thousand people lived in Trebizond. Armenians (400-500 families, 2000-3000 people) were the third in the total number of the population of the city after Turks and Greeks. But the number of Armenians changed very often owing to the unstable state in Trebizond and neighbouring territories. It is testified also by L.F. Ferrieres-Sauvebœuf who mentions that many yenichers who were under command of the pasha were committing criminal actions which resulted in deaths and that troubled peaceful population and alarmed different quarters of Trebizond.

There were four Armenian churches in Trebizond. Inscriptions on the walls of the churches and the epitaphs on gravestones were made in the 14th-15th centuries.

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
ՀՊՄՀ

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՌԻՈՒՄ XIX դ. ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ

Հայտնի է, որ ցարական կառավարությունը Անդրկովկասը միշտ էլ դիտել է իր նվաճողական-դաղութային քաղաքականության նպատակների կտրվածքով, իր շահերին ծառայացրել աղդային-ազատագրական շարժումները, վարչական բաժանումներ կատարելիս անտեսել ազգային էթնիկական սկզբունքը:

XIX դ. առաջին 30-ամյակի ռուս-պարսկական պատերազմների ընթացքում ռուսական կառավարությունը շարունակ միջոցներ էր որոնում Անդրկովկասում իր նվաճած ժողովուրդներին իրեն ձեռնտու վարչական-տնտեսական պայմաններում դնելու: Նոր իրադրություն էր ստեղծվում, մանավանդ մի բնագավառում, որ չափազանց մեծ պատմական-մշակութային նշանակություն ուներ: Երկու պատերազմներին հաջորդած երկու գաղթերը արմատականորեն փոխում էին հայ ազգաբնակչության կազմը: Մի կողմից դրանք ուժեղացնում էին Ռուսաստանին անցած հայկական տարածքների հայ ազգաբնակչության կազմը, մյուս կողմից ավելի էին խորացնում ու անջրպետում հայ ժողովրդի հատվածականությունը:

Ժողովրդական-վիճակագրական այդ փոփոխություններն ընդգրկեցին նաև Լոռվա տարածքը: Լոռիում Արևմտյան Հայաստանի, Ջավախքի, Ղարաբաղի հաշվին վերաբնակեցում կատարելը ցարիզմի քաղաքականության մի մասն էր կազմում, և այդ գործին անմիջական մասնակցություն էին ունենում ռուսական բանակի ռազմական գործիչները /Ցիցիանով, Տորմասով, Գուդովիչ, Պասկևիչ, Երմոլով և այլոք/:

Դեռևս դարասկզբին Արևելյան Վրաստանում հաստատվելը հնարավորություն տվեց ռուսական դիվանագիտությանը նախապատրաստել իր սահմանների ընդլայնման ծրագիրը: 1800 թ. հունվարի 23-ին Վրաստանում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Կ. Ֆ. Կնորինգին տված հրա-

հանդում Պավել Առաջին կայսրը պահանջում էր երկրամասին տիրելու գործում նախապատվությունը տալ այդ երկրամասի ժողովուրդներին Ռուսաստանի կողմը կամավոր թեքելու գործելակերպին[89]:

Ակնհայտ է, որ Ռուսաստանը, ռազմական միջոցներին զուգընթաց, կարևորում էր նաև ժողովրդագրական քաղաքականությունը, և տարածաշրջանը զբաղեցնող հայությանը վերապահվում էր առանձնահատուկ տեղ: Այդ մասին ասվում էր Վրաստանում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Պ. Դ. Ցիցիանովին ուղղված կայսր Ալեքսանդր Առաջինի 1802 թ. սեպտեմբերի 26-ի հրամանագրում: Ընդգծվում էր, որ «...խորհուրդ եմ տալիս հայերի նկատմամբ վարել հատուկ քաղաքականություն նրանց մեր կողմն ուղղելու նպատակով»[90]:

Արևելյան Վրաստանի Ռուսաստանին միացումով /1801 թ./ Քարթլի-Կախեթը դարձավ ռուսական կայսրության վարչա-տարածքային միավորներից մեկը[91]: Քարթլի-Կախեթի հետ միասին Ռուսական կայսրության տիրապետության տակ անցան նաև հյուսիսային Հայաստանի Լոռի-Փամբակ, Բորչալու և Շամշադին երկրամասերը[92]: Փաստորեն, պատմական այդ ակտը ևս մի դրդիչ գործոն հանդիսացավ դեպի Ռուսաստանին անցած տարածքներ գաղթի նոր ալիք սկսվելու համար: Ցարական արքունիքը, բնականաբար, խրախուսում էր ներգաղթը, քանի որ նորանվաճ տարածքները պաշտպանելու համար ռուսական արքունիքին հարկավոր էր հուսալի բնակչություն, անհրաժեշտ էր ամրապնդել կայսրության նորահաստատ սահ-

---

[89] Մելքոնյան Ա., Ժողովրդագրական տեղաշարժերը Ջավախքում և Ախալցխայի գավառում XIX դ. առաջին քառորդին, Իրան-նամէ, թիւ 1-3, Ե., 1998, էջ 12:

[90] Акты кавказской археографической комиссии /այսուհետև՝ АКАК/, т. 2, док. 5, Тифлис, 1868.

[91] История Грузии, т. 1, Тифлис, 1962, с. 402-406. См. также АКАК, т. 6, с. 467.

[92] Присоединение Восточной Армении к России, сб. док. под ред. Ц. Агаяна, т. 1, Е.,1972, с. 7; Иоаннисян А. Р., Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Е., 1958, с. XXIV.

մանամերձ գոտին՝ Լոռի-Փամբակը և Ծալկան[93]: Այսպես Լոռի նկան Ղարաբաղի մելիքները, որոնց մասին վրացական արքունիքում Ռուսաստանի ներկայացուցիչ Կովալենսկին գրում է իր կառավարությանը. «Մելիքները հայոց թագավորության անկումից հետո, հին ժամանակներից պահպանել են իրենց կալվածքների անկախությունը մինչև նորագույն ժամանակները»[94]: Իրենք մելիքները քանիցս դիմել էին ռուսական կառավարությանը, իսկ 1799 թ. Մելիք-Ջումշուդը և Մելիք-Ֆրեյդունը անձամբ գնացել էին Պետերբուրգ և ընդունվել Պավել Առաջին կայսեր կողմից: Կայսրին ներկայացրած խնդրագրի կետերից մեկը նշում էր, որ մելիքներին թույլատրվի բնակություն հաստատել Լոռու գավառում[95]:

Վերարնակեցումները շարունակվեցին նաև հետագայում, իսկ Փամբակը շարունակում էր մնալ ռուս հրամանատարության ուշադրության կենտրոնում, քանի որ որ այն հարևան էր Ախալքալաքի մարզին, իսկ վերջինս և Ախալցխան նվաճելու միտքը հանգիստ չէր տալիս ռուսական իշխանություններին:

Ռազմական նախարարին գրած զեկուցագրում գեներալ Պաուլուչչին տեղեկացնում էր, որ Ախալքալաքի ու շրջակայքի նվաճումով մենք «կապահովագրենք Բորչալուլուի ղինստանցիան և ամբողջ ամայացած Սոմխեթիան և կվերականգնենք նրանց նախկին ծաղկուն վիճակը, իսկ տեղի բնակչությանը կպարգևենք կայուն խաղաղություն»[96]: Պաուլուչչին Լոռին վերաբնակեցնելը շահավետ էր համարում մի քանի տեսանկյունից. ա/ հողագործությամբ և անասնապահությամբ զբաղվելու դեպքում մեծ օգուտ կբերեն պետությանը և բ/ այդ տարածքում գաղթականներ բնակեցնելով՝ Փամբակի հետ հաղորդակցությունը կդառնար անվտանգ և վերջապես ցարական գանձարանը կունենար շոշափելի օգուտներ, քանի որ այդ գաղթականները մի քանի տարի հետո գանձարանին պետք է վճարեին ընդունված չափով հարկեր: Բացի այդ, գաղթած

---

[93] Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դ. և 20-րդ դ. առաջին քառորդին,Ե., 2003, էջ 156:

[94] Լեո, Հայոց պատմություն, համալսարան հրատ.,Երևան, 1927, էջ 14:

[95] Աղայան Օ., Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Ե., 1981, էջ 143:

[96] AKAK, m. 5, 1873, cmp. 183;

ժողովուրդը կապահովեր Ալավերդու և Ախթա-լայի գործարանները բանվորական ուժով: Ցիցիանովը 1804 թ. հոկտեմբերի 13-ին Կովկասի լեռնային վարչության պետ, կոմս Մուսին-Պուշկինին գրում է. «Ինչ վերաբերում է փրկություն փնտրող և Երևանից դուրս եկած ընտանիքներին, Թիֆլիսից ես ուղարկեցի հայ արքեպիսկոպոս Իոաննեսին Փամբակ, այն բանի համար, որ նրանց հակի դալ մեր մոտ... պարտավորված լինելով նրանց բնակեցնել» Լոռիում, առաջին հերթին գործարաններին պատկանող հողերում[97]:

Այս ծրագիրն իրականացնելու համար գործի են դրվում բոլոր հնարավոր միջոցները: 1811 թ. աշնանը գեներալ Պաուլուչչիի գաղտնի հրամանով գնդապետ Լիսանևիչը եռանդուն գործունեություն ծավալեց դեպի Լոռի նոր ներգաղթ խրախուսելու ուղղությամբ: Այդ ջանքերի արդյունքում 100 ընտանիք կարսեցիներ /15 ընտանիք հայեր/, իրենց համայնքի առաջնորդ Աբգուլլահ աղայի գլխավորությամբ անցան թուրք-ռուսական սահմանը և բնակություն հաստատեցին Լոռի-Բորչալուում:

Լոռու, Բորչալուի և Փամբակի վերաբնակեցման հարցը մասամբ լուծվեց 1804 թ. Երևանյան արշավանքից հետո, երբ Երևանի խանությունից այս շրջանները վերաբնակեցվեցին շուրջ 2 հազար հայ ընտանիքներ, սակայն դրանց մի մասը հետագայում տեղափոխվեց Ելիզավետապոլի օկրուգ[98]: Իսկ ցարական կառավարությունը շարունակում էր նոր արտոնություններ խոստանալ գաղթողներին: Իհարկե, այս բարյացակամ վերաբերմունքը ցուցաբերվում էր լոկ այն բանի համար, որպեսզի շահագրգռեն գաղթողներին:

Երբ 1807 թ. մարտի սկզբներին ռուսները մտան Կարսի նահանգ, Բաշ-Շորագյալի մոտ գերեցին շրջակայքի 500 բնակիչ քրիստոնյա հայերի և Գուդովիչի հրամանով բնակեցրին Սխուրյանի ձախ ափին, ինչպես նաև՝ Փամբակում[99]: Փոքրինչ ավելի ուշ, Կարսի գյուղերից 500 ընտանիք ռուսական

---

[97] Присоединение Восточной Армении к России, т. 1, док. N 186.

[98] Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը 19-րդ դ. առաջին 30-ամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1989, էջ 38-39:

[99] Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դ. և 20-րդ դ. առաջին քառորդին, էջ 119:

դինվորական մարմինների դրդմամբ տեղափոխվեց դարձյալ Փամբակ[100]: Նույն ժամանակ ռուսների աջակցությամբ 700 ընտանիք կարսեցի հայեր գաղթում են Շորագյալ և Փամբակ[101]: Արտաղաղթին մեծապես նպաստում է նաև նոյեմբերին վրա հասած սովը. «...Այս մահաբեր սաստկութենէ սովուն երկիրն Պարսայ և Կարնոյ ցիրուցան եղեն, ոմանք ի Ղաղախ, ոմանք ի Գանձակ, ոմանք ի Փայտակարան, և ի Վիրս, և ոմանք ի ճանապարհի ոչ կարեին գնալ ի վրա երկրի անկանէին առանց ապաշխարութեան ը բարց խորհրդոյ մեռանեին և լինէին գաղանաց և թռչնոց կերակուռ, և որք գնացին գնացին...»[102]:

1810 թ. վերջերին և 1811 թ. ընթացքում գաղթած կարսեցիներն ու արևմտահայ մյուս վերաբնակիչները ևս տեղավորվեցին Բորչալուում և Փամբակում:

Արևմտյան Հայաստանի արևելյան որոշ գավառներից գաղթի նոր ալիք է սկսվում 1822-1823 թթ. թուրք-պարսկական պատերազմի արդյունքում: Նրանց մի մասը դարձյալ հաստատվում է Լոռիում[103]: Նկարագրելով Լոռվա գավառը, Պոտտոն գրում է. «...Փարթամ Լոռու տափաստանն արդեն այն ժամանակ բավականին խիտ բնակեցված էր Թուրքիայից (իմա՝ կայսրության կողմից բռնաղավթված հայկական տարածքներից) ու Երևանի խանությունից գաղթած հայերով»[104]:

Նույնը, ինչպես դիտենք, կատարվեց նաև 1826-1828 թթ. ռուս-պարսկական և 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո: Թուրքմենչայի և Ադրիանապոլսի պայմանագրերի համաձայն, շուրջ 140 հազար հայեր Պարսկաստանի և Թուրքիայի տիրապետության հայկական շրջաններից

---

[100] AKAK, m. 3, cmp. 603, 607-608.

[101] Մատենադարան, Արխիվային բա AKAK, m. 3, cmp. 603, 607-608;ժին, ձեռագիր N 6517, թ. 2:

[102] Նույն տեղում, թ. 4:

[103] Մելքոնյան Ա., Էրզրում, Ե., 1998, էջ 127:

[104] Поммо В. , Кавказская война в отдельных эпизодах, легендах и биографиях, т. 3, вып. 1, с. 56. Տես նաև Քյուրքչյան Ա., 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմը, Ե., 2000, էջ 22:

գաղթեցին և վերաբնակվեցին Արևելյան Հայաստանում[105]: Իհարկե, այդ գաղթերը ձեռնտու էին և ռուսաց կառավարությանը, որը ցանկանում էր ստվարացնել ռուսական կայսրությանն անցած տարածքների հայ աշխատավոր բնակչության թիվը: Ներգաղթը կազմակերպելու համար 1830 թ. հունվարի 28-ին Թիֆլիսում հիմնվում է գաղթականական կոմիտե Զավիյելսկու նախագահությամբ[106]:

Գաղթականներին վերաբնակեցնելու հարցում ռուսական իշխանությունները խստորեն հետևում էին նախօրոք նախանշված վայրում բնակեցնելու խնդրին: Այդ հարցում կարևոր էր ռուսական իշխանությունների շահագրգռությունը, որոնք ցանկանում էին գրավված հողերը բնակեցնել քրիստոնյա հայերով[107]:

Այսպիսով, քննարկելով XIX դ. առաջին 30-ամյակին Լոռվա տարածաշրջանի ժողովրդագրական իրավիճակի հիմնախնդիրը՝ կարելի է հանգել եզրակացության, որ գաղթերի արդյունքում որոշակիորեն փոխվեց տարածաշրջանի որոշ բնակավայրերի ազգային կազմը: Պայմանավորված Անդրկովկասի աստիճանական միացման գործընթացով, արևելահայ և արևմտահայ ստվար զանգվածներ՝ անձի ու գույքի ապահովություն ձեռք բերելու ակնկալությամբ, ինքնակամ արտագաղթում էին ռուսական հպատակություն ընդունած տարածքներ՝ այդ թվում՝ Լոռի-Փամբակ: Ռուսական զինվորական իշխանությունները, առաջնորդվելով երկրամասը իբրև գաղութ, իսկ այնտեղ ապրող ժողովուրդներին որպես հպատակներ ընկալելու միտումներով և նպատակ ունենալով տնտեսապես վերականգնել և վերաբնակեցնել կայսրության նորանվաճ տարածքները, հատկապես նախորդ շրջանում մեծապես տուժած Լոռի-Բորչալուն, հնարավորինս նպաստում էին բնակչության արտագաղթին՝ հաճախ հաշվի չնստելով քրիստոնյա բնակչության կամքի հետ:

---

105 Պարսամյան Վ. Ա., Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, Ե., 1978, էջ 96:

106 АКАК, т. 7, док. 822;

107 Մելքոնյան Ա., Զավախքը 19-րդ դ. և 20-րդ դ. առաջին քառորդին, էջ 185:

Ակնհայտ է, որ ռուսական կառավարությունը իր ծրագրերն իրականացնելու համար հենվում էր առաջին հերթին հայկական աարրի վրա վրացիներին համարելով քաղաքականապես անվսահելի ժողովուրդ, մի բան, որը սակայն, վրաց պատմաբանների ու մամուլի կողմից մեկնաբանվում է որպես ռուսական կառավարության և հայ ազգային ազատագրական գործիչների միջև փոխհամագործակցություն, իբրև թե վերջիններս առաջնորդվում էին որոշակի ծրագրով «մեկ ամբողջական տարածք ստեղծելու նպատակով գաղթավայրեր ընտրելցրված հայերի համար»[108]: Մինչդեռ հայ հասարակական-քաղաքական գործիչները հասկանում էին, որ Անդրկովկասում հայ ժողովրդի ազատագրման հարցի լուծումը շաղկապված էր Ռուսաստանի արտաքին քաղաքականության հետ, իսկ վերջինս կառուցվում էր միջազգային հարաբերությունների բոլոր հանգամանքների հաշվառումով և պայմանավորված էր առաջին հերթին Ռուսաստանի հեռամետ նպատակների իրականացմամբ: Ըստ այդմ էլ հայ գործիչները ստիպված էին որոշակիացնել իրենց պահանջները, միահյուսել դրանք Ռուսաստանի արտաքին քաղաքական նպատակների հետ: Հայտնի է նաև, որ հասատվելով նոր տարածքներում, ցարական Ռուսաստանը իր կարգերն ու վարչատարածքային բաժանումն էր կատարում այստեղ:

HASMIK AMIRJANYAN
Armenian State Pedagogic University

THE POLICY OF THE RUSSIAN EMPIRE IN LORY IN THE FIRST THREE DECADES OF THE 19th CENTURY

Summary

The Russian imperial government always considered Transcaucasia from point of view of its colonial policy. On the one hand, the Tsarist politicians put national-liberation movements into

---

[108] Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում /1988-1990/, նյութերի ժողովածու, թարգմ. Հրաչյա Բայրամյանի, Ե., 2001, էջ 56:

service of their interests and, on the other hand, carried out administrative divisions without taking into consideration ethnic factor.

After the Russian-Persian wars the Russian government created administrative-economic conditions (serving its own interests) for the peoples of Transcaucasia. Meanwhile, in the course of time the demographic structure of the Armenian population underwent some changes. These changes involved also the territory of the Armenian Lori region.

The settlement in Lori by the Armenians arriving from Western Armenia, Javakhk and Artsakh constituted a part of the Tsarist government's policy. It is obvious that Russia along with military means realized also the demographic policy to reinforce its presence in the Transcaucasian regions. The Tsarist officials aiming at reconstruction and resettlement of the conquered territories greatly applied the immigration policy without taking into consideration the will of the Christian population. It resulted in undesirable demographic changes full of conflict aftereffects. The immigration policy of the Russian Empire concerning the Armenians has been misunderstood and misinterpreted in the Georgian historiography and media.

The Armenian socio-political figures understood that the solution of the liberation movement of the Armenian people was connected with the foreign policy of the Russian Empire which, in its turn, was interrelated with the latter's interests and their realization in every given geopolitical situation. Consequently the Armenian socio-political figures had to adapt their demands to the aims of the foreign policy of the Russian Empire.

It is well known that the Russian Empire established its governing and administrative divisions in the new conquered territories which enabled the Tsarist government to conduct a flexible policy from point of view of facilitating the colonial governance. One of the methods of such policy was firing of national conflicts which had disastrous consequences for the Armenian population.

ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

1856 թ. «ՀԱԹԹԸ ՀՅՈՒՄԱՅՈՒՆԸ» ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռուս-Եվրոպական հակամարտության հիմքում ընկած էր Մերձավոր Արևելքում մեծ տերությունների պայքարը գերիշխանության համար. «Մի կողմից այդ գերիշխանությանը հավակնում էր ցարական Ռուսաստանը, իսկ մյուս կողմից՝ Անգլիան և Ֆրանսիան... Երկու կողմերն էլ հետապնդում էին անարդար, զավթողական նպատակներ»[109]: Ցարական Ռուսաստանը ձգտում էր հաստատել իր ազդեցությունը Թուրքիայում: Անգլիան և Ֆրանսիան նույնպես շտապում էին հաստատել իրենց քաղաքական ու տնտեսական գերիշխանությունը Թուրքիայում և Մերձավոր Արևելքում: Անգլիան և Ֆրանսիան մտավախություն ունեին, որ Ռուսաստանը կտիրանա Թուրքիային: Իսկ Նիկոլայ Առաջինը, Թուրքիային համարելով «հիվանդ մարդ», երկյուղում էր, որ Թուրքիայի «հոգեվարքը» այնքան էլ հեռու չէ, և Թուրքական կայսրությունը կարող է փլվել, և այդ պարագայում Մերձավոր Արևելքին կտիրանա Անգլիան. «Ցարը (Նիկոլայ Առաջինը - Գ.Հ.) Անգլիային առաջարկում էր Թուրքական կայսրության մասերը բաժանել Ռուսաստանի և Անգլիայի միջև»[110]:

Քաղաքական այս «խաղերում» Ռուսաստանը աչքաթող էր արել Ֆրանսիային, որը ցարի կարծիքով, չէր ցանկանա պատերազմի մեջ մտնել, և Ավստրիային, որն իր կարծիքով, չի դիմագրի Ռուսաստանին: Անգլիան ցարին մերժեց Թուրքիայի վերաբերյալ որևէ համաձայնություն կնքել Ռուսաստանի հետ, մանավանդ որ նման համաձայնությունը կհարուցեր Ֆրանսիայի և Ավստրայի կասկածները: Անգլիայի մերժումը ստանալով՝ Նիկոլայը որոշեց հարձակվել Թուրքիայի վրա:

1853 թ. նշանավորվեց ռուս-թուրքական պատերազմով, որի սկզբնական շրջանում ռուսական զորքն ու նավատորմը

---

109 История дипломатии, т. 1, М., 1959, с. 642.
110 Նույն տեղում, էջ 643:

հաղթանակ էր տանում: Ռուսաստանի հաջողությունները պատերազմի թատերաբեմում ստիպեցին Անգլիային և Ֆրանսիային որոշակի քայլերի դիմել՝ պայմանագիր կնքել Թուրքիայի հետ և պատերազմ սկսել Ռուսաստանի դեմ: Անգլիային և Ֆրանսիային միացան նաև Ավստրիան և Պրուսիան: Ռուսաստանը պարտվեց, և 1856 թ. կնքվեց Փարիզի դաշնագիրը, որով Սև ծովը հայտարարվեց չեզոք, Ռուսաստանն էլ զրկվեց Սև ծովում նավատորմ ունենալու իրավունքից: Ըստ այս դաշնագրի երրորդ հոդվածի, Թուրքիային վերադարձվեցին ռուսական զորքերի գրաված տարածքները՝ Կարսը, Արդահանը: Օսմանյան պետությունում ապրող քրիստոնյաները անցնում էին եվրոպական տերությունների հովանավորության տակ: Սակայն եվրոպական տերությունները հովանավորում էին Թուրքիային և ամենևին մտահոգված չէին Թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների ճակատագրով:

Ղրիմի պատերազմից հետո եվրոպական տերությունները բացահայտ ֆինանսական և տնտեսական ճնշում են գործադրում Թուրքիայի վրա, և վերջինս, ֆինանսա-տնտեսական կախման մեջ է ընկնում այդ պետություններից: 1850-ական թթ. Թուրքիայում սկսվում է բարեփոխումներ անցկացնելու շրջան: Փարիզի կոնֆերանսի նախօրյակին սուլթան Աբդուլ Մեջիդը իր դաշնակիցների հորդորով, կարելի է ասել՝ նրանց ճնշման ներքո, 1856 թ. փետրվարի 18-ին հրապարակեց «Հաթթը հյումայունը», որը նախատեսում էր բարեփոխումներ կատարել, արտոնություններ տրամադրելով Թուրքիայում ապրող ոչ մահմեդական ժողովուրդներին՝ քրիստոնյաներին:

Թանզիմաթով ենթադրվում էր պահպանել Թուրքահպատակների անձի, ունեցվածքի և պատվի անձեռնմխելիությունը: «Հաթթը հյումայունով» Օսմանյան կայսրությունը ձգտում էր Փարիզի դաշնագրի կնքման նախօրյակին համաշխարհային հասարակությանը ցուցադրել, որ ինքը կարող է լուծել իր երկրի բարեփոխումների խնդիրը: Փարիզի դաշնագրով Օսմանյան Թուրքիան պաշտոնապես դասվում էր քաղաքակիրթ պետությունների շարքը, ինչի փոխարեն նրանից պահանջվում էր բարենորոգել իր երկիրը՝ բոլոր հպատակներին անխտիր շնորհելով հավասարություն:

Օսմանահպատակ հայերի և մյուս քրիստոնյաների համար այս հրովարտակը կարևոր նշանակություն ուներ, քանի որ, հիմնվելով նրա վրա, եվրոպական պետությունները ճնշում են գործադրել Թուրքիայի վրա ի նպաստ նրա քրիստոնյա

ընակիչների ինքնավարության, և որը դաղափարախոսական ու իրավական հիմք էր դառնալու հայերի ու հույների աղգային ներքին կանոնադրությունների համար: Այն ուներ հույժ կարևոր ձևակերպում. «Նորին կայսերական Մեծության Սուլթանը, մշտապես մահոգված իր հպատակների բարօրությամբ, շնորհելով հրովարտակ, որով բարելավում է նրանց վիճակը առանց դավանանքի կամ ցեղի խտրության, և հաստատվում են նրա վեհանձն մտադրություններն իր կայսրության քրիստոնեական աղգաբնակչության նկատմամբ և կամենալով այդ մասին իր զգացմունքների նոր ապացույց տալ, որոշեց պայմանավորվող Տերություններին հաղորդել վերոհիշյալ, սեփական մղմամբ հրապարակած հրովարտակը: Պայմանավորվող Տերություններն ընդունում են սույն հաղորդման բարձր կարևորությունը, ընդ այնմ հասկանալով, որ այդ հաղորդումը ոչ մի դեպքում հիշյալ պետություններին իրավունք չի տալիս միջամտելու համախումբ թե առանձին, Նորին Մեծություն Սուլթանի հարաբերություններին նրա հպատակների նկատմամբ և նրա կայսրության ներքին կառավարման գործերին»[111]*: Վաղուց հայտնի է, որ այս հրովարտակի խմբագրման մեջ մեծ դեր խաղացին Անգլիայի, Ֆրանսիայի և Ավստրիայի դեսպանները՝ Թուրքիային փաստորեն տրամադրելով ձեռքերի աղատություն՝ իր ուղածին պես վարվելու սեփական խոստումների հետ: Նախապես կշռադատված ու մտածված այս քաղաքականության էությունը չհասկանալով՝ եվրոպամետ ուսումնասիրողը տերություններին նույնիսկ ուշացած ապաշխարողի հատկություններ է վերագրում. «Այս սխալը նրանք շատ շուտ հասկացան, երբ տեսան, որ բարենորոգումները մնում էին միշտ թղթի վրա իբրև մեռած տառ»*[112]*, - դրում է Ա. Սարուխանը: Նույն միամտությամբ նա պնդում է, թե աններելի էր 9-րդ հոդվածի վերջին պարբերությունը հավելելու փաստը, քանզի հիմնվելով այս պարբերության վրա թուրք կառավարությունը, իբր, մերժում էր «Եվրոպական գահլիճների միջամտության իրավունքը Թիւրքիայի ներքին գործերում»*[113]*: Այդպիսով, թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների կացության բարելավման խնդիրները ճանաչվեցին որպես Օս-*

---

[111] Պողոսյան Հ., Զեյթունի պատմությունը, Ե., 1969, էջ 154:
[112] Սարուխան Ա., Հայկական խնդիրը և Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), Թիֆլիս, 1912, էջ 14:
[113] Նույն տեղում:

մանյան կայսրության ներքին խնդիրներ: Պատճառն այն էր, որ եվրոպական պետությունները մտահոգված էին լոկ Թուրքիայի տնտեսությունը իրենցից կախման մեջ դնելու հարցով, ուստի չէին կարող բանի տեղ չդնել այն հանգամանքը, որ դեռևս 1839 թ. հրապարակված «Հաթթը շերիֆ»-ի մեջ տեղ էր գտել «Հաթթը հյումայունի» արծարծված հարցերի և խոստումների մի մասը, որոնք բնականաբար, չէին կենսագործվել: Չկենսագործվեց նաև «Հաթթը հյումայունը»: 1859 թ. եվրոպական տերությունները դիմեցին Թուրքիային մի հուշագրով, որտեղ ասված էր, որ Թուրքիան չկատարեց իր խոստումները բարենորոգումների վերաբերյալ: Նման պահանջով՝ եվրոպական մասի սլավոնական ժողովուրդների վերաբերյալ, Թուրքիային դիմեց նաև Ռուսաստանը: Ստեղծվեց մի հանձնաժողով, որը զբաղվեց Թուրքիայի եվրոպական մասի քրիստոնյաների բողոքների հարցով: Սակայն հանձնաժողովի ծավալած գործունեությունը ամենևին չթեթևացրեց այդ ժողովուրդների վիճակը:

Ղրիմի պատերազմից հետո Օսմանյան կայսրությունը ավելի մեծ ֆինանսական կախման մեջ է ընկնում եվրոպական տերություններից: Ֆինանսական ճգնաժամ ապրող Թուրքիայում ավելի է վատթարանում հպատակ ազգերի սոցիալ-քաղաքական կացությունը խթանելով նրանց ազգային ինքնորոշման տրամադրությունները:

XIX դ. առաջին կեսին Եվրոպական Թուրքիայում ուժեղանում են սլավոնական ժողովուրդների ազատագրական շարժումները: Հունաստանի և Սերբիայի ազատագրումը օսմանյան տիրապետությունից որոշակի ազդեցություն ունեցավ արևմտահայության քաղաքական կյանքի վրա: 1862 թ. բռնկվեց Զեյթունի ապստամբությունը, որով հայ ազատագրական գաղափարախոսությունը իր գործնականությունն էր գտնում իրական հիմքերի վրա: Զեյթունի իրադարձությունները, ինչպես և ֆրանսիական քաղաքականության ակտիվացումը Օսմանյան Թուրքիայում շրջադարձային և վճռական նշանակություն ունեցան «Ազգային սահմանադրությունը» վերահաստատելու խնդրում (1863 թ.):

Երկյուղելով իր տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ըմբոստացումից, 1858-1859 թթ. Թուրքիան ձեռնամուխ եղավ բարեփոխումների անցկացմանը: 1859 թ. օսմանյան իշխանությունները առաջարկեցին Կ. Պոլսի հայոց պատ-

բիարբին կից ստեղծված քաղաքական և կրոնական ժողովներին մշակել հայերի մեջ անցկացվելիք բարեփոխումների ծրագիր: Այդպիսի ծրագիր մշակվեց հայ մտավորականության ներկայացուցիչների կողմից: 1856 թ. «Հաթթը Հյումայունի» մեջ հայտարարված էին հետևյալ տրամադրությունները օսմանահոլաասակ քրիստոնյաների վերաբերյալ. «Այն բոլոր առանձնաշնորհումներն և կրոնական արտոնությունները, որոնք մեր նախնիքներից ի վաղուց անտի շնորհուել են պետութեան մէջ բնակվող և իմ պաշտպանութիւնը վայելող բոլոր քրիստոնեայ և այլ ոչմահմեդական հասարակութիւններին վաւերացուած են մեզանից և պիտի պահպանուին: Իւրաքանչիւր քրիստոնեայ կամ ոչմահմեդական հասարակութիւն պարտաւորվում է մի որոշ ժամանակի ընթացքում իր միջից ընտրուած յանձնաժողովի միջոցով, Բ. Դռան հսկողութեան տակ և իմ բարձր բարէհաճութեամբ, քննել իւր ունեցած առանձնաշնորհումներն և արտոնութիւնները, սահմանել ժամանակի և քաղաքակրթութեան պահանջած բարէնորոգումներն և հաղորդել Բ. Դռան»[114]: Հայերը, ելնելով թանզիմաթի այսպիսի ուղղվածությունից, փորձեցին լուծել իրենց ներքին ազգային, հասարակական և կրոնական հարցերը սահմանադրական ճանապարհով, թեև սահմանադրություն բառը դեռ չէր գործածվում: Սուլթան Մեջիդի առաջին հրովարտակից հետո (1854 թ. օգոստոսի 26) Գերագույն Ժողովը կազմեց «մի առանձին մարմին, և առաջին անգամ «Սահմանադրական հանձնաժողով» անունը տալով նրան, հանձնարարեց կազմել մի նոր ազգային կանոնադրություն»[115]: Նոր կազմված կանոնադրությունը հավանություն գտավ և հաստատվեց: Այն ընդունվեց 1860 թ. մայիսի 24-ին որպես «Ազգային սահմանադրություն», որի սկզբունքները մշակել էին առաջավոր մտավորականության ներկայացուցիչներ Ն. Ռուսինյանը, Ն. Պալյանը, Գ. Օտյանը, Սերվիչենը և ուրիշներ: «Սահմանադրութիւնը կազմված էր լայն, ժողովրդական ոգով և յառաջադիմական ձգտումներով, որ որոշ խմբի համար չափազանց անհաճոյ էր, և սա չուշացավ իր դժգոհութիւնները հայտնելու»[116]: Հաստատումից մի քանի ամիս անց պահպանողական ամիրաների և կղերականների մի խումբ հակադրվեց կանոնադրությանը, գտնելով նրա մեջ

---

[114] Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 14:
[115] Նույն տեղում, էջ 15:
[116] Նույն տեղում:

«Կրոնի և ազգային ավանդույթների հակառակ կանոններ»[117]: Առաջ տանելով իրենց ընդդիմությունը, նրանք կարողացան թուրք կառավարության ձեռքով խափանել տալ նրա գործադրությունը: Սակայն արդեն հնարավոր չէր կասեցնել սահմանադրական հոսանքը: Բժիշկ Սերվիչենը ջանքեր գործադրեց, որպեսզի 1859 թ. կազմվի նոր հանձնաժողով, որտեղ այս անգամ գերակշռում էր աշխարհիկ տարրը և որը ընդգրկեց Գ. Օտյանին, Ն. Ռուսինյանին, Կ. Ություճյանին: Վերջիններս ընդհանուր ժողովին ներկայացրեցին բարեփոխված նոր կանոնադրություն, սակայն այս անգամ էլ կանոնադրության «անողոք թշնամին» հանդիսացավ պարիարք Գևորգը, որը խոչընդոտում էր նրա վավերացմանը[118]: Սահմանադրական խումբը Սերվիչենի գլխավորությամբ կարողացավ դրական լուծում տալ այս հարցին: Եվ քանի որ սահմանադրական խումբը քաջ գիտակցում էր, որ ներկա պատրիարքի օրոք հնարավոր չէ հաջողության հասնել, ուստի անհրաժեշտ էր տապալել պատրիարք Գեորգին, որին 1860 թ. ապրիլին փոխարինեց Սարգիս եպիսկոպոս Գուլումճյանը, որը ընդհանուր ժողովի կողմից հաստատելուց հետո վավերացրեց այդ կարևորագույն փաստաթուղթը:

1860 թ. մայիսի 24-ին վավերացված կանոնադրությունն ստացավ «Ազգային սահմանադրություն» անվանումը, որ առաջարկել էր Ն. Ռուսինյանը: Ազգային սահմանադրությունը, գործադրության մեջ մտավ: Կանոնադրությունը «սահմանադրություն» անվանելով ոչ Ռուսինյանը, Սերվիչենը կամ Աղաթոն եղբայրները և մյուսները, քաղաքական կամ ազգային սնապարծությանը որևէ տուրք չէին տալիս, ինչպես հետագայում դնահատվել է այդպիսի անվանումը[119]:

Այս սահմանադրության արժանիքների և թերությունների մասին քննադատական աշխատություն ունի իրավագետ Ռոլեն-Ժեկմենը «Հայաստանը, հայերը և դաշնագրություններ» խորագրով: Ըստ նրա, ավելի ճիշտ էր այն անվանել ոչ

---

[117] Նույն տեղում:

[118] Նույն տեղում, էջ 16:

[119] Խառատյան Ա., Արևմտահայերի ազգային «Սահմանադրությունը» (1860-1863), Պատմա-բանասիրական հանդես, 1992, N 2-3 (135-136), էջ 61: Հետևելով հայ պատմագրության մեջ ընդունված եզրույթին, մենք ևս նշված կանոնադրությունը կանվանենք «սահմանադրություն» զուտ պայմանական իմաստով:

թև սահմանադրություն, այլ հայ համայնքի կանոնադրություն, որի նպատակն էր կազմակերպել «կիսով չափ աշխարհական, կիսով չափ կրոնական մի հասարակություն, որի իրավունքները զաղարում են այնտեղ, որտեղ սկսվում են մի խսկական պետության իրավունքներ»[120]: Խոսքն ու գործը այստեղ հակասում էին միմյանց, և սահմանադրության 150 հոդվածները ներկայացնում էին «մի շենք, որ կառուցված է մեր ժամանակակից դեմոկրատական սահմանադրությունների ոճով»[121]: Այն ընդդրկում էր առաջաբան, կենտրոնի (Կ. Պոլիս) և դավասական ներկայացուցիչների տեղական ժողովներ ու աղգային խորհուրդներ, որոնք հսկողություն պիտի սահմանեին կրթության, ֆինանսների, արդարադատության ընագավառներում, սակայն, ինչպես դիպուկ նկատել է Ռոլեն-Ժեկմենը «... այնտեղ կա ամեն ինչ, բացի մի հոդվածից, որի վրա հայը կարողանար հիմնվել արգելելու համար, որ քուրդը չխլե նրա ոչխարները, բեյը չանպատվե նրա աղջկան և չավերե նրա կալվածը, որ հարկահավաքը երկու կամ երեք անգամ չպահանջէ նրանից միևնույն հարկը, մի խոսքով ամեն ինչ կա, բացի մի այնպիսի կարգագրությունից, որ նրան, հային, իբրև երաշխավորություն ծառայեր ընդդեմ թուրք կառավարության կամայականության»[122]: Պատահական չէր, որ Ալի փաշան այն անվանեց քառակուսի անիվ, որն անօգուտ էր, քանզի չէր կարող շարժվել տեղից[123]: Ընդունելով սահմանադրությունը թուրքերը հավատարիմ են մնացել իրենց համակարգին «չքեղ պիտակներ դնել դատարկ տուփերի վրա», ամփոփում է իր միտքը Ռոլեն-Ժեկմենը[124]: Սակայն «այստեղ պիտակի հարց չկա: Խնդիրն այն է, որ արևմտահայերենում «կանոնադրություն» և «սահմանադրություն» բառերը ընդամենը հոմանիշներ են... երկու բառն էլ հավասարաչափ օգտագործվում էին և՛ կանոնադրության, և՛ կոնստիտուցիայի իմաստով... Ավելին, արևմտահայերի ազգային ու եկեղեցական գործերի կանոնադրությունը դեռևս XIX դ. սկզբին և դրանից էլ դեռ շատ

---

[120] Ролен-Жекмен, Армения, армяне и трактаты (Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г., М., 1896, с. 18).
[121] Նույն տեղում:
[122] Նույն տեղում, էջ 19:
[123] Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Ե., 1967, էջ 458:
[124] Ролен-Жекмен, նշվ. աշխ., էջ 18:

առաջ կոչվում էր հենց «սահմանադրություն»[125]: Հետագայում այս անվանումը հնարավորություն ավեց մի շարք պատմաբանների (ինչպես Թուրք, այնպես էլ արևմտյան) «չահարկել» այն (անվանումը - Գ. Հ) հօգուտ Օսմանյան կայսրության համակարգում գոյություն չունեցող ժողովրդավարական սկզբունքների, թե «իբր բարեխնամ սուլթանը արևմտահայերին սահմանադրություն էր շնորհել դեռևս 1860 թ., բուրժուական մի ազատություն, որից ինքը Թուրք ժողովուրդը զուրկ էր մինչև 1876 թ. (օսմանյան առաջին սահմանադրությունը)[126]: Սահմանադրությունը, իրականում, որպես կանոնադրություն, զուրկ էր որևէ քաղաքական բովանդակությունից:

Սահմանադրությունը չէր անդրադառնում կարևորագույն հարցին՝ անհատի անձնական իրավունքներին: Այս բոլոր թերությունների հետ մեկտեղ չափազանց կարևոր էր այն հանգամանքը, որ տաճկահայերի ազգային հասարակական, կրոնական, և նույնիսկ քաղաքական կյանքը կառուցվում էր այս կանոնադրության սկզբունքների վրա: Սահմանադրության գործադրության առաջին իսկ տարին ցույց տվեց, որ կային բազմաթիվ խոչընդոտներ 1860-ի սահմանադրությամբ ղեկավարվելու գործում[127]: Երկու տարի հետո, 1863 թ. մարտի 17-ին Օսմանյան կառավարությունը հաստատեց վերանայված սահմանադրությունը. 1860-ի Սահմանադրությունը իր վերաքննությունից հետո պահպանել էր իր նույն ոգին, այն տար-

---

[125] Խառատյան Ա., նշվ. աշխ., էջ 62:

[126] Նույն տեղում: Թուրքերը մինչ օրս էլ օգտվում են այս թյուրիմացությունից պնդելով, թե երբ իրենք դեռ սահմանադրություն չունեին, «երախտամոռ» հայերին «շնորհել էին» սահմանադրություն ունենալու իրավունք:

[127] Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի պատճառով հակասություններ առաջացան Ազգային Ժողովի և նրա նախագահ Սարգիս պատրիարքի միջև: Ազգային երեսփոխանների մեծամասնությունը Սերվիչեճի գլխավորությամբ, որը մեկնել էր Երուսաղեմ և ծանոթացել այնտեղ տիրող անկարգություններին, պահանջում էր, որ Երուսաղեմի պատրիարքը նույնպես ընտրվի համաձայն սահմանադրության՝ ազգային երեսփոխաններից, այլ ոչ թե Երուսաղեմի վանքի միաբանությունից: Վեճը շատ խորացավ և Սարգիս պատրիարքը մերժեց Ազգային Ժողովի որոշումները այս հարցի մասին: Սահմանադրականները հաղթեցին և գահընկեց արին պատրիարքին: Այս միջադեպի հետ են հաճախ կապում 1861 թ. սկզբին սահմանադրության դադարեցման պատճառները: Սակայն հարկ է նշել, որ Օսմանյան կայսրությունը այս գզվռտոցը օգտագործեց որպես առիթ սահմանադրությունը դադարեցնելու խնդրում: Իրականում թուրք կառավարությունը առանց սանկցիայի չէր համակերպվում այն փաստի հետ, որ թուրքահպատակ ազգերը փոխեին իրենց վարչական կարգավիճակը (Խառատյան Ա., նշվ. աշխ., էջ 63):

բերությամբ, որ նորը՝ 1863-ինը «ավելի ամփոփ և ավելի գործնական կարգադրություններ էր բովանդակում»[128]: Սահմանադրության մեջ արվեց մի բնորոշ փոփոխություն՝ ազգային ժողովի անդամները երեսփոխանները պետք է ընտրվեին թաղային ժողովներում էսնաֆներից ընտրվելու փոխարեն: Ազգային ժողովը անմիջական կախման մեջ էր Օսմանյան կառավարությունից: Եվ այս ամենը անվանվում էր ազգային առաջադիմություն՝ արևմտահայության սովի և գաղթի, զանգվածային հարստահարությունների, լլկանքների և բռնաբարությունների լծի ներքո: Այնուամենայնիվ, առաջադեմ և դրական էր այն հանգամանքը, որ արևմտահայերը «սահմանադրական կերպարանք» տվեցին իրենց վարչությանը դեռ այն շրջանում, երբ այդ քայլին չէին գիմել բալկանյան և այլ ժողովուրդները[129]:

1856 թ. հաթթի առաջադրած բարենորոգումներից մեկն այն էր, որ պատրիարքների և ոչ մահմեդական հասարակությունների արտոնությունները և առանձնաշնորհները հատուկ հանձնաժողովների կողմից քննվելուց հետո պիտի սահմանվեին, որպես ժամանակի ոգով և առաջադիմության պահանջներին համապատասխան կանոններ: Հույն, հայ և հրեա ազգերի համար կազմվեցին հանձնաժողովներ և մշակվեցին կանոններ: Եթե ուսումնասիրենք այս երեք ազգերի համար մշակված և ընդունված կանոնները կամ օրենքները, կտեսնենք, որ նրանցից յուրաքանչյուրը կրում է իր ժողովրդի հոգեբանության դրոշմը: Հույն և հայ պատրիարքություններից, հրեա խախամապետությունից բացի այդ շրջանում կային արդեն հռոմեադավանների պատրիարքարան և բողոքականների աղդապետարան, սակայն դրանք չէին ընդգրկված 1856-ի հաթթի կանոնադրության մեջ, քանի որ իբրև նորագույն հիմնարկություններ, նրանք զերծ էին մնացել ժողովրդական խավերի հետ ունեցած վեճերից և իրավասության կազմակերպման հարցերից: Իսկ հայ և հույն պատրիարքների, եպիսկոպոսների կամ առաջնորդների ընտրության ու փոփոխության մասին բազմաթիվ վեճեր էին ծագում, որոնք նույնիսկ պահանջում էին պետական միջամտություն, ինչպես նաև վիճահարույց էին նրանց եկեղեցական կամ ազգային կալվածների շինութ-

---

[128] Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 25:

[129] Հայերից ավելի շուտ (1860 թ. փետրվարին) սահմանադրություն ընդունեցին օսմանահպատակ հույները:

յան, սեփականության ֆինանսավորման, տնտեսության, տուրքի մասին բազմաթիվ խնդիրներ, որոնք պատճառ էին դառնում պատրիարքարանների և Բ. Դռան միջև բանակցությունների, գանգատների և հրովարտակների համար[130]:

«...Սահմանադրություն կոչված օրենքը կրոնական կամ եկեղեցական առանձնաշնորհում մը չէ, այլ զուտ ներքին ինքնավարության բնական իրավունք, թե այդ իրավունքը ո՛չ 1860-ին և ո՛չ 1863-ին է հաստատված, այլ երեք դարերու ժողովրդական պայքարով ժառանգուածն է, որ օրենքի ձև է ստացել»[131], - նշում է Ատոմը:

Հիմնական պայքարը ուղղված էր ամիրայության դեմ, քանի որ «պատրիարքությունը զիջած էր ամիրայության համագործակցելու, իսկ ամիրայությունը հավանած էր էսնաֆություն ընտրելու իրավունքն ընդունելու»[132]:

«Ազգային Սահմանադրությունը» պատրիարքի որպես ազգի գլխավորի, իշխանությունը տալիս է ազգային կառավարությանը, որը կազմված պիտի լինի հայ ժողովրդի ներկայացուցիչներից պատգամավորներից:

Կառավարությունը, ավելի ճիշտ ներկայացուցիչները, ընթացիկ գործերի համար ընտրում են 2 «ազգային» խորհուրդ մեկը կրոնական, մյուսը քաղաքացիական գործերի համար, ընտրում է Պոլսի և Երուսաղեմի պատրիարքին, մասնակցում է կաթողիկոսի ընտրությանը, շտկում աշխարհիկ և հոգևոր ժողովների միջև եղած անհամաձայնությունները, նաև պատրիարքի և ժողովների միջև ծագած անհամաձայնությունները:

Սահմանադրության քաղաքական արժագանքը անսպասելի եղավ թուրք կառավարության համար, խորացրեց ազգային ինքնագիտակցությունը և հենարան դարձավ ազգային ինքնորոշման ձգտումների համար:

---

[130] Ատոմ, Ազգային սահմանադրությունը, Կ. Պոլիս, 1914, էջ 35:
[131] Նույն տեղում, էջ Բ:
[132] Նույն տեղում, էջ 29:

GEVORG HARUTYUNYAN
Institute of History, NAS RA

"HATT-i-HUMAYUN"OF 1856 AND THE NATIONAL CONSTITUTION OF WESTERN ARMENIANS

Summary

The confrontation between the Russian Empire and Western European states was based on the struggle among of the Great Powers for the predominance in Western Asia. The Tsarist Russia aimed at the establishment of its influence in Turkey. Britain and France were also interested in the establishment of their political and economic dominance in Turkey and Near East. The Russian Empire was defeated in the Crimean War and after the conclusion of the Treaty of Paris (1856) it lost its right to keep the Russian navy in the Black Sea which had been declared neutral. Besides, according to the 3rd Article of the Treaty the Armenian territories of Kars and Ardahan conquered by Russian troops were returned to the Ottoman Empire.

The Christians living in the Ottoman Empire were taken under the protection of European states. Meanwhile, the European states protected Turkey thus they became disinterested in the fate of the Christian peoples which were the subjects of the Ottoman Empire. At the same time, after the Crimean War European states pressed Turkey financially and economically and the latter became a dependant country.

On February 18, 1856 the Sultan Abdul Mejid I issued the decree "Hatt-i- Humayun" under the pressure of Western European states. It supposed some reforms providing several privileges for non-Muslim, the Christian peoples living in the Ottoman Empire. According to the Imperial Rescript of Tanzimat had been supposed the protection of the persons, property and honour of the subjects of the Ottoman Empire.

In 1862 took place the Zeitun rebellion and thus the Armenian liberation ideology was put into action on the real basis.

On March 17, 1863 the Ottoman government approved the revised text of the National Constitution of Western Armenians. Some changes were made in it: the members (deputies) of the National Assembly had to be elected by the quarter councils instead of *esnaf* (guilds)

The National Assembly was subject to the Ottoman government. Consequently, there was no improvement in social and political life of Western Armenians who lived in conditions of famine and migration, violence and impoverishment. Anyhow, the National Constitution's political resonance had been unexpected for the Turkish government. The Constitution deepened the national self-consciousness of Western Armenians and became a support for aspirations of the national determination.

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (XIX դ. – XX դ. սկիզբ)

Արևելահայության կրթական գործի կազմակերպման համար բարերար նախադրյալներ ստեղծվեցին 1836 թ. կայսերահաստատ «Պոլոժենիե»-ով, ըստ որի հայերին թույլատրվում էր ունենալ երկու տիպի դպրոց թեմական հոգևոր սեմինարիա ամեն մի թեմում, և տարրական դպրոցներ եկեղեցիներին ու վանքերին կից: Ծխական դպրոցների կանոնները հրապարակելուց հետո Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին 1869 թ. փետրվարին հրապարակեց նաև թեմական դպրոցների կանոնադրությունը, համաձայն որի «Թեմական ասին այնոքիկ ի դպրոցաց, որք հաստատել են յառաջնորդանիստ տեղիս և ի գլխաւոր քաղաքս Ռուսաստանի վասն կրթելոյ յայլ և այլ հրահանդս ուսմանց զթերավարժ աշակերտաս աւարտեալս ղընթացս դիտութեանց ի Ծխական դպրոցս»[133]:

Ի տարբերություն այն թեմերի, որոնք նյութապես առավել բարվոք վիճակում էին և կարճ ժամանակամիջոցում ստեղծեցին թեմական հոգևոր դպրոցներ, Շամախիի թեմում այդ գործընթացը տևականորեն ձգձգվեց: Հիմնական պատճառն այն էր, որ թեմը, գտնվելով նյութական սուղ պայմաններում, չէր կարողանում միջոցներ հայթայթել թեմական դպրոցի բացման համար, ուստի սկզբնական շրջանում բացվեց միայն տարրական եկեղեցական դպրոց[134]: Այս առումով հետաքրքրական է Ալ. Երիցյանի տված բնութագիրը Շամախու հայոց թեմի վերաբերյալ. «Այդ միջոցներում շատ խեղճ ու անբարեկարգ էր նաև Շամախու կամ Շիրվանի թեմը: Այնտեղ էլ կոնսիստորիան միայն անունով գոյություն ունէր: Ժողովուրդը մեծ մասամբ թրքախօս էր և ոչ մի ուսումնարան կար եկեղեցական հասոյթների սակաւութեան պատճառով»[135]: Թեև 1838 թ. թեմական իշխանությունը դպրոցի համար արդեն վարձել

---

133 «Արարատ», 1869 փետրվար, էջ 141:

134 Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը XIX դ. առաջին կեսին, Ե., 1964, էջ 283:

135 Երիցեանց Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք XIX դ., մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 477:

էր չենք, սակայն, համապատասխան ուսուցիչների բացակայության պատճառով դպրոցի բացումը հետաձգվեց մինչև 1840 թ., երբ արդեն գտել էին 2 ուսուցիչ, որոնցից մեկն անդամ համաձայնվել էր աշխատել անվճար: Սակայն, միջոցների սղության պատճառով դպրոցը գործեց մինչև 1842 թ.[136]: Թեմական դպրոցի բացումը տեղի ունեցավ 1844 թ. մայիսի 28-ին (այլ աղբյուրների տվյալներով՝ 1843 թ.) թեմի առաջնորդ Մատթեոս եպս. Վեհապետյանի ջանքերով և եկեղեցական մարմինների ու բնակչության հայթայթած միջոցներով[137]: Դպրոցում դասավանդել են հայերեն և ռուսերեն ընթերցանություն, վայելչագրություն, քերականություն, ճարտասանություն, երգեցողություն, թվաբանություն, պատմություն, աշխարհագրություն և սրբազան պատմություն: 1846 թ. տվյալներով դպրոցն ունեցել է ընդամենը 30 աշակերտ: Նշենք, որ դպրոցը գործել է ծանրագույն պայմաններում: Թեև թեմի առաջնորդ Մատթեոս եպիսկոպոսը դրամական անհրաժեշտ օգնության համար պարբերաբար դիմել է Էջմիածնի Սինոդին, սակայն այդ փորձերն անցել են ապարդյուն: Զախողվել են նաև աշակերտներից ուսման վարձ հավաքելու փորձերը, որի հետևանքով շատ աշակերտներ հեռացել են դպրոցից[138]: Դպրոցը թեև գտնվում էր վատթար պայմաններում, այսուհանդերձ այն շարունակել է իր կենսագործունեությունը և փակվել 1851 թ.[139]:

Դպրոցի գործունեության երկրորդ շրջանը սկսվում է 1858 թ., սակայն ոչ որպես թեմական, այլ ծխական հոգևոր ուսումնարան[140]: Դպրոցի գործունեությունը որոշակի կանոնակարգված հիմքի վրա է դրել թեմի առաջնորդ Դանիել արք. Շահանազարյանցը, որի օրոք (1863-1868) առաջին անգամ կազմվել է դպրոցի կանոնադրությունը, ընտրվել են հոգաբարձուներ, հրավիրվել են ուսուցիչներ, սկսել են կանոնավորապես կիրառվել դպրոցի հաշվապահական գործառույթները և

---

[136] ՀԱԱ, Ֆ. 56, գ.7, գ. 516, թ. 647-648:
[137] Ղուկասեանց Հ., Բողոքականութիւն Կովկասու Հայոց մէջ (պատմական նիւթեր), Թիֆլիս, 1886, էջ 44:
[138] ՀԱԱ, Ֆ. 56, գ.15 գ. 221, թ. 362-363:
[139] Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 124, վավ. 359: Տես նաև Սանթրոսյան Մ., Նշվ. աշխ., էջ 284:
[140] Описание Города Шемаха, составил С. П. Зелинский, Тифлис 1896, с. 26.

այլն[141]: Դպրոցի 1866-1869 թթ. հաշվեցուցակից հետևում է, որ ունեցել է 5583ռ. 91կ. ելք և 3215ռ. ծախս[142]: Դպրոցին այդ ընթացքում նվիրատվություններ են կատարել բարերարներ Մարգարա Կաճկաճյանցը, Գևորգ բեկ Ներսիսյանցը, Թիֆլիսեցի մեծահարուստ Անտոն Ղորղանյանը և այլն[143]: Դպրոցին 1866 թ. 251ռ. չափով օգնություն էր ցուցաբերել նաև Աստրախանի թեմի հայությունը[144]:

Թեմի առաջնորդ Անդրեաս արք. Անդրեասյանը (1869-1874) 1870 թ. նպատակադրվում է ծխական դպրոցը վերածել թեմականի, այդ նպատակով դրամական հանգանակություն կատարելով Բաքու, Դերբենդ և Ղուբա քաղաքների հայերի շրջանում[145]: Անդրեաս արք. Անդրեասյանի՝ Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսին ներկայացված ցուցակից պարզվում է, որ 1873 թ. դպրոցն ունեցել է 73 աշակերտ, իսկ արդեն 1874 թ. ունեցել է 7 ուսուցիչ, 124 աշակերտ[146]: 1877 թ. ուսուցիչների թիվը իջել է հասնելով 3-ի, իսկ աշակերտներինը՝ 79-ի[147]: 1881 թ. դպրոցի այրվելու պատճառով դասերն անցկացվել են կոնսիստորիայի վերնահարկում: Դպրոցը գործել է ծանր ու սուղ պայմաններում, ուստիև չի կարողացել բարձրանալ ծխականի մակարդակից: 1885 թ. դպրոցը դարձյալ փակվել է և վերաբացվել է 1886 թ., որից հետո դպրոցը ամբողջովին և պաշտոնապես դասվել է ծխական դպրոցների շարքին և շարունակել է գոյատևել թեմի աղքատիկ եկամուտների հաշվին[148]: 1888-1889 ուս. տարվա վիճակագրական տեղեկագրերում դպրոցը նշված է ոչ թե որպես թեմական, այլ տղայոց երկդասյան ծխական դպրոց՝ 147 աշակերտով: Այսպիսով, թեև Շամախու դպրոցը կրում էր թեմական անունը, սակայն անընպաստ պայմանների պատճառով այն այդպես էլ չհասավ թեմականի մակարդակին:

---

141 Ղուկասեանց Հ., նշվ. աշխ., էջ 103:
142 «Արարատ», 1870 նոյեմբեր, էջ 307-308:
143 Նույն տեղում, էջ 307:
144 Նույն տեղում:
145 ՀԱԱ, Ֆ. 57, ց.2, գ.1921, թ. 74:
146 «Դպրոց», Վաղարշապատ, 1875-1876, թիվ 4, էջ 134:
147 «Արարատ», 1878 նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 455:
148 Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, (1870-1905), Ե., 1970, էջ 54:

Թեմի առաջնորդ Մեսրոպ արք. Սմբատյանցի (1887 թ. հունվարի 23-1894 հունիս) նախաձեռնությամբ և ատենադպիր Աբրահամ Շահվերդյանցի օժանդակությամբ դպրոցի նախկին տեղում 1890 թ. կառուցվում է նոր շենքը[149]: Այդ շրջանում դպրոցն ունեցել է գրադարան ու ընթերցարան, ուր պահվել են 6 ձեռագիր և 450 հայերեն ու ռուսերեն տպագիր գրքեր[150]: Տարիների ընթացքում թեմական դպրոցին նվիրատվություններ են կատարել բարերարներ Կարապետ Լալայանցը, Կարապետ Քալանթարյանցը, Նիկոլայ Կաճկաճյանցը, Բաղդասար Նազարյանցը և Մարտիրոս Միրզաբեկյանցը[151]: Դպրոցին իր կտակով նյութական միջոցներ է տրամադրել (300ռ.) նաև Բաքվի Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ավ. քհն. Թագևոս Բուգաղյանցը[152]: Մակար վրդ. Բարխուդարյանցի 1890 թ. Շամախիում եղած ժամանակ դպրոցում սովորելիս են եղել 80 աշակերտ, որից 47-ը՝ վճարովի, 33-ը՝ ձրի հիմունքներով[153]: Հետագա ժամանակներում, երբ դպրոցը նյութական անմխիթար վիճակում էր, Մեսրոպ արք. Սմբատյանցը ծրագրում է թեմական դպրոցը Շամախուց տեղափոխել Բաքու և այդտեղ բացել թեմական նոր դպրոց, որի մասին 1863 թ. դեկտեմբերի 20-ին գրությամբ հայտնել էր կաթողիկոսին: Սակայն մտավախություն ունենալով, որ Շամախուց դժվար թե երեխաները ի վիճակի լինեն դալ Բաքու և ուսում ստանալ, խնդիրն այդպես էլ մնում է առկախ: 1895 թ. դպրոցում դասավանդել են 5 ուսուցիչ և սովորել են 127 աշակերտներ[154]: Նույն թվականի վիճակով դպրոցի գրադարանն արդեն ուներ 772 անուն գիրք, 1323 հատորով, որից հայերեն 853, ռուսերեն 464 և այլ լեզուներով 6 հատոր[155]: 1896 թ. դպրոցը դարձյալ փակվել է[156]:

---

149 Սմբատեանց Մ., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախւոյ թեմի, Տփխիս, 1896, էջ 297:

150 Նույն տեղում, էջ 296:

151 «Արարատ», 1871 մայիս, էջ 52:

152 «Արծագանք», Թիֆլիս,1885 հուլիսի 21, թիվ 3, էջ 38:

153 Բարխուտարեանց Ա., Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 162:

154 Описание Города Шемаха,с. 26.

155 Նույն տեղում:

156 Խուդոյան Ա., Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, (ժամանակագրությունը հավելյալ մանրամասներով), Ե., 1987, էջ 458:

Մտահոգված դպրոցի վերաբացման խնդիրներով Մկրտիչ Ա. Վանեցի կաթողիկոսը 1896 թ. հոկտեմբերի 27-ի կոնդակով դիմում է բաքվահայ մեծահարուստներին և ակնկալում վերջիններիս նյութական աջակցությունը[157]: Կաթողիկոսը մտադրվել էր վերաբացվող թեմական դպրոցը Շամախուց տեղափոխել Բաքու: Դպրոցի վերաբացման կազմակերպչական աշխատանքները սկսելու նպատակով կաթողիկոսի հրահանգով Բաքու է մեկնում եկեղեցական-կրթական գործի եռանդուն գործիչ Խորեն եպս. Ստեփանեն: Նույն թվականին շամախահայերը 400-ից ավելի ստորագրությամբ նամակով դիմում են Մկրտիչ Ա. Վանեցի կաթողիկոսին, խնդրելով նրանից դպրոցը վերաբացել ոչ թե Բաքվում, այլ Շամախիում. «Ամենիս սրտադին բաղձանք է, - գրում էին շամախահայերը, - մեր ճգնաժամի օրերում գեթ բացված տեսնել Շամախում մեր միակ մխիթար լույս ու ապավեն թեմական դպրանոցը հենց տարվույս սեպտեմբերից սկսած»[158]: Պետք է նկատել այն հանգամանքը, որ թեմական դպրոցը Շամախուց Բաքու տեղափոխելու խնդիրն այդ օրերին լայն քննարկման առարկա էր դարձել նաև մամուլում, և հոդվածագիրներից շատերը կարծում էին, որ դպրոցը պետք է վերաբացվի Բաքվում: Ավ. Արասխանյանցը, «Մուրճ» ամսագրում հարցի առնչությամբ հանգես գալով մի առանձին հոդվածով, նպատակահարմար էր գտնում դպրոցը Շամախուց տեղափոխել Բաքու դա պայմանավորելով այն հանգամանքով, որ խիստ նվազել էր Շամախի և Գյոքչա գավառների հայ աշակերտների թիվը, այնինչ Բաքվում կարող էին սովորել նաև այդտեղ հաստատված շամախեցիների և Գյոչքայցիների երեխաները. «Ինչ է Շամախու հասարակությունը, - գրում է Ա. Արախանյանցը, - եթէ ոչ մի յետամնաց ժողովուրդ, որի ամենակենդանի ոյժերի առաջին գործ է լինում թողնել այդ քաղաքը և հաստատուել Բաքուում: Ինչ ունի Շամախու հայ հասարակությունը, համեմատությամբ Բաքւի: Շամախին թէ ընտանեկան և թէ հասարակական կողմերից ոչինչ

---

[157] Արասխանեանց Ա., Նոր թեմական դպրանոցների խնդիրը, «Մուրճ», 1896, թիվ 10-11, էջ 1386: Տես նաև «Մշակ», Թիֆլիս, 9 նոյեմբերի 1896, թիվ 128:

[158] ՀԱԱ, Ֆ. 56, g. 3, գ. 350, թ. 65-66: Տես նաև Արասխանեանց Ա., Նոր թեմական դպրանոցների խնդիրը, «Մուրճ», 1896, թիվ 10-11, էջ 1386:

չունի ներկայացնելու, բացի շատ լացասական կողմերից...»[159]: Թեմական դպրոցը Շամախուց Բաքու տեղափոխելը նպատակահարմար է համարել նաև Ալ. Շիրվանզադեն[160]:

Խորեն եպս. Ստեփանեն Բաքվում կատարում էր նաև քարոզչի պաշտոն: Բաքվահայերի՝ Խրիմյան Հայրիկին 1897 թ. հունվարի 1-ին գրած նամակից հայտնի է դառնում, որ Խորեն եպս. Ստեփանեն եռանդուն քարոզների շնորհիվ, ինչպես և քաղաքի հայ հասարակության կողմից ընտրված 8 ներկայացուցիչների օժանդակությամբ կարողացել է մեկ ամսում հանգանակել 275000ռ.[161]: Թեմական նոր դպրոցի բացման հանդիսավոր արարողության առիթով Բաքու պետք է ժամաներ կաթողիկոսը: Սակայն ռուսական իշխանություններն անմիջապես արգելեցին դպրոցի բացումը: Կովկասի կառավարչապետի տեղակալ Տատիշչևը, խիստ անցանկալի համարելով թեմական դպրոցի հիմնումը հայաշատ Բաքվում, ուր այն կարող էր ձեռք բերել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի նշանակությունը, նպատակահարմար չհամարեցին դպրոցի բացումը: 1896 թ. դեկտեմբերի 19-ին ներքին գործերի նախարար Գորեմիկինը կաթողիկոսին դրեց, որ ներկայումս աննպատակահարմար է թեմական դպրոցի բացումը և նրա մեկնումը Բաքու: Միաժամանակ նույն գրությունում նախարարը պահանջում էր Բաքվից ետ կանչել Խորեն եպս. Ստեփանեին և նրան ուղարկել Ղրիմի Սբ. Խաչ վանքը, որի վանահայրն էր 1887 թ.[162]: Մկրտիչ Ա. Վանեցին ստիպված եղավ կատարելու նախարարի պահանջը[163]:

Դպրոցը վերաբացելու և այն թեմական աստիճանի բարձրացնելու ուղղությամբ քայլեր է ձեռնարկել նաև թեմի առաջնորդ Կարապետ եպս. Այվազյանը (1896 դեկտեմբերի 20 - 1898): Նրա կողմից 1898 թ. կազմվում է դպրոցի ծրագիրը և ներկայացվում Էջմիածնի Սինոդին, որպեսզի վերջինս ներկա-

---

159 Արասխանեանց Ա., Նոր թեմական դպրանոցների խնդիրը, «Մուրճ», 1896, թիվ 10-11, էջ 1386:

160 «Տարազ», Թիֆլիս, 1896, թիվ 46, էջ 726-727:

161 ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ, g. 1, գ. 127, թ.1 : Տես նաև «Մուրճ», 1897, թիվ 1, էջ 166:

162 Մխիթարյան Մ., Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» ամսագիրը, Ե., 2002, էջ 25:

163 «Մուրճ», 1897, թիվ 1, էջ 166: Տե՛ս նաև Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, էջ 214:

յայնի կառավարությանը ի հաստատումն: Մկրտիչ Ա. Վանեցի կաթողիկոսը 1899 թ. փետրվարի 24-ին թիվ 267 կոնդակով «առաջադրել է փութով առաջարկել Բարձրագոյն հաստատությեան Շամախու թեմական դպրանոցի կանոնադրությունը», սակայն, քանի դեռ ծիսական դպրոցները մնում էին փակված վիճակում, թեմական դպրոցի բացումը մնում է անորոշության մեջ[164]: Դպրոցը վերարացվեց միայն 1905 թ., և գործեց որպես երկսեռ դպրոց: 1911-1912 ուսումնական տարում այն ունեցել է քառամյա դասընթաց և 123 աշակերտ: 1913 թ. դպրոցը համարվել է թեմական, միաժամանակ բացվել են երկու դասարաններ[165]: Դպրոցն իր գործունեությունը կարողացավ շարունակել մինչև 1918 թ. և ընդհատվեց Բաքվի դեմ թուրքական արշավանքի հետևանքով:

Ամփոփելով նշենք, որ Շամախու թեմական դպրոցը հայ հոգևոր-մշակութային կյանքում յուրովի և հաստատուն տեղ է ունեցել: Տասնամյակների գործունեությամբ այն զգալի ավանդ ունեցավ Բաքվի նահանգի հայության կրթամշակութային կյանքում: Թեմական այդ դպրոցում են ուսանել և թեմում հետագայում հոգևոր ծառայության անցել մեծ թվով քահանաներ և եկեղեցական-ծխական դպրոցների ուսուցիչներ:

GEVORG STEPANYAN

FROM THE HISTORY OF THE EPARCHIAL SCHOOL OF SHAMAKHI (the 19th c.– the beginning of the 20th century)

Summary

The "*Polozhenie*" of 1836 created favourable preconditions for the revival and organization of the educational system in Eastern Armenia. According to the "Polozhenie," approved by the Russian Tsar, Armenians were allowed to have schools of two types: eparchial spiritual seminary in each diocese and elementary parish schools.

---

[164] ՀԱԱ, Ֆ. 57, ց. 2, գ.1921, թ. 75:
[165] Խուդոյան Ա.,նշվ. աշխ., էջ 458:

After publishing the rules of the parish schools the Catholics of All Armenians George IV in February 1869 issued also the rules of the eparchial schools. Unlike other dioceses which. being better provided. organized eparchial spiritual schools. that process had been delayed in Shamakhi where, because of lack of material resources, first was opened an elementary parish school.

The school was opened in 1840 and worked only two years because of hard conditions. It reopened in 1843/44 and worked until 1851. The second stage of the school started in 1858, but it worked as a parish school. In 1885 it was closed again and reopened in 1886. From that time the school was ranked among parish schools. Thus, though the Shemakhi school was named eparchial school, anyhow, because of unfavourable conditions it did not reach the eparchial level. In 1896 the school was closed again.

The fate of the school worried the Catholicos of All Armenians Mkrtich I Vanetsi. On October 27, 1896 he appealed to the rich Armenians living in Baku, asking to help and support the school materially. The Catholicos had an intention to move the reopening eparchial school to Baku. Those days this problem was widely discussed in media and many authors of published articles considered such removal a worthy action.

The vice-governor of the Caucasus Tatichev considered extremely undesirable the foundation of the eparchial school in Baku where it could become as famous as the Nersessyan School in Tiflis. As a result, the imperial officials didn't find expedient the opening of the school there. It was reopened only in 1905 and acted as a school for boys and girls. The school continued its work until 1918 and was closed because of the Turkish intervention.

Thus the Shemakhi eparchial school had a specific and important place in the spiritual-cultural life of the region. During several decades it contributed considerably to the educational-cultural life of the Armenians living in the province of Baku. Many graduates of the eparchial school became priests and teachers of the parish schools.

ԳԱՅԱՆԵ ՏՈՆՈՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՌՈՒՍ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ XIX դ. 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1890-ականներին Ֆրանսիան, ինչպես Մերձավոր Արևելքով շահագրգիռ բոլոր պետությունները, Օսմանյան ժառանգության, Արևելյան հարցի առնչությամբ որդեգրել էր որոշակի քաղաքական գիծ, որն առաջնահերթ պայմանավորված էր Ֆրանսիական ֆինանսական կապիտալի շահերով: Գաղտնիք չէ, որ դեռ Ղրիմի պատերազմի տարիներին, երբ Օսմանյան կայսրությունը դիմեց առաջին արտաքին փոխառություններին, առաջիններից այդ «ծառայությունը» նրան մատուցեց «վաշխառուական» Ֆրանսիան, որը, ինչպես ժամանակին նշել է Լ. Ջորջը, Թուրքիայում ուներ առավելագույն ֆինանսական շահեր, քան ցանկացած այլ պետություն[166]:Ընդսմին, դժվար է պատկերացնել, որ տնտեսական, ֆի-նանսական առումով Ֆրանսիայի կցորդ հանդիսացող Օս-մանյան Թուրքիայի հանդեպ կիրառվեր քաղաքական որևէ այլ, մասնավորապես կայսրության ամբողջությանը սպառնացող ռազմավարություն: Չէ՞ որ «թուրքական արժեթղթեր ունեցողների համար status quo-ի պահպանումը նշանակում էր իրենց գումարները կուպոններով ետ բերելու երաշխիք»[167]: Վերոհիշյալ ֆինանսատնտեսական շահերն ու դրանց համա-պատասխան ձևավորվող քաղաքական սկզբունքներն ակտիվո-րեն պաշտպանվեցին XIX դ. երկրորդ կեսին. 50-70-ականներին՝ բրիտանական, իսկ 90-ականներին՝ ռուսական դիվանագիտությանը համաքայլ:

---

[166] Джордж Л., Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 402. Մասնավորապես, Ֆրանսիան հիմնեց Թուրքիայի «Օտոմանյան բանկը» (1863), ամբողջությամբ իր ձեռքում կենտրոնացրեց «Օտոմանյան պարտքի վարչությունը»: Ֆրանսիական արտահանվող կապիտալի շուրջ 10%-ը կազմող 2,5 մլրդ ֆրանկը ներդրված էր միայն Օսմանյան Թուրքիայում, որից 166 մլն ֆրանկը արդյունաբերական և առևտրական ձեռնարկություններում, 366 մլն երկաթուղիներում /տես ՀԱԱ, ֆ. 402, ց.1, գ.8, թ.3/:

[167] Людовик де Констан, Реформы в Азиатской Турции, М., 1914, с. 3-4, Մեջբերումն ըստ Բայրամյան Լ.Ա. Արևմտյան-Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում, Ե.,1982, էջ 266; Альберт Вандал, Армяне и турецкие реформы, пер. с франц. М. Я. Алавердяна, СПб, 1908, с. 11. Այս մոտեցումը ամենևին էլ չէր նշանակում, որ Ֆրանսիան ընդհանրապես հրաժարվում էր Մեր-ձավոր Արևելքում ակտիվ նվաճողական քաղաքականությունից /տես Կիրակոսյան Ջ. Բուրժուական դիվանագիտությունը և Հայկական հարցը, Ե.,1980, էջ139/:

Անշուշտ, Ֆրանսիան Արևմտյան Հայաստանի խնդրում ևս առաջնորդվում էր իր անտեսական և քաղաքական շահերով՝ երկրամասը դիտելով որպես ֆրանսիական մոնոպոլիաների արդյունաբերական արտադրանքի սպառման շահութաբեր շուկա, գյուղատնտեսական հումքի էժան աղբյուր և, վերջապես, «Արևելքում Ֆրանսիայի ազդեցության տարածման լայն բացած դուռ»[168]: Նշված խնդիրների համատեքստում էլ ֆրանսիական դիվանագիտությունը ժամանակ առ ժամանակ «արծարծում էր» հայկական հարցը:

1890-ականներին ռուսաց արքունիքը և ֆրանսիական կառավարությունը, որպես ռազմաքաղաքական դաշնակիցներ, համաձայնեցնում էին միմյանց հետ այս տարածաշրջանում գործադրվող քաղաքական սկզբունքները՝ խուսափելով Արևելքում պատերազմի նոր օջախի ձևավորումից, պաշտպանելով Օսմանյան կայսրության անձեռնմխելիությունն ու անբաժանելիությունը, հանդես գալով որպես արևմտահայկական վիլայեթներում միայն 61-րդ հոդվածով նախատեսված բարեփոխումների անցկացման կողմնակիցներ[169]: Երկու պետությունների Թուրքիայի հանդեպ «պաշտպանական» և հայկական հարցում «չեզոք» քաղաքական դիրքորոշումները, փաստորեն, համընկնում էին՝ հաջողությամբ հակադրվելով Մերձավոր Արևելքում Անգլիայի և Գերմանիայի ազդեցության տարածմանը[170]: Այդկերպ Ֆրանսիան ձգտում էր խոչընդոտել Թուրքիայի ներքին գործերին Մեծ Բրիտանիայի միակողմանի միջամտությանը, որպեսզի վերջինս հայկական հարցի օգնությամբ ի վնաս Ֆրանսիայի չամրապնդեր իր ֆինանսատնտեսական և ռազմաքաղաքական դիրքերը Թուրքիայում, ավելի չսրեր արևելյան ճգնաժամը, ինչը կհանգեցներ Օսմանյան կայսրության մասնատմանը: Հանրապետական կառավարությունը նաև հույսեր էր տածում ամրագրվել Նեղոսի հովտում, եգիպտական հարցի շահարկումով վերացնել Եգիպտոսի անգլիական օկուպացիան, Սուեզի ջրանցքն ու Եգիպտոսը հռչակել չեզոք, իսկ նպաստավոր պայմանների դեպքում Մշուշոտ Ալ-

---

[168] Саркисян Е. К., Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти 19 и начале 20 вв., Е., 1972, с. 190.

[169] Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ.151, վ. 30:

[170] Манфред А. З., Внешняя политика Франции 1871-1891 гг.. М., 1952, с. 521.

րիոնի հետ փոխդիջումնային տարբերակով բաժանել փարաոնների աշխարհը ե. աֆրիկյան այլ տիրույթներ[171]: Անգլո-ֆրանսիական խոր հակասությունների պայմաններում ռուս-ֆրանսիական համագործակցությունը նաև անհրաժեշտ երաշխիք էր մերձավորարևելյան խնդիրներում գերմանական միլիտարիզմից, նաև ֆինանսատնտեսական գերակայությունից պաշտպանվելու համար[172]:

Այսպես, Ֆրանսիան նախ և առաջ Անգլիային զսպելու նկատառումով Ռուսաստանի հետ մեկտեղ մասնակցեց Սասունի դեպքերի առնչությամբ ձևավորված քննիչ հանձնաժողովի աշխատանքներին, հայկական ռեֆորմների մայիսյան նախագծի մշակմանը, ստորագրեց սուլթանական կառավարությանն ուղղված տերությունների կոլեկտիվ նոտաները, ըմբդիմացավ Օսմանյան կայսրության մասնատման, սուլթանի վրա ռազմական ճնշում գործադրելու և հայկական հարցի առնչությամբ միջազգային խորհրդաժողով հրավիրելու բրիտանական առաջարկներին:

Փաստորեն, հայոց ողբերգության տարիներին Ֆրանսիան իր չեզոքությամբ հրահրեց կարմիր սուլթանի ոճրագործությունը «խուլ գտնվելով Հայաստանից լսված հառաչանքների հանդեպ»[173]:

Այդ «լռությունը» խախտվեց ու «զգուշավոր» քաղաքականությունը, թվում էր, թե կասեցվեց 1896-ին, երբ Կ.Պոլսի հայության սարսափելի կոտորածների լուրը բորբոքեց Ֆրանսիայի հասարակական կարծիքը: Հասարակական-քաղաքական նշանավոր շատ գործիչներ հանդես եկան սուլթանի հասցեին մեղադրական և արևմտահայերին աջակցող ճառերով, եվրոպական ու մասնավորապես ֆրանսիական քաղաքականության

---

171 "Московские ведомости", 19 марта 1895, N 77 и 31 марта 1895 N 89.

172 Силин А.С., Экспансия Германии на Ближнем Востоке в конце 19 в., М., 1971, с. 228.

173 Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 127: Այս մոտեցմանն արձագանքեցին նաև ֆրանսիական շատ պարբերականներ՝ հայերին մեղադրելով անհնազանդության մեջ, հայոց ողբերգությունը գնահատելով բրիտանական ինտրիգների արդյունք այդկերպ հակադրվելով հայերի ազգային-ազատագրական շարժմանը /տես Բայրամյան Լ.Ա. նշվ.աշխ., էջ 267-268; Кюракосян А., Великобритания и армянский вопрос, Е., 1990, с. 129:

քննադատությամբ[174]: Ավելին, 1896 թ. օգոստոսի 21-ին հետևեց պաշտոնական Ֆրանսիայի արձագանքն ի դեմս արտաքին գործերի նախարար Հանոտոյի Փարիզում Թուրքական դեսպանին հղած խիստ հայտարարության, թե հանրապետության կառավարությունն սպառել է սուլթանի հանդեպ իր «բարեկամական համբերատարությունը և այլևս չհանդուրժելով թուրքական իշխանությունների երկակի խաղերը՝ հասունացող ճգնաժամի առջև պատրաստ է գործադրել ցանկացած վճռական միջոց, ընդհուպ Կ.Պոլսի ռմբակոծում՝ պարտադրելով Բ.Դռանը ապահովել Հայաստանում կարգ ու կանոնի վերահաստատումը և խոստացած բարեփոխումների գործադրումը[175]:

Պաշտոնական Ֆրանսիայի հանկարծակի դրսևորած «հայասիրությունն», իրականում, պայմանավորված էր ռուս-ֆրանսիական հարաբերություններում առկա որոշ հակասություններով, դաշնակիցների մերձավորարևելյան քաղաքական ծրագրերի ու նպատակների բևեռացումով: Դաշնակիցները համաքայլ և համախոհ էին բալկանյան, կրետական, հայկական հարցերում, բայց ոչ սևծովյան նեղուցների կարգավիճակի խնդրում: Արևելյան ճգնաժամի ընթացքում կողմերին փոխզիջումների շնորհիվ հիմնականում հաջողվում էր համաձայնեցված գործունեություն ծավալել: Սակայն 1896-ին դարձյալ սրվեցին ռուս-ֆրանսիական տարաձայնությունները, որոնց կարգավորման նպատակով Նիկոլայ II-ը արտաքին գործերի նախարար Շիշկինի ուղեկցությամբ մեկնեց Փարիզ: Օգտվելով ցարի դիվանագիտական անփորձությունից՝ Հանոտոյին հաջողվեց համաձայնեցնել նրա հետ Ֆրանսիայի արտաքին քաղաքական այնպիսի սկզբունքներ, որոնք հակադրվում էին Ռուսաստանի «պատմական առաքելությանը»: Դրանք էին՝ ռուս-անգլիական համաձայնություն Եգիպտոսի հարցում, որով Ռուսաստանը պետք է ճանաչեր Մեծ Բրիտանիայի իրավունքները Աֆրիկայի հյուսիսում, նաև Սուեզում՝ չստանալով փոխարենը որևէ հատուցում և գրկվելով անգլո-ֆրանսիական հակասությունների միջոցով Անգլիայի վրա ճնշում գործադրելու և Ֆրանսիայի հետ դաշինքը ամրապնդելու երաշխիքնե-

---

[174] «Մշակ», 1915, N 142, էջ 3: Киракосян А., Великобритания и армянский вопрос, с. 130-131,"Вестник Европы", 1896, т. 6, кн. 12, с. 806-807.

[175] Ламздорф В. Н., Дневник,1894-1896гг., М., 1991, с. 391-392, секретная телеграмма российского посла во Франции барона А. П. Моренгейма.

րից: Այդ հրահանգները վերանայում էին նաև Ռուսաստանի դիրքորոշումը օտոմանյան պարտքի վարչության հարցում: Այսպես, եթե 1881-ից ցարական կառավարությունը հրաժարվում էր ներկայացուցչություն ունենալ օտոմանյան պարտքի վարչության խորհուրդում, ապա այժմ պատրաստ էր ուղարկել այստեղ իր պատվիրակին, եթե նախկինում առարկում էր վարչության իրավասությունների ընդլայնմանը, ապա այժմ չէր ընդդիմանում այդ հարցում[176]: Նշված հրահանգի վրա լույս է սփռում Ռուսական արտաքին քաղաքականության արխիվում պահվող մի փաստաթուղթ, որը արևելյան հարցում ռուս-ֆրանսիական համատեղ խնդիրների համեմատական է անցկացնում 1891 և 1896 թթ., արձանագրելով այն փոփոխությունները, որ տեղի էին ունեցել այդ տարիների ընթացքում: Եթե ռուս-ֆրանսիական դաշինքի սաղմնավորման պահին, կողմերից յուրաքանչյուրը բացառում էր Մեծ Բրիտանիայի հետ համաձայնության որևէ տարբերակ առաջնային դիտարկելով Թուրքիայի status quo-ն և մերժելով սուլթանի վրա ճնշում գործադրելու, մասնավորապես ռազմածովային դեմարշ կազմակերպելու հնարավորությունը, ապա հինգ տարի անց Ֆրանսիան, օգտագործելով անգլո-գերմանական սրված հակասությունների պահը, պատրաստ էր հաշտության եզրեր գտնել նախկին մրցակցի հետ, ընդ որում ոչ թե Մերձավոր Արևելքի, այլ Եգիպտոսի հարցում: Ռուսաստանին էլ խորհուրդ էր տրվում հաշվի առնել Անգլիայի քաղաքական վար-

---

[176] Ерусалимский А., Внешняя политика и дипломатия германского империа-лизма в конце 19 в,., М., 1951, с. 235. Եթե Ֆրանսիան Աֆրիկայում տարածքային ձեռքբերումների ակնկալիքով պատրաստ էր դաշինք կնքել Անգլիայի հետ և զբաղվել թուրքական ֆինանսների «առողջացմամբ» ընդլայնելով օտոմանյան պարտքի վարչության իրավասությունները և ըստ այդմ երկրում ուժեղացնելով իր ազդեցությունը, ապա ցարիզմի համար նման տարբերակը անընդունելի էր, քանզի հեռավոր-արևելյան ակտիվացող քաղաքականության պայմաններում եգիպտոսը և Սուեզը վերածվում էին Ռուսաստանի հետաքրքրության ոլորտ, ինչը անհրաժեշտ էր դարձնում այստեղ անգլիական օկուպացիայի վերացումն ու ջրանցքի ազատ նավարկելիությունը, իսկ թուրքական ֆինանսների միջազգային վերահսկողությունը հավասարազոր կլիներ Թուրքիայի ինտերնացիոնալացմանը, այն դեպքում, երբ ցարիզմը փորձում էր պաշտպանել քայքայվող պետությունը, բացառել արևելյան և հայկական հարցերի միջազգայնացումը:

քաղիծը, «շահավետ աշխատել Լոնդոնի կաբինետի հետ, բանակցություններից քաղելով գործնական օգուտ, պայմանավորվել հետագա անելիքների շուրջ, որը կբավարարեր կողմերի շահերը»[177]: Իհարկե, ֆրանսիացի դիվանագետները հարկ չէին համարում բացատրել, որ նման համագործակցությունը արդյունավետ էր Անգլիայի և Ֆրանսիայի, բայց ոչ Ռուսաստանի համար, որի արտաքին քաղաքական ծրագրերում աֆրիկյան խնդիրները /Եգիպտոս, Սուդան, Սուեզ/, ի տարբերություն Ֆրանսիայի, ամենևին էլ առաջնային չէին, իսկ Անգլիայի հետ դաշինքը՝ մեղմ ասած, ոչ շահավետ: Այդկերպ Ֆրանսիան, փաստորեն, ապահովագրում էր իր միջազգային կարգավիճակն ընդդեմ Եռյակ միության ու մասնավորապես Գերմանիայի՝ նախադրյալներ ստեղծելով անգլո-ֆրանս-ռուսական ապագա դաշինքի՝ Անտանտի համար: Ինչեւէ, բարձրաստիճան պատվիրակների «փարիզյան հաղթանակի» ոգևորությունը շատ արագ փարատվեց տունդարձին՝ հանդիպելով ռուս դիվանագետների փաստացի դիմադրությանը: Արդյունքում, Նիկոլայ II-ը հարկադրված էր ընդունել իր «խոշոր վրիպումը» և հրաժարվել Հանոտոյի նախագծված մոտեցումներից և իր իսկ ստանձնած պարտավորություններից[178]: Դաշնակիցների դիվանագիտական անհամաձայնությունն անմիջապես օգտագործեց Կ.Պոլսի ռուսական դեսպան Նելիդովը՝ ցարական կառավարության քննարկմանը ներկայացնելով հայկական ճգնաժամի երկարաձգման պարագայում սևծովյան նեղուցների գրավման նոր նախագիծ[179]:

Հանոտոն իր հերթին, տեղեկանալով Նելիդովի ծրագրի մասին, մեկնարկ տվեց դիվանագիտական ռևանշիզմին: Ռուսական քաղաքականությունը գնահատելով որպես Թուրքիայում մենիշխելու «սեպարատ» փորձ՝ ֆրանսիական կառավարությունը դիմեց սպառնալիքների և քաղաքական շանտաժի ռազմավարությանը: Առաջինների դեպքում հրապարակ հանվեց անգլո-ֆրանսիական դաշինքի գաղափարը, իսկ երկրորդն արտահայտվեց Մեծ Բրիտանիայի նախաձեռնությամբ հայկա-

---

[177] Архив внешней политики Российской империи, ф. Политархив, д. 3449, л. 1-9 /թարգմանությունը ֆրանսերենից/:

[178] Хвостов В., Проблема захвата Босфора в 90-ых г. 19 в., Историк-марксист, т. 20, М., 1930, с. 124.

[179] 1892թ. ցարական արքունիքը մերժել էր Նելիդովի նմանատիպ նախագիծը՝ կարևորելով ռուս-ֆրանսիական դաշինքը:

կան հարցի առնչությամբ հրավիրված միջազգային խորհրդաժողովին հղած «երեք կեսերում», այն է՝ պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը, հրաժարվել Թուրքիայում անջատ ելույթներից և սուլթանական կայսրության հանդեպ վեց տերությունների «կոնցերտինում» հաստատելու փորձերից[180]:

Ցարական արքունիքն էլ, թեպետ վաղուց էր փայփայում նեղուցներում հաստատվելու միտքը, հարկադրված էր հրաժարվել այդ ծրագրից ընկրկելով ռուս-ֆրանսիական դաշինքի լուծարման, Ռուսաստանի քաղաքական մեկուսացման և ֆինանսատնտեսական հուսալի աջակցությունից զրկվելու վտանգի առջև: Վերջինս չափազանց կարևոր նախապայման էր, եթե հաշվի առնենք, որ մասնավորապես 1890-ականների տնտեսական ճգնաժամն էր Ռուսաստանին նետել ֆինանսապես հզոր Ֆրանսիայի գիրկը, մեծացնելով առաջինիս կախումը երկրորդի կապիտալ ներդրումներից[181]:

Այսպիսով, Ռուսաստանի դեպի Կ.Պոլիս տանող ճանապարհին նախ և առաջ կանգնած էր դաշնակից Ֆրանսիան, որը որպես Մերձավոր Արևելքում ցարիզմի քաղաքական ակտիվությունը զսպելու միջոց ժամանակ առ ժամանակ շահարկում էր հայկական հարցը: 1891-1893 թթ. ձևավորված ռուս-ֆրանսիական դաշինքը ոչ այնքան ռազմաքաղաքական ընդհանրությունների, որքան հակասությունների միությունն էր, որի անդամները լիովին չվստահելով մեկ մեկու, սեփական շահերի իրագործման ճանապարհին պատրաստ էին քաղաքական նորանոր գործարքների վերանայելով ժամանակին երկուստեք համաձայնեցված դիվանագիտական մոտեցումները: Միաժամանակ քննախոսելի են այն տեսակետները, թե «1789 թ. ավանդույթնե-րի երկիրը» արևելյան ու մասնավորապես հայկական խնդրում, 1890-ականներին կաշկանդված լինելով ռուս-ֆրանսիական դաշինքով, որգեգրել էր անդեմ, ցարիզմին կամակատար քաղաքաղ գիծ[182]:

---

[180] Ротштейн Ф. А., Международные отношения в конце 19 в., М-Л., 1960, с. 374-376.

[181] Хальгартен Г., Империализм до 1914 г., М.,1961, с. 134-135.

[182] ՀԱԱ ֆ. 4033, g. 2, գ.105: Амфитеатров А., Армянский вопрос, СПб, 1906, с. 15.

Ռուս-ֆրանսիական մերձեցումը, իրականում կողմերից յուրաքանչյուրի քաղաքական խնդիրներն ինքնուրույն լուծելու և միասին, համաձայնեցված անգլիական, գերմանական, ավստրո-հունդարական մրցակցությանը հակադրվելու երաշխիք էր: Այն գաղութային, իմպերիալիստական մրցապայքարի, տերությունների ագրեսիվ արտաքին քաղաքականության արգասիք էր՝ կոչված հաղթահարելու երկու պետությունների քաղաքական մեկուսացումը, ընդդիմանալու հակադիր տերությունների ծավալապաշտական ծրագրերին: Միջազգային բարդ իրավիճակում, երբ աշխարհը բևեռվում էր ռազմաքաղաքական նոր խմբավորումների շուրջ, ցարիզմին անհրաժեշտ էր որպես դաշնակից ունենալ ուժեղ Ֆրանսիան իր շահերին ծառայեցնելու, և ոչ թե Ռուսաստանը Երրորդ հանրապետությանը ենթարկեցնելու համար: Լինել բարեկամներ՝ «կարողանալով պահպանել չափը և չհարուցել այլոց ղժղոհություն՝՝». ահավասիկ, քաղաքական մի բանաձև, որ բնութագրող էր երկու դաշնակիցներին էլ: Պատահական չէ, որ ժամանակին ռուս-ֆրանսիական բարեկամությունը համեմատվել է մկնդեղի հետ. «չափավոր քանակությամբ այն առողջարար է, չնչին չարաշահման դեպքում մահացու»[184]:

GAYANE TONOYAN
Institute of History, NAS RA

THE RUSSIAN-FRENCH ALLIANCE AND THE ARMENIAN QUESTION IN THE 90s OF THE 19th CENTURY

Summary

In the 1890s France, like all other states interested in Near East, followed a certain political principle in relation to the Ottoman "heritage" and the Eastern question, conditioned by the interests of the French financial capital. They were in harmony with the Russian diplomacy. Undoubtedly, France's attitude to the problem of Western Armenia had

---

[183] Ламздорф В.Н., Дневник,1894-1896 гг., с. 254.
[184] Вопросы истории, 1977, N 6, Из дневника В.Н. Ламздорфа, публикация И. А. Дьяконовой.

been conditioned by its economic and political interests. The French diplomacy periodically touched the Armenian question in the context of its interests.

The Russian court and the French government. acting as military-political partners, coordinated the realization of political principles in this region trying to escape the formation of a new centre of the tension and war in the East. protecting the Ottoman Empire and its indivisibility, acting as supporters of reforms provided by the 61st Article of the Berlin Congress. By the "defensive" attitude towards Turkey and "neutrality" in the Armenian question Russia and France were opposing the spread of the influence of England and Germany in Western Asia. Thus, France together with Russia (in order to restrain Britain) took part (a) in the work of the committee which investigated the events in Sasun; (b) in elaboration of the May project concerning Armenian reforms; (c) in the signing of the collective notes of the Great Powers addressed to the Sultan government; (d) in opposing the British proposals about the partition of the Ottoman Empire; (e) in the application of the military pressure against the Sultan; (f) in initiating of the international conference concerning the Armenian question.

Formed in 1891-1893 the Russian-French alliance was full of contradictions. They did not trust each other and were ready to commit political frauds for the realization of their own interests. thus revising mutually coordinated diplomatic approaches. There were certain contradictions in the Russian-French relations, particularly, concerning the problem of the Black Sea straits' status. Anyhow in the course of the Eastern crises the sides managed to regulate their actions.

The public opinion in France was agitated by the horrible news of the Armenian massacres in the Ottoman Empire. In 1896 many prominent French public and political figures accused the bloody Sultan Abdul-Hamid. They called progressive people to support Western Armenians, as well as criticized the European policy.

The Russian-French rapprochement, in reality, was a guarantee, on the one hand, to solve their own problems and, on the other hand, to oppose the rivalry of Britain, Germany, Austria and Hungary. Meanwhile the Russian Empire needed powerful France as an ally in a complicated international situation when the world polarized around new groupings.

ՀՈՎԱԿԻՄ ԲՈՅԱՋՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ (1913 թ.)

1912 թ. Բալկանյան պատերազմում Թուրքիայի պարտությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործման խնդրի վերաբացման համար: Արևմտահայ և արևելահայ ազգային շրջանները, ինչպես նաև Եվրոպայում կաթողիկոսի պատվիրակ Պողոս Նուբար ղեկավարած Ազգային Պատվիրակությունը սկսեցին ակտիվ ջանքեր գործադրել նպաստելու համար հայկական հարցի լուծմանը: Ստեղծված պայմաններում, երբ հայկական հարցը դառնալու էր տերությունների քննարկման առարկա, կարևորագույն խնդիրներից մեկը բարենորոգումների ծրագիր ունենալն էր, որտեղ ուրվագծված լինեին արևմտահայության պահանջները: Բարենորոգումների ծրագրի պատրաստման աշխատանքները Պ. Նուբարը սկսել էր դեռևս 1912 թ. դեկտեմբերի 18-ից՝ հույս ունենալով այն ներկայացնել Լոնդոնի կոնֆերանսին, որը գումարվելու էր կարգավորելու համար բալկանյան խնդիրները: 1913 թ. սկզբներին պատրաստված այդ նախագիծը[185] ներկայացվում է Գևորգ Ե կաթողիկոսի հաստատմանը: Ծրագրի մեկ օրինակ էլ ուղարկվում է Կ.Պոլիս՝ արևմտահայ ղեկավար շրջաններին ծանոթացնելու նպատակով: Միևնույն ժամանակ կաթողիկոսի հաստատմանն էր ուղարկվել նաև բարենորոգումների մեկ այլ ծրագիր, որը կազմվել էր Կ.Պոլսում Ազգային Պատրիարքարանի նախաձեռնությամբ[186]: Ծրագրի կետերի վերաբերյալ ծանուցվում է նաև Ազգային Պատվիրակությանը: Պ. Նուբարի և Ազգային Պատրիարքարանի կողմից մշակված նախագծերը կաթողիկոսն իր հերթին ուղարկում է Թիֆլիսի Ազգային Բյուրոյին՝ քննարկ-

---

[185] Ազգային Պատվիրակության կազմած ծրագրի տեքստն ամբողջությամբ տես Բոյաջյան Հ., Պողոս Նուբար Փաշան և բարենորոգումների խնդիրն Արևմտյան Հայաստանում 1912-1914 թթ., թեկնած. ատենախ., Ե., 2002, էջ 45-46:

[186] Օրագրի տեքստն ամբողջությամբ տես, ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 15, թ. 110-118:

ման և դրանց հիման վրա արևմտահայության բաղձանքների վերարերյալ միասնական ծրագրի կազմման համար, որը կրելու էր «համեմատարար համազգային կնիք»[187]:

Ծանոթանալով միմյանց կազմած ծրագրերին՝ Պ. Նուբարն ու Կ.Պոլսի պատրիարք Հ. Արշարունին հայտնաբերում են դրանցում առկա մի շարք սկզբունքային տարբերություններ, որոնցից ամենաէականը բարենորոգումների վերահսկողության եղանակի վերաբերյալ էր: Այդ կապակցությամբ կողմերի միջև առաջանում են լուրջ տարաձայնություններ, քանզի յուրաքանչյուրը պնդում էր իր տեսակետի վրա և չէր պատրաստվում հոգուտ մյուսի հրաժարվել դրանից: Սրա հետ մնկտեղ երկուստեք ջանքեր են թափվում ամեն գնով խափանել միմյանց ծրագրերն ինչ-որ ձևով ընթացքի մեջ դրվելու հնարավորությունը: Այսպես, Գևորգ Ե-ին հղած 1913 թ. հունվարի 22-ի նամակում Պ. Նուբարը, նշելով, որ ինքնուրույնության սկզբունքի վրա հիմնված Պատրիարքարանի ծրագիրն իրեն «բարեպատեհ և գործնական չի թվում», խնդրում էր ոչ մի կերպ չգործածել այն[188]: Նման խնդրանքով կաթողիկոսին դիմում է նաև պատրիարք Հ. Արշարունին:

Ծրագրային տարբերությունների հետևանքով առաջացած հակասությունների հիմնական պատճառներից էր այն, որ կողմերը հայկական հարցի պաշտպանության և դրանից ելնելով նաև բարենորոգումների ծրագիր կազմելու ու այն տերություններին ներկայացնելու խնդրում առաջնայնությունը վերագրում էին իրենց: «Թէ Պատրիարքարանը եւ թէ Պատրիրակութիւնը, - իր հուշերում գրում էր Վ. Փափազյանը,- հաւասարապէս կը կարծէին թէ ունին պէտք եղած հեղինակութիւնը եւ կարողութիւնը եւ մանաւանդ երկուքն ալ կը կարծէին ապահոված ըլլալ մէկ կողմէ Պոլսոյ եւ միւս կողմէ Փարիզի բարեկամ պետութիւններու ներկայացուցիչներու համաձայնութիւնը իրենց նախագիծերու այս կամ այն կետերու նկատմամբ»[189]: Այդ իրողությունը պատահական չէր: Պ. Նուբարի նման դիրքորոշումը պայմանավորված էր առաջին հերթին նրա համոզվածությամբ, որ Ազգային Պատրիարքարանը, Բ.Դռան հետ իր հարաբերությունները պահպանելով, միաժա-

---

[187] ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 35, թ. 9:
[188] Նույն տեղում, թ. 21:
[189] Փափազյան Վ., Հայկական բարենորոգումները /1912-1914/, «Վէմ», Փարիզ, 1933, N 2, էջ 89:

մանակ չէր կարող հայկական հարցի լուծման տեսանկյունից բանակցություններ վարել տերությունների հետ: Երկրորդ, նա գտնում էր, որ այդ ուղղությամբ ջանքերի գործադրումը մտնում է միայն իր գլխավորած պատվիրակության իրավասությունների մեջ: Այդ պատճառով էլ Պ. Նուբարն իր դժգոհությունն էր հայտնում Կ.Պոլսում տերությունների դեսպանների հետ արևմտահայ ազգային շրջանների վարած առանձին բանակցությունների կապակցությամբ: «Երբ կաթողիկոսն ինձ նշանակեց, - գրում էր նա պատրիարքին, - կարծեցի հասկանալ, թե ձեռք է առել եվրոպական բանակցությունների տնօրինությունը Պատրիարքարանի խնդրանքով իսկ, որ դրանք ուղղակի մշակվեն դեսպանախորհրդի կամ տերությունների հետ՝ խուսափելու համար Կ.Պոլսի դեսպանների միջնորդությունից»[190]: Այդ նկատառումներով էլ բարենորոգումների ծրագրի կազմության իրավասությունը Պ.Նուբարը ևս վերապահում էր իրեն: Այդ էր վկայում նաև այն փաստը, որ տեղեկանալով ծրագրի կազմության վերաբերյալ Պատրիարքարանում կատարվող աշխատանքներին նա Վ. Մալեզյանին հղած 1912 թ. դեկտեմբերի 21-ի նամակում գրում էր. «Շատ օգտակար պիտի ըլլայ որ ժամ առաջ ունենամ այդ նախագիծը, բաղդատեմ մերինի հետ և ջանամ, անոնք միաձուլելով, յանգիլ գործնական եւ վերջնական բանաձեւի մը»[191]: Եվ վերջապես երրորդ, Պ. Նուբարը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լոնդոնում Թուրքիայի հետ վարվում էին խաղաղության բանակցություններ, իսկ Փարիզում առաջիկայում պետք է քննարկվեին նրա ֆինանսական դրությանը վերաբերող հարցերը, կարծում էր, որ բարենորոգումների խնդրի շուրջ բանակցությունները ևս կկենտրոնանան Եվրոպայում և կգտնվեն Ազգային Պատվիրակության ուշադրության կենտրոնում:

Ինչ վերաբերում է Պատրիարքարանի վերոհիշյալ կեցվածքին, ապա դա պայմանավորված էր նրա հայկական հարցի լուծման առաջին շահագրգիռ կողմն ու արևմտահայության կացությանն ամենից քաջատեղյակը լինելու հանգամանքով: «Նախագծի պատրաստելու իրավունքը, - կաթողիկոսին հղած նամակում գրում էր պատրիարք Հ. Արշարունին, - բնականաբար մեզ վերապահված կկարծենք, քանի որ երկրի մեջ կապրենք և թուրքահայերի ցավերին և պահանջներին ավելի դի-

---

[190] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 35:

[191] Մալեզեան Վ., Ճամբուս վրայ /Յուշաքաղ/, Բարիզ, 1950, էջ 307:

տակ կհամարվենք»[192]: Այդ հարցում Ազգային Պատրիարքարանն ամբողջովին վայելում էր Կ.Պոլսի ռուսական դեսպանատան աջակցությունը: Այսպես, դեսպանատան առաջին թարգման Ա. Մանդելշտամն արևմտահայ ղեկավար շրջանների հետ հանդիպման ժամանակ նշել էր, որ «միայն Պատրիարքարանը, իբրև արևմտահայերի ներկայացուցիչ, կարող է պահանջներ հրապարակ ղնել կամ ներկայացնել եվրոպական մեծ տերություններին: Միայն նա պետք է գործը ղեկավարի, իսկ կաթողիկոսն ու պատվիրակությունը պետք է հետևեն նրա գծած ուղղությանը»[193]: Բացի այդ արևմտահայ ղեկավար շրջանները համոզված էին, որ բարենորոգումների հարցի քննարկումները տեղի էին ունենալու Կ.Պոլսում: Այդ ուղղությամբ աշխատանք էր տանում նաև ռուսական կառավարությունը և հայկական հարցի շուրջ ծավալվող իրադարձություններին հետևելու խնդրում առաջնությունը տալիս էր Կ.Պոլսի ռուսական դեսպանատանը: Այդ էր վկայում թերևս այն փաստը, որ այստեղ շատ էին մտահոգված, որպեսզի Պ. Նուբարն իր կազմած ծրագիրը չհանձնի Ֆրանսիայում ռուսական դեսպան Իզվոլսկուն: Այդ կապակցությամբ Գևորգ Ե կաթողիկոսը նույնիսկ իր զարմանքն է հայտնում, թե ինչ տարբերություն կա Գիրսի /Թուրքիայում ռուսական դեսպան – Հ. Բ./ և Իզվոլսկու միջև, քանի որ մեկնությունն է երկուսն էլ այդ ծրագրերը հաստատման համար պետք է ուղարկեին Պետերբուրգ[194]:

Քննության առնելով Պ. Նուբարի կազմած բարենորոգումների ծրագիրը՝ Կ.Պոլսի Ապահովության Հանձնաժողովի անդամները գալիս են այն եզրակացության, որ դրա որոշ գրույթներն ու հատկապես բարենորոգումների վերահսկողության մնայուն մարմնի /մշտական հանձնաժողովի/ ստեղծման առաջարկը չեն համապատասխանում արևմտահայության ձգտումներին: «Անմիջապես նկատելի էր, - գրում էր Վ. Փափազյանը, - որ այդ ծրագիրը խմբագրուած է հայ իրականությենէն ու անոր պահանջներէն հեռու վայրի մը մէջ»[195]: Պ.

---

192 ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 35, թ. 47:

193 Միքայելյան Ն., Արխիվային նոր նյութեր Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի վիճակի մասին /1912-1913թթ./, «Էջմիածին», 1965, N Ե-Զ-Է, էջ 184:

194 ՀԱԱ, ֆ.57, g. 5, գ. 35, թ. 11:

195 Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Բ, Պէյրութ, 1952, էջ 221:

Նուբարի ծրագիրը ներկայացվում է նաև Մ. Գիրսին, որը նույնպես բացասաբար է գնահատում դրանում տեղ գտած բարենորոգումների վրա վերահսկողության սահմանման եղանակը: Այդ մասին Պատրիարքարանից հաղորդում են Պ. Նուբարին՝ հույս ունենալով, որ դա կստիպի նրան հրաժարվել այդ կետից: «Տարակարծությունը մեր միջեւ գաղտնի չէր կրնար պահիլ ռուս դեսպանատունէն, քանի որ անոր խողովակով պիտի անցնէին մեր բաղձանքները», - գրում էր Վ. Փափազյանը[196]:

Աղգային երկու կենտրոնների միջև առաջ եկած տարաձայնությունները, այն էլ այնպիսի կարևոր հարցում, ինչպիսին բարենորոգումների ծրագիրն էր, անշուշտ բացասաբար կանդրադառնային հետապնդվող խնդրի լուծման վրա: «Այս անհամաձայնությունը, - կաթողիկոսին հղած 1913 թ. փետրվարի 10-ի նամակում գրում էր Պ. Նուբարը, - կվնասի հայկական դատին և ապարդյուն կձդի մեր բոլոր ջանքերը»[197]: Դեպքերի նման զարգացումից խուսափելու համար երկուստեք կարևորվում է արևմտահայերի պահանջների վերաբերյալ մեկ միասնական տեսակետի շուտավույթ հանգելու անհրաժեշտությունը, որի ուղղությամբ սկսվում են ձեռնարկվել գործնական քայլեր: «Երկու ղեկավար մարմիններու միջեւ տարբերութիւնները այնքան էական էին, - գրում էր Վ. Փափազյանը, - որ անկարելի էր թղթակցութեամբ իրար հասկնալ եւ համոզել»[198]: Հենց այդ նկատառումներով էլ պատրիարքին հղած 1913 թ. փետրվարի 8-ի նամակում Պ. Նուբարն առաջարկում է պատվիրակ ուղարկել Փարիզ բանակցություններ վարելու և երկուստեք համաձայնության հասնելու համար: «Տարակոյս չունիմ, - Վ. Մալեզյանին հղած նամակում գրում էր Ազգային Պատվիրակության անդամ Հ. Մոստիչյանը, - որ եթէ Պատրիարքարանը ձեռնհաս ներկայացուցիչ մը ղրկէ Բարիզ, դիւրութեամբ կարելի է ծրագրին տալ իր վերջնական ձեւը»[199]: Այդ առաքելությունը հանձնվում է Ազգային Կենտրոնական Վարչության և Ապահովության Հանձնաժողովի անդամ Վ. Փափազյանին, որը փետրվարի կեսերին ժամանում է Փարիզ:

---

[196] Փափազյան Վ., Հայկական բարենորոգումները /1912-1914/, «Վէմ», Փարիզ, 1934, N1, էջ 70:
[197] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 29:
[198] Փափազյան Վ., Հայկական բարենորոգումները /1912-1914/, էջ 65:
[199] Մալեզեան Վ., նշվ. աշխ., էջ 315:

Կ.Պոլսից ժամանած պատվիրակի հետ բարենորոգումների ծրագրերի քննարկումները կազմակերպելու համար Պ. Նուբարը որոշում է հրավիրել պատգամավորական ժողով, որը տեղի է ունենում 1913 թ. փետրվարի 23-ին: Գրան, բացի Պ. Նուբարից, Հ. Սոստէյանից, Գ. Ութուջյանից և Մ. Զերազից, մասնակցում էր նաև Վ. Փափազյանը: Ժողովի ընթացքում, ինչպես կաթողիկոսին հղած 1913 թ. փետրվարի 26-ի նամակում դրում էր Գ. Ութուջյանը, կատարվեցին երկու ծրագրերի «մանրազննին և խղճմիտ ուսումնասիրություններ»[200]: Հավաքույթի հիմնական նպատակն էր հարթել երկուստեք գոյություն ունեցող տարաձայնություններն ու հասնել հայացքների համաձայնեցմանը, որը, սակայն, այդքան էլ դյուրին գործ չէր: Ծրագրի վերաբերյալ բանակցությունները շարունակվեցին նաև հետագայում գլխավորապես Պ. Նուբարի և Վ. Փափազյանի միջև:

Սկզբնական շրջանում երկու կողմերն էլ որոշակի հիմնավորումներով համառորեն պաշտպանում էին իրենց տեսակետներն ու հրաժարվում զիջումներ անելուց: Պ. Նուբարը վերահսկողության մնայուն մարմին ստեղծելու առաջարկը հիմնավորում էր նրանով, որ այն չափավոր է, չի դիպչում Թուրքիայի ինքնասիրությանը և կարժանանա տերությունների հավանությանը: «Պողոս Նուպարի պահանջը, - գրում էր Ա. Թերզիպաշյանը, - մեծ ռիսք մը չէր ենթադրեր եւ դիւրաւ ալ գործադրելի էր»[201]: Սակայն պետք է նշել, որ վերահսկողության այդ եղանակը չէր կարող գործնական նշանակություն ունենալ և արդյունավետ լինել, քանի որ Թուրքական իշխանությունները, օգտվելով տերությունների միջև գոյություն ունեցող հակասություններից, հեշտությամբ կկարողանային խափանել այդ մարմնի աշխատանքները: Այդ նկատառումներով էլ Վ. Փափազյանն առաջարկում էր հրաժարվել այդ պահանջից: «Այլապես, - նշում էր նա, - Հայաստանը նորեն պիտի դառնայ թատր պետութիւններու փոխադարձ խաղերուն և մրցումներուն, որմէ պիտի օգտուի Բ.Դուռը»[202]: Սակայն հենց այդ նույն հակասությունների պատճառով անիրականանալի էր նաև վերահսկողության վերաբերյալ Պատրիարքարանի

---

200 Մատենադարան, Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանի արխիվ, թղթ. 3, վավ. 99:
201 Թէրզիպաշեան Ա., Նուպար, Փարիզ, 1939, էջ 103:
202 Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Բ, էջ 226:

առաջարկած, թեպետ ե. ավելի նախընտրելի, ձևակերպումը, որով այդ իրավունքը վերապահվում էր տերություններից մեկին: Բանն այն էր, որ տերությունները ոչ մի դեպքում չէին թույլ տա, որ նրանցից որևէ մեկը, և հատկապես Ռուսաստանը, ստանար նման առավելություններ ու վերահսկեր հայկական բարենորոգումների գործադրությունը, դրանով իսկ ուժեղացնելով իր ազդեցությունն Օսմանյան կայսրության այդ հատվածում: Այդ իրողությունը հաշվի առնելով էլ Պ. Նուբարը դեմ էր Պատրիարքարանի ձևակերպմանը, չնայած որ ինքը ևս շատ էր փափագում միայն Ռուսաստանի վերահսկողությունը՝ այն համարելով «բուն և անմիջական ներգործություն, իրական ճնշում Թուրքիայի վրա»[203]: Պ. Նուբարը չէր ընդունում նաև հայկական նահանգի ընդհանուր քննիչի նշանակման կարգի /տերությունների ընտրությամբ և Բ.Դռան վավերացմամբ/ վերաբերյալ Պատրիարքարանի ձևակերպումը, այն իրավացիորեն համարելով անիրագործելի:

Չնայած այդ տարաձայնություններին, Պ. Նուբարի և Վ. Փափազյանի միջև տարվող բանակցությունները, որոնք տևեցին մոտ 1,5 ամիս, անարդյունք չեն անցնում: Շուտով Պ. Նուբարը, գիտակցելով համաձայնության շուտափույթ հասնելու անհրաժեշտությունը, գնում է որոշակի զիջումների և հրաժարվում է վերահսկողության մնայուն մարմին ստեղծելու պահանջից: «Փաշան, - իր հուշերում գրում է Վ. Փափազյանը, - աստիճանաբար կը լքեր իր դիրքերը»[204]: Պետք է նշել, որ Պ. Նուբարի այդ զիջողականությունը որոշակիորեն պայմանավորված էր նաև ռուսական կառավարության դիրքորոշմամբ: Կաթողիկոսին հղած նամակում Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը պահանջում էր ցուցումներ տալ Պ. Նուբարին՝ «համակերպվելու Պատրիարքարանի ծրագրին և գործունեությանը»[205]:

1913 թ. մարտի վերջերին ռուսական կառավարությունը ցանկություն է հայտնում ծանոթանալ արևմտահայության բաղձանքների հետ: Այդ նկատառումներով ապրիլի սկզբներին պատրիարք Հ. Արշարունին ռուսական դեսպան Մ. Գիրսին

---

[203] Բաբգէն վարդապետ, Հայկական հարցը և Պողոս Նուբար Փաշան, Վաղարշապատ, 1914, էջ 20; Քօնթանսոն տը Լ., Հայկական հարցին վերջին փուլերը, Կ.Պոլիս, 1913, էջ 54:

[204] Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Բ, էջ 226:

[205] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ. 168, թ. 2:

պայմանագրեր հանձնվում է Պատրիարքարանի կազմած բարեկարգումների ծրագիրը: Ծանոթանալով դրան՝ Մ. Գիրսը փոփոխություններ է կատարում որոշ կետերում, որոնք, ըստ նրա, «հակառակ էին սուլթանի իրավունքներին և ենթադրում էին անջատական ձգտումներ»[206]: Այսպես, նահանգապետը, որը կարող էր լինել ոչ միայն օտարերկրացի, այլ նաև թուրքահպատակ քրիստոնյա, պետք է նշանակվեր սուլթանի կողմից՝ տերությունների հավանությամբ, վերահսկողությունը բարեկարգումների գործադրության վրա պետք է իրականացվեր ոչ թե մեկ, այլ բոլոր տերությունների կողմից: Պետք է նշել, որ Մ. Գիրսի կատարած վերոհիշյալ փոփոխությունները դրականորեն ազդեցին և նպաստեցին Պ. Նուբարի և Ազգային Պատրիարքարանի միջև տարաձայնությունների հարթմանն ու համաձայնության հաստատմանը: Այդ նոր ձևակերպումները հավասարապես ընդունվեցին ինչպես արևմտահայ ղեկավար շրջանների, այնպես էլ Պ. Նուբարի կողմից, որի շնորհիվ հնարավոր դարձավ «երկուստեք կատարյալ համաձայնությամբ և համերաշխությամբ խմբագրել և ընդունել վերջնական ծրագիր»[207]: Նման պայմաններում միակ բանը, որ պահանջում էր Պ. Նուբարը, այն էր, որպեսզի արևմտահայության պահանջների համար որպես հիմք համարվի իր կազմած ծրագիրը և վերոհիշյալ սրբագրություններն ու փոփոխությունները կատարվեն դրա վրա: Նա դեռևս հույս ուներ, որ հայկական հարցի շուրջ տերությունների միջև բանակցությունները կայանալու են Եվրոպայում և արևմտահայության բաղձանքները ներկայացվելու են Ազգային Պատվիրակության կողմից: Սակայն այդ պահանջը չի բավարարվում:

Այսպիսով, վերջնականապես հարթվում են Պ. Նուբարի և արևմտահայ ղեկավար շրջանների միջև բարենորոգումների ծրագրի մի շարք էական կետերի շուրջ ծագած հակասությունները: «Այժմ, - Ա. Զոպանյանին հղած 1913 թ. մայիսի 14-ի նամակում գրում էր Վ. Փափազյանը, - մեր մէջ ոչ մեկ անհամաձայնութիւն կայ»[208]: Դա շատ կարևոր իրողություն էր, քանի որ հակառակ դեպքում մեծապես կարող էր վտանգվել հայկական հարցի լուծումը: Դրա պատճառ կարող էր հանդիսանալ ոչ այնքան ծրագրային տարբերությունները, որքան որ

---

[206] Միքայելյան Ն., Նշվ. աշխ., «Էջմիածին», 1965, N Բ-Գ -Դ, էջ 164:
[207] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 31, թ. 94:
[208] ՀՀ ԳԱԹ, Ա.Զոպանյանի ֆ., գ. 7456, թ. 2:

վերջիններիս հետևանքով կողմերի միջև առաջացած ցանկությունը՝ խափանել միմյանց կատարած ձեռնարկները: Պատրիարքարանի կողմից, համենայն դեպս, նման փորձ եղել էր: Այդ էր վկայում, թերևս, կաթողիկոսին հղած պատրիարքի 1913 թ. հունիսի 14-ի նամակը, ուր նա դրում էր. «Այժմ մենք ոչ միայն չենք աշխատում չեզոքացնել Պատվիրակության դերը, այլ, խորապես գիտակցելով նրա նշանակությունը, ամեն կերպ ջանում ենք ամրապնդել և արդյունավետ դարձնել նրա պաշտոնը»[209]: Պետք է նշել, որ ազգային երկու կենտրոնների միջև ծագած տարաձայնությունների փաստը հնարավորին չափ գաղտնի պահվեց և թույլ չտրվեց, որպեսզի թափանցի մամուլի էջերը, որը նույնպես կվնասեր հետապնդած խնդրի լուծմանը: Բանն այն էր, որ այդ իրողությունը կարող էր շահարկվել ոչ միայն թուրքական իշխանությունների, այլ նաև տերությունների կողմից և օգտագործվել արևմտահայության դեմ: 1914 թ. մարտին, երբ բարենորոգումների վերաբերյալ բանակցություններն արդեն ավարտվել էին և կնքվել էր համաձայնագիր, լրագրողներից մեկի հարցին, թե Ազգային Պատրիարքարանի հետ նրա հարաբերություններն արդյոք միշտ գոհացուցիչ են եղել, Պ. Նուբարը, լռելով տարաձայնությունների մասին, պատասխանել էր. «Այո, եւ ինքզինքս բարեբաղդ կը համարիմ որ ամեն կերպով Պատրիարքարանին անձնուէր աջակցութիւնը վայելեցի ինծի վստահուած առաքելութեան մէջ»[210]:

HOVAKIM BOYAJYAN
Institute of History, NAS RA

DISAGREEMENTS OF POGHOS NUBAR AND THE NATIONAL PATRIARCHATE CONCERNING THE PROGRAM OF THE REFORMS OF WESTERN ARMENIA (1913)

Summary

The defeat of Turkey in the Balkan war (1912) created favourable conditions for the realization of reforms in Western Armenia. The Western and Eastern Armenian national circles, as well as the

---

[209] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 35, թ. 47:
[210] «Կոչնակ», Նիւ Եորք, 1914, N17; «Յուսաբեր», Կահիրե, 1914, N 210:

National Delegation headed by Nubar Pasha. the envoy of the Catholicos of All Armenians began to apply great efforts to help the solution of the Armenian question.

It was very important to have a program of reforms outlining the demands of Western Armenians. There were two projects of reforms: one presented by Nubar Pasha. another – by National Patriarchate in Constantinople.

Nubar Pasha and the Armenian Patriarch of Constantinople H.Arsharuni found principal differences in each project, especially concerning the method of control of the reforms.

Each side insisted on its point of view. Such development of the process was full of dangerous consequences. After long negotiations main contradictions were resolved. It was very important, otherwise the Armenian question's solution would be endangered.

At the end of March 1913 the Russian government got acquainted with the aspirations of Western Armenians. At the beginning of April Patriarch H.Arsharuni officially handed M.Girs the project of reforms compiled by the Patriarchate.

Girs offered changes in some articles of the project, especially concerning the question of the appoitment of the governor who could be not only a foreigner, but also a Turkish subject appointed by the order of the Sultan and agreement of the Great Powers. The control over the realization of reforms had to be carried out by all involved states.

The offered formulations were accepted both by Nubar Pasha and the National patriarchate and it became possible to edit and except finally the project of reforms.

It is necessary to note that the fact of contradictions was kept in secret. If it had become known it would be speculated not only by the Turkish authorities but also by the Great Powers and used against Western Armenians.

In 1914, when the negotiations about the reforms were finished and the sides came to an agreement, one of the journalists asked Nubar Pasha whether his relations with the National Patriarchate were always satisfactory, he answered: "Yes", keeping in secret disagreements.

ԱՆԱՀԻՏ ԽՈՍՐՈԵՎԱ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԱՍՈՐԻՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքական կառավարության ներշնչումով ու ղեկավարությամբ հայերի հետ միասին անագորույն դաժանությամբ կոտորածների ենթարկվեց նաև Մերձավոր Արևելքի հնագույն ժողովուրդներից մեկը ասորի ազգը: Ժողովուրդ, որի նախնիները մեծագույն ներդրում են կատարել համաշխարհային քաղաքակրթության և մշակույթի զարգացման վաղնջական պատմության մեջ:

Ասորի և հայ ժողովուրդների պատմությունները սերտ առնչություն ունեն միմյանց հետ: Միջին դարերում այս երկու քրիստոնյա ազգերը իրենց գոյատևման համար անցել են մաքառումների դաժան ուղի և ապրել բազմաթիվ օրհասական պահեր: Դեռ XIX դ. վերջին տասնամյակում հայ և ասորի ժողովուրդները ենթարկվեցին աբդուլհամիդյան վարչակարգի կողմից ձեռնարկված հալածանքներին և եղբայրաբար, կողք կողքի պայքարեցին օսմանյան բռնապետության դեմ: Իսկ այն ծանր փորձությունը, որ նրանք կրեցին Առաջին աշխարհամարտի տարիներին, երբ թուրքական ավանդական ջարդարարական քաղաքականությունը հասել էր իր գագաթնակետին, չուներ իր նախադեպը մարդկության ողջ պատմության ընթացքում:

Այսօր, երբ հայ պատմագիտության կարևորագույն հիմնահարցերից մեկը դարձել է միջազգային հասարակայնության կողմից հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը, այդ համատեքստում կարևորություն է ստանում Օսմանյան Թուրքիայում ցեղասպանության ենթարկված մյուս ժողովուրդների պատմության լուսաբանումը: Իրենց անցած ողբերգական ճակատագրով առանձնանում են նաև ասորիները, որոնք հայ ժողովրդի նման դարձան թուրքական բիրտ ու վայրագ քաղաքականության զոհը: Ասորիների ցեղասպանության հարցի ուսումնասիրությունը և լուսաբանումը միայն ասորիների և ասորագիտության, ինչպես նաև հայ-ասորական

կապերի առկայությունը փաստելու խնդիրը չէ: Այս հարցն ունի այլ հնչեղություն. այսօր ասպարեզ է նետվել մի նոր տեսություն՝ ցեղասպան պետության տեսությունը, և ձևավորվել է մի նոր ուղղություն՝ ցեղասպանագիտությունը, որը երկար ժամանակ հիմնվում էր միայն հայերի ցեղասպանության և հրեաների հոլոքոստի վրա: Այս տեսանկյունից վերը նշված հարցի լուսաբանումը կարևորվում է նրանով, որ այն կարող է ծանրակշիռ ապացույց և կռվան հանդիսանալ աշխարհի նորանոր երկրների, այդ թվում նաև Թուրքիայի կողմից 1915 թ. հայերի ցեղասպանության ճանաչման գործընթացում: Փաստորեն, այս հիմնահարցի ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական կարևոր նշանակություն, հատկապես, երբ դեռ ոչ այնքան վաղեմի իրենց նախնիների օրինակին հետևելով՝ ներկայիս Թուրքիայի պաշտոնատար այրերը, ինչպես նաև մեծ տերությունների քաղաքականությունն արդարացնող բազմաթիվ հեղինակներ, իրենց գործերում խեղաթյուրում են պատմական ճշմարտությունը և փորձում թաքցնել ցեղասպանության իրողությունը՝ ծուռ հայելու մեջ ներկայացնելով իրական փաստերը:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին ասորիները հիմնականում տեղաբաշխված էին Արևմտյան Հայաստանի Վանի վիլայեթի Հաքյարիի սանջակում, ինչպես և Էրզրումի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Խարբերդի, Սեբաստիայի նահանգների, Իրանի Ուրմիայի, Իրաքի Մոսուլի և Սիրիայի հյուսիս-արևմտյան շրջաններում: Տեղեկությունների և վիճակագրական տվյալների քննությունը ցույց է տալիս, որ այս ժամանակահատվածում Օսմանյան կայսրությունում և նրան հարակից տարածքներում ապրում էին մեկ միլիոնից ավելի ասորիներ՝[211] միասնական լեզվով, մշակույթով և ազգային սովորույթներով, որոնք քաղաքական, ռազմական և կրոնական առումներով ենթարկվում էին հոգևոր առաջնորդ Մար-Շիմուն Բենիամինին: Ասորիների հանդեպ, որպես քրիստոնյա ժողովրդի մի մաս, թուրքական իշխանությունները վարել են նույն հալածական քաղաքականությունը, ինչը տարվել է հայերի և Օսմանյան Թուրքիայի մյուս հպատակ ժողովուրդների նկատմամբ: Ասորիներից շատերը կրթություն էին ստանում թուրքական կրթական հաստատություններում, սակայն ձեռք բերելով համապատասխան վկայական՝ չէին կարող զբաղեցնել պետական պաշ-

---

[211] Սահակ Մեսրոպ, Հայուն Տարեցոյց, Կ.Պոլիս, 1913, էջ 67-68:

առններ: Նրանք անգամ զուրկ էին իրենց շրջանները տնտեսապես զարգացնելու հնարավորությունից: Թուրքական իշխանությունները տարալուծում էին ասորիներին մյուս ազգերի մեջ՝ ղրկելով նրանց համախմբվելու և միասնական ճակատով հանդես գալու հնարավորությունից: Եվ վերջապես, ինչպես ցույց տվեցին պատմական հետագա իրողությունները, ասորի ժողովրդին նույնպես բաժին ընկավ Օսմանյան Թուրքիայում ապրող հայ և հպատակ մյուս ժողովուրդների դաժան ճակատագիրը:

1876 թ. դահ բարձրացած սուլթան Աբդուլ Համիդ II–ը ձեռնամուխ եղավ քրիստոնյաների զանգվածային կոտորածների ծրագրմանը: Հայտնի է, որ Աբդուլ Համիդի արտաքին և ներքին քաղաքականության առանցքը պանիսլամիզմն էր, որի նպատակն էր Թուրքիայի շուրջը համախմբել մահմեդականներով բնակեցված երկրներն ու տարածքները անշուշտ չբացառելով ոչ թուրք ժողովուրդների հալածանքը և ազգային-ազատագրական շարժումների ճնշումը: Քաղաքական հենց այդպիսի հաշվարկով էլ կազմակերպվեցին զանգվածային ջարդեր, ուր հարյուր հազարավոր հայերի հետ մեկտեղ զոհ գնացին նաև տասնյակ հազարավոր ասորիներ: Ասորիների զանգվածային ջարդերը սկիզբ առան 1895 թ. հոկտեմբերի սկզբին Դիարբեքիրում, ապա տարածվեցին ամենուր: Ասորական կոտորածներն աննախադեպ չափեր ընդունեցին. բազմաթիվ վայրերում տեղի ունեցան սոսկալի իրադարձություններ, որոնց ժամանակ սպանվեցին, բռնի կրոնափոխ եղան և արտագաղթեցին բազմաթիվ մարդիկ: Մահմեդականացվեց 245 գյուղերի շուրջ 100 հազար ասորի բնակչություն: Հազարավոր ասորի կանայք և աղջիկներ քշվեցին թուրքական հարեմներ[212]:

1895 թ. հոկտեմբերի 20-ին Ամիդ /Դիարբեքիր/ քաղաքում թուրք ու քուրդ խուժանի ձեռքով իրականացվեցին քրիստոնյաների կոտորածները: Ասորական Աբ. Աստվածամոր եկեղեցին իր մեջ պատսպարեց բազմաթիվ քրիստոնյաների՝ ասորիների, հայերի ու հույների: Բարեբախտաբար, նշված եկեղեցին զերծ մնաց հարձակումներից, ինչը չի կարելի ասել ասորական այն գյուղերի մասին, որոնց մեծ մասն ավերվեց և թալանվեց քրդերի կողմից: Այդ ծանր օրերին մի քանի ասորիներ դիմում են իրենց հոգևոր առաջնորդին՝ առաջարկելով

---

[212] Саргизов Л. М., Дружба идущая из глубины веков /Ассирийцы в Армении/, "Ampa", N 4, СПб, 1992, с. 71.

հայերին հանել Ար. Աստվածամոր եկեղեցուց թուրքերի դժգոհությունը չհարուցելու համար: Ի պատասխան այդ պահանջի, ասորի հոդեոր հովիվը հայտնում է իր ժողովրդին. «Այն մարդիկ, ովքեր խաչակնքում են, մինչև վերջ պետք է մնան եկեղեցում: Եթե սպանվելու ենք, ապա միասին»[213]: Դիարբեքիրի սանջակի 119 գյուղ հրդեհվեց և ավերվեց: 6 հազար քրիստոնյա ընտանիք շուրջ 30 հազար մարդ[214], այդ թվում նաև բազմաթիվ ասորիներ, սրի քաշվեցին:

1896 թ. սեպտեմբերի սկզբին Հաքյարիի հարավում գտնվող ասորաբնակ գավառներում տեղի ունեցած ջարդերի մասին էր վկայում հայ ազգային-ազատագրական շարժման և Արմենական կուսակցության հայտնի գործիչ Արմենակ Եկարյանը. «Կառավարությունը օգտվելով առիթից ուզում էր աղատվել նաև այդ անբաղձալի տարրից /ասորիներից - Ա. Խ/, դրա համար էլ այնտեղ ուղարկեց բազմաթիվ զինվորներ և բաշիբոզուկներ, որոնց ձեռքով հարյուրավոր ասորիներ ջարդվեցին»[215]:

Ջմանրամասնելով բազմաթիվ նմանօրինակ փաստեր, ամփոփենք, որ XIX դ. վերջին Օսմանյան կայսրությունում սուլթան Արդուլ Համիդի կողմից կազմակերպված ջարդերի հետևանքով 300 հազար հայերի հետ միասին թուրքական յաթաղանին զոհ դնացին նաև 55 հազար ասորիներ[216]: Հայկական ընդհանուր ջարդերի ընթացքում ասորիների նկատմամբ կատարված այս վայրագությունները նոր էջեր հավելեցին Օսմանյան կայսրության արյունոտ պատմությանը: Փաստորեն, XIX դ. հատկապես իր վերջին տասնամյակում տեղի ունեցած սոսկալի իրադարձություններով, կործանարար հետևանքներ թողեց Օսմանյան կայսրության ասորիների վրա և հող նախապատրաստեց էլ ավելի մեծ աղետների համար:

Առաջին աշխարհամարտը սկսվելուց անմիջապես հետո երիտթուրքական կառավարությունն արդեն որոշել էր մտնել պատերազմի մեջ: Թուրքերը կարծում էին, որ «պատերազմին մասնակցելը խիստ կբարձրացնի Թուրքիայի հեղինակությունը, հաղորդ կտա նրանց ինքնասիրությանը և արժանապատ-

---

[213] Մկունդ Տ., Ամիտայի արձագանքները, Նիւ-Եորք, 1950 էջ 234:
[214] Геноцид армян в Османской империи, сбр. документов и материалов под ред. проф. М. Г. Нерсисяна, Е., 1966, с. 120.
[215] Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրէ, 1947, էջ 111.
[216] Naayem J., Shall this Nation Die, New-York, 1921, p. 274.

վությանը»[217]: Իրականում, այս պատերազմը երիտթուրքերի համար բարենպաստ առիթ էր գործնականում ստուգելու համաթուրքական գաղափարների կենսունակությունը, իրականացնելու իրենց նվաճողական և ցնորական ծրագրերը, որոնք պաշտպանություն էին գտնում ռազմա-ֆեոդալական, բուրժուական, իթթիհատական-շովինիստական վերնախավի շրջանում: Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան գերմանական դեսպանատան աշխատող դոկտոր Մոոթմանի հետ մի զրույցի ժամանակ հաղորդել էր, որ թուրքական կառավարությունը, օգտվելով պատերազմական իրավիճակից՝ վերջնականապես կձերբազատվի ներքին թշնամիներից՝ քրիստոնյաներից չվախենալով անգամ օտար երկրների դիվանագիտական միջամտությունից[218]: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ թուրքերն իրոք չվախեցան մեծ տերությունների միջամտությունից, ե. իրականացրին օսմանյան տերության մի շարք ազգերի կոտորածներ: Զանգվածային ջարդերից ու բռնագաղթից զերծ չմնացին նաև ասորիները:

Երիտթուրքերի կուսակցության ծրագրում ասվում էր. «Ուշ թե շուտ բոլոր թուրքահպատակ ժողովուրդները պետք է թուրքացվեն: Պարզ է, որ դա չի կարող տեղի ունենալ իրենց կամքի համաձայն, և մենք ստիպված ենք զենք կիրառել»[219]: Երիտթուրքական գաղափարախոս դոկտոր Նազիմը գաղտնի մի խորհրդակցության ժամանակ ասել է. «Ջարդն անհրաժեշտ է: Բոլոր ոչ թուրքական տարրերը, որ ազգին էլ նրանք պատկանելիս լինեն, պետք է ոչնչացվեն»[220].

Ազգությամբ անգլիացի Ռ. Ստաֆֆորդը, որն Իրաքի արտաքին գործերի նախարարության նախկին վարչական տեսուչն էր, այստեղ ճշմարտացիորեն նկատում է. «Մեծ առաջընթաց կլիներ թուրքերի համար, եթե նրանք կարողանային ցույց տալ, որ անկախ այն հանգամանքից, թե ինչ տեղի ունեցավ հայերի հետ, Թուրքիայի մեկ այլ քրիստոնեական հա-

---

[217] Nessibian A., Britania and the Armenian Question 1915-1923, London. 1984, p. 32.

[218] Lepsius J., Deutschland und Armenian 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet, Potsdam. 1919, p. 26.

[219] Lepsius J., Bericht über die Lage des Armenischer Volkes in Türkei, Potsdam, 1916, s. 220.

[220] Ռիֆատ Մեվլան Զադե. Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Ե., 1990, էջ 98-99:

մայնք /նկատի են առնվում ասորիները - Ա. Խ/, լիովին գոհ է իր ճակատագրից»[221]: Իսկ ինչպիսի՞ն էր նրանց ճակատագիրը:

Ջարդերի մարտավարությունը, նրանց կազմակերպման ու իրականացման ձևերը աներկբայորեն վկայում էին, որ ջարդարարները որոշել էին իսպառ բնաջնջել մի ժողովրդի, որի ազգային դիմահեղման ու համաձուլման, նրա ազգային անհատականության և քրիստոնեական դավանանքին հավատարիմ մնալու ձգտումը դարեր շարունակ չէր հաջողվել խորտակել ու վերացնել: Լիովին բնաջնջման դատապարտված կամ «մերժված» այդ ժողովուրդն իր հույսը միայն կարող էր դնել իր հուսահատ դյուցազնության վրա: Ասորիներն իսկապես թույլ չտվեցին, որ այդ կեղտոտ ոճիրը կատարվի ազջամուզջի մեջ: Թեկուզ անզեն, նրանք կռվեցին մինչև վերջ, առանց հաղթանակի որևէ հույսի:

Դիարբեքիրի քրիստոնյաների բնաջնջումը ղեկավարում էր վիլայեթի վալի Ռեշիդ բեյը: Թուրքական ջարդերից հատկապես տուժեցին Մարդինի, Միդյաթի և Ջեզիրեի շրջանի ասորիները: Տեղի քաղդեացի ասորիների քահանա Ջոզեֆ Նայեմը վկայում էր, որ 1915 թ. ապրիլի 8-ից սկսած ահավոր ջարդեր են տեղի ունեցել. 16 տարեկանից բարձր տղամարդկանց հավաքում էին, ծեծում, խոշտանգում, սպանում, ապա փաթթոցներ հագցնում գլուխներին ու նկարում, որ հետո ապացուցեն աշխարհին, թե իբր քրիստոնյաները հալածել են մահմեդականներին[222]: 1916 թ. սեպտեմբերին «Martyred Armenia» ամերիկյան պարբերականը «Original Arabic»-ից թարգմանեց կոտորածների ականատես ազգությամբ արաբ Ֆաեզ էլ Ղոսեյնի հոդվածը, որտեղ հեղինակն անդրադարձել էր Դիարբեքիրի ասորիների սպանություններին. «Միդյաթում և Մարդինում հրման արձակվեց սպանել միայն հայերին, իսկ մյուս բոլոր համայնքների ներկայացուցիչներին ձեռք չտալ: Ասորիներն իմանալով իրենց եղբայրների /հայերի - Ա. Խ/ դժբախտության մասին անմիջապես ամրացան Միդյաթի մոտակա երեք գյուղերում և հակահարված հասցրեցին թուրքական զորքին ցուցադրելով քաջության վառ օրինակներ: ...Ասորիները քաջ գիտակցում էին, որ իրենք գործ ունեն մի ստախոս պետության հետ, որը վաղը ետ կվերցնի իրենց ձեռք չտալու տրված խոս-

---

221 Stafford R. S., The Tragedy of the Assyrians, London, 1935, p. 27.

222 Alichoran J. Du genocide a la diaspora: les Assyro-chaldeens au XX siecle, Paris, 1994, p. 370.

տումը և ավելի ուժգնորեն կհարվածի նրանց, ում երեկ ներում էր շնորհել»[223]:

Վանի նահանգապետ Ջևդեթ Բեյը, որն իր բարդասական հատկանիշներով չարագործությունների, դավադրական ծրագրերի և միևնույն ժամանակ կեղծելու, խարելու արհեստի մեջ հմտացած մեծ վարպետ էր, ուներ 8 հազար մարդուց բաղկացած «մսագործների գունդ», որը կազմակերպում էր այնպիսի ջարդեր, որոնք իրենց նմանը դեռ չէին ունեցել: Դրա վառ օրինակներից մեկն էլ 1915 թ. գարնանը Հաքյարիի շրջանում կազմակերպած հրեշավոր ջարդն էր, որտեղ թուրքերը կոտորեցին մոտ 60 հազար ասորիների[224]: Այնուհետև, հետագա տարիների ընթացքում, Հաքյարիում 70 հազար ասորի ոչնչացվեց. նրանց մի մասը կոտորվեց, մյուս մասը մահացավ քաղցից, իսկ մեկ այլ մասը զոհվեց մահմեդականների դեմ մղած կռիվներում[225]:

1915 թ. հունիսի սկզբին ասորիների զանգվածային կոտորածներ տեղի ունեցան նաև Վանի հյուսիսային մասում, Թիմարում և Թհումում: Քոչանիս գյուղը, որը համարվում էր հոգևոր առաջնորդ Մար-Շիմունի նստավայրը, ամբողջովին ավերվեց: Պատրիարքարանի շենքը հրդեհվեց: Այս նույն ժամանակամիջոցում թուրքերն ու քրդերը հարձակվեցին Ջելուի ասորական Մար-Զայա գյուղի վրա, կողոպտեցին այն և սպանեցին տեղի բնակչությանը: Թշնամին մտավ նաև եկեղեցի և ամբողջովին թալանեց այն: Այս ժամանակամիջոցում այստեղ շուրջ յոթ հազար ասորիներ կոտորվեցին[226]:

1915 թ. հունիսի 30-ին Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դևիսը Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուին գրում էր. «Թուրքերը քրիստոնյաներին ոչնչացնելու մեկ այլ ձև էլ են գտել. դա տարագրությունն է: Հունիսի 28-ին, հրապարակավ հայտարարվեց, որ բոլոր հայերն ու ասորիները հինգ օրվա ընթացքում պետք է լքեն Խարբերդը»[227]: Այսպես սկիզբ առան ասորիների զանգվածային կոտորածները Խարբերդում:

---

[223] Kloian R. D., The Armenian Genocide, News Accounts from the American Press /1915-1922/, California, 1985, p. 161.

[224] Արզումանյան Ս., Հայաստան 1914-1917, Ե., 1969, էջ 488:

[225] Naayem J., op. cit., p. 275.

[226] Halo T., Not Even my Name, New-York, 2000, p. 284:

[227] Девис Л. А., Провинция бойни, Е., 2000, с. 204.

Ասորիների ջարդերը շարունակվեցին նաև Բիթլիսում ու Սեբաստիայում, և ստեղծված իրավիճակից վրկվելու միակ ելքը դաղթն էր, որը, ընականաբար, ուղեկցվեց մարդկային ծանր կորուստներով:

Կոտորածներից համեմատաբար զերծ մնացին Իրանի ոահմանին մոտ գտնվող Հաքյարիի լեռնային շրջանի ասորիները: XIX դ. վերջին և XX դ. սկզբին այստեղ կար 300 հազար բնակչություն, որից՝ 100 հազարը ասորիներ էին[228]: Թուրքերը փորձում էին աշխարհին ցույց տալ, թե իբր հնազանդ ժողովրդին, չնայած նրանց քրիստոնեական պատկանելությանը, չեն վնասում: Սակայն իրականում լեռնցի այդ ասորիները բավականին ռազմաշունչ էին և երկյուղ էին ներշնչում թուրքերին: Թեպետ չնայած այդ ամենին, նրանց մի մասն էլ ի վերջո ենթարկվեց կոտորածների:

Ցավոք, Առաջին աշխարհամարտի ժամանակ ասորիների ջարդեր իրականացվեցին նաև 1914 թ. նոյեմբերի 2-ին պատերազմում իրեն չեզոք երկիր հայտարարած Իրանի տարածքում: Բանն այն էր, որ գերմանական և թուրքական հրամանատարությունների մշակած ծրագրում ռազմական գործողություններ էին նախատեսվել նաև Իրանում, որի տարածքը Գերմանիան և Թուրքիան ուզում էին օգտագործել որպես միջանցք դեպի Բաքվի նավթային շրջանները և այնուհետև Միջին Ասիան գրավելու համար: Ուստի Իրանը ևս վերածվեց հակամարտող երկու ճամբարների ռազմական գործողությունների թատերաբեմի, ուր տեղի ունեցան զանգվածային բռնություններ: Այստեղ հատկապես տուժեցին Ուրմիայի տարածաշրջանի ասորիները, ուր միայն 1914 թ. սեպտեմբերին հրդեհվեցին և քրդերի կողմից թալանվեցին ավելի քան 30 հայկական և ասորական գյուղեր[229]:

1914 թ. հոկտեմբերին Ուրմիայում Ռուսաստանի փոխհյուպատոս Վեգենսկին տեղի նահանգապետի հետ այցելում է քրդերի, թուրքերի և պարսկական խուժանի կողմից ավերված ասորական Անգար, Ալվաչ և այլ գյուղեր: «Ամենուրեք, - գրում էր նա, - առկա են ջիհադի արդյունքները»[230]:

---

[228] Alichoran J., op. cit., p. 370.

[229] Hubbard G.E., From the Gulf to Ararat, An Expedition through Mesopotamia and Kurdistan, London, 1916, pp. 257-258.

[230] Саргизов Л. М., Ассирийцы стран Ближнего и Среднего Востока, Е., 1979, с. 25-26.

1915 թ. հունվարին ոստիկանական մի ջոկատ Քաչալի խանի գլխավորությամբ շրջապատեց Ուրմիայի ամենամեծ ու ամենահարուստ ասորական Գուլփաշան գյուղը, որտեղ ապրում էին 300 ծուխ՝ շուրջ 2500 ասորի բնակչություն, և քարուքանդ արեց այն: Բոլորը, բացի մի քանի հարյուրի հասնող ասորիներից, սպանվեցին[231]: Գուլփաշանից բացի, կոտորածներ տեղի ունեցան նաև ասորական Գյոդթափե, Աղա, Խոսրովա, Հաֆթվան և այլ գյուղերում. ավերվեցին տեղի դպրոցներն ու եկեղեցիները: Խոսրովա գյուղում, օրինակ, քրդերը մի տեղ հավաքելով ասորի բնակչությանը, այդ թվում նաև այն գաղթականներին, որոնք այստեղ էին հասել շրջակա գյուղերից, մոտ 7 հազար մարդ, բոլորին կոտորեցին[232]: 750 մարդ զլխատվեց ասորական Հաֆթվան գյուղում, որից հետո 5 հազար ասորուհիներ հայտնվեցին քրդական հարեմներում[233]: Քանաչար ասորական գյուղում ողջակիզվեց 200 մարդ[234]:

1915 թ. հունվարի վերջին Ուրմիայի շրջանից ռուսական բանակի անակնկալ ու չարդարացված նահանջը ողբերգական հետևանքներ ունեցավ Իրանում բնակվող ասորիների համար: Թուրքական զորքերը քրդական ջոկատների հետ համատեղ կազմակերպեցին ասորի բնակչության զանգվածային ջարդեր, և միայն 25 հազար մարդու[235] հաջողվեց վրկվել հաստատ ու տանջալից մահվանից և ապաստան գտնել Անդրկովկասում:

1915 թ. ապրիլի 20-ին ռուսների կողմից Դիլմանի գրավումից գաղազած թուրքերը մոտակա 20 ասորական գյուղերի բնակիչներին սրի քաշեցին[236]: Սկսվում է տանջալից փախուստ Ուրմիայից դեպի Միջագետքի անապատները, որն ուղեկցվում է մարդկային ծանր կորուստներով: Այդ գաղթերի կապակցությամբ անգլիացի մի ականատես վկայում էր. «Իմ առաջ բացվեց մերժված մի ժողովրդի ողբերգական գաղթի ճակա-

---

231 «Մշակ», 55, 14 մարտի 1915:

232 Naayem J., op. cit., p. 271.

233 Johannan A., The Death of Nation, New–York – London, 1916, pp. 127-128, 134.

234 ՎՊԿՊԱ , ֆ. 13, ց. 27, գք. 2, գ. 3361, թ. 103:

235 Johannan A., op. cit., p. 120:

236 Խոսրոևա Ա., Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքաբնակ վայրերում /XIX դարի վերջ – XX դարի առաջին քառորդ/, Ե., 2004, էջ 82:

տարրի պատկերը. ես խոսում եմ ասորիների մասին»[237]: Իսկ հրաշքով փրկված գաղթական Իսահակ Յոնանը, պատմելով իրենց կրած տառապանքների, զոհերի ե. անտանելի դրության մասին, վկայում էր, որ վիճակն այնքան անտանելի էր, որ թվում էր, թե ոգիները նախանձում էին մեռածներին[238]: Անգամ Ռ. Ստաֆֆորդը, որն առիթը բաց չէր թողնում արդարացնելու անգլիացիների բոլոր գործողությունները, ստիպված էր ընդունել, որ «ասորիների այս խաչակրաց ճամփան զինվորական պատմության ամենաոգերերգական էջերից է: Միայն այս ժամանակահատվածում նրանք կորցրին իրենց ազգի մեկ երրորդը: Ավելի քան 17 հազար ասորիներ մահացան ա՛յս գաղթի ճանապարհին»[239]:

Ինչպես տեսանք, ասորիները լինելով ազգային և կրոնական փոքրամասնություն, իրենց տիրապետող հասարակությունում հայտնվել էին հպատակի կարգավիճակում: Սա նշանակում է, որ օսմանյան տիրող վարչակարգի առկայության պայմաններում, այս ժողովուրդը պետք է ենթարկվեր իրավազրկության տարբեր դրսևորումների և հալածանքների: Սրան հատկապես գումարվում է այս ժողովրդի հանդեպ գոյություն ունեցող կրոնական թշնամանքը, որի պայմաններում հակաքրիստոնեական հետապնդումներն ավելի սուր բնույթ ստացան:

Այսպիսով, ինչպես տեսանք, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան Թուրքիայում և նրան հարակից տարածքներում, ուր ապրում էր մեկ միլիոնից ավելի ասորի, միջազգային իրավունքի չափանիշներով կատարվեց իսկական ցեղասպանություն: Օսմանյան Թուրքիան և մեծ տերությունները հանցավոր են ինչպես հայերի, այնպես էլ ասորիների արյունալի սպանդի մեջ: Թուրքիան մեծ տերությունների հանցավոր թողտվության պայմաններում, օգտվելով պատերազմական իրադրության ընձեռած հնարավորությունից մարդկության դեմ կատարեց ծանրագույն հանցագործություն ցեղասպանություն: Սակայն ասորիների ողբերգությունը դրանով իր ավարտին չհասավ: Ինչպես աշխարհավեր պատերազմի տարիներին, այնպես էլ նրանից հետո ասորական

---

[237] Матвеев К. П., /Бар-Маттай/, Мар-Юханна И. И., Ассирийский вопрос во время и после первой мировой войны, М., 1968, с. 49.
[238] Kloian R.D., op. cit., p. 9.
[239] Stafford R. S., op. cit., p. 33-34.

ժողովուրդն արյունաքամ էր լինում ինչպես եվրոպական մեծ սադրանքների, այնպես էլ Թուրք. քուրդ, իրանցի բռնավորների կազմակերպած կոտորածների ու հալածանքների հետևանքով:

1916 թ. նոյեմբերին ամերիկյան «Նյու-Յորք Թայմս» պարբերականը տպագրեց բժիշկ Վ. Ռոքվելի «Հայերի և ասորիների զոհերի Թիվը» վերնագրով մի հոդված, որտեղ հեղինակը, պատմելով Թուրքիայում տեղի ունեցած հայկական կոտորածների մասին, ավելացնում է. «Միայն հայերը չեն, որ անբախտ են. ասորիներին նույնպես ոչնչացրեցին և յուրաքանչյուր տասերորդին հնձեցին: ...Այդ ազգի ներկայացուցիչներից շատ շատերը կործանվեցին, սակայն ոչ ոք չգիտի, թե որքան...»[240]: Այս կապակցությամբ ամերիկյան մեկ այլ պարբերական՝ «Atlantic Monthly» Թերթը հավելում էր. «Վեց ամսվա ընթացքում երիտթուրքերը արեցին այնքան բան, որքան չկարողացան անել հին Թուրքերը վեց դարերի ընթացքում: ...Հազարավոր ասորիներ անհետացան աշխարհի երեսից»[241]: Արդեն 1919 թ. նոյեմբերին «Ֆրանսիական Ասիա» պարբերականը դրում էր, որ «ասորիների կոտորածները հիշեցնում են հայկական ջարդերը: Եվ քանի որ 250 հազար նահատակներ ունեցած այս ժողովրդի մասին ավելի քիչ է խոսվել, ուստի պետք է այդ մասին հայտնել աշխարհին»[242]: Իսկ 1922 թ. կատարված հաշվումների համաձայն, ինչպես նշում է ասորիների Ազգային խորհրդի քարտուղար Ճ.Կորեք դ՝Քերպորանին, իր ազգի ներկայացուցիչների կորուստը կազմում է ավելի քան 270 հազար[243]: Այսօր էլ ասորիների մոտ առկա է այն միտումը, որ այդ ժամանակահատվածում իրենք կորցրել են իրենց ազգի 2/3-ը:

Այսպիսով, արդարության վերականգնման, ժողովուրդների ինքնության ճանաչման և մշակութային զարգացման համար աշխարհով մեկ սփռված ասորի ժողովուրդը մարդու իրավունքների հարգման, ինքնավար պետություն ունենալու կարիք է զգում և շարունակում է իր դարավոր ու արդար պայ-

---

240 Kloian R. D., op. cit., p. 183-189.

241 Նույն տեղում, էջ 193.

242 Alichoran J., op. cit., p. 370. Asuri-Suryani-Keldani halkinin 1915 soykirim /SEYFO/ dosyasi, s. 7. Տե՛ս նաև Naayem J., op. cit., p. 30.

243 Լևոն Վարդան, Ժամանակագրութիւն հայկական տասնհինգի 1915-1923, Պէյրութ, 1975, էջ 90:

քարը: Այս ժողովուրդը պահանջում է, որ Թուրքիան դատապարտվի միջազգային ատյանների կողմից: Ասորիների խնդիրը, որն առ այսօր դուրս է մնացել համաշխարհային հասարակայնության ուշադրությունից, միջազգային լուծում է պահանջում մոռացության չմատնելով, որ ցեղասպանության մահացու վարակը ողջ մարդկության ապագան է կանգնեցնում վտանգի առաջ:

Իրենց հոգեբանական և պատմական էությամբ զանգվածային դիտակցության մեջ մշտապես խառնվում են սկզբունքային երկու տարբեր երևույթներ «պատերազմը» և «ցեղասպանությունը»: Յուրաքանչյուր պատերազմում, որքան էլ ողբերգական լինի այն, «այլ ազգի կամ դավանանքի» մարդու սպանությունը կատարվում է քաղաքական, տնտեսական, կրոնական և տարածքային-զավթողական նպատակների հասնելու համար: Սակայն «ցեղասպանության» իմաստն այլ բնույթ ունի: Ցեղասպանության որոշակի կամ անորոշ նպատակն է ոչնչացնել մարդուն էթնիկական և կրոնական հատկանիշների ղրդապատճառով: Եթե ավելի խիստ ասենք «ցեղասպանությունը» զանգվածային գիտակցության մեջ օրինականացված սպանության թույլտվությունն է «այլ» մարդու ոչնչացումը: Սակայն ցեղասպանությունը չի լինում ինչոր մեկի, մի քանիսի կամ մի խումբ մարդկանց դեմ, այն միշտ էլ ուղղված է համայն մարդկության դեմ: Ուստի, տվյալ դեպքում, այն, ինչ կատարվեց ասորի ժողովրդի նկատմամբ, ծանր հանցագործություն էր ուղղված ողջ մարդկության դեմ:

ANAHIT KHOSROEVA
Institute of History, NAS RA

THE GENOCIDE OF THE ASSYRIANS IN THE OTTOMAN TURKEY DURING THE WORLD WAR I

Summary

During the World War I along with the Armenians, the Assyrians, one of the most ancient nations of the Middle East, whose ancestors contributed greatly to the world civilization and culture, also underwent the cruel massacres organized and directed by the Young Turks' government.

Nowadays the problem of the recognition of the Armenian Genocide by the world community has become one of the most crucial issues of the Armenian historical science. In this context it is becoming increasingly important to shed light on the history of other nations subjected to massacres in Ottoman Turkey. At the end of the 19th and the beginning of the 20th century Assyrians lived mainly in the *sanjak* of Hakiar of the Van *vilayet* as well as in Erzrum (Karin), Diarbekir (Amid), Bitlis (Baghesh), Kharberd, Sebastia in Western Armenia and in the regions of Urmia (in Iran), Mosul (in Iraq) and north-western Syria. The Turkish authorities carried out repressive and discriminating policy in relation to Assyrians as to Armenians. Like the Armenians, the Christian Assyrians who fell a victim to the Turkish brutal and severe policy are also notable for their tragic fate.

The research of the Assyrian Genocide or the question of proving the existence of the Armenian-Assyrian relationship are not only the problems of the Assyrians and Assyrian studies. This problem has quite a different meaning. Today another theory has been brought to light – the theory of the "slaughterer state", and a new branch has been formed – the Genocide Science, which was for a long time based only on the Armenian Genocide and the Jewish Holocaust.

In this respect the research of the problem mentioned above is very important. serving as a strong evidence and argument in the process of recognition of the Armenian Genocide of 1915 by more countries including Turkey. In fact the study of this problem is an issue not only of a scientific but also of a significant political importance, especially when contemporary Turkish officials, following the example of their not so remote ancestors, as well as a number of authors justifying the policy of the Great Powers, distort the historical truth and try to hide the tragedy of Genocide and present the historical facts in a false mirror.

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ

«Հայկական կյանքի նորից գործի գցած մակույկը մեծ տերությունների միջազգային քաղաքականության կամակոր ալիքների ազդեցության ներքո մերթ վեր էր խոյանում համաշխարհային հետաքրքրության գլխապտույտ մակարդակը, մերթ շրջվում համընդհանուր անտարբերության անդունդը»:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌ[241]

1914 թ. օգոստոսի 1-ին Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումով աշխարհի քաղաքական վերաբաժանման համար մեծ տերությունների պայքարը մտավ նոր զինված փուլ: Արևմտյան Հայաստանը, որտեղ դեռևս պատերազմի նախօրեին բախվում էին եվրոպական տերությունների տնտեսական ու քաղաքական շահերը, դարձավ ռուս-թուրքական ռազմական գործողությունների թատերաբեմ: Այդ հանգամանքն էական փոփոխություններ առաջացրեց ոչ միայն մեծ տերությունների մերձավորարևելյան քաղաքականության մեջ, այլև Հայկական հարցի վրա ազդող լուրջ գործոն դարձավ: Նախ, Թուրքիայի մասնակցությունը պատերազմին, որպես կայզերական Գերմանիայի դաշնակից, ցրեց Եռյակ համաձայնության տերությունների վերջին հույսերը թուրքական պետության չեզոքությունն ապահովելու մասին, հետևաբար, ի չիք դարձավ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը չխախտելու և նրա անձեռնմխելիությունը պահպանելու դիվանագիտական սկզբունքը: Ավելին, Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան առաջ քաշեցին օսմանյան «ժառանգության», այսինքն՝ Թուրքիայի ասիական տիրույթների

---

[241] Գալոյան Գ., Հայոց զորավարը: Տե՛ս «Գրական թերթ», Ե., 1990, թիվ 11:

բաժանման խնդիրը, որի բաղկացուցիչ մասն էր կազմում Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ապագայի հարցը:

Օգտվելով նպաստավոր ռազմաքաղաքական իրադրությունից ռուսական Կովկասյան բանակը գրավում էր Արևմտյան Հայաստանի տարածքը՝ նպատակ ունենալով բացել դեպի սևծովյան նեղուցներ ու Կոստանդնուպոլիս տանող ամենակարճ ցամաքային ճանապարհը:

Օսմանյան Թուրքիայի դեմ պայքարում Ռուսաստանի արտաքին քաղաքական ծրագրերը համընկնում էին հայերի ազգային ձգտումներին, քանի որ Կովկասյան ճակատում ռուսական բանակի վճռական, սրընթաց ու հաջող ռազմական գործողություններն արևմտահայերին թուրքական տիրապետությունից ազատագրվելու հույս էին ներշնչում: Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրագործելու և թուրքական պետության սահմաններում ինքնավարության հասնելու ցանկությունը, որ տասնամյակներ շարունակ փայփայում էին հայերը, պատերազմի պայմաններում կարող էր իրականանալ բացառապես Ռուսաստանի և նրա դաշնակիցների հաղթանակի դեպքում:

Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան Ռուսաստանի համար ոչ միայն բանալի էին դեպի Մերձավոր Արևելք, այլև ղբահ կովկասյան սահմանների պաշտպանության տեսակետից: Չնայած խնդրի կարևորությանը՝ Ռուսաստանի արտգործնախարարությունը բացահայտորեն չէր արտահայտում Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի, սևծովյան նեղուցների ու Կ.Պոլսի նկատմամբ ռուսական պետության հավակնությունները, որովհետև դեռ որոշակիորեն ծանոթ չէր ասիական Թուրքիայում դաշնակից Անգլիայի ու Ֆրանսիայի հետաքրքրություններին: Այդ պատճառով էլ ռուսական կառավարող շրջանակներում անհանգստանում էին, որ նշված տարածքների գրավումը կարող էր առաջ բերել դաշնակից երկրների անհաղթահարելի դիմադրությունը: Ահա թե ինչու պատերազմի սկզբնական փուլում ռուսական դիվանագիտությունը բարձրացնում էր սևծովյան նեղուցներով ռուսական ռազմական նավատորմի ազատ ելումուտի ապահովման հարցը[245]: Իսկ Կիլիկիայի ու Պարսից ծոցի շրջանում հարավային ծո-վերը դուրս գալու ուղիներն իր ազդեցության ներքո

---

[245] Палеолог М., Царская Россия во время мировой войны, Москва, 1991, с. 128:

պահելու, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի նկատմամբ դաշնակից պետությունների հետաքրքրությունները զգուշորեն շոշափելու, միաժամանակ, նշված տարածքները գրավելու հնարավորությունը պարզելու նպատակով ռուսական կառավարությունը մշակեց թուրքական պետության սահմաններում Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հովանավորությամբ հայկական վեց վիլայեթների և Կիլիկիայի (միջերկրածովյան Մերսին նավահանգստով հանդերձ, բացառությամբ Ալեք-սանդրետի ծովածոցի՝ Յումուրթալիքով) տարածքում ինքնա-վար Հայաստանի ստեղծման ծրագիրը: Այն հիմնված էր 1913 թ. Կ.Պոլսում Ռուսաստանի առաջարկած նախագծի վրա[46]: Եթե ցարական կառավարության համար նախագծի իրագործումը միջոց էր Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի տարածքով ապահովելու Ռուսաստանի ելքը դեպի Միջերկրական ծով, ապա հայ ժողովրդի համար այդ ծրագիրն ազգային նպատակ-ների իրականացման հիմք կարող էր դառնալ: Հետևաբար՝ հայ գործիչները ջերմորեն կարող էին այն պաշտպանել: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Ռուսաստանի արագործնախաբար-ությունը, Պետրոգրադում հայ ներկայացուցիչների հետ գաղտնի բանակցություններից հետո, Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ինքնավարության ծրագիրը և, հատկապես, հայ-կական վեց վիլայեթներին Կիլիկիայի միացման գաղափարը Ֆրանսիայի ու Անգլիայի կառավարությունների առջև պաշտ-պանելու գործը դրեց հայերի վրա: Նախատեսվեց հայ պատ-գամավորներ ուղարկել Անգլիա ու Ֆրանսիա: Նախարարութ-յունն իր օգնությունը խոստացավ հայ պատվիրակներին Լոն-դոնում և Փարիզում իր դեսպանների միջոցով: Բայց քանի որ վերջիններիս «բացահայտ աջակցությունը կարող էր հրահրել Անգլիայի և Ֆրանսիայի կասկածամտությունն այդ պատգա-մավորների դերի նկատմամբ, հատկապես Կիլիկիայի հար-ցում», ուստի արտգործնախարարությունում նպատակահար-մար համարեցին, որ հայ պատգամավորները գործեին որքան

---

[46] «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան: Վավերագրեր իմպերիա-լիստական պատերազմի շրջանից, Աշոտ Հովհաննիսյանի առաջաբա-նով, Ե., 1926, փաստ. N 14, էջ 10: Տես նաև Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915-1918. Documents. Edited and translated by Vatche Ghazarian, Waltham. 1996, փաստ. N 8, էջ 19-20:

հնարավոր է առանց ռուսական դեսպանների տեսանելի միջամտության: «Վերջիններիս միջամտությունը կարող է տեղի ունենալ լոկ դժվարության դեպքում, ինչպես նաև այն ժամանակ, երբ իրենք դեսպանները, դա հարկավոր համարեն»[247], - 1915 թ. մայիսին Հայկական Ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարին տեղեկացնում էր Պետրոգրադի քննարկումներին մասնակցած հասարակական գործիչ բժիշկ Հակոբ Զավրիյանը: Սակայն դիվանագիտական փաստաթղթերն իրականում վկայում են, որ ռուսական արտգործնախարարությունը խուսափեց իր իսկ ներկայացրած ծրագրի վերաբերյալ լուրջ երաշխիքներ տալուց և եվրոպական կառավարությունների առջև այն բացահայտորեն պաշտպանելուց, որովհետև արդեն սեպտեմբեր էր Կիլիկիայի Մերսին նավահանգստի ու նրա շրջակա տարածքների նկատմամբ Ֆրանսիայի հավակնություններին[248]:

Իր իրական նպատակները նրբորեն քողարկող ռուսական արտգործնախարարության հանձնարարությամբ 1915 թ. ապրիլին Փարիզ, իսկ մայիսին այնտեղից Լոնդոն մեկնեցին Հ. Զավրիյանը և Ա. Ղուկասյանը[249] : Միաժամանակ, Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդի ապրիլի 10-ի հեռագրով ու ապրիլի 28-ի No 761-րդ հայրապետական կոնդակով «Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունների առջև Հայաստանի ինքնավարության ծրագիրը պաշտպանելու» հանձնարարություն ստացավ Պ. Նուբարը[250]: Նրան Հ. Զավրիյանը Փարիզում հանդամանորեն տեղեկացրեց Պետրոգրադի ծրագրի և նրա քննարկումների մասին[251]:

Հայ գործիչների նպատակն էր եվրոպական կառավարություններին ու հանրային կարծիքը տրամադրել հօգուտ հայ ժողովրդի քաղաքական նպատակների իրականացման, միջազգային հանրությանը «բացատրել, որ թուրքական կա-

---

[247] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 87: Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915-1918, փաստ. N 8, էջ 20:

[248] «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան, փաստ. N 14; 15, էջ 11; N 16, էջ 12:

[249] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ.19, թ. 86:

[250] Նույն տեղում, գ. 27, թ. 34-35; գ. 28, թ. 185:

[251] Նույն տեղում, գ. 19, թ. 86-87: Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915-1918, փաստ. N 67, էջ 109; N 108, էջ 183; N 156, էջ 268-270:

ռավարությունը վեց վիլայեթների և Կիլիկիայի հայ բնակությանը կոտորածով ու զանգվածային աքսորներով բնաջնջելու նպատակ է հետապնդում»[252]: Նրանք տեսակցություններ ունեցան Ֆրանսիայի արտգործնախարար Դելկասեի, Անգլիայի արտգործնախարարության պետքարտուղարի օգնական Արթուր Նիքոլսոնի, լորդ Բրայսի, լորդ Լենսթոնի, անգլիական ու ֆրանսիական խորհրդարանների բազմաթիվ անդամների, քաղաքական գործիչների, ականավոր լրագրողների հետ[253]: Այդ հանդիպումները ցույց տվեցին, որ եվրոպական կառավարութ-յունների իրական շահերը չէին համապատասխանում հայկա-կան վեց վիլայեթների և Կիլիկիայի տարածքում ինքնավար Հայաստանի ստեղծման ծրագրին: Հարցն այն է, որ դեռևս փետրվարին հենց Պետրոգրադի կառավարության կողմից առաջ էր քաշվել Կ.Պոլիսն ու սևծովյան նեղուցները Ռուսաս-տանին հանձնելու հարցը: Դրանով սկիզբ էր դրվել օսմանյան «ժառանգության» բաժանման վերաբերյալ անգլո-ֆրանս-ռու-սական դիվանագիտական գաղտնի գրագրությանն ու բանակցություններին, որոնք էլ հենց վճռորոշ էին լինելու Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ճակատագրի համար: «Ասիական Թուրքիայի բաժանման դեպքում Ֆրանսիան կպահանջի Սիրիան ու Կիլիկիան մինչև Տավրոս: Նրանք ապացուցում են, որ, քանի որ Կոստանդնուպոլիսը Դարդանելի հետ միասին, որի քաղաքական ու տնտեսական կարևորությունը վեր է կասկածից, անցնում է Ռուսաստանին և, Անգլիան արդեն նվաճել է Միջագետքը, Ֆրանսիան չի կարող բավարարվել միայն Սիրիայով, քանի որ վերջինս հարուստ երկիր չէ: Հետևաբար, նրանք լրջորեն շահագրգռված են նաև Կիլիկիայով»[254], - 1915 թ. հունիսի 17-ին Փարիզից կաթողիկոս Գևորգ 5-րդին տեղեկացնում էր Պ. Նուբարը: Սակայն հայ գործիչների անհանգստությանը հակառակ, Պետրոգրադում մտադիր չէին Կիլիկիայի պատճառով սրել հարաբերությունները Փարիզի հետ: Այդ պատճառով էլ ռուսական դիվանագետները խուսափում էին Հ. Զավրիյանին ու Պ. Նուբարին որոշակի երաշխիքներ տալ ապագա ինքնավար Հայաստանին Կիլիկիան միացնելու

---

[252] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ.19, թ. 44:
[253] Նույն տեղում, թ. 42:
[254] Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915-1918, doc. N 67, p. 109.

հարցում: Ուստի հայ գործիչները ստիպված էին կրկին ուղղակի դիմել Ֆրանսիական ու անգլիական կառավարող շրջաններին: Մասնավորապես, Ֆրանսիայի արտգործնախարար Դելկասեին ներկայացրած «Հայկական հարցի մասին» հուշագրում Պ. Նուբարն առաջարկում էր Ֆրանսիայի, Անգլիայի ու Ռուսաստանի վերահսկողության և հովանավորության ներքո ստեղծել ինքնավար Հայաստան կազմված վեց վիլայեթներից և Արևմտյան Կիլիկիայից, որն ունենար ելք դեպի Միջերկրական ծով: Նախատեսվում էր Կիլիկիայի մյուս մասերը հանձնել Ֆրանսիային[255]: Այդ ծրագրի իրագործման դեպքում մասամբ կլուծվեր հայ ժողովրդի ազգային միասնության ցավոտ խնդիրը, Ռուսաստանն Արևմտյան Հայաստանով ու Կիլիկիայով կստանար իր համար կենսականորեն անհրաժեշտ ելքը դեպի Միջերկրական ծով, իսկ Ֆրանսիան կտիրանար Կիլիկիայի ամենաբարերար, անառիկ ու ընդարձակ տարածքներին: Չնայած, որ ներկայացված ծրագիրը փոխզիջումային էր, այնուամենայնիվ, Ֆրանսիան չհամաձայնեց Կիլիկիայի թեկուզ արևմտյան մասը կորցնելու տարբերակին:

Իսկ բրիտանական արտգործնախարարության պետքարտուղարի օգնական Ա. Նիքոլսոնի հետ հանդիպման ժամանակ Պ. Նուբարը, կիլիկիահայերի ճակատագրով մտահոգ, առաջարկեց Եռյակ համաձայնության դաշնակցային զորքերի մի մասն ավիհանել Կիլիկիայում, Մերսինի ու Ալեքսանդրետի նավահանգիստներում, նրանց օգնությամբ զինել Կիլիկիայի հայերին թուրքական կառավարության կողմից իրականացվող տեղահանությունն ու կոտորածները կանխելու նպատակով[256]: Նա համոզված էր, որ «դաշնակից պետությունների զորքերի ներկայության շնորհիվ, մի կողմից տեղի հայերի կյանքը, պատիվը և ունեցվածքը կարելի էր ապահովել և թուրքերին չեզոքացնել, մյուս կողմից հայկական ապստամբական շարժումով ավելացնել Կիլիկիայի նկատմամբ հայերի քաղաքա-

---

[255] Раздел Азиатской Турции. По секретным документам бывшего Министерс-тва Иностранных Дел. Под редакцией Е.А. Адамова, Москва, 1924, փաստ. No 43, էջ 138: Международные отношения в эпоху империализма. Доку-менты из архивов царского и Временного правительств. Серия 3 (1914-1917), т. *VII*, ч. 1, М.-Л., 1935, փաստ. N 375, էջ 489:

[256] Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915-1918, փաստ. N 90, էջ 142:

կան նպատակների կշիռը»[257]: Բայց Եռյակ համաձայնության երկրներն առաջնորդվում էին շահադիտական նկատառումներով: Թեև նրանք 1915 թ. մայիսի 24-ին հանդես էին եկել հայերի ընաջնջման թուրքական քաղաքականությունը դատապարտող հայտարարությամբ և գիտակցում էին, որ Կիլիկիայում ու Արևմտյան Հայաստանում իրենց գործողությունների ուշացումը կարող էր նպաստել Օսմանյան կայսրությունում հայասպանության ծրագրի իրագործմանն, այնուամենայնիվ, Համաձայնության երկրները չչեղվեցին իրենց համար առաջնային նեղ պետական խնդիրներից: Ա. Նիքոլսոնը Պ. Նուբարին պատասխանեց, որ Կիլիկիայում դաշնակից զորքերի ափհանումն անհնար է. «Մենք արդեն գերծանրաբեռնվել ենք, - ասաց նա,- որքա՞ն նոր գործողություն կարող ենք մեզ վրա վերցնել»[258]: Մինչդեռ Ֆրանսիական ու անգլիական պետական գործիչներն իրենք էին ձգտում օգտագործել հայկական մարդուժը թուրքական ռազմաճակատի սիրիական հատվածում, Միջագետքում ու Պարսկաստանում: Ահա թե ինչու հայկական վեց վիլայեթների ու Կիլիկիայի տարածքում ինքնավար Հայաստանի ստեղծման շուրջ հայ գործիչների հետ տարվող բանակցություններում Ֆրանսիայի ու Անգլիայի արտաքին գործերի նախարարությունների աշխատակիցները, թեև խուսափում էին գործնական խոստումներից, բայց, միաժամանակ, ջանում էին չհիասթափեցնել Պ. Նուբարին ու Հ. Ջավրիյանին: Ինչ վերաբերում է ինքնավար Հայաստանի ստեղծմանը, ապա Լոնդոնում այն դիտում էին որպես «Կովկասում բանսարկություններ անող երկրորդ Բուլղարիայի ստեղծում»: Բացի այդ, Ռուսաստանի հետ դիվանագիտական դժվարություններից խուսափելու նպատակով անգլիական դիվանագետները հայերի հետ բանակցությունները կախման մեջ էին դնում ապագա ինքնավար Հայաստանի սահմաններում Կիլիկիան ընդգրկելու հարցում Ֆրանսիայի դիրքորոշումից[259]: Ուստի և եվրոպական կառավարությունների հայ գործիչներին տված խոստումները չէին կարող ու չպետք է անցնեին «ակադեմիական զրույցներից այն կողմ»[260]:

---

[257] ՀԱԱ, ֆ. 57, գ .5, գ.19, թ. 45:

[258] Boghos Nubar's Papers and the Armenian Question, 1915-1918, doc. N 90, p. 142.

[259] «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան, փաստ. N 42, էջ 27:

[260] Նույն տեղում, փաստ. N 15, էջ 11; N 19, էջ 14:

Ինքնավար Հայաստանի ստեղծման մեկ ուրիշ տարբերակ էր Թուրքական հովանավորության ներքո հայկական ինքնավարության ծրագիրը, որը 1915 թ. աշնանը Եռյակ համաձայնության երկրների դիվանագիտական քննարկումների առարկա դարձավ Ռուսաստանի արտգործնախարարության նախաձեռնությամբ, Հ. Զավրիյանի միջոցով: Այն ասիական Թուրքիայում սուլթանի ժառանգական իշխանության ներքո Սիրիայի, Պաղեստինի, Միջագետքի, Արաբիայի, Կիլիկիայով հանդերձ Հայաստանի ու Քրդստանի ինքնավար նահանգներով միապետության ստեղծման ընդարձակ ծրագրի բաղկացուցիչ մասն էր: Ծրագրի հիմքում Թուրքիայի ռազմածովային նախարար ու Սիրիայում գործող 4-րդ Թուրքական բանակի հրամանատար Ջեմալի հետ Էնվերի ու Թալեաթի տարաձայնություններն էին, որոնք Ռուսաստանի արտգործնախարարությունում գիտվում էին իբրև միջոց Կ.Պոլսի ու սևծովյան նեղուցների խնդիրը ռուսական պետության շահերին համապատասխան լուծելու համար: Այդ նպատակով Պետրոգրադում պատրաստ էին ընդունել ասիական Թուրքիայի անկախությունն ու անձեռնմխելիությունը երաշխավորելու, նրան Թուրքիայի սուլթանի ժառանգական իշխանությամբ օժտելու վերաբերյալ Ջեմալի պայմանները: Բայց Փարիզում ու Լոնդոնում չընդունեցին ռուսների առաջարկած ծրագիրը և մերժեցին Ջեմալի հետ նախատեսվող համաձայնագիրը, որովհետև դրանով Ռուսաստանը կստանար Կ.Պոլիսն ու նեղուցները, իսկ իրենք՝ ոչինչ «Թուրքական ժառանգությունից»:

Այսպիսով, 1915 թ. դիվանագիտական քննարկման առարկա դարձած Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ինքնավարության հարցը սոսկ խաղաքարտ էր Եռյակ համաձայնության պետությունների համար՝ հասնելու իրենց նվաճողական ծրագրերի իրականացմանը: Ավելին, արևմտահայերի տեղահանության ու կոտորածների պայմաններում Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ինքնավարության դրույթն անիրագործելի էր, նույնիսկ մեծ տերությունների ցանկության դեպքում: Սակայն, հայերի ինքնավարության խնդիրը պահվում էր քաղաքական շահարկումների օրակարգում, քանի դեռ մեծ տերություններին անհրաժեշտ էր հայկական մարդուժը:

LILIT HOVHANNISYAN
Institute of History, NAS RA

THE QUESTION OF THE AUTONOMY OF WESTERN ARMENIA IN 1915

Summary

After the start of World War 1 Western Armenia became an arena of the Russian-Turkic military actions.

It resulted in the changes in the Near-Eastern policy of the Great Powers and became a very serious factor influencing the Armenian question.

The involvement of Turkey as an ally of Germany in the War disseminated last hopes of the Entente states about the neutrality of Turkey. Consequently the diplomatic principle of the necessity of preserving territorial integrity of the Ottoman Empire had disappeared.

Moreover, Russia, England and France put forward the problem of the Ottoman "heritage," i.e. partition of the Asian territories of Turkey.

Part of this problem was the question of the future of Western Armenia and Cilicia.

Taking advantage of the military-political situation, the Russian Caucasian army occupied the territory of Western Armenia. Russians aimed at opening the continental way to the Black Sea straits and Constantinople.

Foreign political programs of the Russian Empire coincided with the liberation national aspirations of Armenians.

Thus the decisive and successful military actions in the Caucasian front inspired Armenians with the idea of liberation from the Turkish domination.

The realization of reforms and getting autonomy within the limits of the Ottoman Empire were dreamt by the Armenians during several decades. And they thought that their realization

would be possible with the victory of the Russian Empire and its allies in the War.

The problem of the autonomy of Western Armenia and Cilicia discussed in the diplomatic circles was only a playing card for the Entente states aiming to reach the realization of their own plans of the conquest.

Moreover, the idea of the autonomy of Western Armenia and Cilicia, even in the case of great desire of the Great Powers, was unrealizable in conditions of deportations and massacres of Western Armenians.

Negotiations of the Armenian public and political figures with the representatives of the European governments showed that their real interests had not corresponded to the project of creation of autonomous Western Armenia. They promised to help but in reality they acted according to their interests. Thus, the problem of the autonomy of Western Armenia was kept within the orbit of political speculations.

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1915 Թ. ՄԱՅԻՍԻ - 7 ՀՈՒԼԻՍԻ 18) ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՏԻՊ

Վանի 1915 թ. ապրիլյան հերոսամարտի հաղթանակից հետո, մայիսի 7-16-ը ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության արձակած հրամաններով ստեղծվեց Վան-Վասպուրականի նահանգապետությունը: Նահանգապետ նշանակվեց հերոսամարտի ղեկավարներից մեկը՝ Արամ Մանուկյանը (1879-1919)՝ լիազորվելով կազմել բացառապես հայերից բաղկացած կառավարություն[261]:

Հայկական նահանգապետության վերաբերյալ ճիշտ պատկերացում կազմելու համար հարկ է նկատի ունենալ, որ ռուսական զորահրամանատարության գլխավոր մտահոգությունը ոչ թե հայերին ինքնուրույնություն շնորհելն էր, այլ նրա միջոցով իր քաղաքականության իրականացումը: Մասնավորապես, Կովկասյան բանակի հրամանատար դեն. Յուդենիչի կողմից Արամ Մանուկյանին նահանգապետ նշանակելու հրամանում, որ նա պետք է «ամբողջովին ենթարկվի զինվորական իշխանությանը՝ ի դեմս Վանի կայազորի պետի, և որ նրա միջոցով փոխանցվեն զինվորական իշխանության բոլոր կարգադրությունները»[262]: Դա ենթադրում է, որ Հայկական նահանգապետությունը, ամենից առաջ նահանգապետ Արամը ստիպված էին լինելու մեծ ջանքեր գործադրել նահանգապետությունը հայության շահերին ծառայեցնելու համար:

Նահանգապետի պաշտոնը ստանձնելու հաջորդ օրը՝ մայիսի 8-ին Ա. Մանուկյանը ժողովրդին դիմեց ուղերձով՝ կոչ անելով համախմբվել ձևավորվելիք «կառավարության շուրջը, վերակազմակերպելու համար կեանքը քաղաքի և ամբողջ շրջանի մեջ»[263]: Արամի կոչին դիպուկ գնահատական է տվել Ա-Դոն՝ գրելով, որ «նա անհատի կոչ չէր, այլ մի ժողովրդի. դա մի հավաքական կոչ էր, որի մէջ խօսում էր հայ ժողովուրդը իր հետ, որի մէջ տասնեակ տարիներ գոյութեան ու մահի կռի-

---

[261] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 4, գ. 19, թ. 44:
[262] Նույն տեղում, գ. 19, թ. 44; ֆ. 121, ց. 2, գ. 158, թ. 1:
[263] Նույն տեղում, թ. 4:

ւր մոլոդ, պայքարող ժողովուրդը կոչ էր ուղղում իր բոլոր տարրերին դալ համախմբուել ընդհանուր գործի շուրջը և իրականացնել երկկամ նրադանքները»[264]:

Մայիսի 7-22-ը ձևավորվեց հայ գործիչներով համալրված պետական ապարատ իր օրենսդիր և գործադիր ճյուղերով: Ստեղծված կենտրոնական գործադիր մարմիններն էին՝ ոստիկանական տեսչությունը, կալվածական-գաղթականական, անտեսական, առևտրական և առողջապահական մարմինները, քաղաքապետական վարչությունը, դատարանը, գավառային վարչությունը[265]: Նրանց աշխատանքները գլխավորում էր Նահանդային վարչությունը: Նահանդի օրենսդիր մարմնի գործառույթները իրականացնելու համար ձևավորվեց Վարչական խորհուրդ, որում ընդգրկվեցին գործադիր մարմինների ղեկավարները: Այն մշակելու էր օրինագծեր ենթարկելով նահանգապետի վավերացմանը, որն ուներ վետոյի իրավունք[266]: Ինչպես Վարչական խորհրդի, այնպես էլ Նահանգային վարչության նախագահը նահանդապետն էր, որի կողմից ընտրվում էին այդ մարմինների և՛ անդամները և՛ նախագահները:

Վերոհիշյալ մարմինների աշխատանքը վերահսկելու նպատակով ստեղծվեցին ընդհանուր և մասնագետ քննիչների հաստիքներ:

Կառավարությունը ձևավորելիս Արամը դրսևորեց ապակուսակցական մոտեցում նրանում ընդգրկելով բացառապես բանիմաց գործիչների: Այսպես, նպաստից հանձնաժողովի նախագահ Հ. Կուլօղլյանը, բյուջեի հանձնաժողովի նախագահ Ա. Թերզիբաշյանը, կրթական տեսչության նախագահ պրոֆ. Մինասյանը, քաղաքի ոստիկանապետի օգնական, ապա ոստիկանապետ՝ Ղևոնդ Խանջյանը (1930-1936 թթ. ՀԿԿ Կ 1 քարտուղար Աղասի Խանջյանի հայրը)[267], Նահանգային վարչության դիվանապետ Ա. Դարբինյանը[268], Շահբազ, Բերկրի, Թիմար, Արճակ, Հայոց-Ձոր, Արտամետ, Ջիբուխլի շրջանների ոստիկա-

---

[264] Ա-Դօ, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թւականներին, Ե., էջ 442:
[265] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 7; Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 1969, N 1, էջ 212:
[266] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 48, թ. 2:
[267] Նույն տեղում, գ. 74, թ. 54:
[268] Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890էն 1940), Փարիզ, 1947, էջ 331:

նության ընդհանուր ղեկավար Ա. Եկարյանը[269] ռամկավարներ էին, շրջանային դատարանի նախագահ Աղարեկ Համբարյանը չեզոքներից էր[270], ընդհանուր դատախազ Հ. Գալիկյանը հնչակյան էր[271] և այլն: Անդամ տարբեր առիթներով Ա. Մանուկյանի և ՀՅԴ քննադատությամբ հանդես եկած ռամկավար ազդեցիկ գործիչ Ա. Թերզիբաշյանը, գրող Գուրգեն Մահարին նշել են, որ նահանգապետ Արամը պաշտոնյաներ նշանակելիս դրսևորել է անաչառ, ապակուսակցական մոտեցում[272]: Այնուամենայնիվ Արամի կուսակիցները դաշնակցականներ, կառավարության մեջ մեծամասնություն էին: Այդ իրողությունն ինքը՝ Արամը բացատրում էր նրանով, որ «առհասարակ նրանք շատ են և ձեռնհաս ուժերը այնտեղ են»[273]: Ընդհանուր առմամբ, 1915 թ. մայիսի 22-ի դրությամբ Վանի նահանգում պաշտոնեության թիվն անցնում էր 1000-ից, որի գրեթե կեսը կազմում էր ոստիկանությունը:

Նահանգի իշխանության կենտրոնական մարմինների ձևավորմանը զուգընթաց ձևավորվեց նահանգի վարչական կառուցվածքը, ի դեմս գավառապետությունների: Վասպուրականի տարածքը բաժանվեց 14 գավառ-գավառակների. Ոստան, Շատախ, Մոկս, Բերկրի, Արճակ (այն բաղկացած էր երկու մասից՝ Եզդիխանե և Սարայ), Ջանիկ, Ալյուր (վերջին երկուսը թիմարի շրջանի մասերն էին), Արտամետ, Հայոց-Ձոր, Շահբազ, Նորգուզ, Խոշաբ, Արճեշ, Ալշավազ: Ձևավորվեցին գավառապետությունների կառավարման մարմիններ նահանգապետի կողմից նշանակված գավառապետերի գլխավորությամբ: Նրանք իրենց կողքին ունեին մեկական օգնական, թարգմանիչ, ոստիկանապետ անհրաժեշտ թվով ոստիկանությամբ[274]: Գավառապետությունների վրա ընկած էր ծանր բեռ և մեծ պատասխանատվություն. նրանք էին անմիջական գործադրողներն ինչպես բնակչությանը հուզող խնդիրների, այնպես էլ նահանգապետարանի կողմից առաջադրվող ծրագրերի: Այդ առումով առանձնահատուկ դեր էր վերապահված գավառային

---

269 ՀԱԱ, ֆ. 242, g. 1, գ. 55, թ. 11, գ. 74, թ. 55:
270 Նույն տեղում, գ. 74, թ. 54:
271 Նույն տեղում, գ. 39, թ. 6:
272 Թերզիբաշեան Ա., Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 228; Գուրգեն Մահարի, Այրվող այգեստաններ, Ե., էջ 570-571:
273 ՀԱԱ, ֆ. 242, g. 1, գ. 39, թ. 40:
274 «Աշխատանք», Վան, 1915, հունիսի 13, N 24 (223):

վարչությանը, որը որպես նահանգի կենտրոնական իշխանության մեկ օղակ մշտական ձևով իրականացնում էր հարաբերությունները կենտրոնի և դավառապետությունների միջև՝ ուղղորդելով վերջինիս աշխատանքները:

Վան քաղաքը կառավարում էր նահանգապետի կողմից նշանակված քաղաքապետը:

Նորաստեղծ նահանգապետությունը գտնվում էր բավական ծանր կացության մեջ: Նահանգը շրջապատված էր արևմտահայության 1915 թ. ցեղասպանությանը մասնակից քրդական ցեղախմբերով, որոնք պատրաստ էին հարմար պահի ներխուժել նահանգի տարածք և իրագործել նոր ջարդեր: Բացի այդ, նահանգի տնտեսությունը գտնվում էր ավերված վիճակում, նահանգը լի էր անօթևան և գոյության տարրական միջոցներից զուրկ տասնյակ հազարավոր գաղթականներով և այլն:

Նման պայմաններում նահանգապետությունը ձեռնամուխ եղավ նահանգի անվտանգության ապահովման, քայքայված տնտեսության վերականգնման, գաղթականության խնամքի, օրինականության և կարգ ու կանոնի ապահովման և այլ խնդիրների լուծմանը:

Նահանգի անվտանգությունը ենթադրում էր ստեղծել ինքնապաշտպանական ուժեր ամբողջ նահանգի տարածքում և կանխել քրդերի վերադարձը իրենց երբեմնի բնակավայրեր, ինչպես նաև նրանց հարձակումները հայկական բնակավայրերի վրա: Քրդական ներխուժումը կասեցնելու համար գավառներում և Վան քաղաքում ստեղծվեցին ինքնապաշտպանական խմբեր, որոնցում ընդգրկվեց շուրջ հազար մարդ: Ընդհուպ մինչև հուլիսյան դաշթը՝ նախ կամավորների հետ, ապա միայն տեղական ուժերով, հաջողվեց չեզոքացնել քրդական վտանգը: Այդ գործին իր նպաստը բերեց նաև գավառների ոստիկանությունը, որում ընդգրկված էր 400 ոստիկան (40 տասնապետ և 360 ոստիկան, որոնց կեսը հեծյալ, կեսը հետևակ)[275]:

Այլևայլ, բայց հատկապես քրդերի վերադարձի առնչությամբ առկա էին լուրջ տարակարծություններ նահանգապետ Արամի և ռուսական զինվորական հրամանատարության միջև: Այն դեպքում, երբ Արամը ձգտում էր ամեն

---

[275] Սահակյան Ռ. Օ., Ոստիկանության ծառայության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում, Բանբեր Հայաստանի արխիվների, 2003, N 2, էջ 155:

կերպ խափանել քրդերի վերադարձը՝ ոչնչացնելով կամ չահագործելով նրանց կալվածքները, ռուսական կողմը նրանց հանդեպ ցուցաբերում էր կարեկցական մոտեցում: Այսպես, Վանի կայազորի պետ դեն. Նիկոլաևը հունիսի 22-ի հրամանով ազդարարում էր, որ կովկասյան չորրորդ բանակային կորպուսի հրամանատարը թույլատրել է ռուսական հպատակությունն ընդունած քրդերի վերադարձը Արճակի, Բաշկալեի, Նորդուզի և այլ շրջաններում գտնվող իրենց բնակավայրեր: Նահանգի հայությունից պահանջվում էր չհարձակվել քրդերի վրա, իսկ նահանգապետը համարվում էր պատասխանատու քրդերի կյանքի և գույքի ապահովության համար[276].

Անհանգստացած իր ժողովրդի ճակատագրով՝ Արամը հունիսի 26-ին դիմեց Նիկոլաևին, հունիսի 27-ին Կովկասյան բանակի և չորրորդ կորպուսի հրամանատարներին՝ փորձելով կանխել այդ որոշման կենսագործումը: Մատնանշելով 1914 թ. աշնանը և ձմռանը քրդերի ոճրագործությունները նահանգի հայկական բնակավայրերում և թուրքերի հետ համատեղ գործողությունները ռուսական զորքերի դեմ, քրդական հավատարմության դրսևորումը ռուսներին բացատրելով նրանց պարենային ծանր կացությամբ՝ Արամը գանում էր, որ նրանց հարկ է դիտել որպես ռազմագերիների դրանից բխող հետևանքով կամ էլ նրանց մեջ տեսնել սովորական հանցագործների և ի հարկին պատժել[277]: Նա աշխատում էր հրամանատարությանը համոզել, որ քրդերի վերադարձով կխախտվի անդորրը Վանում այն պարզ պատճառով, որ ջարդված և կողոպտված հազարավոր հայերի հարազատները չէին կարող անտարբեր մնալ իրենց թշնամիների հանդեպ: Նա իրավացիորեն նշում էր, որ թույլատրել քրդերին վերադառնալ կնշանակի, թե կարելի է անպատիժ կերպով կողոպտել և սպանել հայերին և վերջիններիս՝ Թուրքիայում «ռուսական զենքի հաջողության միակ անկեղծ կողմնակիցների» մոտ կառաջացնի ծանր հիասթափություն Ռուսաստանի հանդեպ[278]: Արամը համարձակորեն նշում էր, որ որոշման գործադրման դեպքում ինքը չի կարող իր վրա պատասխանատվություն վերցնել Վանի շրջանում հանդարտության և օրինակարգի համար և հայտնում էր իր բողոքնկատառումները. 1) չգործադրել հունիսի 22-ի հրամանը,

---

[276] ՀԱԱ, ֆ. 242, g. 1, գ. 39, թ. 42; ֆ. 503, g. 1, գ. 62, թ. 6:
[277] Նույն տեղում, ֆ. 242, g. 1, գ. 39, թ. 42-44:
[278] Նույն տեղում, թ. 45-46:

2) հայոց ջարդերի ու թալանի մասնակից հանձնված քրդերին ենթարկել պատասխանատվության, 3) զգուշացնել չգրավված տարածքների մահմեդականներին, որ հայոց նկատմամբ ոճրագործությունների մասնակիցները ենթակա են պատասխանատվության[279]: Թեև նահանգապետի փաստարկները հիմնավոր էին, իսկ նշված հրամանը հակասում էր 1915 թ. գարնանը Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հրապարակած հռչակագրին, որով հայոց ջարդերի իրականացնողները համարվում էին պատասխանատու, Վանի կայազորի պետը, հասկանալի համարելով հանդերձ Արամի անհանգստությունը, մերժեց չեղյալ համարել հրամանը, գտնելով, թե իբր դա կնշանակեր արտոնել հայերին հարձակվել քրդերի վրա և կողոպտել նրանց[280]: Իրական պատճառն այլ էր. ռուսական հրամանատարությունը, նկնելով պատերազմական իրավիճակից, որոշակիորեն վարում էր քրդերին սիրաշահելու քաղաքականություն:

Նահանգապետությունը հետևողական քայլերով ձեռնամուխ եղավ տնտեսության վերականգնմանը: Այդ ուղղությամբ իրականացված քայլերից կարևորագույնը, թերևս, երկրագործական աշխատանքների վերսկսումն էր, որի շնորհիվ ժողովուրդը կստանար աշխատանք և կհաղթահարվեր սովի վտանգը: Դա թույլ կտար պարենով ապահովել նաև բանակին: «Աշխատանք» թերթի դիպուկ արտահայտությամբ հացահատիկը պատերազմի մեջ խաղում էր այնպիսի դեր, ինչպիսին թնդանոթն ու փամփուշտը[281]: Այդ նպատակով կենտրոնացվեցին նահանգում եղած գյուղատնտեսական գործիքները, դրսից ներկրվեցին հազար հատ գերանդիներ և ձրի բաժանվեցին ժողովրդին: Կովկասում պատվիրվեցին 3000 ռուբլու հնձող և կալսող մեքենաներ: Պարենային պրոբլեմը լուծելու, ինչպես նաև թուրք և քուրդ բնակչության վերադարձը կանխելու համար նահանգապետությունը ի դեմս Արամի անհրաժեշտ գտավ մշակել նրանց կողմից լքված արտերը, սակայն հանդիպեց Վանի պարետի ընդդիմությանը: Վերջինս գտնում էր, որ հայ բնակչությունը պետք է օգտվի միայն սեփական հողերից, իսկ քրդական հողերը ինքնակամ գրավողներին սպառնում էր պատժել որպես կողոպտիչների[282]: Մեծ ջանքերի շնորհիվ Արա-

---

[279] Նույն տեղում, թ. 45-47:
[280] ՀԱԱ, ֆ. 242, g. 1, գ. 5, թ. 176; ֆ. 503, g. 1, գ. 62, թ. 8:
[281] «Աշխատանք» 1915, հունիսի 24, N 27 (226):
[282] ՀԱԱ, ֆ. 242, g. 1, գ. 10, թ. 45:

մը հասավ այն բանին, որ զինվորական իշխանությունը, որը լքված հողերը համարում էր ռուսական բանակի սեփականությունը, դրանք հանձնի հայերի օգտագործմանը: Դեն. Նիկոլաևի հունիսի 27-ի կարգադրությամբ այդ հողերը վարձակալության իրավունքով, միայն բերքը հավաքելու համար տրվում էին հայերին[283]:

Ավերված տնտեսության վերականգնմանը միտված կարևոր քայլ էր նահանգից հեռացած թուրքերի ու քրդերի տների, հողամասերի ու այգիների աճուրդը, քանզի մի կողմից նահանգապետության գանձարան էին մտնում դրանց վաճառքից գոյացած գումարները, որոնք ուղղվում էին տնտեսության և այլ կարիքների լուծմանը, մյուս կողմից նոր տնտեսություններ էին կազմվում, որը ևս նշանակում էր հայրենիքի վերաշինության արագացում:

Նահանգապետությունը տեր կանգնեց փախստական ժողովրդին և կատարեց հնարավորինը նրանց ծանր դրությունը մեղմելու հատկապես սովի և համաճարակի ճիրաններից փրկելու համար: Համաճարակներից օրական մահանում էր 30-40 մարդ: Շուրջ 15-25 հազար դաղթականների տեղավորելով հիմնականում Աղթամարում և Ոստանում, կառավարությունն այլ վայրերից սննդամթերք էր հասցնում նրանց համար:

Քանի որ նահանգապետության միջոցները սուղ էին՝ Արամը օգնության խնդրանքով դիմեց նախ նահանգի ժողովրդին՝ հայցելով նրա աջակցությունը: Գտնելով, որ սովն ու հիվանդությունները կարող են ավելի մեծ ավերածություններ գործել, քան թուրքական բռնությունները, նահանգապետը նշում էր. «Մի՛ մոռնաք որ փոխադարձ օգնությամբ միայն կրնանք պահել մեր ազգային գոյությունը: Եթէ մէկը չ՚օգնէ միւսին, մենք կորած ենք. մէկը ամէնքին, ամէնքը մէկին, հոս է մեր փրկութեան խարիսխը»: Նահանգապետը կոչ էր անում ժողովրդին աջակցել գավառապետերին, որոնց ինքը հանձնարարել էր հանգանակություն ծավալել սովյալների օգտին[284]: 1915 թ. հունիսի 23-ի գրությամբ տեղական միջոցներով հավաքվել էր 10000 փութ ցորեն, որի կեսը, ինչպես նաև 8000-10000 ոչխար, ավելի քան 2000 խոշոր անասուններ արդեն իսկ բաժանվել էր ժողովրդին:

---

[283] Նույն տեղում, թ. 46:
[284] Նույն տեղում, գ. 43, թ. 1, գ. 68, թ. 1:

Նահանգապետ Արամը և Վանի շրջանային վարչությունը գաղթականների, առհասարակ նահանգի բնակչության դժվարությունները թեթևացնելու, ինչպես նաև տնտեսությունը վերականգնելու մտահոգությամբ դիմեցին նաև Կովկասի ե. գաղութների հայությանը՝ խնդրելով փութացնել բժիշկների, դեղորայքի, սննդի և երկրագործական մեքենաների առաքումը[285]: Առանձին դրությամբ Արամը խնդրեց նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի աջակցությունը[286]: Օգնությունն անհրաժեշտ էր նկատվում ոչ միայն տվյալ պահի, այլև ձմռան պահուստ կուտակելու համար: Ի պատիվ դրսի հայության՝ օգնությունը առաքվեց ժամանակին: Բուժարան-հիվանդանոց ստեղծվեց Վանում, սննդակայարան՝ Արճեշում, բուժարան՝ Ոստանում և այլն:

Հատուկ ուշադրություն դարձվեց ժողովրդի շահերի պաշտպանությանը ռուս զինվորականությունից: Բանն այն է, որ նահանգում հաստատված բանակային միավորումների և բնակչության միջև շփումներն անխուսափելի էին, իսկ նման դեպքերում զինվորական իշխանությունը փաստելով պատերազմական իրավիճակը, հաճախ դիմում էր ապօրինություններին. գյուղերից ձրի վերցնում էին սննդամթերք, քանդում էին տները՝ փայտերը վառելու նպատակով, վնասում էին արտերն ու այգիները: Նմանօրինակ վարմունքը հուզում էր առաջացնում բնակչության շրջանում: Հիմք ընդունելով այդ առթիվ իրեն հասցեագրված մեծաքանակ բողոքները, Նահանգապետ Արամը գիմում էր Վանի կայազորի պետին՝ այդօրինակ արարքներին վերջ տալու շեշտադրումով: Նա նշում էր, որ արտերի առանց փոխհատուցման փչացումները կարող են կասեցնել երկրագործական աշխատանքները, ինչը բացասաբար կանդրադառնար նաև բանակի վրա: Առաջարկվում էր քայլեր ձեռնարկել, որպեսզի արտերը չվնասվեին և բնակչությունն անարգել զբաղվեր գյուղատնտեսական աշխատանքներով, ինչպես նաև արդարացիորեն փոխհատուցել յուրաքանչյուրին պատճառված վնասը[287]: Հայկական կողմին հաջողվեց որոշ չա-

---

[285] «Մշակ», 1915, հուլիսի 9, N 147:

[288] Ավետիսյան Մ., Փաստաթղթեր Արամ Մանուկյանի պետական գործունեության մասին, Բանբեր Հայաստանի արխիվների, 1990, N 2, էջ 137-138:

[287] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ 92-93:

փով մեղմել ռուս զորականների ապօրինի արարքները[288], իսկ վնասների փոխհատուցման չհաջողվեց հասնել, թեև Արամի ջանքերով ստեղծվել էր բնակչությանը հասցված վնասների գնահատման և փոխհատուցման հանձնաժողով, իսկ Նիկոլաևն էլ խոստացել էր բավարարել բոլոր հիմնավոր պահանջները՝ անհրաժեշտ նկատելով, որ բնակչությունը շարունակի դաշտերը մշակել նախկինի պես[289]:

Հաճախակի էին ռուս զինվորականության կողմից հայերից զենքի առգրավման դեպքերը: Ընդառաջելով ժողովրդի բողոքներին՝ նահանգապետը 1915 թ. մայիսի 27-ին դիմեց Նիկոլաևին խնդրելով վերջ տալ հայերից զենքերի բռնագրավմանը, իսկ դրանք վերադարձնել իրենց տերերին կամ նահանգապետությանը՝ դարձյալ իրենց տերերին հանձնելու համար[290]: Հաջորդ օրը Նիկոլաևն արգելեց հայերից առգրավել զենքերը, սակայն նմանաբնույթ քայլերը, որոնք բնորոշ էին ոչ միայն Վանին, հետագայում ևս շարունակվեցին: Միայն հուլիսյան գաղթի օրերին, երբ արևմտահայության մնացորդները տեղահանվում էին Երկրից, Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարն արգելեց ռուս զինվորներին Թուրքիայի դրավյալ նահանդների քրիստոնյա բնակչությունից առգրավել զենքը, որը նրան հարկավոր էր ինքնապաշտպանության համար[291]:

Զինվորական իշխանության առջև հարց բարձրացնելուց բացի, Արամը, փորձելով ինչ-որ չափով պաշտպանել հայոց շահերը, զենքի արտոնագրեր էր տալիս դրա կարիքը զգացող բնակիչներին[292], որը նրանց հնարավորություն էր ընձեռում ապահով շրջել նահանգի հեռավոր շրջաններում և վերահաստատվել ազատագրված, բայց քրդերի ներխուժման վտանգին ենթակա բնակավայրերում:

Նահանգապետությունը որոշակի ուշադրություն դարձրեց նաև հասարակական անդորրի և իրավակարգի ապահովմանը: Արդեն մայիսի 8-ին նահանգապետը հրապարակեց հրահանգ, որով արգելվում էր հրազենի գործադրումը, ոգելից խմիչքների վաճառքը զորքերին, լքված տների ինքնագլուխ

---

288 Նույն տեղում, գ. 39, թ. 38:
289 Նույն տեղում թ. 93:
290 Նույն տեղում, գ. 50, թ. 297:
291 Նույն տեղում, ֆ. 121, g. 2, գ. 135, թ. 1:
292 Նույն տեղում, ֆ. 242, g. 1, գ. 2, թ. 8; գ. 16, թ. 2-3 և այլն:

պրաղնցումը, թալանը, ապօրինի ծառահատումները և այլն[293]: Այս մոտեցումը կարևոր էր նաև զինագրավումները կանխելու առումով, քանզի դրանք հաճախ պաճառաբանվում էին հայերի կողմից իրականացվող անտեղի կրակոցներով: Գողությունները և անիշխանական այլ քայլեր կանխելու համար բնակիչներին խստագույնս արգելվեց զինվորներից գնել որևէ ապրանք, իսկ հայ կապալառուներին ապօրինի յուրացնել լքված մահմեդական գյուղերի հացահատիկը և մյուս ապրանքները[294]:

Պետական մեխանիզմների նոր ձևավորման պայմաններում Արամը հարկադրված էր մեծ ժամանակ հատկացնել բնակչության շահերի պաշտպանությանը: Այսպես, հուլիսի 6-ի շրջաբերականով նա պաշտոնեությանը արգելում էր առանց ստացական տալու քաղաքացիներից որևէ գումար գանձել, իսկ վերջիններիս իրավունք էր տրվում այդպիսի դեպքերում վճարումներ չկատարել[295]: Բազմաթիվ էին Արամի կարգադրությունները նահանգի պաշտոնեությանը, հատկապես գավառապետերին՝ քաղաքացիների հանդեպ կատարված անարդարություններն ուղղելու, ինչպես նաև նրանց կարիքներին լուծում տալու վերաբերյալ[296]: Մայիսի 28-ին Արամը Ոստանի գավառապետին կարգադրեց Կիմ գյուղի գյուղացիներին վերադարձնել ոմն Տիգրանի կողմից նրանցից խլված անասունները[297]:

Նահանգապետության, անձամբ Արամի հոգածության ներքո էր գտնվում նաև եկեղեցին: 1915թ. ընթացքում ավերված և կողոպտված եկեղեցիներն ու վանքերն ազատվեցին տուրքերից, ինչը նրանց հնարավորություն կտար ոտքի կանգնել: Ընդառաջելով Նորաշենի եկեղեցականների մայիսի 20-ի խնդրանքին՝ կարգադրվեց եկեղեցուն հատկացնել նոր գերեզմանատեղի, տնտեսական կարիքները բավարարելու համար հատկացնել 200 ծառ և այլն[298]:

Տնտեսության վերականգնման, նահանգի տարբեր գավառների միջև արագ և կայուն հաղորդակցություն ապահով-

---

[293] Նույն տեղում, գ. 43, թ. 1:
[294] Նույն տեղում, թ. 12:
[295] Նույն տեղում, գ. 43, թ. 9:
[296] Նույն տեղում, գ. 1, թթ. 29, 36, 48; գ. 62, թ. 29; գ. 26, թթ. 3,4,6; գ. 18, թ. 37 և այլն:
[297] Նույն տեղում, գ. 13, թ. 7:
[298] Նույն տեղում, գ. 4, թ. 4:

ման նպատակով աշխատանք ծավալվեց քաղաքի և գավառների ճանապարհների ու կամուրջների, ինչպես նաև Վանա լճի նավատորմի վերանորոգման ուղղությամբ[299]: Առանձնակի կարևորություն ուներ նավատորմը, որովհետև նրա միջոցով ապահովվում էր արագ կապ և բեռնափոխադրություն լճի տարբեր ափերին ընկած շրջանների միջև:

Հետապնդվելիք խնդիրներն իրագործելու նպատակով 1915 թ. մայիսի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար կազմվել էր նահանգապետության բյուջե՝ 178.340 ռուբլի գումարով: Բյուջեի մուտքերը պիտի գոյանային Վանում և արվարձաններում գործող 1250 առևտրականներից և արհեստավորներից գանձվող եկամտահարկից, տասանորդից, ոչխարի տուրքից, լքված կալվածքների շահագործումից ստացված եկամուտներից և այլն[300]: Հին ռեժիմից վերցված այս տուրքերի կիրառումն անխուսափելի էր, որովհետև մեկերկու ամսում հնարավոր չէր արմատապես փոխել հարկային համակարգը: Նույնը կարելի է ասել նաև օրենսդրության մասին. ժամանակավորապես կիրառվում էր որոշ փոփոխության ենթարկված օսմանյան օրենսդրությունը: Ավելացնենք միայն, որ վերջինիս կողքին հաշվի էին առնվում նաև Ազգային սահմանադրության և ազգային սովորույթների պահանջները:

Նկատենք, որ հայկական նահանգապետությունն ուներ նաև թերություններ: Այդ մասին ուշագրավ տեղեկություններ է հայտնում Արամի կողմից հուլիսի 1-ին Վան քաղաքի քաղաքապետարանի, ոստիկանության և տնտեսական մարմինների վերահսկիչ նշանակված Իսահակ Տեր-Ղազարյանը[301]: Մասնավորապես, միևնույն արարքի համար Վանի ոստիկանապետարանը և նրա շրջանապետությունները երբեմն նշանակում էին տարբեր տուգանքներ, հստակ չէին վարում գործավարությունը: Տնտեսական մարմնի կողմից առկա էին թերացումներ աճուրդների կազմակերպման հարցում, այն է՝ երբեմն աճուրդի առարկան վաճառվում էր արժեքից մի քանի անգամ էժան գնով: Որոշակի բացթողումներ կային եկամուտների աղբյուրների հաշվառման և նահանգային բյուջեի մուտքերի ավելացման գործում: Սակայն, էականն այն է, որ հայկական կառավարության, անձամբ նահանգապետ Արամի կողմից ձեռ-

---

299 Նույն տեղում, գ. 54, թ. 9; գ. 39, թ. 36:
300 Նույն տեղում, գ. 57, թ. 1-8:
301 ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14-ի II մաս, թ. 183, 169-176:

նարկվում էին քայլեր եղած թերությունները շտկելու, նահանգային մարմինների գործունեությունը վերահսկելու և կանոնավորելու ուղղությամբ:

Արամի ղեկավարությամբ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ Վանի հայկական նահանգապետությունը օր-օրի ոտքի էր կանգնում. կյանքը Վան-Վասպուրականում զարթոնք էր ապրում: Ապագայի հանդեպ լավագույն հույսերով տոգորված ժողովուրդը վերականգնում էր ավերված օջախները, կառուցում նորերը, մշակում դաշտերն ու այգիները, վերաբացում արհեստանոցներն ու խանութները, փուռերը, շուկան, աշխուժացնում առևտուրն ու կրթական կյանքը: Դրա վառ վկայություններից էր հունիսի 11-ին կայացած Վարժապետանոցի անդրանիկ շրջանավարտների հանդեսը: Հանդեսին ներկա գտնվող Արամը մասնակիցներին կոչ արեց միշտ մնալ բարձունքի վրա, ինչպես եղել էր ապրիլյան օրերին[302]: Կազմվում էին օրինագծեր կրթական, քաղաքապետական, բանտային և այլ բնագավառների վերաբերյալ:

Դժբախտաբար, Վանի հայկական նահանգապետությունը երկար կյանք չունեցավ, ընդամենը 70 օր: 1915թ. հուլիսի 11-ին ռուս-թուրքական Կովկասյան ռազմաճակատից ռուսական Կովկասյան բանակի IV կորպուսի զորամասերի նահանջի օրերին վերջինիս հրամանով Վան-Վասպուրականի հայությունը հուլիսի 18-ին բռնեց հարկադիր գաղթի ուղին: Թուրքական յաթաղանից գերագույն ջանքերի շնորհիվ փրկված միակ հայկական նահանգը՝ Վան-Վասպուրականը ևս հայաթափվեց ու վերածվեց մոխրակույտերի:

Այսպիսով, Վանի հայկական նահանգապետությունը կարելի է համարել հայոց նորագույն պետականության նախատիպ, քանզի ազգային գործիչներով համալրված նրա իշխանության մարմինները, նրա վարչական կառուցվածքը, հետապնդած խնդիրները և մոտեցումը նրանց լուծմանը իրենց մեջ պարունակում էին պետականությանը բնորոշ քայլեր: Բացի այդ, նահանգապետության շրջանում ձեռք բերված փորձը նրա ղեկավարի՝ Արամ Մանուկյանի կողմից կարճ ժամանակ անց օգտագործվեց ի նպաստ Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման և ամրապնդման:

---

[302] «Աշխատանք», 1915, հունիսի 13, N 24 (223):

ARMEN ASRYAN
Armenian State Pedagogic University

THE PROVINCAL GOVERNORSHIP OF VAN (MAY 7 - JULY 18, 1915) ARCHETYPE OF THE ARMENIAN MODERN STATEHOOD

Summary

After the Van heroic victory (April, 1915) on May 7-16 was formed the provincal governorship of Van-Vaspurakan by order of the Command of the Caucasian army. One of the leaders of the heroic struggle Aram Manukyan (1879-1919) was appointed Governor. He was authorized to form a government consisting only of Armenians.

It is necessary to note that the Russian Command did not care the Armenian's independence. It desired to realize its own policy by means of the Armenians. Particularly, according to the order of the commander of the Caucasian army General Yudenich, Aram Manukyan had to be subject to the military authorities i. e. the commander of the garrison of Van. It meant that Armenian authorities had to apply great efforts to put the province into service of the Armenians' interests.

On May A.Manukyan appealed to the people to unite around the forming government in order to reorganize the life in the city and, generally, in the region. From May 7 till 22 was formed the state apparatus consisting of the Armenian figures.

The executive branch was represented by the police, estate-emigration, economic, trade and public health-care organs, town governorship, court, regional management. Their work was headed by the Provincial administration. The legislative power was headed by the Administrative council formed of the leaders of the executive organs. The latter presented bills for the approval of the Governor who had the right of veto.

The Governor at the same time was the Chairman of the Provincial administration and the Administrative council. He appointed the members and chiefs. There were established general and professional offices to control the work of those organs.

In the process of formation of the government Aram Manukyan's approach was based on the principle of appointments not according to the party belonging but professionalism.

Thus, the Armenian Provincial governance of Van may be considered as an archetype of the Armenian modern statehood because its authorities, formed of the Armenian figures and administrative structure contained certain elements of the statehood. Besides, the experience of the governing soon was used by its leader Aram Manukyan for the benefit of the formation and reinforcement of the first Republic of Armenia.

ՍՈՒՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1918-1920 ԹԹ. ԵՎ ԱՄԵՐԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՕԳՆԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի անկախությունը, սակայն հենց իրենց՝ անկախության հռչակագիրը կազմած ու ստորագրած քաղաքական գործիչների վկայությամբ երկրի անկախությունը առաջին մի քանի ամիսներին կարծես թե ավելի շտա հայտարարագրի բնույթ էր կրում, քան իրական, քանի որ մայիսից մինչև տարեվերջ նորաստեղծ հանրապետությունը իր սահմանները ճշգրտելու և դրա հետ կապված բազմաթիվ վիճահարույց հարցեր լուծելու համար ստիպված էր տևական բախումների և կռիվների մեջ մտնել հարևան թուրքերի, վրացիների ու ադրբեջանցիների հետ: Ազգամիջյան կռիվներն ու բախումները, քաղաքական ծանր իրավիճակը երկրում ստեղծել էին նույնքան ծանր տնտեսական մի կացություն, որի պատճառով հաճախ անպատասխան էին մնում հանրապետության կառավարությանը, խնամատարության ու աշխատանքի, պարենավորման նախարարություններին Հայաստանի համարյա բոլոր բնակավայրերից հասցեագրված և օգնություն աղաղակող բազում խնդրագրեր, քանի որ ողջ երկիրն էր հայտնվել սովի և համաճարակների ճիրաններում, և բոլորին բավարարելն անհնար էր:

Հայաստանից հեռանալիս թուրքեն իրենց հետ տարել և մասամբ ոչնչացրել բոլոր տեսակի անասունները, ավերել մթերքի պահեստներն ու բնակավայրերը, քանդել երկաթգծերն ու կամուրջները, այրել ամեն ինչ՝ նման կաթվածահար վիճակ ստեղծելու համար:

«Դրութիւնը քանի գնաց ծանրացաւ: Մինչեւ հոկտեմբեր դրեթէ վերջացաւ Հայաստանի սահմաններում գտնւած հացի պաշարը, - գրում է Ս. Վրացյանը: - Դրսից ոչինչ չէր գալիս: Պետական եւ հասարակական ամբարները պարապ էին: Ստեղծւեց սարսափելի կացութիւն: Ոչ միայն գաղթականները, այլ եւ տեղացիներից շատերը մատնւեցին սովամահութեան... Վեց ամսւայ ընթացքում սովից ու հիւանդութիւններից Հայաստանում մեռաւ մօտ 180.000 մարդ: Թիւրքերը գտել էին կոտո-

բածի նոր ձև՝ աւելի իրական եւ աւելի անաղմուկ ... Ժողովուրդը սպառուում էր վառուող մոմի պես»:[303]

Սակայն, ինչպես վերը նշեցինք, նորանկախ հանրապետության ողջ ջանքերն առաջին հերթին ուղղված էին անընդհատ դիմադրավելու հարևանների, բացառությամբ պարսիկների ստեպ-ստեպ կրկնվող ղինված հարձակումներին և կարճատև պատերազմներին, մյուս կողմից էլ երկրի պաշտոնատար այրերից կազմված պատվիրակությունները ազգամիջյան հարաբերությունները կարգավորելու և սահմանային վեճերը լուծելու նպատակով ստիպված էին լինում հաճախակի և երկարատև բացակայել Հայաստանից, հանգամանք, որը ևս իր բացասական ազդեցությունն էր ունենում երկրի ներքին կյանքի կարգավորման վրա:

1918 թ. դեկտեմբերի վերջին և 1919 թ. սկզբին կարճատև խաղաղության մի շրջան սկսվեց, որի ընթացքում կառավարությունը վերջապես կարողացավ իր ուշադրությունը կենտրոնացնել սովի, ցրտի, հիվանդությունների, գաղթականների անընդհատ հոսքի և տեղաշարժերի պատճառով «հալվող մոմի նման սպառվող ժողովրդի վրա»:

Դրությունն ավելի քան օրհասական էր: Սովի դեմ պայքարելու նպատակով բոլոր շրջաններում և խոշոր բնակավայրերում հիմնվեցին սննդակայաններ, որոնք օրվա մեջ մի անդամ տաք կերակուր, հաց, կամ ալյուր էին տալիս հաշվառման ենթարկված չքավորներին և գաղթականներին: Սակայն երկրի մթերքի պաշարը աղետալի արագությամբ սպառվում էր, քանի որ երկաթուղին գրեթե անգործության էր մատնված, և դրսից համարյա թե ներմուծում չէր կատարվում:

Ժողովրդին սովի ճիրաններից փրկելու գործին խոչընդոտում էր նաև գաղթականների անկանոն և չկանխատեսված տեղաշարժը տեղից տեղ: Յուրաքանչյուր հաջորդ օր պարզվում էր, որ սննդակայաններից օգտվողների թիվը աճել է, որի հետևանքով սննդակայաններում հաճախ սկիզբ էին առնում ծեծկռտուքն ու թալանը, որոնք երբեմն դառնում էին խիստ վտանգավոր և անկառավարելի:

Ըստ Հայաստանի կառավարության տեղեկագրերի՝ Արևմտյան Հայաստանից գաղթածների թիվը 1918 թ. աշնանը

---

[303] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 192:

հասնում էր 463.000-ի, որից 263.000-ը ապաստանել էր Հայաստանի առաջին հանրապետության սահմաններում: Զգալի թիվ էին կազմում Կարսից, Շարուրի, Նախիջևանի տարածքներից գաղթականները: Նրանցից զատ Հայաստանում հաշվառվել էին մոտ 40.000 որբեր, որոնցից միայն 15.612 էին տեղավորված որբանոցներում: Փողոցներում անխնամ թափառող որբերի թիվը մոտ երկու անգամ գերազանցում էր պետության հոգածության տակ գտնվողներին: Անապաստան որբերից ամեն օր մի քանի հարյուրը մեռնում էին փողոցներում նույնքան անօգնական և հոգածության կարոտ մեծերի հետ տչքի առաջ:[304]

Այս ընթացքում հայկական կառավարությունն արդեն պատվիրակություն էր ուղարկել Ամերիկա գլխավորապես հաց ձեռք բերելու համար:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ում ստեղծվել էին մի քանի բարեգործական հաստատություններ, որոնք օգնում էին պատերազմից առավել տուժած երկրներին: 1918 թ. ԱՄՆ-ի Կոնգրեսի որոշմամբ այս բարեգործական հաստատությունները («Սիրիայի և Պաղեստինի նպաստի հանձնախումբ», «Հայ նպաստի հանձնախումբ», «Պարսկական պատերազմի նպաստի հիմնադրում») միավորվեցին՝ ստեղծելով Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտե (Ամերկոմ), որը շուրջ 15 տարի եռանդուն գործունեություն ծավալեց այդ տարածաշրջանում իր խնամքի տակ առնելով և օգնելով պատերազմից տուժած կարիքավոր բնակչությանը, անապաստան որբերին:

Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի հայախնամ գործունեությունն այդ ժամանակ հիմնականում տարածվում էր 1915 թ. Մեծ եղեռնից հրաշքով փրկված և օտար երկրներում ապաստանած հայ գաղթականների, ինչպես նաև Թուրքիայում մնացած հայերի վրա, որոնց համար Սիրիայում, Հունաստանում, Պոլսում և այլուր բացվել էին սննդակայաններ, հիվանդանոցներ, որբանոցներ, որոնց կանոնավոր կերպով օգնություն էր տրամադրվում, մինչդեռ Հայաստանի հանրա-

---

[304] ՀԱԱ, ֆ.199, g.1, գ. 22, թ.84:

պետության և Ամերիկայի համագործակցությունը 1918 թ. մայիսից մինչև 1919 թ. մայիսը եղակի և ոչ այնքան շոշափելի բնույթ էր կրում և համարյա եղանակ չէր ստեղծում երկրի աղետալի վիճակը կարգավորելու հարցում:

Այսուհանդերձ խնամատարության նախարարության 1918 թ. դեկտեմբերի 6-ի տեղեկագրում, ուր ներկայացված են Հայաստանի տարածքում գործող 12 սննդակայանների վիճակը, նշված է նաև, որ Նորսուդավթի, Ղամարլուի և Դավալուի երեք սննդակայանների ապահովումը սիրով հանձն առավ Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն:[305]

Մի այլ փաստաթուղթ հավաստում է, որ Ալեքսանդրապոլի «Պոլիգոն» կոչվող թաղամասում կուտակված հայ որբերի խնամքին մասնակցող Ամերկոմի մի քանի աշխատակիցներ կազմակերպել են որբերի աշակերտական միություն, որպիսիք արդեն գործում էին Սիրիայում, Հունաստանում և Արևմտյան Հայաստանում Ամերկոմի խնամքի տակ գտնվող որբանոցներում:[306]

1919 թ. ապրիլի 28-ին Փարիզում կնքվեց համաձայնագիր մի կողմից Ամերիկյան օգնության վարչության ներկայացուցիչ Հերբերդ Հուվերի և մյուս կողմից Փարիզի հայկական պատվիրակության և ՀՀ ներկայացուցիչ Ավետիս Ահարոնյանի միջև, որով ամերիկյան կողմը հանձն էր առնում ապրիլ ամսին Հայաստան ուղարկել 5000 տոննա ալյուր, շարունակել այդ կարգի հայթայթումները մայիս, հունիս, հուլիս և հետագա ամիսներին, կանխել սովի հետագա տարածումը հանրապետության տարածքում, որի շնորհիվ կկանխվեր նաև «անիշխանության տարածումն ու կհաստատվեր կարգուկանոն»:[307]

Համաձայնագրում նշվում էին նաև մթերքի տեղափոխման ծախսերը հոգալու և մթերքի բաշխման երկկողմ համագործակցությունն ու պարտավորությունները:

Մայիսի առաջին օրերին կառավարության նիստերում անընդմեջ քննարկվել է այս համաձայնագիրը, պարզաբանումներ են մտցվել որոշ դրույթներում: Պայմանագրով նախատեսվում էր, որ ստացված վարկի սահմաններում ձեռք բերված ալյուրի համար վճարումները կատարվելու էին հենց Նյու Յորքում առանց ուշացումների և միայն դոլարով, որ պարբե-

---

305 Նույն տեղում, ֆ. 199, g.1, գ. 22, թ.6:
306 Նույն տեղում, ֆ. 200, g.1, գ.46, թ.1:
307 Նույն տեղում, թ.96:

բարար Ամերիկայի կառավարությանը պետք է ներկայացվեն Հայաստանին անհրաժեշտ ալյուրի և սերմացուի տեսակի և քանակի վերաբերյալ պահանջագրեր, որ մթերքի տեղափոխությանը նպաստելու նպատակով Բաթումում, Թիֆլիսում և Երևանում ամերիկացիների կողմից կնշանակվեն պաշտոնյաներ, որ ամերիկացիների կողմից հսկողություն կսահմանվի մթերքի բաշխման և սպառման վրա, Ամերիկան կճանաչվի արտոնյալ և ամենահուսալի պետությունը Հայաստանի համար և նրան կթույլատրվի օգտվել հայաստանյան վարկից այնպիսի պայմաններով, ինչպիսի պայմաններով օգտվում է Հայաստանը Ամերիկայի վարկից:[308]

Ալյուրի ու պարենի առաջին գնացքների մուտքը Հայաստան հնարավորություն ընձեռեց բոլոր գավառներում բազմապատկել գործող սննդակայանների թիվը, որոնք անվճար տաք կերակուր, հաց ու ալյուր էին մատակարարում բնակչության չքավոր խավին և գաղթականությանը:

Հայաստանի կառավարությունը 1919 թ. հունիսի 1-ին ստորագրեց պարտամուրհակ, որով նա պարտավորվում էր հունիսի 30-ին ԱՄՆ-ի գանձապետարան մուծել 5 միլիոն ԱՄՆ դոլար՝ տարեկան 5% դրույքաչափով սկսած մուրհակի ստորագրման օրից: Այս գումարը հանդիսանալու էր ԱՄՆ-ից Հայաստանին տրվելիք օգնության կանխավճարը, իսկ հաջորդ մուծումները կատարվելու էին հետագա յուրաքանչյուր տարվա հունիսի 30-ին:[309]

Սակայն արդեն հուլիսի 11-ին Կովկասում Ամերկոմի գլխավոր ներկայացուցիչ գնդապետ Ցարրոն Հայաստանի կառավարությանը զգուշացնում է, որ եթե վերջինս չկատարի իր պարտավորությունը, ապա իր կառավարությունը ստիպված կլինի դադարեցնել օգնությունը, քանի որ Հայաստանի կառավարությունն արդեն խախտել է պայմանագրում նշված ժամկետը:[310]

Մինչ Հայաստանի կառավարությունը փորձում էր նախարարություններին տրամադրվող գումարների կրճատման և եկած օգնության մի մասի վաճառքից ստացված գումարների հաշվին փակել 5 միլիոն դոլարի պարտքը, Ամերկոմի ներկայացուցիչները խնամատարության նախարարության աշխա-

---

[308] Նույն տեղում, ֆ. 205, g.1, գ.732, թ.15-16:
[309] Նույն տեղում, ֆ. 200, g.1, գ. 304, թ.12:
[310] Նույն տեղում:

տակիցների հետ հունիս-հուլիս ամիսներին շրջում էին դավառներում, ճշտում կարիքավորների ցուցակները, շինություններ առանձնացնում պահեստների, սննդակայանների, որբանոցների համար, կարգավորում հատկացվող սննդի չափաբաժինը, տեսականին և այլն:

Այն, ինչին ականատես եղան Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչները գավառներում, վեր էր ամեն տեսակի սպասելիքներից:

Մեկը մյուսի հետևից Թիֆլիս՝ Կովկասում Մերձավոր Արևելքի նպաստամատույցի կենտրոնական գրասենյակ են հասնում նրանց զեկուցագրերը, որոնք արդեն ականատեսների կողմից ստեղծված փաստաթղթեր էին և բոլորովին կասկած չէին հարուցում իրավիճակի ստույգ պատկերը ներկայացնելու հարցում:

1919 թ. հուլիսի 15-ին դաշնակից պետությունների Արևելքում տեղակայված բանակի գլխավոր հրամանատարը Կովկասում գտնվող ֆրանսիական զորքերի հրամանատարին ուղղած դրությամբ տեղեկացնում է, որ գնդապետ Ուիլյամ Հասկելը Փարիզի խաղաղության վեհաժողովի կողմից նշանակվել է Հայաստանի մատակարարման գծով գերագույն բարձր կոմիսար, և որ այդ հարցում նրան պարտավոր են բոլոր միջոցներով աջակցել և՛ Անդրկովկասի 3 հանրապետությունները, և՛ Հյուսիսային Կովկասի ղեկավարությունը՝ հանձին գեներալ Դենիկինի:[311]

1919 թ. օգոստոսի 16-ին Թիֆլիս է ժամանում Հայաստանի մատակարարման գծով գերագույն բարձր կոմիսար Հասկելը, որը օգոստոսի 21-ին արդեն Երևանում էր: Նրա այցի հիմնական նպատակն էր ծանոթանալ տարածաշրջանի ներքին կյանքին, ապահովել ալյուրի կանոնավոր փոխագրման գործը Բաթումից Հայաստան, և, որ ամենակարևորն էր, ծանոթանալ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում և Ղարաքիլիսայում տեղակայված սննդակայանների, հիվանդանոցների և որբանոցների հոգսերին ու կարիքներին:[312]

Հայաստանի կառավարության երեքուկես ժամ տևած արտահերթ նիստում վարչապետն ու նախարարները գնդապետ Հասկելին ներկայացրին զորքին, գաղթականներին, չքավորներին ու որբերին սննդով ապահովելու, Բաթումից և Հյուսիսա-

---

[311] Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ. 246, թ.31:
[312] Նույն տեղում, գ. 362, թ.17:

յին Կովկասից Հայաստան կատարվող փոխադրումների նոր կարգ մշակելու, ԱՄՆ-ի կառավարության հետ վճարումների ավելի իրատեսական ժամկետի պայմանագիր ստորագրելու և այլ հրատապ հարցերի մասին իրենց նկատառումները:[313]

Ժամանակի պետական այրերը, համարյա բոլորին անխտիր, հետագայում իրենց հուշերում միշտ երախտագիտությամբ են հիշատակել Հասկելի անունը, որը Հայաստանի մատակարարման գործի իսկական նվիրյալն էր դարձել: Ահա թե ինչ է գրում այդ առիթով վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը. «Գնդապետ» Հասկելի դերը հայ ժողովրդին սնունդ մատակարարելու, որբերը խնամելու, արհեստանոցներ բանալու գործին մէջ իրոք հսկայական էր: Իբրեւ պետ ահագին ոչ քաղաքական կազմակերպութեան մը, որուն ցանցը կը տարածուէր ամբողջ Հայաստանի մէջ, եւ որը գեղեցիկ կրպով կըմբռնէր իր գործը եւ անձամբ կը մտնէր անոր բոլոր մանրամասնութեանց մէջ, Հասկելը իր անունը ոսկի տառերով գրած է հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան պահպանման գործին մէջ:

Ան բաժանած էր Հայաստանը մէկ քանի շրջաններու. ամէն մէկ շրջան ունէր իր պահեստը, ուր կը մտնէին պաշարեղէնը և հագուստը՝ Ալեքսանդրապոլի կենդրոնական պահեստէն»:[314]

1919 թ. սեպտեմբերի 10-ին Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի Կովկասի տարածաշրջանի կենտրոնական գրասենյակից Հայաստանի վարչապետի ստացած տեղեկագիրը հավաստում էր, որ սեպտեմբերի 10-ի դրությամբ Հայաստանի կառավարությունը ստացել է 11 միլիոն 500.000 դոլարի արժողությամբ մթերք:

Ինչ խոսք, այս թիվը ինքնին խոսուն էր և միաժամանակ վկայում էր, որ Ամերկոմի օգնությունը կանոնավոր բնույթ էր կրում և իր դրական ազդեցությունը թողնում երկրի տնտեսական վիճակի բարելավման վրա:

Ամերկոմի գործունեությունը հետագայում ընդգրկելու էր նորաստեղծ հանրապետության կյանքի համարյա բոլոր բնագավառները՝ գաղթականների և տեղացի չքավոր բնակչության խնամատարություն, որբերի հավաքագրում և որբա-

---

[313] Նույն տեղում, թթ. 52-54:

[314] Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պեյրութ, 1968, էջ 93:

նոցների բացում, հիվանդանոցների, շրջիկ բուժկայանների, արհեստանոցների ստեղծումն, կրթական գործի կազմակերպում, օգնություն բանակին և զինվորականներին, հացահատիկի և այլ կուլտուրաների սերմացուի ձեռքբերում, ցանքի կազմակերպում, մշակում և այլն:

Սակայն առաջին մի քանի ամիսների օգնությունը ուղղակի մահվան ճիրաններից փրկեց հարյուր հազարավոր մարդկանց և տասնյակ հազարավոր որբերի, փրկեց ժողովրդին ֆիզիկական բնաջնջման վտանգից:

«Ամերիկեան ալիւրի հասնելով՝ կամաց-կամաց սովը մեղմացաւ, - հետագայում դրել է Սիմոն Վրացյանը, - երկիրը սկսեց մտնել բնականոն հունի մէջ, եւ ժողովուրդն ու կառավարութիւնը կարողացան նուիրուել երկրի վերաշինութեան ու պետութեան կազմակերպման գործին»:[315]

SUREN AVETISYAN
Institute of History, NAS RA

SOCIAL-ECONOMIC SITUATION IN ARMENIA IN 1918-1920 AND THE FIRST STEPS OF THE AMERICAN COMMITTEE TO HELP THE REPUBLIC

Summary

On May 28, 1918 was declared Independence of the Republic of Armenia. Anyhow, according to the Armenian political figures who wrote and signed the Declaration of Independence, during the first months the independence of the country had rather a declarative than a real character, because from May till the end of 1918 the new formed Republic suffered greatly of many economic, political and demographic hardships. During their invasion the Turkish bands destroyed vital arteries of the country and, after their leaving, it remained devastated.

[315] Վրացյան Ս., Նշվ. աշխ., էջ 242:

The period from the end of December 1918 till 1919 was a peaceful one. thus the Armenian government could concentrate its attention on the problems of famine, cold, diseases and the increasing number of refugees. The Armenian government sent a delegation to the USA, mainly for getting grain.

After World War 1 several benevolent organizations were founded in the USA which helped the countries that suffered heavy losses. In 1918 the benevolent organizations were united forming the American committee (Amercom) of the Near East. During 15 years this committee took under its guidance and helped as those who in the course of the war suffered losses, as well as the poor layers of the population and especially orphans.

The Amercom helped especially the Armenian refuges who miraculously escaped the Genocide of 1915 and lived in foreign countries.

The committee opened food centres, hospitals and orphanages in different countries and supplied them regularly with food and medicines. Meanwhile, from May 1918 till 1919 the cooperation between the Republic of Armenian and the Amercom was not active for regulation of the catastrophic situation in the country. Later the activities of the Amercom involved almost all spheres of life of the Republic of Armenia. During several months the help of the Amercom saved the lives of hundreds of thousands people thus protecting the people from the peril of physical destruction. "Owing to the American flour – wrote later Simeon Vratsyan, - famine gradually yielded and the country stepped on its natural way and both the people and government devoted themselves to the reconstruction and organization of the state."

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԵՊՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ՀԵՏ
(1919 թ. հունիս-գեկտեմբեր)

Միացյալ Հայաստանի անկախության հռչակագիրն ընդունելուց առաջ և հետո սառել էին պաշտոնական հարաբերությունները Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության հետ, քանի որ Ա.Դենիկինը չէր ուզում ճանաչել Հայաստանի անկախությունը, որը հակասում էր ռուսական կայսրությունը վերականգնելու նրա ռազմավարությանը: Այդ ժամանակ Հայաստանի Հանրապետությունը ինչ-որ չափով աղատ էր գործում արտաքին քաղաքականության բնագավառում: Սակայն 1919 թ. կեսերին բավական սրվեց նրա միջազգային դրությունը, լուրջ սպառնալիքներ ստեղծվեցին նրա անվտանգության համար, որը պայմանավորված էր Հայաստանի Հանրապետության նկատմամբ Թուրքիայի և Ադրբեջանի նոր ագրեսիվ ձգտումներով, ինչպես նաև Հարևան Վրաստանի թուրքամետ դիրքորոշումով: Հենց որ Անդրկովկասում ստեղծվում էր բարդ իրադրություն, Վրաստանն անմիջապես կողմնորոշվում էր դեպի Թուրքիան ի վնաս Հայաստանի: Այդպես եղավ նաև այս անդամ: Ընկնելով «երկաթե» օղակի մեջ՝ Հայաստանի Հանրապետությունն աջակցություն էր փնտրում դրսում ձգտելով կենտրոնացնել դիվանագիտական ջանքերը՝ վերականգնելու հարաբերությունները Ռուսաստանի Հարավի հետ: Այդ առնչությամբ գեներալ Ա.Դենիկինը գրում է, որ աշնանը Հայաստանի Հանրապետության «կողմնորոշումը» կրկին փոխվեց և դրա հետ կապված փոխվեց նաև վերաբերմունքը մեր նկատմամբ:[316]*:*

Հրաժարվելով զենքի ուժով Անդրկովկասն իր ազդեցության տակ պահելու մարտավարությունից Ռուսաստանի Հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» հուլիսի 2-ի գաղտնի հրահանգով իրենց առաջնահերթ խնդիրը համարեցին

---

[316]Деникин А., Очерки русской смуты. В 3 книгах. Книга 3, т. 4, т. 5, Вооруженные силы Юга России. М., 2003, с. 253.

ամբողջ մարտավարությունը ուղղել առևտրա-տնտեսական, ֆինանսական համագործակցության ուղին տիրելու Անդրկովկասի տնտեսական լծակներին, ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտներին և դրանով քաղաքական կախվածության մեջ դցել Անդրկովկասի հանրապետությունները: Անդրկովկասում ի դեմս Հայաստանի Հանրապետության հենարան ստեղծելու նպատակով «Հատուկ խորհրդակցությունը» ձգտում էր վերականգնել պաշտոնական հարաբերությունները՝ շահարկելով հանրապետության ներքին ու արտաքին ծանր կացությունը: Ըստ ռուսական քաղաքական գործիչների, անհրաժեշտ էր գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի այդ վերամիավորումը որքան հնարավոր է խաղաղ և առանց ցնցումների իրականացվի[317]: Փաստորեն երկուստեք՝ թե՛ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և թե՛ Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը ձգտում էին վերականգնել պաշտոնական շփումները՝ յուրաքանչյուրը ելնելով քաղաքական տարբեր նկատառումներից, տարբեր շարժառիթներից:

1919 թ. հուլիսին առաջին քայլերը կատարվեցին այդ ուղղությամբ: Հուլիսի 5-ին Օմսկ ուղևորվելու ճանապարհին Գ. Ջամոյանը Եկատերինոդարում հանդիպումներ ունեցավ Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ներկայացուցիչների հետ: Հուլիս 6-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի և արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ա. Խատիսյանին ուղղած նամակ-զեկույցում Գ. Ջամոյանը տեղեկացնում է. «...ինձ ընդունեց գլխավոր հրամանատարի օգնական և «Հատուկ խորհրդակցության» նախագահ գեներալ Ա. Լուկոմսկին: Ընդունելությունը կրում է շատ սիրալիր և նախազգուշական բնույթ:

Գեներալ Ա. Լուկոմսկին ողջունեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ընդգծելով, որ իրեն հայտնի է այն բոլոր ծանր փորձությունների մասին, որ ստիպված կրում է մեր կառավարությունը: Հիշատակեց մեր նկատմամբ Ադրբեջանի և Վրաստանի թշնամական հարաբերությունների մասին: Հասկացրեցի գեներալ Ա. Լուկոմսկուն, որ Երևանից եկել է մեր կառավարության լիազորված անձը՝ պարզելու Կամավորական բանակի և Հայաստանի հարաբերությունների որոշ հարցեր:

---

[317] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 97.

Ռոստովից ժամանելուց հետո Մարտիրոս Հարությունյանը կստանձնի իր պատասխանատու և ծանր առաքելությունը»[318]: Ի. Զամոյանը նամակը ավարտում է, նշելով, որ ժամանակն է Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ վերականգնել պաշտոնական հարաբերությունները[319]:

1919 թ. հուլիս-օգոստոսին Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական դրությունը ավելի բարդացավ: Ադրբեջանի բացահայտ զավթողական նկրտումների առիթով հուլիսի 18-ին արտաքին գործերի նախարարին ուղղած գաղտնի նամակ-զեկույցում Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը տեղեկացնում է, որ Ադրբեջանի իշխանությունները լայն նախապատրաստություն են տեսնում, օգտագործում են հնարավոր բոլոր միջոցները իրենց ազդեցությունը Զանգեզուրի և Նախիջևանի վրա տարածելու համար: Լարաբաղում, Զանգեզուրում և Նախիջևանում տեղի ունեցող մահմեդական ապստամբությունները սերտ կապ ունեն միմյանց հետ և ընթանում են ադրբեջանական իշխանությունների նախապես մշակված ծրագրով[320]: Թուրք-ադրբեջանական գաղտնի կազմակերպություններն իրենց գործակալների միջոցով աշխատում էին Հայաստանի Հանրապետության տարածքում խորացնել մահմեդականների թշնամանքը՝ նրանց մատակարարելով թե՛ դրամական միջոցներ, թե՛ զենք ու զինամթերք: Ադրբեջանի իշխանությունները ոչ միայն Հայաստանի Հանրապետության տարածքում, այլ նաև Բաքվում հակահայկական լայն քարոզչություն էին ծավալում՝ հայկական կոտորածի սպառնալիքով: Ադրբեջանի ղեկավար շրջանների նպատակն էր իրենց գերիշխանությունը հաստատել «մինչև նախկին ռուսական սահմանները և միանալ Տաճկաստանի հետ»[321]: Թուրք-ադրբեջանական ղեկավար շրջանները իրենց նպատակին հասնելու համար ծրագրում են Արաքսի հովտով, Օրդուբադի վրայով անցնել Նախիջևան: Այդ ծրագիրը իրագործելու համար նրանց միակ խոչընդոտը Մեղրին էր՝ շրջակա հայկական գյուղերով: Ի

---

318 ՀԱԱ, ֆ.Պ-200, g.1, գ.210, թ.6: Տե՛ս նաև «Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, Ե., էջ 196-197:
319 ՀԱԱ, ֆ.Պ-200, g.1, գ.210, թ.8:
320 Նույն տեղում:
321 Նույն տեղում:

դեպ այն ժամանակից առ այսօր հայկական այդ հնագույն բնակավայրը թուրք-ադրբեջանական իշխանությունների աչքի փուշն է, մեծ ոսկոր է նրանց կոկորդում, որ չեն կարողանում հանել՝ իրագործելու համար ռազմատենչ, վայրենաբարո երկու ժողովուրդների անմիջական կապն ու միավորումը: Այդ արգելքը հաղթահարելու համար ադրբեջանական իշխանությունները այն ժամանակ բանակցություններ էին վարում պարսկական մի քանի «աւազակաբարոյ խաների հետ, որպեսզի յարձակումը սկսելու դեպքում նոքա աջակցեն իրենց զինակցութեամբ, կրակ բանալով Մեղրու վրայ դիմացի պարսկական բարձրութիւններից»[322]: Ադրբեջանի կառավարությունը Պարսկաստանի վրայով Նախիջևանի շրջան էր ուղարկել երկու հարյուր հազար փամփուշտ և Սուլթանովի միջոցով երեք միլիոն ռուբլի: Այդ ծրագիրն իրագործելու նպատակով Ադրբեջան էին ուղարկվել նաև 15 թուրքական սպաներ[323]:

Օգոստոսի սկզբին մահմեդականներին հաջողվեց լարված վիճակ ստեղծել նաև Օլթիի, Սուրմալուի, Կարսի շրջաններում: Երկրում ստեղծված ներքին ու արտաքին ծանր դրության մասին գեներալ Ա.Դենիկինը հաղորդում է, որ հուլիս-օգոստոսյան «իրադարձությունները հայկական բանակին դրեցին անօգնական վիճակում: Պահեստային հրացանների բացակայությունը և ընդամենը 300 հազար փամփուշտի պաշարը սահմանափակում էին նրա մարտունակությունը և իմաստից զրկում զորահավաքը: Այնինչ երկրի ամբողջ հարավը և հարավարևելքը բռնկված էր մահմեդականների ապստամբությամբ: Այն հարավից տարածվում էր դեպի Երևան, սպառնում էր Կարսին և Ալեքսանդրապոլին, իսկ չեզոք գոտում՝ Սադախլուի մոտ, ձգտում էր փակել երկիր անցնող միակ զարկերակը»[324]:

Փաստորեն թշնամին Հայաստանի Հանրապետությունը շրջափակել էր «երկաթե օղակով» մեծ սպառնալիք ստեղծելով մայրաքաղաք Երևանին: Իսկ Հայաստանի Հանրապետության այդ շրջանների վերահսկողությունը իրականացնող անգլիական զինվորական հրամանատարությունը օգոստոսի 15-ին հեռանալու էր Անդրկովկասից: Նկատենք, որ անգլիացիները հայամետ դիրքորոշում չունեին. անհրաժեշտության դեպքում

---

322 ՀԱԱ, Ֆ.Պ-200, g.1, գ. 50, թ.12:
323 ՀԱԱ, Ֆ.Պ-200, g.1, գ. 50, թ.13:
324 Деникин А., Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3 /т. 4, т. 5, Вооруженные силы Юга России, с. 251.

նրանք ավելի շուտ կանցնեին Թուրքերի կողմը: Անգլիական զորքերը ներկայացնում էին Համաձայնության երկրները Անդրկովկասում և նրանց խնդիրն էր ապահովել խաղաղությունը երկրամասում: Այս առումով Թուրքերի կողմից Հայաստանի Հանրապետությանը սպառնացող վտանգի պայմաններում անգլիական զորքերի ներկայությունը ձեռնտու էր Հայաստանի Հանրապետությանը: Ահա թե ինչու անգլիական զինվորների հեռանալը Անդրկովկասից մեծ անհանգստություն և մտահոգություն պատճառեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը: 1919 թ. հուլիսի 28-ին Փարիզից Ա. Ահարոնյանը արտաքին գործերի նախարարին ուղղած նամակ-զեկույցում հաղորդում է. «Հասկանում եմ Ձեր անհանգստությունը անգլիական զորքերի Կովկասից քաշվելու լուրերի առթիվ, խնդրում եմ հավատալ, որ նույնիսկ խռովքը մեղ էլ պաշարել և շարունակ և յուրաքանչյուր հեռագիրը մեզ նոր և նոր և հաճախակի դիմումների նյութ են ծառայել»[325]: Անգլիական զինվորական առաքելության դուրս բերումը անհանգստություն պատճառեց նաև Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը: Գեներալ Ա. Լուկոմսկին հաղորդում է, որ անգլիական զինվորների ներկայությունը Անդրկովկասում անհրաժեշտություն է: 1919 թ. օգոստոսի սկզբին, երբ տեղեկություններ ստացվեցին անգլիական զինվորների հեռանալու հավանականության մասին, գեներալ Ա.Դենիկինը խնդրեց նրանց չգնալ այդ քայլին, քանզի մտավախություն կար, որ դրանից հետո Անդրկովկասում բոլշևիզմը կարող է տարածվել[326]:

Զգտելով կանխել անգլիական զորքերի հեռանալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Փարիզում իր պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանից պահանջեց բանակցություններ վարել բրիտանական կառավարության ներկայացուցիչների հետ հետաձգելու անգլիական զորքերի դուրս բերումը Անդրկովկասից, ինչպես նաև տեղեկացնել վեհաժողովին Թուրք-Թաթարական զավթիչների կողմից Հայաստանի Հանրապետությունը օգակելու ու նրա համար ծանր կացություն ստեղծելու մասին: 1919 թ. օգոստոսի 6-ին Ա. Խատիսյանին ուղղած նամակ-զեկույցում Ա.Ահարոնյանը տեղե-

---

[325] ՀԱԱ, ֆ.Պ-200, g.1, գ.290, թ.21, գ.355, մաս I, թ.16:

[326] Лукомский А., Деникин и Антанта. Революция и гражданская война в описаниях белогвардейцев, М., 1991, с.93:

կացնում է. «Գրում եմ Ձեզ Պ. նախարարապետ, որպեսզի դաշնակիցների վրա շատ մեծ հույսեր չդնեք Ձեր որոշումների և գործողությունների ժամանակ և հաշվի առնեք տեղական ուժերի և պայմանների փոխհարաբերությունը: Դաշնակիցների և կոնֆերենցիայի այս թույլությունը լավ ծանոթ է թյուրքերին և մանավանդ Ագրբեջանին, որի պատվիրակությունը այստեղից անկասկած իրազեկ է պահում և՛ թյուրք և՛ Ադրբեջանի կառավարությանը և անշուշտ այդ տեղի նրանց բոլոր շարժումները դրա արդյունքն են: ...Մեր ճիգերը անգլիական կառավարության (մոտ.-Դ.Պ.) դատապարտված են ձախողանքի»[327]: Նամակ-զեկույցը ավարտելով՝ Ա. Ահարոնյանը ավելացնում է, որ կառավարությունը նկատի ունենա, որ ա) դաշնակիցները և Փարիզի վեհաժողովը երբեմն անզոր են կոնկրետ քայլեր կատարելու, հատկապես հեռավոր վայրերում, բ) թուրք-թաթարները վեհաժողովի այդ անզորության մասին լավ գիտեն, գ) Մեծ Բրիտանիան Կովկասում մտադիր չէ իր մուսուլմանական քաղաքականությունից հրաժարվել և միշտ պետք է պաշտպանի թուրքերին ու թաթարներին[328]: Օգոստոսի 8-ին Ա. Ահարոնյանը դարձյալ Ա. Խատիսյանին ուղղած մեկ այլ նամակ-զեկույցում տեղեկացնում է. «Երեք օրից ի վեր ծեծում եմ բոլոր դռները, սեղմում եմ բոլոր ձեռքերը, որ կարող է որևէ օգնություն հասցնել մեզ: Դժբախտությունն այն է, որ անմիջական օգնություն է հարկավոր և կարող են անել միայն անգլիացիք: Անգլիայի բանվորական կուսակցությունը գրեթե բռնադատեց կառավարությանը ետ քաշել իր ձեռքերը Ռուսիայից և մենք դրա զոհերն ենք: Ընդամենը երկու շաբաթ առաջ ընդունեց մեզ, հաղորդեցին, որ անգլիական կառավարության հայտարարության համաձայն համայնքների պալատում նրանց զորքերը Կովկասից չպիտի քաշվեն, և հանկարծ այս փոփոխությունը, որ մեզ հանկարծակիի բերեց, այնուամենայնիվ միայն նրանք կարող են մեզ օգնել, այս պատճառով անմիջապես հեռագրեցի Լոնդոն Լյոյդ Ջորջին, մեզ բոլոր բարեկամ անգլիացիներին, Համայնքների պալատի անդամներին և անգլիական բանվոր կուսակցության շեֆ Անգամոլնին, խնդրելով թե հնար է, առժամապես անգլիական զորքերը չքաշել Կովկասից և վերջ գնել թուրք-թաթարական սպառնալի վտանգին: Միաժամանակ հեռագրեցի Լյուցեռն, ուր այժմ գու-

---

[327] ՀԱԱ, ֆ.Պ-200, g.1, գ.290, թ.33-34:
[328] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-200, g.1, գ.290, թ.34:

մարված է Ինաևրնայիոնալը, խնդրելով անգլիական բանվորների ներկայացուցիչներին Անդերսոնին և Մաքդոնալդին[329], աղղել իրենց կառավարության վրա և թողնել բրիտանական զորքերը Կովկասում: Հեռագրեցի Հռոմ նախարարապետ Նիդաիին և Ամերիկա՝ Վիլսոնին: Անցա անգլիական պաավիրակություն, տեսակցեցի մեր գործերի բաժինը վարող Վանզիտարի հետ, որ հայտնեց նույնպես թե իրենք իրազեկ են թե այս բոլորը Արդրբելջանի գործն է և թուրքերի և թե տարաբախտաբար իր ճիդերը անգլիական զորքերը պահելու Կովկասում մնացին ապարդյուն, այլ միայն հաջողվեց հեռագրել անգլիական բարձր հրամանատարությանը, որ եթե հնար է, զենք ու ռազմամթերք տան հայերին: Գեթ այս չնչին օգնությունը կհասնի ձեզ թե ոչ, չդիտեմ»[330]:

Իրականում Հայաստանի Հանրապետության կառավարության դիմումը Փարիզի վեհաժողովին և պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանի ջանքերը որևէ դրական արդյունք չտվեցին կասեցնելու անգլիական զորքերի դուրս բերումը Անդրկովկասից, որովհետև դա նույն վեհաժողովի որոշման կատարումն էր: Դրա փոխարեն Հայաստանի Հանրապետություն ուղարկվեց ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելը՝ որպես Հայաստանի գերագույն հանձնակատար: Գեներալ Ա.Դենիկինը դրում է, որ Հայաստանի արյունալի իրադարձությունների ընթացքում հայ ժողովրդին աջակցելուց կտրականապես հրաժարվելը և հայտարարելը, որ իրենք ռազմական օգնություն ցույց չեն տա, այլ «միայն կօգտագործեն իրենց հեղինակությունը», վերջնականապես խաթարեցին հայերի վստահությունը և համակրանքը անգլիացիների նկատմամբ[331]:

1919 թ. օգոստոսի 15-ին կառավարության հանձնարարությամբ փոխվարչապետ Ա. Սահակյանը Հայաստանի Հանրապետության պառլամենտի[332] 5-րդ նիստում ներկայացրեց երկրի ծանր դրությունը և այդ վիճակը շտկելու միջոցառումները: «Մեր դարավոր թշնամի Թուրքիան երկրի ներսում և դրսում նորանոր ռազմաճակատներ է ստեղծում,- ասված է զե-

---

329 ԳԱԹ, ՀՀՊ արխիվ, Բոստոն, N 1687-23:

330 ՀԱԱ, ֆ.Պ-200, g.1, գ.355, մաս I, թ.134-135:

331 Деникин А., Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3 / т. 4, т. 5, Вооруженные силы Юга России, с. 249.

332 1919 թ. օգոստոսի 1-ի նորընտիր Հայաստանի Խորհրդի բացման օրը. վերջինս վերանվանվեց Հայաստանի պառլամենտ:

կուցման մեջ: - Մի նոր ռազմաճակատ ստեղծվում է Երզրումից՝ տաճկական զորքերի դեպի Սարիզամիշ շարժվելով: Մի ուրիշ ռազմաճակատ Սուրմալուի շրջանում, որը մինչև այժմ տեղական ընդհարումների բնույթ էր կրում, իսկ այժմ լայնածավալ ճակատ է ստեղծել Կարակալայի մոտ: Մյուս կողմից էլ տաճիկ կառավարության ... զորքերը քրդական հրոսակախմբերի հետ, թնդանոթներով զինված, դալիս են Արաքսի ուղղությամբ: Չորրորդ ռազմաճակատը Ղամարլուինն է: Հինգերորդ դեռ չորոշված ռազմաճակատը Դարալագյազն է: Մենք հետզհետե շրջապատվում ենք երկաթե օղակով: Թշնամին ուզում է ներխուժել մեր երկիրը»[333].

Հանրապետությունում ստեղծված ծանր իրավիճակը պառլամենտում քննարկելիս պատգամավորներն իրենց ելույթներում նշեցին, որ կառավարությունը օգնության հույսեր չունի Փարիզի վեհաժողովից, իսկ անգլիական զորքը սկսել է հեռանալ Անդրկովկասից, որն ավելի է սաստկացնում թշնամու կողմից Հայաստանի Հանրապետության օղակումը: Պառլամենտը որոշեց հայտարարել հայրենիքը վտանգի մեջ է և դիմել ոչ միայն դաշնակից երկրների, այլ նաև մի խումբ պետությունների պառլամենտներին: Սակայն պառլամենտի այդ հայտարարությունները չունեցան որևէ դրական նշանակություն: Առանձին պատգամավորներ առաջարկեցին փոխել Հայաստանի իշխանությունների քաղաքական կուրսը: Պատգամավոր Թորոսյանը նշեց. «Մի տարի սրանից առաջ ջախջախված Հայաստանը կանգնած էր Տաճկաստանի առաջ, բայց մի հույս ուներ, թե կռվում է դաշնակիցների համար և այդ հույսով էլ սպասում էր իր փրկության: Նրա հույսերն ի դերև չանցան: ...Անգլիայի ներկայացուցիչները շատ անտարբեր են այս խնդրում, հետևաբար անհրաժեշտ է հիմնովին փոխել կառավարության ներկա քաղաքականությունը: Կառավարությունը պետք է շարունակի դիվանագիտական հարաբերությունները արտաքին աշխարհի հետ: Նա պետք է համաձայնության գա Հայաստանի հարևանների հետ»[334]: Պատգամավոր Խոնդկարյանը (սոցիալիստ-հեղափոխական) իր ելույթում նշեց, որ Հայաստանի իշխանությունները հիմնավորապես պետք է փոխեն իրենց քաղաքականությունը. «Սեփական օրիենտացիան մեզ դեպի կործանում է տանում: Մեր քաղաքական գաղափարները

---

[333] «Հայաստանի աշխատավոր», Ե., 20 օգոստոսի, 1919:
[334] Նույն տեղում:

պիտի ուղղենք դեպի հյուսիս և ապավինենք միայն Ռուսաստանին:

...Մինչ այժմ Ամերիկան չկա, իսկ անգլիացիներն էլ չեն ապահովում մեզ, ուստի մեզ մնում է ավելի շուտ առավելություն տալ Ռուսաստանին: Հայաստանը պետք է դաշնակցային կապերով կապվի Ռուսաստանի հետ»[335]:

Փաստորեն պառլամենտում դրսևորվեց պատգամավորների հիասթափությունը Փարիզի վեհաժողովի և Համաձայնության երկրների նկատմամբ: Երկրի անվտանգության շահերից ելնելով պառլամենտում առաջարկվեց վերականգնել պաշտոնական հարաբերությունները Ռուսաստանի հարավի հետ և փոխել Հայաստանի իշխանությունների քաղաքական կուրսը:

Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» ուշիուշով հետևում էին Հայաստանի Հանրապետությունում ընթացող իրադարձություններին: 1919 թ. օգոստոսի 17-ին Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության շտաբի պետին ուղղած գաղտնի նամակ-զեկույցում գնդապետ Մ. Զինկևիչը տեղեկացնում է, որ մահմեդականները շրջափակել են Հայաստանը համատարած օղակով, և միակ ելքը Բելի Կլյուչն է: Հայկական բանակը երկար դիմադրել չի կարող, քանի որ չունի անհրաժեշտ քանակությամբ զենք, իսկ պահեստներում գրեթե բացակայում է փամփուշտի պաշարը, և հնարավորություն չկա հայկական բանակում նոր զորակոչվածներին զինել ու հանդերձավորել: Պառլամենտը և կառավարությունը գիտակցում են, որ այդ ծանր իրավիճակում Հայաստանին կարող է սատարել Ռուսաստանի հարավը. «Այսպիսով ... հայ քաղաքական գործիչները թեքվում են դեպի Ռուսաստան: Սակայն դեպի Ռուսաստան քաղաքական փոխակերպումը շատ դժվար ու դանդաղ է ընթանում և ինչ ռեալ արդյունք կունենա, դժվար է ասել»[336]: Այնուհետև գնդապետը խորհուրդ է տալիս Կամավորական բանակի բարձրագույն հրամանատարությանը, որ «Հայկական հարցը ապագայում Ռուսաստանի համար ունենալու է կարևոր նշանակություն, ինչպես նախկինում էր: Պետք է հայերի հետ հաշվի նստել որպես ամենալոյալ տարրի, ուստի ներկա պահին անհրաժեշտ եմ համարում հայերին ցուցաբերել բարոյական, իսկ ավելի լավ է

---

[335] «Հայաստանի աշխատավոր», Ե., 20, 21 օգոստոսի, 1919:
[336] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 79.

նյութական օգնություն: Ընդ որում անհրաժեշտ է գործել չգրգռելով մահմեդականներին, առանձնապես թուրքերին»[337]: Նամակ-զեկույցը ավարտելով՝ Մ. Զինկեևիչը գանում է, որ անհրաժեշտ է կարճ ժամկետում Հայաստանի Հանրապետությանը տրամադրել մեկ միլիոն փամփուշտ, թույլատրել հաց դնել, վարկ տրամադրել և այլն. դա մեծ լծակ կլինի Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ձեռքում Հայաստանի իշխանությունների վրա քաղաքական ազդեցություն ունենալու համար[338]:

Գեներալ Ա.Դենիկինը տեղեկացնում է, որ ժամանակին կատարվեց գնդապետ Մ.Զինկևիչի պահանջը և օգոստոսի վերջին, ամենածանր պահին, մեծ դժվարություններով հաջողվեց Բաթումից ցամաքային ճանապարհով Արդահան, ապա այնտեղից Երևան ուղարկել երեք միլիոն փամփուշտ[339]: Առաջ անցնելով նշենք, որ երկրի այդ ծանր օրերին Կամավորական բանակից ստացված փամփուշտների քանակությունը թեև մեծ չէր, բայց շոշափելի օգնություն էր: Ռուբենը գրում է. «...Փամփուշտ եւ այլ իրեզէններ, որ մեզ հասան ամենադժնդակ պայմաններում. առանց դրան, գուցէ մի տարի առաջ Հայաստանը կործանման ենթարուէր: ... Հայաստանը անմիջականօրեն խիստ օգտուած է միմիայն Ռուսաստանից եկած ռազմամթերքից»[340]:

Ի դեպ Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունն իր հերթին ամեն կերպ ձգտում էր վերականգնել պաշտոնական հարաբերությունները Հայաստանի Հանրապետության կառավարության հետ: Օգտագործելով ռազմական ու տնտեսական օգնության ձևերը հրամանատարությունը Հայաստանի Հանրապետության վրա քաղաքական ներգործություն էր ունենում՝ շեշտելով հարաբերությունների վերականգնման անհրաժեշտությունը:

1919 թ. օգոստոսի 30-ին «Հատուկ խորհրդակցության» քաղաքական գրասենյակի պետ Դ. Զայկովսկուն ուղղած նամակում գնդապետ Մ.Զինկևիչը դժգոհում էր, որ գեներալ Պա-

---

[337] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 79.

[338] Նույն տեղում:

[339] Деникин А., Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3 / т. 4, т. 5, Вооруженные силы Юга России, с. 253.

[340] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, Թեհրան, 1982, էջ 167-168:

բախտնակին ժամանակին հրահանգ չստացավ փամփուշտների մի մասը Բաթումում պահելու վերաբերյալ: Դա կարող էր հետագայում ծառայել որպես ղսպանակ անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության վրա քաղաքական ճնշումը պահպանելու համար[341]: «Այնուամենայնիվ, - հաղորդում է գնդապետ Մ. Զինկևիչը, - ես դեռևս ունեմ բավական ազդեցիկ միջոցներ: Ինչ վերաբերում է ֆինանսականին, ապա ես մոտ ապագայում կներկայացնեմ Հայաստանին հատկացվելիք՝ Ռոստովի պետական բանկի կողմից երաշխավորված փոխառության նախագիծ: Դա մեզ համար շատ օգտակար կլինի: Բացել Հայաստանում ռուսական պետական բանկի մասնաճյուղ, որը կկրի ռուսական դրոշը և մեզ համար կունենա քաղաքական մեծ նշանակություն»[342]:

Սակայն, հակառակ ռուսական քաղաքական շրջանների սպասումների, Հայաստանի Հանրապետության իշխանությունները չէին դրսևորում շտապողականություն Ռուսաստանի հարավի հետ հարաբերություններ վերականգնելու խնդրում: Անշուշտ, դա ուներ իր որոշակի պատճառները: Ճիշտ է, պառլամենտի և կառավարության հայտարարությունները չունեցան շոշափելի նշանակություն «երկաթե օղակում» հայտնված Հայաստանին սատարելու համար, բայցևայնպես հանրապետության ղեկավարությունը շարունակում էր հույսեր փայփայել, օգնություն ակնկալել Փարիզի վեհաժողովից, Համաձայնության և այլ պետություններից: Հույսեր էին կապում նաև վերջերս Հայաստան մեկնած գնդապետ Ու. Հասկելի ու Ամերիկային տրվող Հայաստանի մանդատի հետ:

1919 թ. օգոստոսի 3-ին ֆրանսիական զինվորական հրամանատարությունը հեռագրով տեղեկացրեց Անդրկովկասի անգլիական զինվորական առաքելությանը և Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ա.Դենիկինին, որ ամսի 13-ին Բաթում է ժամանելու ամերիկյան գնդապետ Ու.Հասկելը: Հեռագրից երևում էր, որ միջգաշնակցային գլխավոր խորհուրդը որոշել է գնդապետ Ու. Հասկելին Ամերիկայի Միացյալ նահանգների, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Իտալիայի կառավարությունների անունից նշանակել գերագույն հանձնակատար Հայաստանում: Նրան միաժամանակ հանձնարարված էր ձեռնարկել բոլոր միջոցնե-

---

[341] ГА РФ, ф.446, оп.2, д.39, л.104.

[342] Նույն տեղում:

ը՝ Հայաստանին անհրաժեշտ օգնություն կազմակերպելու համար: Հայաստանում, Վրաստանում և Աղրբեջանում գործող Դաշնակցային կառավարությունների և զինվորական հրամանատարությունների բոլոր ներկայացուցիչները պարտավոր էին ամեն կարգի աջակցություն ցույց տալ Ու.Հասկելին: Հեռագրի վերջում ասվում էր, որ Կիլիկիան չի մտնում այն տարածքների ցուցակի մեջ, որոնց վրա տարածվում է գնդապետ Ու. Հասկելի իշխանությունը[343]: Օգոստոսի 14-ին Բաթումում Ու. Հասկելին դիմավորեցին Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս Գ. Եդիդարյանը և Հայոց ազգային խորհրդի նախագահ Աշոտ Մնդոյանցը: Հյուպատոսը Հայաստանի Հանրապետության կառավարության անունից բարի գալուստ մաղթելով Ու. Հասկելին «...ցանկություն յայտնեց որպէսզի կտրուկ միջոցներ ձեռք առնին վերջ տալու հայերին և Հայաստանին սպառնող վտանգին»[344]: Ու. Հասկելը պատասխանեց, որ բոլոր միջոցները կգործադրի խաղաղ ճանապարհով կարգավորելու Հայաստանի ծանր վիճակը և կաջակցի արագացնելու Հայաստանի մանդատը Ամերիկային տալու գործընթացը[345]: Օգոստոսի 21-ին Երևանում Ու. Հասկելին մեծ շուքով ու հանդիսավորությամբ դիմավորեցին Հայաստանի Հանրապետության կառավարության անդամները, պառլամենտականները և երևանցիները: Նա իր առաջին տեսակցության ժամանակ վարչապետ և արտաքին գործերի նախարար Ա. Խատիսյանին[346] հաղորդեց, որ Փարիզի վեհաժողովի կողմից նրան հանձնարարված է ստանձնել հայ ժողովրդի ներքին ու արտաքին ապահովությունը, պարենավորումը, ապահով ներգաղթը և այլն: Այնուհետև հայտնում է, որ երեք օր կմնա Երևանում՝ հանգամանորեն ծանոթանալու երկրի դրությանը և Հայաստանի Հանրապետության կառավարության պահանջներին, այնուհետև հավաքած տեղեկությունների ու եզրակացությունների մասին կհեռագրի Փարիզի վեհաժողովին, և հույս ունի, որ մինչև մանդատի հարցի լուծումը կկարողանա ապահովել Հայաստանի անվտանգությունը: Ա. Խատիսյանին տեղեկացրեց նաև, որ տասն օրից Հայաստան է գալու ամերիկյան գենե-

---

[343] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 90.

[344] «Նոր աշխատավոր», Թիֆլիս, 21 օգոստոսի, 1919:

[345] Նույն տեղում:

[346] 1919 թ. օգոստոսի 10-ին Հայաստանի պառլամենտը հաստատեց կառավարության նոր կազմը:

ռալ Ջեյմս Հարբորդը հանրապետության ընդհանուր վիճակը ուսումնասիրելու և պարզելու, թե որքան ամերիկյան զորք է հարկավոր ամբողջ Հայաստանը պաշտպանելու համար և այլն: Հաղորդեց նաև, որ Ամերիկայում քննարկվում է Հայաստանի մանդատի խնդիրը[347]: Զրույցի ընթացքում Ա. Խատիսյանը հանգամանորեն ներկայացրեց Ու. Հասկելին հանրապետության ներքին և արտաքին ծանր վիճակը, փաստարկեց, թե ինչպես թուրք զավթիչները երկու ամիս է տենդագին նախապատրաստվում են նոր ագետներ բերելու Հայաստանի Հանրապետության նեղ սահմաններում կուտակված հայության գլխին՝ ոտքի հանելով տեղի մահմեդական տարրերին: Զրույցի վերջում Ա. Խատիսյանը նշեց, որ այդ պատճառով Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր հայացքը սևեռել է դեպի Փարիզի վեհաժողովը և մասնավորապես դեպի Ամերիկան, որի ներկայացուցիչն է գնդապետ Ու. Հասկելը. «...Իբրև Պարիզի կոնֆերանսի Հնգի Խորհրդի առաքյալ եվ որպես Հայաստանի գերագույն կոմիսար այսօր ոտք է դնում Հայաստանի Հանրապետության հողի վրա»[348]: Հաջորդ օրը՝ օգոստոսի 22-ին, Հայաստանի Հանրապետության պառլամենտի 6-րդ նիստում նախագահի ողջույնի խոսքից հետո ելույթ ունեցավ Ու. Հասկելը: Օգոստոսի 27-ին Թիֆլիսում լույս տեսնող «Նոր աշխատավոր» լրագիրը տեղեկացնում է, որ պառլամենտի անդամները և ժողովուրդը «խանդավառ և երկարատև օվացիա սարքեցին գերագույն կոմիսարին»[349]: Ու. Հասկելը պառլամենտում մանրամասն խոսեց իր իրավունքների, լիազորությունների և իրականացվող խնդիրների մասին: Հավաստեց նաև, որ կանի ամեն ինչ՝ Հայաստանին օգնելու և նրա անվտանգությունը ապահովելու համար: Իր ելույթում կարևորեց նաև Հայաստանի Հանրապետությանը անհրաժեշտ զինական օգնությունը. «...Ես խնդրել եմ անգլիական ուժերին, որ ժամանակավորապես անգլիական զինվորները մնան մինչև փոխարինվելը, որպեսզի մանր ազգությունների միջև տեղի ունեցող մանր ընդհարումները հարթվեն: Երբ Պոլսում իմացա նրանց վերադառնալու կարգադրությունը, ես խնդրեցի անգլիական հրամանատարությանը և Կլեմանսոյին, առժամապես դադարեցնել: Այս բոպեին այդ հարցը հավանաբար քննվում է Փարիզում, և

---

347 ՀԱԱ, ֆ.Պ-200, ց. 2, գ. 37, թ. 1:

348 Նույն տեղում, թթ. 5-6:

349 «Նոր աշխատավոր», Թիֆլիս, 27 օգոստոսի, 1919:

ես մեծ հույս ունեմ, որ իմ խնդիրը կհարդվի, իսկ նրանց հեռանալու դեպքում էլ մեղ է մնում մասածել որեվէ զորքով փոխարինելու նրանց»[350]: *Ու.Հասկելը նշեց, որ կասկած չկա. Ադրբեջանը խախտել է անգլիական զինվորական հրամանատարության որոշած սահմանները: Պառլամենտին հավաստիացրեց, որ կմեկնի Բաքու և վերջ կտա նրանց ռազմական գործողություններին, իսկ եթե նրանք փորձեն չկատարել, ապա կդիմի կտրուկ միջոցների և անձնական պատասխանատվության կենթարկի կազմակերպիչներին ու ղեկավարներին*[351]:

Հայաստանի Հանրապետության իշխանությունները համոզվեցին, որ գնդապետ Ու. Հասկելին ուղարկել են լայն իրավասություններով, սակայն առանց որեէ ուժի, որը կարողանար կանգնեցնել թաթարների և թուրքերի ռազմական գործողությունները: Ա. Խատիսյանը գրում է. «Անգլիացիների գնալուց յետո մենք դտնուում ենք ամերիկացիների հովանաւորության տակ, բայց այդ հովանաւորութիւնը կրում է միայն պլատոնական բնաւորութիւն, որովհետև ամերիկացիք զրկված լինելով զինուորական ոյժից՝ ոչ մի հնարաւորութիւն չունեն ստիպելու թաթարներին և տաճիկներին կատարել իրենց կարդադրութիւնները»[352]: *Չնայած դրան, Հայաստանի Հանրապետության ղեկավար շրջանները մեծ խանդավառությամբ ընդունեցին Ու. Հասկելին՝ նրա հետ կապելով որոշ հույսեր: Ծանր կացության մեջ գտնվողը միշտ էլ կառչում է ամենաչնչին հույսին: Նկատի ունենալով ամերիկյան հանձնակատարին ցույց տրված ջերմ ընդունելությունը՝ կամավորական բանակի ղեկավարությունը կատարեց շտապ եզրակացություն՝ Հայաստանի Հանրապետության ամերիկյան կողմնորոշման մասին:*

Գնդապետ Մ. Զինկևիչը օգոստոսի վերջին տեղեկացրեց Ռուսաստանի հարավի «Հատուկ խորհրդակցության» քաղաքական գրասենյակի պետ Գ. Զայկովսկուն, որ ժամանակն է զգուշությամբ առաջ քաշել ռուսական կողմնորոշման հարցը՝ ի հակադրություն տիրող ամերիկյան կողնորոշման, որը խոչընդոտ է Ռուսաստանի հարավին: Մ. Զինկևիչը խորհուրդ է տալիս օգտագործել ամերիկացիների սխալները և Հայաստանի

---

[350] ՀԱԱ, ֆ.Պ-200, ց. 2, գ. 37, թ. 7: Տե՛ս նաև «Նոր աշխատավոր», Թիֆլիս, 27 օգոստոսի, 1919:

[351] Նույն տեղում:

[352] ԳԱԹ, ՀՅԴ արխիվ, Բոստոն, N4063:

Հանրապետության ղեկավարությանը ապացուցել, որ Ռուսաստանի հարավը գործնականում կարող է օգնել նրան նյութապես (հաց, դրամ, փամփուշտ և այլն) և ճնշում գործադրել հայերի թշնամիների վրա: Որոշ ժամանակ անց գնդապետ Մ. Զինկևիչը տեղեկացնում է, որ Հայաստանի կառավարության հետ Ռուսաստանի հարավի պաշտոնական շփումների վերականգնման խնդրում որոշակի դեր ունեցան հանրապետության քաղաքական լայն շրջաններում առաջացած խոր հուսախաբությունը, հիասթափությունը ամերիկյան քաղաքականության նկատմամբ: Դրա համար որոշակի առիթ է դարձել Հայաստանի գերագույն հանձնակատար Ու. Հասկելի աննրբանկատությունը, որը միանման ցավակցական ճառեր էր արտասանել Հայաստանի և Ադրբեջանի օրենսդիր մարմիններում[353]: Այդ առթիվ «Նոր աշխատավոր» լրագիրը տեղեկացնում է, որ Ու. Հասկելը Ադրբեջանում «...հերքեց այն կարծիքը, թե ինքը հայերի «փաստաբանն» է: Ես (Ու. Հասկելը - Գ.Պ.) բոլորովին մի տեսակ եմ վերաբերվում բոլոր հանրապետություններին»[354]: Լրագիրը այնուհետև հաղորդում է, որ Ու.Հասկելը շատ գոհ է մնացել Ադրբեջանի կառավարությունից: Նա հերքել է այն տեղեկությունները, որը հրապարակել է Հայաստանի Հանրապետության պառլամենտում: Բնութագրական է Ռոստովում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս Գրիգոր Զալխուշյանի գնահատականը գնդապետ Ու. Հասկելի երկդիմի գործունեությանը. «Հասկելը քաղաքագետ չէր: Նրանից սպասվեց շիտակ խոսք: Եվ նա խոսեց: Խոսեց Թիֆլիսում, խոսեց Բաքվում, վերջապես Երևանում. նրա երեք ճառերը անլուծելի հանելուկներ էին: Կարծես երեք օտար անձեր արտասանած լինեին: Մեկին մեջ նա վրացասեր էր, մյուսին՝ թրքասեր, երրորդին մեջ՝ հայասեր: Մենք ընկճված էինք: Եվ ահա գնդապետ Հասկելը սկսում է հերքել իր ասած ճառերը մեկը մյուսի հետևից՝ Բաքվի ճառը հերքում է Երևանում, Երևանինը՝ Բաքվում, վերջ ի վերջո գնդապետ Հասկելը սիրեց Բաքուն, ուր նրան տալիս էին շարունակ խնջույքներ, երեկույթներ, պարահանդեսներ: Հետզհետե Հասկելը դարձնում է իր երեսը մեզանից, հետզհետե գովում է մուսավաթականներին և չի հավանում միշտ անբավական, միշտ բողոքող, միշտ լալկան հա-

---

353 ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л.104.

354 «Նոր աշխատավոր», Թիֆլիս, 7 սեպտեմբերի, 1919:

ին»[355]: Գ. Զալխուշյանը իր դժգոհությունը հայտնելով Անդրկովկասում Համաձայնության երկրների ներկայացուցիչների նկատմամբ՝ հաղորդում է, որ նրանք ապրում էին շեն և հարուստ Թիֆլիսում. աղքատ, համեստ Երևանում նստել էին նրանց երկրորդ և երրորդ կարգի կցորդները: Նրանց միշտ տեսնում էին կիրակի և տոն օրերին Երևանի հրապարակում՝ շուկայում, ուր գորգեր էին գնում էժան գներով աղքատ մարդկանցից և արտահանում առանց մաքսի իրենց արտոնված ներկայացուցչական դիրքից օգտվելով»[356]:

Գնդապետ Մ. Զինկևիչը օգոստոսի վերջին գեներալ Դ. Զայկովսկուն տեղեկացնում է, որ Ամերիկան շարունակում է Անդրկովկասը, այդ թվում նաև Հայաստանը, Ռուսաստանի հարավից մեկուսացնելու Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը: Ու. Հասկելը Հայաստանի Հանրապետության կառավարությունից պահանջել է առանց իր գիտության հարաբերություններ չհաստատել գեներալ Ա.Դենիկինի հետ. «...Երբ ամերիկացիները տեսնում են, որ Հայաստանը համակրանքով է վերաբերվում Ռուսաստանին, - գրում է Մ. Զինկևիչը, - հայերին համոզում են, որ այլևս Ռուսաստանը մեծ տերություն չի լինի և պետք չէ նրա օգնության վրա հույս դնել»[357]: Գնդապետ Ու. Հասկելի առաջին քայլերը ցույց էին տալիս, որ մուտք գործելով Անդրկովկաս՝ Ամերիկան ձգտում էր կանխել Ռուսաստանի հարավի հաստատվելը երկրամասում: Ամերիկայի այդ ավանդական քաղաքականությունը շարունակվում է առ այսօր:

Թեև Ու. Հասկելը դեմ էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հարաբերություններ մեջ մտնի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության հետ, սակայն խորհուրդ էր տալիս Ա. Խատիսյանին օգտվել Ռուսաստանի հարավի օգնությունից[358]:

1919 թ. օգոստոսի վերջին Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական դրությունը էլ ավելի բարդացավ: Սեպտեմբերի 2-ին պառլամենտի 11-րդ նիստում վարչապետ և արտաքին գործերի նախարար Ա. Խատիսյանը հաղորդեց. «Հայրենիքը վտանգի մեջ է, ...անգլիական զինվորները հեռացել

---

355 ՀԱԱ, ֆ.Կ-4033, ց. 6, գ. 293, թ. 43:
356 Նույն տեղում, թ.41:
357 ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л.104.
358 ՀԱԱ, ֆ.Պ-276, ց.1, գ.101, թ.90, գ.183, թ.39:

ԼՆ»[359]: Օգոստոսի 28-ին Փարիզում Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի պատվիրակությունների նախագահները դիմել էին Դաշնակից պետությունների գերագույն խորհրդի նախագահ Ժ. Կլեմանսոյին նշելով, որ անգլիական զինվորական առաքելության դուրս բերումը կարող է տխուր հետևանքներ ունենալ Անդրկովկասի հանրապետությունների համար[360]: Այդ դիմումը չունեցավ որևէ դրական հետևանք: Մինչև սեպտեմբերի սկիզբը Անդրկովկասից հեռացավ անգլիական զինվորական առաքելությունը: Բաթումում կենտրոնացվեց միայն 10 հազար անգլիական զինվոր[361]:

Ու. Հասկելի խոստումը՝ հետաձգելու անգլիական զինվորների դուրս բերումը Անդրկովկասից, նույնպես արդյունք չունեցավ, որն անշուշտ Հայաստանի քաղաքական շրջաններում անվստահության մթնոլորտ ստեղծեց նրա նկատմամբ[362]: Ճիշտ է, նա ուներ մեծ լիազորություններ, սակայն չուներ ուժ, որ կարողանար կանգնեցնել թաթարներին և թուրքերին:

Ռուսաստանի հարավի հետ պաշտոնական հարաբերությունների կարգավորման գործում որոշակի դեր խաղաց նաև Ամերիկայի կողմից հայկական մանդատի ընդունման ձգձգումը, որը Հայաստանի քաղաքական շրջաններում Ամերիկայի նկատմամբ ավելի մեծ հիասթափություն առաջացրեց: Գեներալ Ա.Դենիկինը տեղեկացնում է. հայերին կոտորում են ողջ Անդրկովկասում, Անատոլիայում և Կիլիկիայում, իսկ գերագույն հանձնակատար Ու. Հասկելը իրեն դիմած հայերին պատասխանում է, որ «Հայաստանի մանդատի հարցը դեռևս լուծված չէ»[363]:

Այդ ժամանակ գեներալ Ջ. Հարբորդի գլխավորությամբ ամերիկյան առաքելությունը ճանապարհորդեց Դիարբեքիր-Էրզրում-Մուշ-Կարս-Երևան-Թիֆլիս երթուղիով՝ Հայկական հարցը էթնիկական, տնտեսական, ֆինանսական, ռազմական և այլ առումներով ուսումնասիրելու: Այդ կապակցությամբ Գ. Զալխուշյանը գրում է, որ պաշտոնական Ամերիկան գեներալ Ջ. Հարբորդին ուղարկել է Հայաստանը ուսումնասիրելու, հե-

---

359 «Նոր աշխատավոր», Թիֆլիս, 7 սեպտեմբերի, 1919:

360 «Յառաջ», Ե., 23 հոկտեմբերի, 1919:

361 ՀԱԱ, ֆ.Պ-276, g.1, գ.101, թ. 92, գ.183, թ.36:

362 ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 79.

363 ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 104. Деникин А., Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3 / т. 4, т. 5, Вооруженные силы Юга России, с. 251.

տազոտելու, որպեսզի կարելի լիներ որոշել մանդատի հարցը: Այդ հարցը. «...Առաջուց արդեն որոշված էր բացասական կերպով Ամերիկայի կողմից: Զորավարի հանձնարարությունը մի խաղ էր, կեղծիք, միանգամայն անպատվաբեր մեծ պետության համար: Երեք-չորս շաբաթվա մեջ զորավարը սլաքի պես ծայրից ծայր անցավ ամբողջ Անատոլիան, և մանդատի հարցը ջուրը ընկավ: Այսպես պաշտոնական Ամերիկան միայն վնասեց գործին: Նա գրդռեց միայն մեր ճաշակը: Տվեց մեզ հույսեր: Ավելի օգտակար էր մեզ համար, եթե ունայն սին հույսերով չտարվեինք և չօրորվեինք»[364]: Այսքանից հետո Հայաստանի Հանրապետության կառավարության շրջանակներում, բնականաբար, ուժեղացավ Ռուսաստանի հարավի հետ պաշտոնական հարաբերությունները վերականգնելու ձգտումը:

1919 թ. սեպտեմբերի 17-ին Անդրկովկասի դաշնակցային բարձրագույն հրամանատարությանը կից Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարի ներկայացուցիչը Կամավորական բանակի վարչության պետին ուղղած հույժ գաղտնի նամակ-զեկույցում հաղորդում էր, որ Հայաստանի Հանրապետությունում նկատվում է ռուսական կողմնորոշման ուժեղացում: Հայաստանի Հանրապետության քաղաքական շրջանները անթաքույց բախվում են իրականության հետ, գիտակցում երկրի անվտանգության, անկախության գործընթացի իրականացման դժվարությունը, բարդությունը և հարկադրաբար գիմում են այս կամ այն եվրոպական հզոր տերության, Ամերիկային ակնկալելով նրանց օգնությունը: Սակայն Հայաստանի Հանրապետության իշխանությունները ակնհայտորեն արտահայտեցին իրենց հիասթափությունը նրանց նկատմամբ և հակվեցին դեպի «...Ամենահավատարիմ հովանավորն ու պաշտպանը[365] (Ռուսաստանը): Եկել է հայերի համակրանքը շահելու պահը: Պետք է այն օգտագործել նրանց հասկացնելու, որ Ռուսաստանը միշտ եղել է հայերի միակ անշահախնդիր պաշտպանը և այդպիսին կլինի նաև ապագայում»[366]:

1919 թ. օգոստոսին Հայաստանի Հանրապետության կառավարության հանձնարարությամբ Եկատերինոդար մեկնեց հայկական բանակի գլխավոր շտաբի պետ գնդապետ Մ. Զինկեիչը՝ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրա-

---

[364] ՀԱԱ, ֆ.Կ-4033, ց.6, գ.293, թ.43-44:
[365] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 96-98.
[366] Նույն տեղում, թ. 96:

մանատարության և «Հատուկ խորհրդակցության» հետ հարաբերությունները կարգավորելու խնդրով»[367]: Ինչպես հայտնի է, գնդապետ Մ. Զինկևիչը ռուսական բարձրաստիճան սպա էր, որ դարձել էր Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետ: Հանրապետության ղեկավար շրջանները գնացել էին այդ դիվանագիտական քայլին նրան էին ուղարկել նկատի ունենալով, որ գնդապետն ուներ մեծ փորձ ու հարուստ գիտելիքներ, որոնք կարող էին օգտակար լինել հայկական բանակին: Բացի դրանից այդ քայլով ամրապնդվում էր կապը Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության հետ: Փաստորեն, Մ. Զինկևիչը հանդես էր գալիս որպես գենիկինյան բանակի ոչ պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետությունում:

Նոր պայմաններում, օգտվելով Հայաստանի Հանրապետությունում ստեղծված բարենպաստ իրավիճակից, ռուսական կողմը գնդապետին նշանակեց հանրապետության կառավարությանը կից իր պաշտոնական ներկայացուցիչը: Գեներալ Ա.Դենիկինը տեղեկացնում է, որ օգոստոսին Եկատերինոդար ժամանեց հայկական բանակի գլխավոր շտաբի պետ գնդապետ Մ. Զինկեիչը: Նա Երևան վերադարձավ որպես Ռուսաստանի հարավի զինված ուժերի ներկայացուցիչ[368]: Վահե Արծրունին գրում է, որ «Կսպասուէր, որ ան գար (Մ. Զինկևիչ - Գ.Պ.) եւ նորէն շարունակէր իր ծառայութիւնը Հայաստանի Հանրապետութեան: Եկաւ, բայց ոչ ակնկալուած նպատակովը: Խորհրդարանի շենքին մէկ սենեակէն ծայր տուաւ խլացուցիչ երգ մը: Խորհրդարանի փոխնախագահ Ս.Տիգրանեան եւ քանի մը ուրիշները աճապարեցին դէպի հոն, ստուգելու համար, թէ ինչ էր պատահած: Հասնելով դրան վրայ շփոթուած տեսան ահագին թուով սպաներ, որոնք ոգեշունչ կերպով կերգէին «Բոժէ, ցարեա խրանի» («Տէր, պահէ Արքան») ցարի երգը: Ի զուր Ս.Տիգրանեանը սաստեց եւ Խորհրդարանի անունով սպառնաց հայ սպաներուն: Ընդհակառակն, քանի ան աւելի լուրջ բնոյթ տուաւ իր սպառնալիքին, սպաներն աւելի ոգեւորուած երգեցին ցարական պաշտօնական երգը: Ինչ էր պատահած: Զինգեւիչ այն օրը կսպասուէր Երեւանում: Հայ սպաները գիտէին, որ ան պիտի գար, ան ալ ոչ որպէս իր մասնաւոր ա-

---

[367] РГАСПИ, ф. 71, оп. 35, д. 195, л. 205-206:

[368] Деникин А., Очерки русской смуты: В 3 книгах. Книга 3, т. 4, т. 5, Вооруженные силы Юга России, с. 253.

ռաքելութիւնը կատարած, իր ղործին վերադարձող հայկական պաշտօնեայ մը: Մեր կառավարութենէն անկախ, անոնք գիտէին, որ ան կուգար որպէս զօրավար Դէնիքինի դիւանագիտական ներկայացուցիչը Հայաստանի կառավարութեան մօտ: Հայ կառավարութիւնը անտեղեակ էր այն բանէն, մինչդեռ հայ սպայութիւնը գիտակցօրէն անոր առաքելութիւնը կը տոնէր՝ դեռ ան չժամանած»[369]:

1919 թ. օգոստոսի 28-ին Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարի օգնական և ռազմական վարչության պետ գեներալ Ա. Լուկոմսկու ստորագրությամբ գնդապետ Մ. Զինկևիչին հանձնվել էր N 3703 վկայական, որում ասվում էր, որ նա գործուղվում է Երևան որպես Հայաստանի Հանրապետության կառավարությանը կից Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարի զինվորական ներկայացուցիչ: Նա լիազորված է Հայաստանի Հանրապետության կառավարության հետ բանակցություններ վարել բոլոր հարցերով[370]: Սեպտեմբերի 26-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը Նախարարների խորհուրդ հանձնեց գնդապետ Մ. Զինկևիչի վկայականը[371]: Հաջորդ օրը սեպտեմբերի 27-ին, Նախարարների խորհուրդը հայտնեց իր համաձայնությունը[372]: Այդ մասին տեղեկացվեց նաև գեներալ Ա.Դենիկինը[373]: Հոկտեմբերի սկզբներին գնդապետ Մ. Զինկևիչը իրեն ուղեկցող հինգ սպաների և ենթասպաների հետ վերադարձավ Երևան[374]: Գեներալ Ա.Դենիկինն իր շնորհակալությունը հայտնեց Հայաստանի Հանրապետության իշխանություններին Ռուսաստանի հարավի ներկայացուցիչ գնդապետ Մ. Զինկևիչին ընդգծված հանդիսավորությամբ դիմավորելու համար[375]:

Ա. Խատիսյանին իր վկայականը հանձնելու ժամանակ Մ. Զինկևիչը հայտնեց, որ

---

369 Վահէ Արծրունի, նշված. աշխատ., էջ 370:
370 ՀԱԱ, ֆ.Պ-200, g.1, գ. 164, թ. 54; ֆ. 276, g.1, գ.188, թ.1,3:
371 Նույն տեղում, թ.53; ֆ. 276, g.1, գ.188, թ.2:
372 Նույն տեղում, ֆ.Պ-199, g.1, գ.142, թ. 72, գ. 43, թ. 215; ֆ. 200, g.1, գ. 22, թ. 227:
373 ГА РФ, ф. 446, оп. 2, д. 34, л. 96.
374 ՀԱԱ, ֆ.Պ-200, g.1, գ.164, թ. 53; ֆ. 276, g.1, գ.188, թ. 2:
375 Деникин А., Очерки русской смуты: В 3 книгах. Книга 3, т.4, т.5, Вооруженные силы Юга России, с. 253.

1. Դեներալ Ա.Դենիկինը հարգանքով է վերաբերվում հայությանը, որը բարյացակամ վերաբերմունք ունի ռուսների եւ Ռուսաստանի նկատմամբ:
2. Գլխավոր հրամանատարին հայտնի են հայերի ներդրումը 1918 թ. Կովկասյան ռազմաճակատից ռուս զինվորների ապահով հայրենիք հեռանալու ժամանակ:
3. Ա.Դենիկինին հայտնի է նաև Հայաստանի Հանրապետության ներքին ու արտաքին ծանր իրավիճակը[376]:

Ռուսաստանի հարավի զինվորական ներկայացուցիչը իր վկայակոչը հանձնեց այն ժամանակ, երբ Երևանում ընթանում էր ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովը (27 սեպտեմբեր - 2 նոյեմբեր): Հանրապետության արտաքին քաղաքական խնդիրներին անդրադառնալիս Ընդհանուր ժողովը որոշեց. «Ա. Հայաստանի արտաքին քաղաքականութեան առանցքը պիտի կազմէ միացեալ Հայաստանի անկախութիւնը օտար պետութիւններին ճանաչել տալու եւ ապահովելու մտահոգութիւնը: Գ. Դաշնակից պետութիւններու հանդէպ պէտք է պահել մինչև այժմ եղած բարեկամական հարաբերութիւնը: Դ. Ներկա քաղաքական-տնտեսական-քաղաքակրթական յանդամանքներուն մէջ Ընդհ. ժողովը ցանկալի կհամարէ որ դաշնակից պետութիւններու յատուկ մանդատով ժամանակաւորապէս հոգատարութեան տակ առնուի Հայաստանը»[377]:

Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցը քննարկելիս Ընդհանուր ժողովը կարևորեց բարեկամական հարաբերությունների պահպանումը Ռուսաստանի հետ: 1919 թ. հոկտեմբերին Մ. Զինկևիչը Անդրկովկասում գլխավոր հրամանատարի ներկայացուցչին ուղղած զեկուցագրում տեղեկացնում է, որ երկու ամիս առաջ Հայ հեղափոխական դաշնակցությունը գրեթե միաբան էր Ամերիկայի հովանավորությունը ընդունելուն, իսկ այժմ հիասթափված է, դա մեծ հեռանկարներ է խոստանում Ռուսաստանին[378]: Ժողովը որոշեց. «Ե. Լիակատար բարեացակամ վերաբերում ունենալով հանդերձ դեպի ռուս ժողովուրդն ու Ռուսաստանի քաղաքական վերածնութիւնը, մեր

---

[376] ГАРФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 95-96.
[377] Քաղվածքներ ՀՅԴ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից, Ե.,1920, էջ 5-6; Տե՛ս նաև Հակոբյան Ա., ՀՅԴ Ընդհանուր ժողովը, Ե., 1994, էջ 30-32:
[378] ГАРФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 95.

դիւանագիտութիւնը պետք է դիմադրէ Ռուսաստանում գոյութիւն ունեցող կառավարութիւնների փորձերուն տարածելու Ռուսական իշխանութիւնը նախկին Ռուսահայաստանի վրա, և առոպէսով անհնարին դարձնելու Հայաստանի ամբողջացման գործը»[37] (ընդգծումը մերն է, - Գ.Պ.):

Ռուսաստանի հարավի հետ պաշտոնական հարաբերությունների վերականգնումը նոր թափ հաղորդեց հայ գաղթականության, Կամավորական բանակում ծառայող հայ զինվորների հայրենադարձության կազմակերպմանը, հայկական բանակին զենքի, զինամթերքի մատակարարմանը, ինչպես նաև առևտրատնտեսական հարաբերությունների հաստատմանը:

Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ պաշտոնական հարաբերությունները վերականգնելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը դարձյալ վարեց նրա նկատմամբ խիստ զգուշավոր քաղաքականություն. փորձում էր դիվանագիտական հնարքներով խուսափել Կամավորական բանակի հետ քաղաքական առճակատումներից և վերջինիս օգնությամբ ապահովել երկրի անվտանգությունը: Բանն այն էր, որ Ա.Դենիկինը հավատարիմ իր «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական ծրագրին, պայքարում էր վերականգնել նախկին Ռուսական կայսրության տարածքները 1914թ. սահմաններով, իսկ Հայաստանի Հանրապետությունը անդրդվելի էր պահպանելու իր անկախությունը:

1919 թ. դեկտեմբերի 6-ին Փարիզում ռուսական «Հատուկ քաղաքական խորհրդակցության» և նրա դեսպանական խորհրդի հրավերով տեղի ունեցավ Ա. Ահարոնյանի և Հ. Օհանջանյանի հանդիպումը Դ. Զայկովսկու հետ: Հանդիպման նպատակը դարձյալ «ռուսներին միանալ ցանկացող ազգերի» ժողովներին մասնակցության հարցն էր: Ա. Ահարոնյանը նրան պատասխանեց, որ անկախ Հայաստանը «...Թուրանական ծովի մէջ միայն եւ միայն Ռուսաստանն ունի որպէս յենարան: Բայց եւ ստիպուած ենք չմասնակցել «ռուսներին միանալ ցանկացող ազգերի» ժողովներին, քանի որ մենք այսուհետեւ անկարող ենք Ռուսաստանին միանալ այն պարզ պատճառով, որ մենք արդէն իսկ միացած ենք Թիւրքաց Հայաստանին եւ այդ հիմքով է որ պաշտպանել ենք ու պաշտպանում ենք մեր

---

[37] Քաղվածքներ Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից, էջ 5-6; Տե՛ս նաև Հակոբյան Ա., ՀՅԴ Ընդհանուր ժողովը, էջ 30-32:

դատը Conference-ի առաջ: Դրեթէ ամբողջ մի տարի մեզ Թիւրքաց Հայաստանին միացած յայտարարելուց յետո, այժմ գալ եւ մենակ մասնակցել այդպիսի ժողովի, դա կը լինէր համազօր վերջին պահուն մեր հայրենիքի խոշոր մասից, Թիւրքաց Հայաստանից հրաժարելուն, ինչ որ դուք, Պ.Զայկովսկին, մեզնից չէք պահանջի եւ մենք էլ յանձն առնել չենք կարող: Մենք այսուհետեւ կարող ենք եւ պէտք ենք դաշնակից լինել Ռուսաստանին, բայց ոչ թէ միանալ նրան»[380]:

Խնդրի շուրջ ռուսական քաղաքական շրջաններում գոյութիւն ունեին տարակարծութիւններ: 1919 թ. դեկտեմբերի 13-ին Փարիզից Ա.Դենիկինին ուղղած նամակում ռուսական դեսպանական խորհրդի անդամ Բ. Սավինկովը գրում է. Կովկասի «...նշանակութիւնը մեզ համար պարզ է, այն առանձնապես մեծ է, քանի դեռ բոլշեւիկների հետ պայքարի մեջ ենք և Կամավորական բանակին անհրաժեշտ է թիկունքն ապահովել: Մենք Կովկասում դեռևս հավատարիմ բարեկամներ ունենք հանձինս հայերի, որոնցից, սակայն, մենք օգտվել չկարողացանք և որոնց մենք աստիճանաբար կորցնում ենք: Հայաստանի հետ (որին աջակցում է Ամերիկան) անհրաժեշտ է բանակցությունների մեջ մտնել և հասնել համաձայնության, խոստանալով լայն ինքնավարություն. Հայաստանի հետ համաձայնությունը կհանգեցնի համաձայնության Ադրբեջանի հետ, իսկ Վրաստանը, որը նույն դերն է խաղում, ինչ Էստոնիան Հյուսիսում, վերջինիս նման չի կարող մեզ միայնակ դիմագրավել»[381]:

Այսպիսով, գալիս ենք այն համոզման, որ թե՛ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և թե՛ Ռուսաստանի հարավը, ելնելով տարբեր դրդապատճառներից, ձգտում էին վերականգնել պաշտոնական հարաբերությունները: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ելնելով «երկաթե օղակում» հայտնված երկրի անվտանգությունից և այլ պատճառներից՝ 1919 թ. օգոստոսին վերականգնեց պաշտոնական հարաբերությունները Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ: Դեռ 1919 թ. հունվարին Եկատերինոդարում էր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներ-

---

[380] Սիարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 32:

[381] ГАРФ, ф. 5827, оп. 1, д. 160, л.1-2; Տե՛ս նաև Россия антибольшевитская из белогвардейских и эмигрантских архивов, М., 1995, с. 353.

կայացուցիչ Հովհաննես Սաղաթելյանը, որը, սակայն, լիազորված չէր քննարկել քաղաքական հարցեր Ռուսաստանի հարավի հետ:

Ռուսաստանի հարավն էլ «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» ստեղծելու հեռահար նպատակներից ելնելով՝ ձգտում էր վերականգնել պաշտոնական հարաբերությունները Հայաստանի Հանրապետության հետ՝ իրագործելու Անդրկովկասի վերամիավորումը Ռուսաստանի հարավին: Մ. Զինկևիչի նշանակումը Ռուսաստանի հարավի զինվորական ներկայացուցիչ արդեն նշանակում էր նրանց միջև պաշտոնական հարաբերությունների վերականգնում:

GEGHAM PETROSYAN
EREVAN STATE UNIVERSITY

MILITARY-POLITICAL STATE OF THE REPUBLIC OF ARMENIA. RESTORATION OF RELATIONS WITH THE SOUTH OF RUSSIA (JUNE-DECEMBER, 1919)

Summary

After accepting the Declaration of the Independence of the United Armenia the official relations with the general command of the Voluntary Army were cooled because A.Denikin did not want to recognize the Independence of Armenia which contradicted his strategy of the restoration of the Russian Empire.

In the middle of 1919 the international state of the Republic of Armenia became aggreviated thus serious threats appeared. The Republic of Armenia, appearing within "the iron" ring, had looked for the outside support, trying to centralize its diplomatic efforts to restore relations with the South of Russia.

In that respect General A.Denikin wrote that "in September "the orientation" of the Republic of Armenia again changed and consequently changed its position towards us". On the one hand, A.Denikin wanted to restore the former territories of the Russian

Empire within the boundaries of 1914. on the other hand. the Republic of Armenia wished to preserve its independence.

In January 1919 the diplomatic representative of the Republic of Armenia Hovhannes Saghatelyan arrived in Ekaterinodar but he had not been commissioned to discuss political questions with the head-quarter of the South of Russia.

The government of the Republic of Armenia and the head-quarter of the South of Russia tried to restore their diplomatic relations. General A.Denikin wrote: "It is necessary to start negotiations with Armenia (which is supported by the United States) and achieve an agreement through promising wide autonomy. The agreement with Armenia will result in the agreement with Azerbaijan. As far as it concerns Georgia, which plays the same role as Estonia in the North, will not be able to oppose us alone, like the latter."

In August 1919 the Republic of Armenia restored official relations with the head-quarter of the military forces of the South of Russia (together with "Special counsel"). After the establishment of the official relations between them the government of the Republic of Armenia again carried out cautious policy, trying to escape political confrontation with the Voluntary Army and protect the security of the country by its help.

In its turn, proceeding from the perspective of the creation of "United, indivisible Russia," the South of Russia desired to establish official relations with the Republic of Armenia in order to integrate Transcaucasia with the South of Russia.

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՐՑԸ 1920 Թ. ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ՀԵՏՈ

1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սևր արվարձանում հաշտության պայմանագիր կնքվեց Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած Դաշնակից պետությունների և պարտված Օսմանյան կայսրության միջև: Սևրի պայմանագրի համաձայն Հայաստանի և Թուրքիայի վերջնական սահմանագիծը որոշելու էր ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը և այն անցնելու էր Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի, Վանի վիլայեթներով[382]: Սակայն այդ պայմանագիրը արդեն ուշացած էր, և նրա պայմանները իրականություն դարձնելու հնարավորություն չկար: Ու. Չերչիլը Սևրի պայմանագրի մասին նշում էր. «13 ամիս նախապատրաստվող այդ փաստաթուղթը հնացավ ավելի շուտ, քան պատրաստ էր»[383]:

Պայմանագիրը խանդավառությամբ ընդունվեց հայերի կողմից, քանի որ Հայաստանին տրվեցին հետագա զարգացման համար անհրաժեշտ կենսատարածքներ և ծովային ելք: Բայց, միևնույն ժամանակ հայկական ընդարձակ տարածքներ թողնվեցին Թուրքերին, այդ թվում՝ Կիլիկիան, ուր վերադարձել և նոր կյանք էին սկսել տասնյակ հազարավոր հայեր՝ հավատալով Ֆրանսիայի խոստումներին:

Հայ ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբար փաշային թույլ չտրվեց ստորագրել Սևրի պայմանագիրը: Ազգային պատվիրակության նախագահը մամուլին տված հայտարարության[384] և կաթողիկոսին ուղարկած նամակի[385] մեջ պարզաբանեց, որ ինքը հրավիրված է եղել ստորագրելու, սակայն թուրքական պատվիրակության բողոքի հետևանքով վերջին պահին որոշվել է, որ ինքը չստորագրի, քանի որ ներկայացնում էր արևմտահայերին և ոչ թե որևէ կազմակերպված պետության:

---

382 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., 1972, էջ 676-677:
383 Черчиль В., Мировой кризис, М.-Л., 1932, с. 258.
384 «Վերածնունդ», 1920, օգոստոսի 21, թիվ 32-33, էջ 523:
385 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 224, թ. 2:

Պ. Նուբարը, չստորագրելով պայմանագիրը, ազատություն ոտացավ բողոքելու այն հոդվածների դեմ, որոնք չէին համապատասխանում հայկական շահերին: Արդեն 1920 թ. օգոստոսի 14-ին Պ. Նուբարը բողոքի նոտա հղեց Խաղաղության վեհաժողովի նախագահ Ֆ. Միլերանին՝ Կիլիկիան և Խարբերդը Թուրքերին թողնելու առթիվ: Նա պահանջեց այդ տարածքները հանձնել Ֆրանսիայի հովանավորությանը և նշեց, որ Հայ ազգային պատվիրակությունը չի դադարելու պահանջել այդ տարածքները[386]:

Պ. Նուբարի բողոքի նոտան անուշադրության մատնվեց: Հետագա դեպքերը ողբերգական զարգացումներ ունեցան մեր ժողովրդի համար: Հզորացած քեմալական Թուրքիան որոշեց պատերազմի միջոցով լուծել Հայկական հարցը: Թուրքերը ձեռք բերեցին նաև հզոր դաշնակից՝ հանձինս համաշխարհային հեղափոխության անիրական հովերով տարված բոլշևիկյան Ռուսաստանի: 1920 թ. հայ-թուրքական պատերազմում Հայաստանի պարտությունը, փաստորեն, ոչ միայն նախապայմաններ ստեղծեց Սևրի պայմանագրի հայանպաստ հոդվածների չիրականացման համար, այլև Հայաստանի տարածքը սահմանափակեց Ալեքսանդրապոլի նվաստացուցիչ պայմանագրի հաստատած սահմաններով:

Այդ պայմաններում ավելի էր մեծանում Կիլիկիայում Ֆրանսիայի հովանավորության ներքո ինքնավարություն ձեռք բերելու և արևմտահայության բեկորներին այնտեղ համախմբելու ձգտումը: Այսպիսով, Պ. Նուբարը որոշեց շարունակել Ազգային պատվիրակության գործունեությունը և պաշտպանել Կիլիկիայի հայության շահերը:

Իսկ Կիլիկիայում այս ընթացքում տեղի էին ունենում ողբերգական իրադարձություններ: Ֆրանսիան պատերազմի տարիներին, երբ փոքր ժողովուրդների օժանդակության կարիքն ուներ, հայերին ինքնավարություն էր խոստանում, սակայն պատերազմի հաղթական ավարտից հետո փոխեց իր քաղաքականությունը:

Կ. Պոլսի ֆրանսիական «Բոսֆոր» պարբերականի խմբագիր Միշել Փայարեսը իր "Le Kemalisme Devante les Allies" գրքում վկայում է, որ պատերազմից հետո Ֆրանսիայի բարձրաստիճան քաղաքացիական և զինվորական պաշտոնյա-

---

[386] Նույն տեղում, թ. 12: Նաև՝ «Հայրենիք» օրաթերթ, 1920, հոկտեմբեր 6, թիւ 2566:

ները իրեն խորհուրդ էին տալիս պաշտպանել թուրքերին, քանի որ ըստ նրանց «հայերն ու յոյները պիտի դառնան ֆրանսացիներու ամէնէն ուժեղ մրցակիցները Մերձաւոր Արևելքի առեւտրական հրապարակին վրայ»[387]:

Ֆրանսիան նաև դժգոհ էր Կիլիկիան Հայաստանին միացնելու հայերի ձգտումներից և այդ տնտեսական ու քաղաքական դրդապատճառներից ելնելով սկսեց վարել հակահայկական քաղաքականություն: Սկզբնական շրջանում, երբ Կիլիկիան գրավվեց ու պահվում էր Հայկական լեգեոնի ուժերով, Ֆրանսիան բարյացակամ էր հայերի հանդեպ, սակայն 1919 թ. աշնանից, երբ ֆրանսիական զորքերը մտան այդ երկրամաս, սկսվեց Հայկական լեգեոնը ցրելու գործընթացը և թուրքերին սիրաշահելու քաղաքականությունը:

Հետաքրքիր է նշել, որ դեռևս 1918 թ. վերջերին, Հալեպում, Հայ Ազգային միության կազմակերպած երեկույթում անգլիական նշանավոր պետական գործիչ Մ. Սայքսը նախազգուշացրեց. «Եթէ դուք հայերդ ձեր սեփական ուժերով Կիլիկիոյ գրաւումը, որպէս կատարուած իրողութիւն, դաշնակիցներուն առջեւ չի դնեք, մի սպասէք, որ անոնք այդ երկիրը ձեզ պիտի թողուն»[388]: Սակայն մեր ժողովուրդը չհետևեց այդ խորհրդին և սպասեց մինչև վերջնական հիասթափություն ապրելը:

Ինչպես նշում է հայ կամավորներից մեկը, չնայած ֆրանսիացիները խիստ հսկողություն էին սահմանել Հայկական լեգեոնի վրա և հայերի դեմ անօրինականություններ էին թույլ տալիս, սակայն իրենք համակերպվում էին, քանի որ «չհնազանդուելու պարագային ապստամբ պիտի նկատուէինք ու եղած դեզեցիկ խոստումները ի դերեւ ելլալու պատճառ դառնայինք»[389]:

Հայերի հանդեպ վերաբերմունքն ավելի վատացավ, երբ Սիրիայի և Կիլիկիայի ֆրանսիական բարձր կոմիսարի պաշտոնում Ժ. Պիկոյին փոխարինեց գեներալ Գուրոն: Արդեն 1919 թ. դեկտեմբերի 17-ի հրամանով Ֆրանսիայի ռազմական նախա-

---

387 Ամատունի Յ., Մեր յարաբերութիւնները դաշնակիցներուն հետ, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1941, թիւ 7 (223), էջ 101:

388 Նաթանեան Մ., Նիւթեր ժամանակակից պատմութեան համար: Ինչ պատրուակով Կիլիկիան կրկին թուրքերուն տրուեցաւ, «Պայքար», Բոստոն, 1950, էջ 81:

389 Թաթարեան Մ., Կամաւորի մը յուշերը, Անթիլիաս, 1960, էջ 22:

բարը Արեւելքի ֆրանսիական զորքերի հրամանատարին արգելեց Հայկական լեգեոնում երկու նոր գումարտակներ կազմավորելու գործընթացը ե. առաջարկեց թողնել միայն երկու հայկական գումարտակ, դրա փոխարեն մեծացնել սիրիականը և կազմել մեկ գումարտակ թուրքերից ու քրդերից[390]: Հալեպում Հայկական լեգեոնին կամավորագրվելու համար դիմել էին 2.000 երիտասարդներ, որոնցից 750-ը ոտքով Ադանա էին տեղափոխվել, սակայն նրանց չզինվորագրեցին, նույնը եղավ Կ. Պոլսից ուղարկված 600 կամավորների ճակատագիրը[391]:

1920 թ. ապրիլի 22-ին Արևելքի բանակի ընդհանուր հրամանատարը հեռագրեց Կիլիկիայի շրջանի հրամանատարին երկու հայկական գումարտակները վերածել մեկի: Իսկ մայիսի 1-ին Արեւելքի ընդհանուր հրամանատարը հրահանգեց սկսել հայկական լեգեոնի վերջին գումարտակի լուծարումը[392]: Զորացրումը հետաձգվեց միայն այն պատճառով, որ հայկական լեգեոնը գտնվում էր Ջիհանում շրջապատված թշնամու կողմից և կտրված Ադանայից: Օգոստոսի 16-ին Կիլիկիայի հրամանատարը Ընդհանուր հրամանատարին լեգեոնի լուծարման վերջնաժամկետ առաջարկեց սեպտեմբերի 1-ը[393]:

Այսպիսով, ֆրանսիացիները լուծարեցին Հայկական լեգեոնը ամենավճռական պահին, երբ դրա կարիքը Կիլիկիայի հայությունը ամենից շատ էր զգում: Ֆրանսիան անզեն հայությանը հանձնեց քեմալական ջարդարարների հոշոտմանը դրժելով իր բոլոր խոստումները:

Դեռևս 1920 թ. հունվարին Պ. Նուբարը հրապարակել էր մի աշխատություն, ուր պարզաբանում էր Կիլիկիայի նախասլատերազմյան բնակչության էթնիկական կազմը: Ցույց էր տալիս, որ Կիլիկիայում մինչև պատերազմը բնակվում էին 407.000 հայեր ընդդեմ 294.762 մահմեդականների, որոնցից միայն 131.000-ն էր թուրք: Իսկ զինադադարից հետո Պ. Նուբարի տվյալներով այնտեղ էին վերադարձել 130.000 հայեր[394]:

---

390 Գարամանուկեան Ա., Հայկական լեգէոնը պատմական, իրաւական ու քաղաքական հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր, Պէյրութ, 1974, էջ 85:

391 Լազեան Գ., Հայաստանը եւ Հայ Դատը (վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 193:

392 Գարամանուկյան Ա., նշվ. աշխ., էջ 87:

393 Նույն տեղում, էջ 88:

394 Nubar Boghos, The Pre-war Population of Cilicia, London, 1920.

Ֆրանսիական իշխանությունները լուրջ քայլերի չդիմեցին Կիլիկիայում դլուխ բարձրացնող քեմալական ուժերին դսպելու համար, որոնք հետզհետե այնքան հանդուգն դարձան, որ հարձակումներ էին կատարում ոչ միայն հայերի, այլև ֆրանսիական զորամասերի վրա:

Քեմալական ուժերը 1920 թ. սկզբին հարձակումներ սկսեցին Մարաշի վրա, ուր բնակվում էին 20.000 հայեր: Տեղի 3.000-ոց ֆրանսիական կայազորը և 400 հայ լեգեոնականները արժանի հակահարված տվեցին թուրքերին: Երբ թուրքերը սպիտակ դրոշով ներկայացան ֆրանսիացիներին և հաշտություն խնդրեցին, ֆրանսիական զորքի հրամանատարը նրանց տեղեկացրեց, որ իրենք հեռանալու են քաղաքից: Անպաշտպան թողնելով հայերին և չտեղեկացնելով, որ քաղաքը հանձնում են թուրքերին, 1920 թ. փետրվարի 12-ի գիշերը ֆրանսիական զորքը հեռացավ Մարաշից[395], իսկ թուրքական յաթաղանին զոհ գնացին 13.000 հայեր:

1920 թ. ապրիլի 1-ից մինչև 1921 թ. փետրվարի 8-ը քեմալականներին հաջող դիմադրություն ցույց տվեց Այնթափը, որի շնորհիվ տեղի 17.000 հայերը փրկվեցին կոտորածից[396]:

1920 թ. մարտից մինչև հոկտեմբերի 15-ը հերոսական ինքնապաշտպանություն կազմակերպեցին Հաճնի հայերը: Ֆրանսիացիները օգնություն չուղարկեցին, իսկ հայ կամավորներին թույլ չտվեցին գնալ Հաճն: Ի վերջո, թուրքերը գրավեցին քաղաքը և կոտորեցին 10.000 մարդու, փրկվեցին միայն մի քանի հարյուր հայեր, որոնք ճեղքեցին պաշարումը և հասան Սիս[397]:

Սեփական ուժերի վրա հենված՝ Կիլիկիան թուրքերից փրկելու փորձ էր 1920 թ. օգոստոսի 4-ին Ադանայում քրիստոնյա համայնքների ներկայացուցիչների կողմից երկրամասի ինքնավարության հռչակումը Ֆրանսիայի հովանու ներքո: Մ. Տամատյանի գլխավորությամբ կազմվեց կառավարություն, սակայն քայլն ուշացած էր, և հաջորդ օրը ֆրանսիական իշ-

---

[395] Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965, Խմբագիր՝ Գ. Ահարոնեան, Պէյրութ, 1965, էջ 841:
[396] Նույն տեղում, էջ 855-867:
[397] Նույն տեղում, էջ 875-887:

խանությունները ցրեցին այն, իսկ կազմակերպիչներին աքսորեցին[398]:

Նրանսիան դրանից հետո ավելի ուժեղացրեց ճնշումը հայերի վրա, ցրեց Հայկական լեգեոնի վերջին գումարտակը, հայկական միլիցիան, ինչպես նաև Հաճնին օգնելու նպատակով կազմավորված կամավորական գունդը, իսկ քաղաքական պաշտոնները Սիրիայի և Կիլիկիայի բարձրագույն կոմիսար գեներալ Գուրոն հանձնեց Թուրքերին: Գուրոն դիմեց Ֆրանսիայի արաղործնախարարությանը, որպեսզի Թույլատրեն Կիլիկիան հանձնել Թուրքերին, սակայն նրան հրամայեցին դեռևս չդատարկել երկրամասը[399]:

Այսպիսին էր իրավիճակը, երբ Պ. Նուբարը որոշեց Թուրքական գերիշխանության տակ Ֆրանսիայի հովանավորությամբ ինքնավարություն ստեղծել Կիլիկիայում: Այդ նպատակով մտադիր էր Կիլիկիա ուղարկել զորավար Անդրանիկին, որպեսզի վերջինս կազմակերպեր տեղի հայկական ուժերը, քեմալականներից ազատագրեր Կիլիկիայի տարածքները և տերություններին կանգնեցներ «կատարուած իրողութեան մը» առաջ[400], *որը կդյուրացներ դիվանագիտական աշխատանքները:*

1920 Թ. հուլիսի 20-ին Պ. Նուբարը Կիլիկիայի Հայ ազգային միությանը ուղարկած հեռագրում տեղեկացրեց, որ Ազգային պատվիրակությունը Կիլիկիա է ուղարկում Անդրանիկին երկրամասում ինքնապաշտպանությունը կազմակերպելու[401]: *Ինչպես նկատում է ակադ. Հ. Սիմոնյանը, Պ. Նուբարը, Անդրանիկը և ընդհանրապես արևմտահայերը երազում էին ունենալ իրենց ազգային պետությունը հանձին ինքնավար Կիլիկիայի Հայաստանի Հանրապետությունը համարելով ռուսահայության և դաշնակցության ստեղծագործությունը*[402].

Ազգային պատվիրակության նիստերում, որոնց մասնակցում էին նաև Անդրանիկն ու Ա. Զոպանյանը, քննարկվել էր հետևյալ ծրագիրը.

---

398 Սահարոնեան Գ., Մեծ երազի ճամբուն վրայ, Լոս Անճելըս, 1986, էջ 139 -140:

399 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 224, թ. 24:

400 Նույն տեղում, թ. 23:

401 Նույն տեղում, ֆ. 370, ց. 1, գ. 68, թ. 13: Նույն տեղում, ֆ. 430, ց. 1, գ. 624, թ. 1:

402 Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, Գիրք Բ, Ե., 1996, էջ 750:

1. Կիլիկիայում բարելավել հայ-ֆրանսիական լարված հարաբերությունները և Բեյրութի բարձր կոմիսարի մոտ համակրանք ստեղծել հայկական բաղձանքների հանդեպ:

2. Աշխատել Սևրի պայմանագրով Թուրքիային տրվելիք Կիլիկիայի տարածքները չդատարկել և Ֆրանսիայի հովանու ներքո ինքնավարություն ձեռք բերել:

3. Բարձր կոմիսարին համոզել, որ Անդրանիկին թույլատրի, Կիլիկիայում քեմալականների դեմ պայքարելու համար, կազմակերպել հայկական զինված ուժեր[103]:

Այդ որոշումը ընդունվել էր գրող, հասարակական գործիչ Զ. Եսայանի Կիլիկիայից ուղարկած ընդարձակ զեկուցագրի հիման վրա[104]: Նա 1920 թ. սկզբին Պ. Նուբարի հրահանգով մեկնել էր Կիլիկիա՝ զբաղվելու հայ որբերի խնամատարությամբ: Պետք է խոստովանել, որ այդ կին գործիչը ավելի լավ էր պատկերացնում և վերլուծում իրավիճակը Կիլիկիայում, քան այդ ժամանակաշրջանի մյուս ազգային-պետական գործիչները: Անդրանիկի Կիլիկիա մեկնելու թույլտվություն ստանալու և ֆրանսիացիների հետ հարաբերությունները բարելավելու համար Պ. Նուբարը Բեյրութ՝ Գուրոյի մոտ ուղարկեց Ա. Զոպանյանին:

Սեպտեմբերի 20-ին Պ. Նուբարի և Անդրանիկի ստորագրություններով կոչ հրապարակվեց: Նրանք դիմում էին բոլոր հայերին, որպեսզի նյութական աջակցություն ցույց տան Կիլիկիային[105]: Անդրանիկը մեկնեց Զմյուռնիա՝ այնտեղից Կիլիկիա անցնելու մտադրությամբ: Սակայն հոկտեմբերի 14-ին Ա. Զոպանյանը Բեյրութից հեռագրեց ազգային հերոսին, որ Գուրոն կտրականապես դեմ է Կիլիկիայում հայկական զորքերի կազմակերպմանը[106]: Անդրանիկը հոկտեմբերի 22-ին ստիպված մեկնեց Եգիպտոս՝ սպասելով հարմար առիթի Կիլիկիա անցնելու համար: Նոյեմբերի 18-ին Պ. Նուբարը նամակով տեղեկաց-

---

[403] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 390, թ. 1:

[404] ՀՀ ԳԱԹ, Զ. Եսայանի ֆոնդ, գ. 289, էջ 1-25:

[405] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 625, թ. 1-2: Նաև՝ Անդրանիկի և Պողոս Նուբարի նամակագրությունից (1919-1921 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, թիվ 1, էջ 95-96:

[406] Озанян А., Документы и материалы, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, թիվ 1-2, էջ 369-370:

ընց Անդրանիկին, որ Ֆրանսիան մերժել է Կիլիկիայում ազգային ուժ կազմակերպելու նաև իր ջանքերը[407]:

Անդրանիկը ստիպված էր վերադառնալ Ֆրանսիա: Սակայն նա թուրքերի դեմ կռվելու մեկ փորձ ևս կատարեց 1921 թ. հունիսին, երբ Պ. Նուբարին դիմեց, որ նա հունական իշխանություններից թույլտվություն ստանա, որպեսզի ինքը կամավորական գունդ կազմակերպի և մասնակցի հույն-թուրքական պատերազմին: «Իմ մասնակցությունը որքան էլ որ համեստ լինի, - գրում էր Անդրանիկը, - նպաստելով Հունական զորքերի հաջողությանը կամ թուրքերի անհաջողությանը, չի կարող չծառայել մեր երկրի ճակատագրի բարելավմանը»[408]: Սակայն Պ. Նուբարը խորհուրդ չտվեց մասնակցել հույն-թուրքական պատերազմին, քանի որ տերությունները դեմ էին Զմյուռնիան պահելու հունական ձգտումներին[409]:

Կիլիկիայի հարցում Ֆրանսիան իր նենգ քաղաքականությունը շարունակեց նաև Սևրից հետո: Թե՛ Ֆրանսիայի վարչապետ Ժ. Լեյգը, թե՛ ԱԳՆ գլխավոր քարտուղար Ֆ. Բերտլոն շարունակում էին հայերին հավաստիացնել, որ կպաշտպանեն Կիլիկիայի քրիստոնյաներին և զորքերը դուրս չեն բերի այնտեղից[410]: Այդ հավաստիացումները նոր ուժ էին տալիս կիլիկիահայերին՝ կառչած մնալու այդ երկրամասից, որն ի վերջո մեծ կորուստների պատճառ դարձավ:

1920 թ. դեկտեմբերի 1-ին Պ. Նուբարը «Կիլիկիայի հարցի ներկա վիճակը» վերնագրով հուշագիր ներկայացրեց Ֆրանսիական կառավարությանը[411]: Նա հիշեցնում էր, որ երբ Ֆրանսիան Արևելքում զորքերի կարիք ուներ, Ազգային պատվիրակությունը ընդառաջեց նրա խնդրանքին և կազմավորեց Հայկական լեգեոնը, որի դիմաց Ֆրանսիան Կիլիկիային ինքնավարություն էր խոստանում պատերազմից հետո: Պ. Նուբարը առաջարկում էր՝ Կիլիկիայում ստեղծել ինքնավար քրիստոնյա վարչություն՝ Ֆրանսիայի հովանու ներքո և խառը ոստիկանություն՝ ֆրանսիացի սպաների հրամանատարության ներքո: Ըստ նրա, այդ լուծումը չէր հակասի Սևրի դաշնագրին,

---

407 ՀԱԱ, ֆ. 430, g.1, գ. 624, թ. 5:
408 Նույն տեղում, ֆ. 430, g. 1, գ. 620, թ. 2-3:
409 Նույն տեղում, թ. 4:
410 Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Ե., 2001, էջ 125-126, 128-129:
411 ՀԱԱ, ֆ. 412, g. 1, գ. 2206, թ. 1-5:

կպահպաներ Ֆրանսիական շահերը երկրամասում, մարդկային և նյութական նոր հատկացումներ չէին պահանջվի Ֆրանսիայից, ինչպես նաև հնարավորություն կտար խաղաղություն պահպանել Սիրիայի հյուսիսում: Նա շեշտում էր, որ միայն Կիլիկիայում ավելի մեծ տնտեսական շահեր կային, քան Ֆրանսիային անցած մերձավորարևելյան մյուս երկրամասերում միասին վերցրած:

Կիլիկիայում ինքնավարություն ստանալու քաղաքականությունը խրախուսում էին նաև անգլիացի որոշ քաղաքագետներ, որոնք անհույս էին համարում Արևմտյան Հայաստանի ազատագրումը և նույնիսկ Ազգային պատվիրակությանը մինչև Սևրի պայմանագիրը խորհուրդ էին տալիս հայության բեկորները համախմբել Կիլիկիայում և ֆրանսիական մանդատի ներքո կազմել «ազգային բույն մը»[412]:

1921 թ. փետրվարի 17-ին Անգլիայի ԱԳՆ-ում կազմված մի փաստաթղթում նույնպես նախատեսվում էր Հայաստանին հանձնել միայն մինչև 1914 թ. ռուս-թուրքական սահմանները, իսկ արևմտահայերին տեղավորել Կիլիկիայում, ուր պետք է ինքնավարություն տրվեր հայերին Թուրքիայի գերիշխանության և Ազգերի լիգայի հովանու ներքո[413]:

Վերոհիշյալ փաստաթղթի հեղինակներից Օսբորնը 1921 թ. փետրվարի 22-ին Ա. Ահարոնյանին խորհուրդ տվեց ձեռք քաշել Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայում պետություն հաստատելու փորձ անել: Օսբորնը նշեց, որ այդ հարցում իր հետ համամիտ է նաև Պ. Նուբարը: Սակայն անգլիացու վերջին հայտարարությունը չէր համապատասխանում իրականությանը: Նույն օրը Պ. Նուբարը Ա. Ահարոնյանին հավաստիացրեց, որ ինքը նման անհեթեթություն չի ասել: «Երբեք որևէ հայ աշխարհում չի համարձակվի հրաժարվել հայկական վիլայեթներից, ես ևս առավել»[414], - նշեց նա:

Փետրվարի 17-ին Պ. Նուբարի Փարիզի բնակարանում տեղի ունեցավ հայկական երկու պատվիրակությունների համատեղ նիստ, ուր քննարկվեց թե ինչ դիրքորոշում պետք է հանդես բերեն Լոնդոնի կոնֆերանսում: Այդտեղ որոշվեց Լոնդոնի խորհրդաժողովից պահանջել Սևրի պայմանագրի անփո-

---

412 ՀԱԱ, ֆ. 282, g.1, գ. 54, թ. 2:

413 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 696:

414 Ահարոնյան Ա., նշվ. աշխ., էջ 144-145:

փոխ գործադրությունը, իսկ Կիլիկիայի համար ինքնավարություն պահանջել թուրքական տիրապետության և Ֆրանսիայի հովանու ներքո: Որոշվեց Կիլիկիայի Ֆրանսիային անցած մասի համար ներքին ինքնավարություն խնդրել Ֆրանսիայից և այդ հարցը չբարձրացնել Լոնդոնում, որպեսզի ֆրանսիացիների դժգոհությունը չհարուցեն: Այդ ոգով հուշագիր կազմվեց, որը փոխանցվեց Գերագույն խորհրդին[415]:

Փետրվարի 26-ին Պ. Նուբարն ու Ա. Ահարոնյանը ներկայացան Լոնդոնի խորհրդաժողովին[416]: Նրանց ընկերակցում էին գեներալ Հ. Բագրատունին ու Ջ. Մալքոլմը: Պ. Նուբարը հանդես եկավ արեմտահայերի, իսկ Ա. Ահարոնյանը՝ արևելահայերի անունից: Հայ պատվիրակները պահանջեցին անփոփոխ պահել Սևրի դաշնագրի Հայաստանին վերաբերող հոդվածները:

Պ. Նուբարը բարձրացրեց Կիլիկիայի հարցը և խնդրեց չլքել այնտեղի 150.000 հայերին: Նշեց, որ հայերը մեծամասնություն են կազմում այնտեղ և պաշտոնապես դիմում են Ֆրանսիային, որպեսզի նա չլքի Կիլիկիան, ձեռք բերի վարչական ինքնավարություն, իսկ երկրամասի ապահովության համար ստեղծի խառը ժանդարմերիա քրիստոնյաներից ու մահմեդականներից: Խոսքի վերջում ավելացրեց. «Անհնար է պատկերացնել, որ մի պատերազմից հետո, որն այսքան շատ ժողովուրդների վերականգնեց իրենց երկրներում, հայերը, ովքեր սոսկալի տառապանքներ են կրել և ովքեր մարտնչել են դաշնակիցների կողքին, այն միակ ժողովուրդն են լինելու, որի համար սեփական երկրում նույնիսկ մեկ անկյուն չի կարող վերապահվել»[417]:

Ինչպես ժամանակը ցույց տվեց, «դաշնակիցները» արդեն հայերի կարիքը չունեին և առիթներ էին փնտրում թուրքերի հետ մերձենալու, հայերի արյունով թաթախված նրանց ձեռքը սեղմելու համար:

Մարտի 4-ին Լոնդոնի խորհրդաժողովը որոշեց փոփոխություններ մտցնել Սևրի պայմանագրի Հայաստանին վերաբերող մասում: Թուրքիային առաջարկվեց իր արևելյան տարածքների վրա կազմել հայկական «Ազգային տուն», որի սահ-

---

[415] Նույն տեղում, էջ 145:

[416] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 697-704:

[417] Նույն տեղում, էջ 700:

մանները որոշելու էր Ազգերի լիգայի կազմած հանձնաժողովը[418]: «Լոնտոնի մէջ Հայերուն տրուելիք «Ազգային Տուն»ը կու դար քանդելու Սէվրի մէջ տրուած «Միացեալ եւ անկախ Հայաստան»ի օդակառոյց շէնքը»[419], - գրում է Ա. Դարբինյանը: Իսկ Գ. Գալոյանը նշում է. «Լոնդոնի դաշնակցային խորհրդաժողովը ըստ էութեան չեղյալ հայտարարեց Սևրի պայմանագիրը, չնայած այն իր պաշտոնական ձևակերպումը գտավ միայն Լոզանի խորհրդաժողովում: Դա այն վարձն էր, որ տրվում էր քեմալականներին բոլշևիկյան Ռուսաստանի դեմ պայքարելու համար, որից տուժեցին նաև հենց իրենք՝ դաշնակիցները»[420]:

Այսպիսով, դաշնակիցները հայերին միացյալ Հայաստանի փոխարեն Լոնդոնում առաջարկեցին Ազգային տուն կամ օջախ՝ Թուրքիայի «արևելյան վիլայեթներում»: Սակայն այդ չափազանց համեստ ծրագիրը ևս մնաց թղթի վրա՝ Թուրքերի ընդդիմության հետևանքով: Թուրքիան, ստանալով թե՛ Ռուսաստանի, թե՛ Անտանտի աջակցությունը, բնականաբար չցանկացավ որևէ փոխզիջման գնալ հայերի հետ:

1921 թ. մարտի 9-ին Ֆրանսիան և Թուրքիան համաձայնագիր կնքեցին, որով ֆրանսիական զորքերը դուրս էին բերվելու Կիլիկիայի նույնիսկ այն շրջաններից, որոնք Սևրի պայմանագրով մնալու էին Ֆրանսիային: Պ. Նուբարը այդ առթիվ բողոքեց և աջակցության համար դիմեց նաև ԱՄՆ-ին[421]: Սակայն տերությունների խարդավանքների դեմ հայ պատվիրակներն անզոր էին: 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում ստորագրված Ֆրանս-թուրքական պայմանագրով Կիլիկիան վերջնականապես հանձնվեց Թուրքիային: 1921 թ. վերջին և 1922 թ. սկզբին Ֆրանսիան զորքերը դուրս բերեց Կիլիկիայից և տեղի հայերը ստիպված էին փախչել իրենց օջախներից, ուր վերադարձել էին այդ տերության խոստումներին հավատալով: Այդ ողբերգության մասին Լեոն գրում է. «Արիստիդ Բրիանի մինիստրությունը ծախեց Թուրքիայի հա-

---

418 Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 479-480:
419 Նույն տեղում, էջ 480:
420 Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., 1999, էջ 435:
421 ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1013, թ. 3-4:

յությունն այնպիսի սրիկայությամբ, որպիսին կարելի է գտնել զուցե միմիայն մարդկային ամենաընկած շրջանների մեջ»[422]:

Այսպիսով, Կիլիկիայում ինքնավարություն ստանալու և սեփական հայրենիքում ապրելու Կիլիկիահայերի ձգտումները հանդիսացին Ֆրանսիայի ընդդիմությանը, որը ոչ միայն չօգնեց հայերին, այլև արգելակեց սեփական ուժերով պաշտպանվելու փորձերը: Կարծում ենք, ցանկության դեպքում Ֆրանսիան կարող էր Կիլիկիան չհանձնել Թուրքերին, որը օգտակար կլիներ և իր և հայերի համար, բայց պատմական իրադարձությունները զարգացան այլ ճանապարհով:

SAMVEL POGHOSYAN
Armenian State Pedagogic University

THE QUESTION OF CILICIA AFTER THE CONCLUSION OF THE SEVRES TREATY (1920)

Summary

The Treaty of Sèvres had been welcomed with enthusiasm by the Armenians because some territories and a sea exit were promised which were of vital necessity.

Meanwhile extensive Armenian territories including Cilicia (tens of thousands Armenians returned home believing the promises of France) were left to Turks.

On March 4, 1921 at the Conference in London the Allies decided to make changes in the Treaty of Sèvres concerning Armenia and offered Turkey to form "the Armenian National home" in "its eastern territories". The borders of "the National home" had to be settled by the League of Nations.

A.Darbinyan noted that "National home" had been coming to destroy the ethereal edifice of "the United and independent Armenia." G.Galoyan wrote: "The London Conference of the

---

[422] Լեո, Անցյալից, Հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925, էջ 269:

Allies, in fact, annulled the Treaty of Sevres notwithstanding the fact that it was officially formulated at the Conference of Lausanne (July 24, 1923)."

Thus, the Armenians were offered "the National home or hearth" in the "eastern vilayets" of Turkey, i.e. in Western Armenia. Even this project remained only on paper because of the Turkish opposition which was supported by Soviet Russia and the Entente.

According to an agreement (March 9) signed by France and Turkey, the French troops were going to leave even those territories of Cilicia which had been left under French control by the Treaty of Sevres. Poghos Nubar protested and asked not to abandon the fate of 150. 000 Armenians living in Cilicia. He even appealed to the US for support. But the Armenian delegation was helpless to oppose the intrigues of the Great Powers.

On October 20, 1921 Cilicia was finally given to Turkey by the French-Turkic treaty. The French troops left Cilicia (the end of 1921 and the beginning of 1922) and native Armenians had to leave their homes.

The author of the article supposes that France could preserve Cilicia, without ceding it to Turks, and it would be useful both for France and the Armenians but historic events continued in other direction.

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԴՐՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԵՎ ԽՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 1921-1922 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ռուսական նախկին կայսրության տարածքի մեծ մասում 1917-1921 թթ. առաջացած խորհրդային ազգային հանրապետությունների փոխհարաբերությունների հարցը Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները հատուկ քննարկման առարկա դարձրին 1921 թ. մարտի 8-16-ը Մոսկվայում հրավիրված ՌԿ/բ/կ 10-րդ համագումարում: Կենտկոմի անունից ՌՍՖԽՀ ազգությունների գործերի ժողկոմ Ի. Ստալինի զեկուցման հիման վրա համագումարի ընդունած «Ազգային հարցում կուսակցության ընթացիկ խնդիրների մասին» բանաձևում արձանագրվեց, որ հակախորհրդային իմպերիալիստական շրջապատում խորհրդային հանրապետությունների մեկուսի անջատ գոյությունն անխոհեմ և աննպատակահարմար է: Նշվում էր, որ հանրապետությունների պաշտպանության, տնտեսության վերականգնման, փոխօգնության, ազգերի համերաշխության, ռազմաքաղաքական սերտ հարաբերություններ հաստատելու ընդհանուր շահերը «Հրամայաբար թելադրում են առանձին խորհրդային հանրապետությունների պետական միավորում»: Միավորման լավագույն ձև համարվեց խորհրդային ֆեդերացիան /դաշնությունը/, որի հիմքում դրվելու էր հանրապետությունների փոխադարձ վստահության և դաշնության մեջ մտնելու կամավորության սկզբունքը:[423]

Խորհրդային Ռուսաստանի և խորհրդային ազգային մյուս հանրապետությունների փոխհարաբերությունները նախ կառուցվում էին «ռազմաքաղաքական դաշինքի»,[421] *իսկ այ-*

---

[423] Десятый съезд РКП(б). Стенографический отчет, с. 602.

[424] Իրականացնելով 1919 թ. մարտին տեղի ունեցած ՌԿ/բ/կ 8-րդ համագումարի ընդունած բանաձևերը, նույն թվականի հունիսի 1-ին Համառուսաստանյան Կենտգործկոմը որոշում ընդունեց «Համաշխարհային իմպերիալիզմի դեմ պայքարելու համար խորհրդային հանրապետությունների՝ Ռուսաստանի, Ուկրաինայի, Լատվիայի, Լիտվայի, Բելոռուսիայի միավորման մասին», պատմության մեջ այն հայտնի է որպես «Խորհրդային ազգային հանրապետությունների ռազմաքաղաքական միության մասին դեկրետ» /Տե՛ս Шесть лет национальной политике Советской власти и Наркомнац. 1917-1923 гг., М.,1923, с.18-19/:

նուհետև՝ հանրապետությունների միջև ստորագրված երկկողմ «դաշնային պայմանագրերի» հիման վրա: Խորհրդային Ռուսաստանը դաշնային պայմանագրեր և տնտեսական համաձայնագրեր էր կնքել խորհրդային ազգային մի քանի հանրապետությունների, այդ թվում՝ Խորհրդային Աղրբեջանի /30 սեպտեմբերի, 1920 թ./, Ուկրաինայի /28 դեկտեմբերի, 1920 թ./ և Բելոռուսիայի /16 հունվարի, 1921 թ./ հետ:

Ֆեդերատիվ հարաբերությունների նշված ձևերը, որոնց հիմքում դրված էր խորհրդային ազգային ինքնավարության սկզբունքը, բոլշևիկյան կուսակցության վերնախավը դիտում էր որպես անցումնային փուլեր՝ համաշխարհային հեղափոխության հաղթանակից հետո «Միջազգային Խորհրդային հանրապետություն» ստեղծելու ճանապարհին:

Խորհրդային հանրապետությունների միջև ձևավորվող փոխհարաբերությունները կարգավորվում էին «կուսակցական կարգով»: Հանրապետությունների ազգային կոմկուսները հանդիսանում էին ՌԿ/բ/Կ բաղկացուցիչ մասեր և երկրային բյուրոների միջոցով ենթակա էին կուսակցական վերադաս մարմնին՝ ՌԿ/բ/Կ Կենտկոմին: Խորհրդային Հայաստանում, և ընդհանրապես ամբողջ Կովկասում և Անդրկովկասում, ՌԿ/բ/Կ Կենտկոմի լիազոր ներկայացուցչական մարմինը՝ 1921 թ. մարտի 21-ին ստեղծված ՌԿ/բ/Կ Կովկասյան բյուրոն էր, որի փաստացի ղեկավարն էր ՌԿ/բ/Կ Կենտկոմի անդամ Գ. Օրջոնիկիձեն: Բյուրոյի իրավասության շրջանակներում էր նաև անդրկովկասյան հանրապետությունների միջև միջպետական հարաբերությունների կարգավորման խնդիրները:

Խորհրդային հանրապետությունների փոխհարաբերությունների նախանշած ուղին Կովկասի և Անդրկովկասի հանրապետությունների համար առավել հստակեցվեց Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի՝ «Ադրբեջանի, Վրաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» ուղղված ծրագրային նամակ-հրահանգում: Նրանում կարմիր թելով անցնում էր տարածաշրջանի խորհրդային հանրապետությունների միջև սերտ դաշինք հաստատելու գաղափարը:[425]

ՌԿ/բ/Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի, Ռուսաստանի և անդրկովկասյան հանրապետությունների ղեկավար մարմինների ակտիվ բանակցությունների արդյունքում 1921 թ.

---

[425] Լենին Վ.Ի., ԵԼԺ, հ. 43, էջ 237-240:

ապրիլի 16-ին Թիֆլիսում ստորագրվում է համաձայնագիր Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի երկաթուղիների միավորման, Ռուսաստանի երկաթուղային ընդհանուր ցանցի մեջ նրանց ընդգրկելու և դրանից բխող այլ հարցերի մասին:[426] Համապատասխան համաձայնագրեր ստորագրեցին նաև Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հեղկոմների նախագահներ Մ. Օրախելաշվիլին, Մ. Հուսեյնովը և Ս. Կասյանը: Համաձայնագրերը վավերացվեցին 1921 թ. օգոստոսի 8-ին Մոսկվայում Գ. Չիչերինի, Մ. Ցխակայայի, Ա. Շիրվանիի և Ս. Տեր-Գաբրիելյանի կողմից ստորագրված համապատասխան արձանագրությամբ:

Շուտով իրականացվեց նաև Անդրկովկասի հանրապետությունների արտաքին միացյալ առևտրի մարմին ստեղծելու մասին Լենինի ցուցումը: 1921 թ. մայիս-հունիս ամիսներին Ռուսաստանի իշխանությունների միջնորդությամբ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև ստորագրվեցին համապատասխան համաձայնագրեր:

1921 թ. հուլիսի 2-3-ին տեղի ունեցած ՌԿ/բ/Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի միացյալ պլենումը քննարկեց ինչպես անդրկովկասյան հանրապետությունների, այնպես էլ նրանց և Ռուսաստանի փոխհարաբերություններին առնչվող մի շարք հարցեր: Ընդունված բանաձևում թեև հատուկ շեշտվում էր անդրկովկասյան հանրապետությունների իրական անկախությունը պահպանելու անհրաժեշտությունը, սակայն միաժամանակ պահանջվում էր խստորեն պահպանել այդ երկրների կոմկուսների Կենտկոմների և ՌԿ/բ/Կ Կենտկոմի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, հրամայական էր համարվում անդրկովկասյան հանրապետությունների և Ռուսաստանի միջև ռազմական, առևտրա-տնտեսական և ֆինանսական պայմանագրերի կնքումը:

Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների դաշնություն հիմնելու գաղափարը քարոզվում էր ոչ միայն կուսակցական հրահանգներով, այլև հանրապետական և անդրկովկասյան կուսակցական, կոմերիտական, արհմիութենական և այլ խորհրդակցություններում ու ժողովներում: Այսպես՝ Հայկոմկուսի Երևանի կազմակերպության և արհեստակցական միությունների միացյալ հանդիսավոր նիս-

---

[426] История Советской Конфедерации в документах /1917-1956/, Москва, 1957, с. 283-284.

տում /1921 թ. մայիսի 9-ին/ Ալ. Մյասնիկյանը հայտարարեց. «Այսօր մենք դեռ ամբողջ Անդրկովկասը չենք կարող կառավարել իբրև մի ամբողջություն: Բայց հենց որ մենք ոտքի վրա կանգնենք, կհիմնենք Կովկասյան Ֆեդերացիա»:[427]

Անդրֆեդերացիայի անհրաժեշտության ոգով էր տոգորված նաև Ի. Ստալինի զեկուցումը Թիֆլիսի կուսակցամակերպության ընդհանուր ժողովում 1921 թ. հուլիսի 6-ին:[428]

Մրագրային նշանակություն ուներ Գ. Օրջոնիկիձեի զեկուցումը 1921 թ. օգոստոսի 12-14-ը Թիֆլիսում հրավիրված Կովկասյան երկրամասային կուսակցական առաջին խորհրդակցությունում: Անդրադառնալով Անդրկովկասում ՌԿ/բ/Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի խնդիրներին, Օրջոնիկիձեն մասնավորապես նշեց, որ գրանցից գլխավորն է նպաստել «կովկասյան խորհրդային հանրապետությունների տնտեսական միավորմանը միմյանց և Խորհրդային Ռուսաստանի հետ, պահպանելով այդ հանրապետությունների անկախությունը»:[429]

Անդրկովկասյան դաշնության ստեղծման գործընթացի արագացմանը նպաստեց 1921 թ. նոյեմբերի 3-ին Բաքվում կայացած ՌԿ/բ/Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումը, անդրկովկասյան հանրապետությունների կուսակցական ղեկավարության, ինչպես նաև ՌԿ/բ/Կ կենտկոմի քարտուղար Վ. Մոլոտովի մասնակցությամբ: Վերջինիս ներկայությունը պլենումի աշխատանքներին հուշում էր, որ Մոսկվան չափազանց կարևոր նշանակություն էր տալիս Անդրֆեդերացիայի իրականացման խնդրին: Պլենումի ընդունած «Անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիայի մասին» բանաձևում, որը Գ. Օրջոնիկիձեի հանձնարարությամբ նախապատրաստել էին Ալ. Մյասնիկյանն ու Շ. Էլիավան, և համապատասխան որոշումում անհետաձգելի և անհրաժեշտ է համարվում անդրկովկասյան հանրապետությունների միջև ռազմաքաղաքական, ֆինանսատնտեսական և արտաքին քաղաքականության ոլորտների միավորման դաշնային միութենական պայմանագրի ստորագրումը, միասնական վարչատնտեսական և քաղաքական կենտրոնի Միութենական Խորհրդի, ստեղծումը:

---

427 Մյասնիկյան Ա., Ընտիր երկեր, Ե., 1957, էջ 338:
428 Ստալին Ի.Վ., Երկեր, հ. 5, Ե., 1948, էջ 98-111:
429 Օրջոնիկիձե Գ.Կ., Ընտիր հոդվածներ և ճառեր, Ե., 1950, էջ 61-63:

1921 թ. հոկտեմբերին տեղի ունեցած ՌԿ/բ/Կ Կենտկոմի պլենումը մի խումբ խնդիրների շարքում քննարկեց նաև անդրկովկասյան հանրապետությունների և նրանց աղդային բանակների հետաղա ճակատագրի հարցը, մշակվեցին միջոցառումների ծրագրեր: Նշված հարցերը քննարկվեցին նաև ՌԿ/բ/Կ Կենտկոմի քաղբյուրոյի նոյեմբերի 17-ի նիստում: Անդրադառնալով Կովկասյան բյուրոյի 1921 թ. նոյեմբերի 3-ի պլենումի՝ Անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիա կազմավորելու մասին որոշմանը և ընդունված համապատասխան բանաձևին, քաղբյուրոն որոշեց նախ պարզաբանումներ պահանջել խնդրի վերաբերյալ /մասնավորապես՝ Անդրկովկասյան ֆեդերացիայի և ՌՍՖԽՀ-ի միջև ձևավորվելիք հարաբերությունների բնույթի մասին/, և հետո միայն անդրադառնալ հարցի քննարկմանը:[430] Քաղբյուրոյի որոշման մեկ այլ կետով հանձնարարվեց «ՌՍՖԽՀ փոխհարաբերությունները Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ ձևակերպել ռազմական կոնվենցիայի միջոցով»:

Անդրկովկասի հանրապետություններում ռազմական գործը կազմակերպելու փաստացի իրավունքը քաղբյուրոն վերապահեց ՌՍՖԽՀ Ռազմահեղափոխական խորհրդին, իսկ Դ. Օրջոնիկիձեին հանձնարարեց կոնվենցիան անցկացնել անձամբ և ամենակարճ ժամանակում: Համագործակցելով Անդրկովկասի հանրապետությունների քաղաքական ղեկավարության և զինվորական հրամանատարության հետ, Գ. Օրջոնիկիձեն մեծ ջանասիրությամբ և կարճ ժամանակում իրականացնում է քաղբյուրոյի որոշումը: Անդրկովկասի երեք հանրապետությունների ղեկավարներ Ա. Մյասնիկյանը, Բ. Մդիվանի, Ն. Նարիմանովը և Անդրկովկասի խորհրդային հանրապետություններում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը 1921 թ. դեկտեմբերի 8-ին Թիֆլիսում ստորագրում են «Համաձայնագիր Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների կառավարությունների և ՌՍՖԽՀ կառավարության միջև ռազմածովային հարցերի վերաբերյալ»:[431] ՀՍԽՀ ժողկոմխորհը համաձայնագիրը վավերացրեց 1922 թ. հունվարի 19-ին:[432]

---

[430] ՀԱԱ, հավաքածու ցն. 1, գ. 3, թ. 129:
[431] Նույն տեղում, թ. 163-164:
[432] Նույն տեղում, ֆ. 113, ց. 5, գ. 5, թ. 1:

Ռազմական դաշինքի մասին պայմանագիրը բաղկացած էր ներածական մասից և 14 հոդվածներից: Համաձայնագրում մասնավորապես արձանագրվում էր, որ Անդրկովկասյան հանրապետությունների, ինչպես նաև Խորհրդային Ռուսաստանի՝ արտաքին վտանգից համատեղ պաշտպանվելու ռազմավարական շահերը հրամայաբար պահանջում են չորս հանրապետությունների բոլոր զինված ուժերի և ռազմական միջոցների միավորում մեկ միասնական հրամանատարության տակ՝ ի դեմս Առանձին Կովկասյան բանակի Ռազմհեղխորհրդի: Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ազգային բանակները, որպես առանձին ինքնուրույն միավորներ, յուրաքանչյուրը 10 հազարից ոչ ավել թվակազմով /խաղաղ ժամանակներում/, մտնում էին Առանձին Կովկասյան բանակի կազմի մեջ: Ազգային բանակները առաջնորդվելու էին ՌՍՖԽՀ Կարմիր բանակի համար սահմանված զինվորական օրենսդրությամբ և նորմերով, իսկ նրանց բոլոր տեսակի պահանջներն ամբողջությամբ բավարարվելու էին տվյալ հանրապետության կողմից: Հանրապետություններում թեև շարունակելու էին գործել ազգային ռազմական ժողկոմատները, սակայն նրանց ինքնուրույնությունը խիստ նվազելու էր: Ռազմական գործի հետ կապված հիմնական միջոցառումները հանրապետությունների ռազմզորձժողկոմատները իրականացնելու էին Առանձին Կովկասյան բանակի Ռազմհեղխորհրդի հրահանգներով և ՌՍՖԽՀ համապատասխան օրենսդրական նորմատիվներով: Հայաստանի համար առանձնակի նշանակություն ուներ համաձայնագրի 3-րդ հոդվածը, ըստ որի «Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների պաշտպանությունն ամրապնդելու համար նրանց տարածքում տեղակայվում են ՌՍՖԽՀ Կարմիր բանակի զորամասեր»:[433] Համաձայնագիրը քաղաքական ծանրակշիռ քայլ էր ոչ միայն արտաքին քաղաքական, այլև ներխորհրդային տեսանկյունից, այն փաստորեն դրեց Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների և Ռուսաստանի ռազմաքաղաքական սերտ միավորման ամուր հիմքերը:

Կովկասյան բյուրոյի պլենումի 1921 թ. նոյեմբերի 3-ի՝ Անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիա կազմավորելու մասին որոշումին, Ռ.Կ/բ/Կ Կենտկոմի քաղբյուրոն հերթական անգամ անդրադարձավ 1921 թ. նոյեմբերի 29-ին:

---

[433] Նույն տեղում:

Միաձայն ընդունված որոշման բանաձևում, որը ներկայացրել էր Վ. Լենինը, սկզբունքորեն միանգամայն ճիշտ և իրականանալի համարելով Կովկասյան բյուրոյի որոշումը, քաղբյուրոն այնուամենայնիվ որոշման անմիջական իրագործումը համարեց վաղաժամ: Անդրկովկասյան հանրապետությունների կոմկուսների ղեկավարությանն առաջարկվեց ֆեդերացիայի հարցը դարձնել համաժողովրդական քննարկման առարկա և ֆեդերացիայի օգտին լայն քարոզչություն վարելով՝ խնդիրը լուծել հանրապետությունների խորհուրդների համագումարների միջոցով:[434]

Անդրֆեդերացիայի անցկացման հարցում քաղբյուրոյի այս վերապահումները բխում էին այն այլակարծությունից և դիմադրությունից, որ ցուցաբերեց Վրաստանի կոմկուսի ղեկավարության մի մասը հեղկոմի նախագահ Պ. Մդիվանու գլխավորությամբ: Վերջիններս կտրականապես դեմ էին Կովկասյան բյուրոյի նոյեմբերի 3-ի որոշմանը և գտնում էին, որ ֆեդերացիայի կազմավորումը վաղաժամ է, բացակայում են իրական նախադրյալները և այն պարտադրված է Կովկասյան բյուրոյի և անձամբ Գ. Օրջոնիկիձեի կողմից: Պնդելով Անդրկովկասի հանրապետությունների իրական անկախությունը խստորեն պահպանելու անհրաժեշտության վրա, Մդիվանին և իր կողմնակիցները հանդես էին գալիս հանրապետությունների միջև երկկողմանի պայմանագրային հարաբերություններ հաստատելու առաջարկությամբ: Վրացի «ձախ ֆեդերալիստները» այն կարծիքին էին, որ եթե Ադրբեջանի և առավել ևս Հայաստանի համար ֆեդերացիան ձեռնտու է, ապա Վրաստանի համար ձեռնտու չէ ոչնչով: Մդիվանու խմբի դիրքորոշումը բոլշևիկյան կուսակցության վերնախավի կողմից որակվեց որպես ազգային թեքում, որի դեմ անզիջում պայքար ծավալեց Կովկասյան բյուրոն, Ի. Ստալինի, Գ. Օրջոնիկիձեի, ինչու չէ, նաև Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ:

Այնուհանդերձ, Վրաստանի կոմկուսի կենտկոմի 1921 թ. նոյեմբերի 14-ի և 25-26-ի պլենումները որոշեցին հավանության արժանացնել Կովկասյան բյուրոյի 1921 թ. նոյեմ-

---

[434] ՀԱԱ, հավաքածու ևն. 1, գ. 3, թ. 157:

բերի 3-ի որոշումները և «պարտադիր ու անհապաղ իրականացնել»:[435]

Ադրբեջանի կոմկուսի կենտկոմը 1921 թ. դեկտեմբերի 14-ին ողջունեց Կովկասյան բյուրոյի նոյեմբերի 3-ի որոշումը և որոշեց ամենալայն քարոզչություն ծավալել Անդրֆեդերացիայի շտապ անցկացման օգտին:[436]

Ինչ վերաբերում է Հայաստանի դիրքորոշմանը, ապա Անդրֆեդերացիայի կազմավորման հարցում Հայկոմկուսի ղեկավարությունն անվերապահորեն պաշտպանում էր Կովկասյան բյուրոյի քաղաքականությունը, քանզի համոզված էր, որ ֆեդերացիայի գաղափարը բխում է Հայաստանի և հայ ժողովրդի շահերից: Հայկոմկուսի կենտկոմը 1921 թ. նոյեմբերի 14-ին միաձայն և անվերապահ հավանության արժանացրեց Անդրֆեդերացիայի մասին Կովկասյան բյուրոյի նոյեմբերի 3-ի որոշումը:[437] Լինելով անդրկովկասյան հանրապետություններից տնտեսապես նվազ զարգացածը, գտնվելով սոցիալ-տնտեսական աղետալի վիճակում, չունենալով ընդհանուր սահման Ռուսաստանի հետ, Հայաստանն, ի տարբերություն Ադրբեջանի և Վրաստանի, որոնց բնական և նյութական պաշարները, աշխարհագրական նպաստավոր դիրքը զգալի առավելություններ էին, ընդգրկվելով ֆեդերացիայի մեջ կորցնելու ոչինչ չուներ: Ընդհակառակը Հայաստանի իշխանությունները դրանում էին տեսնում երկիրը և ժողովրդին սոցիալ-տնտեսական ծանր վիճակից դուրս հանելու միակ ճանապարհը:

1922 թ. հունվար-փետրվարին տեղի ունեցած Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կոմկուսների ու խորհուրդների համագումարները հակահարված տալով Անդրֆեդերացիայի հակառակորդներին, հաստատեցին Անդրկովկասի հանրապետությունների դաշնություն կազմելու անհրաժեշտությունն ու հրատապությունը:

ՀԿ/բ/Կ առաջին համագումարին /26-29 հունվարի, 1922թ./ հաշվետու զեկուցման մեջ շեշտելով Անդրֆեդերացիա

---

[435] Տե՛ս Компартия Грузии в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК, հ. 1, 1920-1931, Թբիլիսի, 1976, էջ 22-23:

[436] Տե՛ս Компартия Азербайджана в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК, հ.1, 1920-1937, Բաքու, 1986, էջ 66-67:

[437] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 15, թ. 39:

ստեղծելու հրատապության մասին Ալ. Մյասնիկյանը հայտարարեց. «Ես համոզված եմ, որ ֆեդերացիան կկայանա և այն մեղ վերջնականապես դուրս կբերի տնտեսական քայքայումից»:[438] Համագումարի ընդունած բանաձևում արձանագրվեց, որ «ֆեդերացիան լրիվ համապատասխանում է մեր երկրի շահերին»:[439]

Հայկոմկուսի քաղաքական այս գիծը պաշտպանեց Հայաստանի խորհուրդների առաջին համագումարը /30 հունվարի - 4 փետրվարի, 1922 թ./: Անդրֆեդերացիայի մասին Ա. Մռավյանի զեկուցման հիման վրա ընդունած բանաձևում նշվեց, որ Անդրֆեդերացիայի գաղափարը հասունացած է և հարկավոր է շուտափույթ գործնական միջոցներ կիրառել այն իրականացնելու համար:[440]

Անդրֆեդերացիայի օգտին արտահայտվեցին նաև Վրաստանի և Ադրբեջանի կոմկուսների, համապատասխանաբար՝ առաջին /հունվարի 23 - փետրվարի 1, 1922 թ./ և չորրորդ /փետրվարի 2-7, 1922 թ./ համագումարները:

Հանրապետական կոմկուսների համագումարներին հաջորդեց Անդրկովկասի կուսկազմակերպությունների առաջին համագումարը, որը կայացավ 1922 թ. փետրվարի 18-22-ին: Համագումարը հաստատեց Շ. Էլիավայի՝ Անդրֆեդերացիայի մասին զեկուցման հիմնադրույթները, հաստատեց նաև Անդրֆեդերացիայի Միութենական պայմանագրի տեքստը և Բարձրագույն տնտեսական խորհրդի մասին Կանոնադրությունը:[441] Քննարկված կազմակերպչական խնդիրների շարքում առանձնանում էր Կովկասյան բյուրոն լուծարելու և նրա փոխարեն ՌԿ/բ/Կ Կենտկոմի Անդրկովկասի երկրամասային կոմիտե ստեղծելու մասին համագումարի որոշումը: Վերջինիս կազմը հաստատվեց նույն օրերին Մոսկվայում, կոմիտեի նախագահության կազմում ընդգրկված էր նաև Ալ. Մյասնիկյանը:[442]

---

438 ՀԱԱ, ֆ. 1, g. 2, գ. 2, թ. 22-23:
439 Նույն տեղում, գ.1, թ. 41:
440 Տե՛ս ՀԱԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների խորհուրդների Ա համագումար, Ե.,1922:
441 Տե՛ս Первый Закавказский съезд коммунистических организаций, Тифлис, 1922:
442 ՀԱԱ, ֆ. 1, g. 2, գ. 10, թ. 9ա:

ՌԿ/բ/Կ Կենտկոմի Անդրկովկասի երկրամասային կոմիտեի 1922 թ. փետրվարի 23-ի պլենումի առաջին իսկ նիստում որոշվեց անհապաղ կյանքի կոչել Անդրֆեդերացիան և այդ նպատակով հրավիրել անդրկովկասյան հանրապետությունների Կենտգործկոմների ներկայացուցիչների լիազոր կոնֆերանս: Կոնֆերանսը իր աշխատանքները սկսեց 1922 թ. մարտի 11-ին Թիֆլիսում: Մարտի 12-ին ընդունվեց Անդրկովկասի հանրապետությունների դաշնային միություն կազմելու մասին Միութենական պայմանագիրը և Բարձրագույն տնտեսական խորհրդի մասին Կանոնադրությունը: Այսպիսով իրականություն դարձավ Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Ֆեդերատիվ Միության /ԱՍԽՀՄ/ հիմնադրումը. Խորհրդային Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը կազմեցին ռազմաքաղաքական և տնտեսական սերտ դաշինք: Կոնֆերանսը թեև հաստատում էր վերջիններիս լիակատար անկախությունը և ինքնուրույնությունը, սակայն իրականում՝ Միութենական պայմանագիրը նախատեսում էր Անդրկովկասի հանրապետությունների ինքնիշխանության զգալի սահմանափակումներ: Մասնավորապես՝ հանրապետություններում վերացվելու էին պետականությունը արտահայտող մի շարք առանցքային ժողկոմատ-ներ. ռազմական և արտաքին գործերի, արտաքին առևտրի, ֆինանսների և այլն: Այդ ոլորտների կառավարումը փոխանցվելու էր Անդրֆեդերացիայի գործադիր մարմնին՝ Միութենական խորհրդին, որի նախագահությունը բաղկացած էր երեք հանրապետությունների ներկայացուցիչներից /Ալ. Մյասնիկյան, Պ. Մդիվանի, Ն. Նարիմանով/:

Միութենական պայմանագրի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Հանրապետությունների Միությունը ՌՍՖՍՀ-ի հետ փոխհարաբերությունները կառուցում է միութենական պայմանագրի հիման վրա»:[443]

Խորհրդային Ռուսաստանի և Անդրկովկասի հանրապետությունների միջև սերտ փոխհարաբերություններ հաստատելու գործում կարևոր քայլեր կատարվեցին դեռևս 1921 թ. դեկտեմբերի վերջին: Համառուսաստանյան Կենտգործկոմի նախագահ Մ. Կալինինի հրավերով Համառուսաստանյան խորհուրդների 9-րդ համագումարին հյուրի կարգավիճակով մասնակցող Անդրկովկասի հանրապետությունների ներկայա-

---

[443] Советское содружество народов, М., 1977, с. 264-267.

ցուցիչների անունից հայտարարության մեջ /26 դեկտեմբերի 1921 թ./ Ալ.Մյասնիկյանը առաջարկեց Համառուսաստանյան Կենտգործկոմի կազմում ընդգրկել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչներին: Առաջարկությունն ընդունվեց՝ Ադրբեջանին և Վրաստանին հատկացվեց 20-ական, Հայաստանին՝ 15 տեղ:[444]

Խորհրդային Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի և ՌԿ/բ/Կ Կովկասյան բյուրոյի ներկայացուցիչների մասնակցությամբ դեկտեմբերի 30-ին Մոսկվայում հրավիրված ՌՍՖԽՀ արտգործժողկոմատի կոլեգիայի ընդլայնված խորհրդակցությունում քննարկվեցին հանրապետությունների ներքին և արտաքին քաղաքականությունը նույնացնելուն նվիրված մի շարք հարցեր:[445] Մշակվում և ընդունվում է «Խորհրդային Ադրբեջանի, Հայաստանի, Բելոռուսիայի, Վրաստանի, ՌՍՖԽՀ-ի և Ուկրաինայի միջև միասնական քաղաքացիության մասին պայմանագրի նախագիծ», ըստ որի՝ հանրապետությունների քաղաքացիները յուրաքանչյուր խորհրդային հանրապետությունում ունենալու էին քաղաքական և քաղաքացիական հավասար իրավունքներ, կրելու էին նույն պարտավորությունները:[446] Խորհրդակցությունն անհրաժեշտ համարեց խորհրդային բոլոր հանրապետություններում մտցնել անձնագրերի միասնական ձև: Անձնագրերը լրացվելու էին մայրենի և ռուսերեն լեզուներով, վավերական էին լինելու խորհրդային բոլոր հանրապետություններում: Խորհրդային յուրաքանչյուր հանրապետության քաղաքացուն իրավունք էր վերապահվում բնակություն հաստատել ցանկացած հանրապետությունում և ազատ տեղաշարժվել մեկ հանրապետությունից մյուսը:[447] Խորհրդակցության որոշումները և առաջարկությունները արժանացան ՌԿ/բ/Կ Կենտկոմի հավանությանը և աստիճանաբար կյանքի կոչվեցին: Արդեն 1922 թ. փետրվարից խորհրդային քաղաքացիների տեղաշարժը մեկ հանրապետությունից մյուսը ազատ էր և առանց սահմանափակումների: Ինչ վերաբերում է միասնական քա-

---

[444] Девятый Всероссийский съезд Советов... Стенографический отчет, Москва, 1922, с. 186.
[445] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 98, թ. 14:
[446] Նույն տեղում, թ. 15:
[447] Նույն տեղում, թ. 19:

ղաքացիության մասին պայմանագրի նախագծին, ապա այն չստորագրվեց:

Զրկելով խորհրդային հանրապետություններին, այդ թվում և Հայաստանին, ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու իրավունքից, Խորհրդային Ռուսաստանը միաժամանակ ստանձնում է միջազգային ասպարեզում նրանց ներկայացնելու պարտավորությունը: Այսպես, 1922 թ. հունվարի սկզբին ստանալով Ժենովայի միջազգային կոնֆերանսին մասնակցելու հրավեր, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն անհրաժեշտ է համարում ստեղծել խորհրդային բոլոր հանրապետությունների միասնական դիվանագիտական ճակատ և դրանով իսկ ամրապնդել խորհրդային դիրքերը կոնֆերանսում: Ռ/Կ/Կ Կենտկոմի քաղբյուրոյի և Համառուսաստանյան Կենտգործկոմի 1922 թ. հունվար ամսին ընդունած մի շարք որոշումներով հաստատվում է խորհրդային միացյալ պատվիրակության կազմը և նրա լիազորությունները: Պատվիրակության 15 անդամների թվում էր նաև ՀՍԽՀ ներկայացուցիչ Ա. Բեկզադյանը:[448] Խորհրդային հանրապետությունների դիվանագիտական դաշինքը ամրապնդվեց 1922 թ. փետրվարի 22-ին Մոսկվայում հրավիրված ՌՍՖՍՀ-ի և խորհրդային ութ հանրապետությունների լիազոր ներկայացուցիչների խորհրդակցությանը, որոշվեց առաջիկա կոնֆերանսին խորհրդային հանրապետությունները ներկայացնելու և նրանց շահերը պաշտպանելու իրավունքը հանձնարարել Խորհրդային Ռուսաստանին: Վերջինիս իրավունք է վերապահվում բոլոր հանրապետությունների անունից պայմանագրեր և համաձայնագրեր ստորագրել արտասահմանյան պետությունների հետ ինչպես կոնֆերանսում, այնպես էլ նրանից դուրս:[449]

Այսպիսով 1921-1922 թթ. Խորհրդային Ռուսաստանը աստիճանաբար ուժեղացնում էր իր քաղաքական ազդեցությունը խորհրդային հանրապետությունների, այդ թվում և Հայաստանի, թե ներքին և թե արտաքին քաղաքականության մեջ: Եթե ներքին քաղաքականության հարցերում ազգային հանրապետությունները, այնուամենայնիվ, որոշ ինքնուրույնություն պահպանում էին, ապա արտաքին քաղաքականության հարցերում այն իսպառ վերացվեց:

---

[448] ДВП СССР, т. V, Москва, 1961, с. 66-68.
[449] Նույն տեղում, էջ 110-111:

1922 թ. երկրորդ կեսից Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցությունը գործնական քայլեր ձեռնարկեց ինչպես Խորհրդային Հայաստանի, այնպես էլ Ռուսական նախկին կայսրության տարածքի վրա առաջացած խորհրդային բոլոր հանրապետությունների հետ ՌՍՖԽՀ միջպետական փոխհարաբերությունները իրավաբանորեն կարգավորելու ուղղությամբ: ՌԿ/բ/Կ Կենտկոմի քաղբյուրոյի 1922թ. օգոստոսի 10-ի որոշումով Կենտկոմի կազմբյուրոյին հանձնարարվում է ստեղծել հատուկ հանձնաժողով, խորհրդային անկախ հանրապետությունների և ՌՍՖԽՀ վոխհարաբերությունների հարցը նախապատրաստելու համար:[450] Հանրապետությունների նմանատիպ խորհրդային պետականությունը, միասնական ներքին և արտաքին քաղաքականությունը, զինված ուժերը, պատժիչ մարմինները /Չեկա, Հատուկ բաժին, Հատուկ նշանակության ջոկատներ/, ազգային բնութագրից դրեթե զուրկ նմանատիպ Սահմանադրությունները /որոնք հիմնական դրույթներում փաստորեն կրկնում էին ՌՍՖԽՀ Սահմանադրությունը/ և, ամենագլխավորը՝ հանրապետություններում իշխանության ղեկը ստանձնած ազգային կոմունիստական կուսակցությունները, որոնք անշեղորեն ղեկավարվում էին Ռուսաստանի կոմկուսի Կենտկոմի և նրա Երկրային կոմիտեների հրահանգներով և որոշումներով,[451] հուշում էին հանրապետությունների միավորման ուղիները:

Օգոստոսի 11-ին ստեղծվում է խորհրդային բոլոր հանրապետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հանձնաժողով (ՀՍԽՀ ներկայացուցիչն էր Ալ. Մյասնիկյանը):[452] Օգոստոսի վերջին հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվում հանձնաժողովի անդամ և փաստացի ղեկավար Ի. Ստալինի մշակած «ՌՍՖԽՀ և անկախ հանրապետությունների փոխհարաբերությունների մասին բանաձևի նախագիծ»,

---

[450] Образование СССР. Сборник документов, М. 1972, с. 293-294.

[451] Օրինակ՝ Հայկոմկուսի Կենտկոմի 1922 թ. հունիսի 6-ի պլենումի կուսշինարարության մասին ընդունած բանաձևում հաստատվում էր, որ «Հայաստանի կոմկուսը հանդիսանում է Ռուսաստանի կոմկուսի մի մասը, ջոկատը ... քաղաքականապես և կազմակերպչական հարցերում հաշվետու է նրան ու առաջնորդվում է ՌԿ/բ/Կ համագումարների, կուսակցական բարձրագույն մարմինների ընդունած բանաձևերով» /տես՝ ՀԱԱ, ֆ. 1, g. 2, գ. 3, թ. 11/:

[452] Образование СССР, с. 295.

համաձայն որի՝ Խորհրդային Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Բելոռուսիան և Ուկրաինան պետք է պաշտոնապես մտնեին ՌՍՖԽՀ կազմ՝ ավտոնոմ /ինքնավար/ հանրապետությունների կարգավիճակով:[453] Նախագծի համաձայն, որը ստացավ «ստալինյան ավտոնոմիզացիայի ծրագիր» անվանումը՝ խորհրդային ազգային հանրապետությունները կորցնելու էին իրենց ինքնիշխանությունը, ինչը, թեկուզև ձևական, դեռ պահպանում էին: Բանաձևի 6-րդ կետով /այն համարվում էր խիստ գաղտնի և հրապարակման ենթակա չէր/, եթե ՌԿ/բ/Կ Կենտկոմը հավանություն տար բանաձևին, ապա այն չէր հրապարակվելու, այլ որպես շրջաբերական հրահանգ փոխանցվելու էր ազգային Կենտկոմներին՝ «խորհրդային կարգով հիշյալ հանրապետությունների կենտգործկոմների կամ խորհուրդների համագումարների միջոցով անցկացնելու համար՝ մինչև խորհուրդների Համառուսաստանյան համագումարի հրավիրումը, որտեղ այն պաշտոնապես հայտարարվելու է որպես այդ հանրապետությունների ցանկություն»:[454] Բանաձևի նախագիծը թեզիսների տեսքով ուղարկվում է ազգային կոմկուսների Կենտկոմների քննարկմանը, սակայն, ինչպես բխում է բանաձևի 6-րդ կետից, Ստալինը և իր շրջապատը ակնկալում էին ոչ թե քննարկում, այլ թեզիսների «անցկացում» «խորհրդային կարգով»:

1922 թ. սեպտեմբերի 10-ին ՀԿ/բ/Կ Կենտկոմը որոշում է պաշտպանել ՌՍՖԽՀ-ի հետ Անդրկովկասի հանրապետությունների քաղաքական և տնտեսական սերտ միավորման դաղափարը:[455]

Սեպտեմբերի 8-11-ը տեղի ունեցած ՀԿ/բ/Կ Կենտկոմի պլենումին Անդրֆեդերացիայի քաղաքական և տնտեսական դրության մասին զեկուցման մեջ Կենտկոմի քարտուղար Սարդիս Լուկաշինը հանդես եկավ Անդրֆեդերացիայի միութենական մարմինների կազմակերպչական թուլության և Անդրֆեդերացիայի շրջանակներում հանրապետությունների համագործակցության ու փոխօգնության չնչին ձեռքբերումների մասին սուր քննադատությամբ:[456] Անդրադառնալով հարցի

---

[453] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 177, թ. 62:

[454] Из истории образования СССР. Известия ЦК КПСС, Москва 1989, N9, с. 193.

[455] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 3, թ. 26:

[456] Նույն տեղում, թ. 33-34:

քաղաքական կողմին, Լուկաչինը նշեց, որ Անդրկովկասյան հանրապետությունների պետական ինքնուրույնությունը մինչ այժմ ուներ միայն արտաքին միջազգային քաղաքական նշանակություն և «Անդրֆեդերացիայի կես տարվա փորձը հուշեց, որ հարկավոր է վերջ տալ ձևական ինքնուրույնությամբ պարծենալուն»: Նշելով, որ Ռուսաստանի հետ միավորվելուց հետո խորհրդային հանրապետությունների, այդ թվում և Հայաստանի ինքնիշխանությունը զգալիորեն կսահմանափակվի, Լուկաչինը շեշտեց, որ «Միավորման արդյունքում առաջացող քաղաքական մինուսը կփոխհատուցվի տնտեսական մեծ առավելություններով»:[457]

Հայաստանի ղեկավարությունը պաշտպանում էր ՌՍՖԽՀ-ի հետ պետական միավորման գաղափարը և ինչպես Անդրֆեդերացիայի կազմավորման, այնպես էլ Ռուսաստանի հետ միավորման հարցում առաջին պլան էր դնում տնտեսական շահերը:

Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի պլենումը 1922 թ. սեպտեմբերի 11-ին պաշտպանեց «ստալինյան թեզիսները», իսկ Վրաստանի կոմկուսի Կենտկոմը սեպտեմբերի 15-ի նիստում ձայների մեծամասնությամբ մերժեց դրանք և պնդեց հանրապետությունների իրական անկախությունը պահպանելու անհրաժեշտության օգտին: Բելոռուսիայի կոմկուսի Կենտկոմի պլենումը սեպտեմբերի 16-ին արտահայտվեց անկախ հանրապետությունների միջև պայմանագրային հարաբերությունների պահպանման օգտին, իսկ Ուկրաինայի կոմկուսի Կենտկոմը հարցն ընդհանրապես չքննարկեց:

1922 թ. սեպտեմբերի 22-ին Վ. Լենինին ուղղված նամակում Ստալինը ներկայացնում է իր կողմից մշակված բանաձևի էությունը: Բացելով բոլոր չակերտները Ստալինը հարցերը դնում է կտրուկ. «Ընկ. Լենին... Երկուսից մեկը կամ իսկապես /խորհրդային ազգային հանրապետությունների - հեղ./ անկախություն և այդ դեպքում կենտրոնի չմիջամտություն, իրենց արտգործժողկոմատ, իրենց արտաքին առևտուր..., ընդորում ընդհանուր հարցերը լուծվում են հավասարը հավասարի հետ բանակցությունների միջոցով... կամ խորհրդային հանրապետությունների իրական միավորում մեկ տնտեսական ամբողջության մեջ՝ ՌՍՖԽՀ ԺողկոմխորՀի, ԱՊԽ-ի և Կենտգործկոմի իշխանության պաշտոնական տարածումը անկախ

---

[457] Նույն տեղում, թ. 35:

հանրապետությունների ժողկոմխորհների, կենտգործկոմների և տնտեսական խորհուրդների վրա: Այսինքն՝ հանրապետությունների շինծու անկախության փոխարինումը իրական ներքին ինքնավարությունով՝ լեզվի, մշակույթի, արդարադատության, ներքին գործերի, հողագործության և այլ իմաստով»:[458]

Մինչ Լենինը նախապատրաստում էր հարցի վերաբերյալ իր մոտեցումները և պատրաստվում էր առաջարկություններ ներկայացնել ՌԿ/բ/Կ Կենտկոմ, վերջինիս կազմբյուրոյի հանձնաժողովը աննշան ուղղումներով ու լրացումներով սեպտեմբերի 24-ին ընդունում է «ստալինյան ավտոնոմիզացիայի ծրագիրը»:[459] Ի տարբերություն Բելոռուսիայի, Ուկրաինայի, Ադրբեջանի և հատկապես Վրաստանի ներկայացուցիչների, որոնք բանաձևի քննարկման ընթացքում պնդում էին այս կամ այն չափով ընդլայնել հանրապետությունների իրավունքները և թույլատրել հանձնաժողովի որոշումները քննարկել հանրապետությունների կուսակցական կազմակերպություններում, Հայաստանի ներկայացուցիչ Ալ. Մյասնիկյանն անվերապահորեն պաշտպանեց ստալինյան բանաձևը:

Սակայն «ստալինյան ավտոնոմիզացիայի ծրագիրը» չի արժանանում Վ. Լենինի հավանությանը: ՌԿ/բ/Կ Կենտկոմի քաղբյուրոյի անդամներին սեպտեմբերի 26-ին հղած նամակում շեշտելով հարցի չափազանց կարևորությունը և քննադատելով Ստալինի կողմից դրսևորած շտապողականությունը, Լենինը առաջարկում է խորհրդային հանրապետությունների միավորումը անցկացնել սկզբունքորեն այլ հիմքի վրա՝ ՌՍՖՍՀ կազմ մտնելու փոխարեն, նրանց և Ռուսաստանը միավորել նոր պետականության՝ «Եվրոպայի և Ասիայի խորհրդային հանրապետությունների միության» մեջ և խստորեն պահպանել հանրապետությունների իրավահավասարությունն ու անկախությունը, միությունից դուրս գալու իրավունքը:[460]

Ստալինը ստիպված է լինում ընդունել Լենինի առաջարկությունները, արմատապես վերամշակել բանաձևը և իր, Գ. Օրջոնիկիձեի, Ալ. Մյասնիկյանի և Վ. Մոլոտովի ստորագրությամբ սեպտեմբերի վերջին Կենտկոմի հաստատմանը

---

[458] Նույն տեղում, էջ 198-199:
[459] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 177, թ. 69-72:
[460] Լենին, ԵԼԺ, հ. 45, էջ 252-254:

ներկայացնել սկզբունքորեն նոր նախագիծ: Հեղինակները թաքցնում էին, որ այն արմատապես վերամշակվել է Լենինի նկատողությունների և առաջարկությունների հիմնա վրա:

1922 թ. հոկտեմբերի 6-ին ՌԿ/բ/Կ Կենտկոմի պլենումը աննշան ուղղումներով և լրացումներով ընդունում է հանձնաժողովի 4 անդամների կողմից ներկայացրած բանաձևի նախագիծը որպես Կենտկոմի հրահանգ:[461] Բանաձևում անհրաժեշտ է համարվում Ուկրաինայի, Բելոռուսիայի, Անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիայի և ՌՍՖԽՀ-ի միջև «Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության» կազմում միավորվելու մասին պայմանագրի ստորագրումը: Պլենումը որոշում է հանձնարարել Ստալինի նախագահությամբ բոլոր հանրապետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմավորված նոր հանձնաժողովին Կենտկոմի հրահանգի հիման վրա նախապատրաստել ԽՍՀՄ կազմավորման մասին օրենքի նախագիծ՝ այն խորհուրդների համագումարի միջոցով անցկացնելու համար:[462] Խորհրդային հանրապետությունների միավորման գործընթացի գաղտնիության քողը թեև բացվում էր և այն իրականացվելու էր հանրապետությունների բարձրագույն օրենսդիր մարմինների միջոցով, սակայն բոլշևիկյան կուսակցության վերնախավը ակնկալում էր ոչ թե հարցի համաժողովրդական քննարկում և բազմակարծություն, այլ միանշանակ հավանություն և անցկացում «կուսակցական կարգով»:

Եթե «ստալինյան ավտոնոմիզացիայի ծրագրի» համաձայն Խորհրդային Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը մտնելու էին ՌՍՖԽՀ-ի կազմ որպես առանձին միավորներ, ապա ՌԿ/բ/Կ Կենտկոմի հոկտեմբերի 6-ի ընդունած բանաձևով նրանք միավորվելու էին Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելոռուսիայի հետ Անդրֆեդերացիայի միջոցով, որպես միասնական միավոր: 1922 թ. դեկտեմբերի 10-13-ը Բաքվում հրավիր-

---

[461] Վ. Լենինը հիվանդության սրման պատճառով թեև չէր մասնակցում պլենումի աշխատանքներին, սակայն նույն օրը Լ. Կամենևին ուղղված երկտողում վերստին պնդեց Միության մեջ մտնող հանրապետությունների իրավահավասարությունը պահպանելու օգտին: Լենինը հատուկ ընդգծում է, որ «Վելիկոռուսական շովինիզմին հայտարարում եմ ոչ թե կյանքի, այլ մահու կռիվ» /տես՝ Լենին, ԵԼԺ, հ. 45, էջ 255/:

[462] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 177, թ. 75:

ված Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը Խորհրդային Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի Ֆեդերատիվ Միությունը՝ ԱՄԽՀՖՄ-ը, վերափոխեց Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության /ԱՍՖԽՀ/, ընդունեց նրա Սահմանադրությունը և որոշեց միավորվել ՌՍՖԽՀ-ի, Ուկրաինայի և Բելոռուսիայի հետ՝ ԽՍՀՄ-ի կազմում:

ԽՍՀՄ կազմավորման հարցը իր վերջնական լուծումը ստացավ 1922 թ. դեկտեմբերի վերջին: Խորհրդային չորս հանրապետությունների կողմից լիազորված պատվիրակությունների կոնֆերանսը դեկտեմբերի 29-ին հաստատեց ԽՍՀՄ-ի կազմավորման մասին Հռչակագրի և միութենական պայմանագրի նախագծերը: Դրանք հաջորդ օրը դեկտեմբերի 30-ին, կնքվեցին ՌՍՖԽՀ-ի, ԱՍՖԽՀ-ի, Խորհրդային Ուկրաինայի և Բելոռուսիայի ներկայացուցիչների կողմից և հաստատվեցին ԽՍՀՄ խորհուրդների առաջին համագումարում: ԽՍՀՄ-ի կազմավորման մասին Հռչակագրում արձանագրվեց, որ ԽՍՀՄ-ը բաց է խորհրդային բոլոր հանրապետությունների համար և նրա կազմավորումը վճռական քայլ է մոտ ապագայում Համաշխարհային Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն ստեղծելու ճանապարհին:

Թեև ի տարբերություն «ստալինյան ավտոնոմիզացիայի (ինքնավարության) ծրագրի» ԽՍՀՄ-ի կազմավորումը որակապես առաջընթաց քայլ էր, այնուամենայնիվ նրա ստեղծումը հասունացած չէր: Պատահական չէ, որ ԽՍՀՄ-ի կազմավորման առիթով դեկտեմբերի 31-ին շարադրված «Ազգությունների կամ «ավտոնոմիզացիայի» հարցի մասին» նամակում Վ. Լենինը մեղադրեց Ստալինին հանրապետությունների միավորման հարցում դրսևորած շտապողականության, հապճեպության և վարչարարության մեջ, այդ գործընթացի ընթացքում թույլ տված սխալների ամբողջ պատասխանատվությունը դնելով վերջինիս՝ որպես Կենտկոմի գլխավոր քարտուղարի, վրա: Արտահայտվելով ԽՍՀՄ-ը ամրապնդելու օգտին և չեշտելով, որ նրա կազմում հանրապետությունների իրավահավասարությունը պետք է լինի ոչ թե ձևական, այլ իրական, Լենինը հակված էր այն կարծիքին, որ ԽՍՀՄ-ը պետք է թողնել «միայն ռազմական և դիվանագիտական տեսակետից, իսկ մյուս բոլոր տեսակետներից կվերականգնենք /հանրապետությունների - հեղ./ առանձին ժողկոմատների լիակատար ինքնուրույնությունը»: Սակայն հիվանդության

կարուկ սրման հետևանքով 1923 թ. սկզբից Վ. Լենինն այլևս ի վիճակի չեղավ հետամուտ լինել իր ծրագրերի իրականացմանը: Պետական և կուսակցական գործերից Վ. Լենինի հեռացումը, իսկ այնուհետև և նրա մահը, Ի. Ստալինին հնարավորություն տվեցին ԽՍՀՄ քողի տակ աստիճանաբար և հետևողականորեն անցկացնել սեփական «ավտոնոմիզացիայի ծրագիրը»:

Խորհրդային Միությունը, որը բոլշևիկները համարում էին ազգային հարցի լուծման լավագույն ձև, իրականում միաձույլ կենտրոնացված պետություն էր՝ կոմունիստական կուսակցության վերնախավի դիկտատուրայով, որտեղ վճռականորեն և ամենայն խստությամբ ճնշվում էր այլախոհության յուրաքանչյուր դրսևորում: Այնուհանդերձ՝ չանտեսելով խորհրդային հասարակարգում գոյություն ունեցող բացասական երևույթները, կոմունիստական կուսակցության ամենատիրությունը, կազմակերպած բռնությունները, այլախոհության հետապնդումը և այլն, ԽՍՀՄ կազմում խորհրդային հանրապետությունները, այդ թվում Հայաստանը, պահպանելով ազգային պետականությունը, ունեին տարածքային ինքնավարության իրական կարգավիճակ, պաշտպանված էին արտաքին սպառնալիքներից, ստացան տնտեսական զարգացման լայն հնարավորություններ: Ինչ վերաբերում է կրթությանը, գիտությանը և մշակույթին, ապա տվյալ տասնամյակները անհամեմատելի են հայ ժողովրդի պատմության ամբողջ անցած դարերի հետ:

KAREN KHACHATRYAN
Institute of History, NAS RA

ARMENIA IN THE PROCESSES OF THE FORMATION OF THE TRANSCAUCASIAN FEDERATION AND THE USSR IN 1921-1922

Summary

On March 8-16, 1921 at the 10th Congress of the RC(B)P held in Moscow the authorities of Soviet Russia discussed the question of interrelations of the Soviet national republics which

during 1917-1921 were formed on the greater part of the former Russian Empire. The Congress adopted a resolution "About current tasks of the party in the national question" on the basis of the report (on behalf of the Central Committee) of the People's commissar of the nations of RSFSR, J.Stalin.

According to the resolution, the isolated existence of a Soviet republic surrounded by the anti-Soviet imperialistic states was unreasonable and aimless.

It was noted that the defense and common interests of the republics in the process of reconstruction of economy, mutual help, solidarity of nations, close military-political relations "dictated the state union of separate Soviet republics."

The best form of the union had been considered Soviet federation, based on the mutual trust between the republics and the principle of voluntariness.

The relations between Soviet Russia and other Soviet national republics, first of all, were constructed on the basis of "the military-political coalition" and then mutual "federative treaties."

The high echelon of the Bolshevik party considered federative relations based on the principle of the Soviet national autonomy as a transitional stage in the direction of formation of "the International Soviet Republic" after the victory of the world revolution.

The Soviet Union, which the Bolsheviks considered as the best form of the resolution of the national question, in reality, was a centralized state with the dictatorship of the high echelon of the Communist party where any expression of dissent was resolutely and severely punished.

Therefore, not neglecting the fact of negative phenomena existing in the Soviet society (totalitarianism of the Communist party, organized mass repressions, the persecution of dissidents and etc.), the Soviet republics, including Armenia, preserving their national states, had a real status of the territorial self-governance and were defended from external threats, receiving extensive opportunities of the economic development.

As far as it concerned the spheres of education, sciences and culture those decades were outstanding in the history of the Armenian people.

ՀԱՅԿ ՎԻՐԱԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1920-1930-ական թվականներ)

Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում տեխնիկական բարձր գիտելիքներով զինված բանվորական կադրերի պատրաստման հարցը դառնում է շատ կարևոր ու անհետաձգելի: Այդ ուղղությամբ բավականաչափ աշխատանքներ էին կատարվել: Հանրապետությունում բացվել էին տեխնիկական ուսումնական նոր հաստատություններ, տեխնիկումներ ու բանվորական ֆակուլտետներ: Որակյալ բանվորական ուժի, մասնագիտական կադրերի պատրաստման գործը հանձնարարված էր լուսավորության ժողովրդական կոմիսարիատին: Հաշվի առնելով ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարները և այդ գործում արտադրական-տեխնիկական կադրերի պատրաստման խիստ կարևորությունը, Հանրապետության ղեկավարությունը խնդիր է դնում օգտագործել բոլոր հնարավորությունները: 1921 թ. նոյեմբերին Երևանում բացվում է ինդուստրիալ տեխնիկումը, որն ուներ էլեկտրամեխանիկական և շինարարական բաժիններ: 1922-1923 ուսումնական տարում տեխնիկումին միացվեցին Երևանի թիվ 2 միջնակարգ դպրոցի երկրորդ և երրորդ խմբերը՝ 83 աշակերտներով: Այդ ուստարվա վերջում տեխնիկումում արդեն ուսանում էին 141 սովորողներ՝ 1921 թ. - ի 48-ի դիմաց[463]:

1922 թ. սկզբներին ինդուստրիալ տեխնիկում է բացվում նաև Ալեքսանդրապոլ քաղաքում (այժմ Դյումրի), որն ուներ ատաղծագործական, շինարարական և մեքենայական բաժիններ, ուր մասնագիտանում էին 176 սովորողներ: Այս տեխնիկումները հանրապետության արդյունաբերությանը տալիս էին միջին որակավորման մասնագետներ: Տեխնիկումներում ուսման տևողությունը 4 տարի էր: 1924-25 ուսումնական տարում Երևանի ինդուստրիալ տեխնիկումը թողարկեց 30 շրջա-

---

[463] Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1920-1922 թթ. հաշվետվությունը, Ե., 1923, էջ 127:

նավարտ, որոնք աշխատանքի անցան քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում:

1928-1929 ուստարում Հանրապետության արդյունաբերական թեքումով տեխնիկումներում սովորում էին 310 պատանիներ ու աղջիկներ, իսկ առաջին հնգամյա պլանով (1928-1932 թթ.) պահանջվում էր այդ տեխնիկումների շրջանավարտների թիվը հասցնել 2800-ի: Սակայն հնգամյակի վերջում՝ 1932 թ. պատրաստվել էր ընդամենը 1756 մասնագետ, որը կազմում էր նախատեսված պլանի 62,7%[464]:

Հետզհետե ավելանում էր արդյունաբերական կադրեր պատրաստող տեխնիկումների թիվը: Այսպես, 1928-1929 ուստարում եղած 13 տեխնիկումների փոխարեն 1932-1933 ուստարում գործում էր 65 տեխնիկում, իսկ սովորողների թիվը 1852-ից հասել էր 7555-ի[465]: Այդ տեխնիկումների մեծ մասը գյուղատնտեսական թեքում ուներ, իսկ 7-ը արդյունաբերական-շինարարական էր: Դրանք հիմնականում տեղաբաշխված էին Հանրապետության արդյունաբերական կենտրոններում՝ Երևանում, Լենինականում, Ղաբաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր), Ալավերդում, Կապանում և Արթիկում:

Սակայն արտադրական-տեխնիկական կադրերի եղած քանակը չէր բավարարում գործող ձեռնարկություններին: Վերադաս մարմինների հանձնարարությամբ կադրերի պատրաստումը տեղերում պետք է պլանավորվեր ժողովրդական տնտեսության պահանջներին խիստ համապատասխան և բարձրացվեր նրանց մասնագիտական մակարդակը: Ուսուցումը պետք է տարվեր տեսության և պրակտիկայի միասնությամբ: Արդյունաբերության, շինարարության, կապի և տրանսպորտի մեծ թվով մասնագետներ պատրաստեցին Հայաստանի 12 տեխնիկումները երկրորդ հնգամյակի տարիներին (1933-1937 թթ.): Այսպես, եթե մինչև առաջին հնգամյակը և առաջին հնգամյակի տարիներին պատրաստվել էր այդ մասնագիտությունների գծով 637, ապա երկրորդ հնգամյակում 1031 մասնագետ[466]:

Թեև բացվել էին նոր տեխնիկումներ, սակայն դեռևս մասնագետ կադրերը չէին բավարարում օրավուր աճող պահանջները:

---

[464] ՀԱԱ, ֆ. 48, g.3, գ. 284, pp. 61-62:

[465] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940 гг.), Е., 1940, с. 113:

[466] Նույն տեղում, էջ 115:

Տեխնիկումներին կից բացվում են նոր բաժիններ: Այսպես, Երեւանի շինարարական տեխնիկումին առընթեր ստեղծվում է հիդրոտեխնիկական բաժին: Տեխնիկումները համալրվում էին նոր մասնագիտություններով: Կային էլեկտրամեքենաշինական, քիմիական, շինարարական, լեռնային, լեռնային-բանվորական, թեթև արդյունաբերական, ճանապարհային, հիդրոտեխնիկական, հիդրոմելիորատիվ և այլ տեխնիկումներ, որոնք դրված էին համապատասխան ժողովրդական կոմիսարիատների տնօրինության ներքո և նախատեսվում էր նրանց միավորել ըստ ճյուղային հատկանիշի:

Արդյունաբերական կադրերի պատրաստման գործում մեծ ավանդ ունեն նաև Հայաստանի բանվորական ֆակուլտետները (բանֆակ): Առաջին բանֆակն ստեղծվել էր 1923 թ. փետրվարին Երևանում, համալսարանին առընթեր: Երկրորդ բանֆակը կազմակերպվեց Ալեքսանդրապոլում նույն թվականի սեպտեմբերին, իսկ երրորդ բանֆակը՝ Երևանում 1924 թ.: Եթե Երևանի բանֆակն արդեն երկրորդ կուրսից ուներ հասարակագիտական և տեխնիկական թեքում, ապա Լենինականի բանֆակը միայն տեխնիկական: 1924-1925 ուստարում Երևանի բանֆակում ուսանում էին արդեն 370 սովորողներ, իսկ Լենինականում՝ 365:

Առաջին հնգամյակի տարիներին խնդիր էր դրվում ոչ միայն մասնագետ կադրերի պատրաստումը, այլև նրանց որակի բարձրացումը: Խիստ անհրաժեշտ էր պատրաստել մասնագիտական, տեխնիկական ու տնտեսագիտական գիտելիքներով զինված ու լայն հասարակական-քաղաքական մտահորիզոն ունեցող կադրեր: Տեխնիկական մասնագիտության բոլոր հաստատությունները տրվում են համապատասխան Ժողկոմատներին: Ուսուցման հիմքում դրվում է ժողովրդական տնտեսության ճյուղային մասնագետների պատրաստումը: Ստեղծվում են ճյուղային բանֆակներ: Վերացվում է ուսուցման լաբորատոր բրիգադային մեթոդը և կիրառվում են ուսումնական հաստատությունների մասնագիտություններին համապատասխան մեթոդներ:

Բանֆակների մասին Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհրդի ընդունած կանոնադրության մեջ ասվում էր, որ դրանց նպատակն է բանվորական և գյուղացիական խավերին լայնորեն ընդգրկել բարձրագույն դպրոց, աշխատավորներից բուհերի

համար ուսանողական կադրեր պատրաստել[467]: Բանֆակներում ուսման տևողությունը 3 տարի էր: Շրջանավարտներն ստանում էին միջնակարգ կրթություն: 1925-1926 ուստարում Երևանի բանֆակը տվեց առաջին շրջանավարտները՝ թվով 28 հոգի, որոնցից 23-ը ընդունվեց համալսարան, իսկ 1928-1929 ուստարում բանֆակի 48 շրջանավարտներից համալսարան ընդունվեցին 32-ը:

1928 թ. սկսում է փոխվել բանֆակների բնույթը: Այլևս դրանք ոչ միայն բանվոր և գյուղացի երիտասարդներին նախապատրաստում էին բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելու համար, այլ նաև ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների համար պատրաստել կուսակցական, խորհրդային, տնտեսական ու մշակութային աշխատողներ:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի 1930 թ. որոշմամբ բանֆակները վերակառուցվեցին, համապատասխան մասնագիտություններ թեքում ունեցան: Օրինակ, Երևանի բանֆակի երեկոյան բաժնին տրվեց ինդուստրիալ-տեխնիկական, ցերեկայինին՝ գյուղատնտեսական, իսկ ադրբեջանական բաժնին՝ հասարակագիտական թեքում: Լենինականի բանֆակում կազմակերպվեցին ինդուստրիալ-տեխնիկական և գյուղատնտեսական բաժիններ: Ինդուստրիալ-տեխնիկական բաժիններ բացվեցին նաև Ալավերդու և Կապանի բանֆակներում[468]: 1932-1933 ուստարում հանրապետության 11 բանֆակներում ուսանում էր 2644 սովորող[469]:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի 1936 թ. ապրիլի 1-ի որոշմամբ բանֆակները վերացվում են, որովհետև միջնակարգ դպրոցներն ու տեխնիկումները լիովին ապահովում են բուհերին: Նախ փակվեցին գյուղատնտեսական բանֆակները, ապա վերացվեց Ալավերդու ինդուստրիալ բանֆակը: Հետագայում լուծարվեցին նաև Երևանի ինդուստրիալ և Լենինականի տեքստիլ բանֆակները[470]:

---

467 «Ժողովրդական լուսավորություն», 1929, թիվ 2, էջ 20-24:

468 ՀԱԱ, Ֆ.113, ց.3, գ. 1068, թ. 146:

469 Социалистическое строительство Армянской ССР (1920-1940гг.), с. 113.

470 Հայրապետյան Ս. Պ., Սոցիալիզմի կառուցումը և կադրերի պատրաստումը Հայաստանում, Ե., 1974, էջ 114:

Բանվորական կադրեր էին պատրաստում նաև դպրոց-արհեստանոցները: 1921 թ. մարտից Երևանում բացվեց կոշկակարական դպրոց-արհեստանոցը, որտեղ 1922-1923 ուստարում սովորում էին 91 պատանիներ ու աղջիկներ: 1923 թ. Երևանում սկսում է գործել նաև կարուձևի առաջին դպրոց-արհեստանոցը՝ 117 աշակերտով: Համանման դպրոց-արհեստանոցներ են բացվում Լենինականում, Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ), Դիլիջանում և Վաղարշապատում (այժմ՝ Էջմիածին): 1925 թ. այդպիսի դպրոց-արհեստանոցների թիվը հանրապետությունում հասնում է 24-ի, որտեղ սովորում էին հազարավոր պատանիներ ու աղջիկներ: Երևանի դպրոց-արհեստանոցը պատրաստում էր խառատներ, փականագործներ, թիթեղագործներ: Աշակերտները սովորում էին դարբնություն, որմնադրություն, հյուսնություն և այլ մասնագիտություններ:

Որակյալ բանվորական կադրեր էր պատրաստում նաև Լենինականի տեքստիլ կոմբինատի ուսումնացուցադրական դպրոցը, որտեղ 1925 թ. սովորում էին 120 աշակերտներ, որոնք հմտանում էին մանածագործության մեջ[471]:

Հանրապետությունում կազմակերպվում են նաև բանվորական կրթության կոմբինատներ: Այդպիսի կոմբինատներ են կազմակերպվում Երևանի ձեթ-օճառի, գարեջրի, պահածոյի, ծխախոտի գործարաններում, հացառում, «Արարատ» տրեստում, Հայյուղարգում, Լենինականի տեքստիլ և փայտամշակման գործարաններում, Քանաքեռհէկի, Արտաշատի ջրանցքի շինարարություններում, Հայտնարկոոպի գրեթե բոլոր ձեռնարկություններում, Անի պեմզայում, Արթիկ տուֆում, Ալավերդու և Կապանի պղնձահանքերում, Իավլուում և Կիրովականի քիմիական գործարանում[472]:

Բանվորական կադրեր էին պատրաստում նաև պրոֆտեխնիկական դպրոցները: 1925 թ. Հայաստանում գործում էին այդպիսի 5 դպրոցներ, որտեղ սովորում էին 220 պատանիներ ու աղջիկներ: 1928-1932 թթ. պրոֆտեխնիկական դպրոցների թիվն ավելացավ և հասավ 31-ի[473]:

Բանվորական կադրերի պատրաստման դարբնոց էին հանրապետության ֆաբրիկա-գործարանային ուսուցման

---

471 Կարապետյան Հ. Ս., Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի ձևավորումը և զարգացումը (1920-1940), Ե., 1980, էջ 55:
472 ՀԱԱ, Ֆ.119, ց.1, գ. 1233:
473 Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով, Ե., 1935, էջ 204:

դպրոցները (ֆաբգործուս) և դրանց հավասարեցված դպրոցները: 1924 թ. կազմակերպվեց Լենինականի տեքստիլ կոմբինատի ֆաբգործուսի առաջին դպրոցը, որը ռուս մասնագետների օգնությամբ սկսեց պատրաստել ազգային տեխնիկական կադրեր, հանրապետության թեթև արդյունաբերության ձեռնարկությունների համար[474]: 1927 թ. դրանք թվով 5-ն էին, որոնք բացվեցին Ալավերդու և Կապանի լեռնահանքային կոմբինատներին առընթեր և Լենինականի երկաթուղային հանգույցում: Այդ ֆաբգործուսներում սովորում էին 260 աշակերտներ[475]: 1928-1929 ուստարում Հայաստանում արդեն գործում էին 21 ֆաբգործուսներ՝ 2168 աշակերտներով[476]: Ընդարձակվում են Ալավերդու և Կապանի պղնձաձուլական, Երևանի կաուչուկի կոմբինատներին, հաստոցաշինական, մեխանիկական, կարի, պահածոյի, փայտամշակման գործարաններին, Արթիկի տուֆին և Քաջարանի լեռնահանքային ձեռնարկություններին առընթեր ֆաբգործուսները: 1932-1933 ուստարում Հայաստանում բանվորական կադրեր էին պատրաստում արդեն 30 ֆաբգործուսներ՝ 3425 աշակերտներով, իսկ 1935-1936 ուստարում ֆաբրիկա-գործարանային ուսուցման և դրանց հավասարեցված դպրոցների թիվը հասավ 32-ի, որոնք ժողովրդական տնտեսությանը տվեցին 1000-ից ավելի որակյալ աշխատողներ[477]:

Սակայն պետք է նշել, որ ֆաբգործուսի համակարգը բանվորական ուժի հավաքագրման, պատրաստման և բաշխման արդեն հնացած եղանակով չէր կարող բուռն աճող արտադրությանն ապահովել բանվորական որակյալ կադրերով: Այսպես, 1933-1940 թթ. արդյունաբերությանը, շինարարությանը, տրանսպորտին և տնտեսության այլ ճյուղերին դրանք տվեցին ընդամենը 5 հազար բանվորներ[478], որը կազմում է այդ տարիներին բանվոր դասակարգի քանակական աճի 8%[479]:

---

[474] Միքայելյան Ս., Սովետական Հայաստանի պրոֆեսիոնալ-տեխնիկական դպրոցը, Ե., 1978, էջ 11:
[475] ՀԱՍ, Ֆ.65, g.2, գ. 813, թթ. 190-191:
[476] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940 гг.), с. 113.
[477] Հարությունյան Հ. Մ., Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում (քանակը, կազմը), Ե., 1983, էջ 88:
[478] Կարապետյան Հովհ., նշված աշխ., էջ 263:
[479] Հարությունյան Հ. Մ., նշված աշխ., էջ 89:

Մինչև 1929 թ. ֆաբդործուսի դպրոցները գտնվում էին լուսավորության ժողովրդական կոմիսարիատի տնօրինության ներքո և ուսումնադաստիարակչական ամբողջ աշխատանքը ղեկավարում էին լուսժողկոմատը և նրա տեղական մարմինները: 1929 թ. մարտին անհրաժեշտություն զգացվեց ֆաբրիկա-գործարանային ուսուցման դպրոցները հանձնել արդյունաբերական ձեռնարկությունների տնօրինությանը, իսկ լուսժողկոմատի մարմինների վրա դրվեց ուսումնական գործի կազմակերպումն ու ղեկավարումը: Հաստատվեց նաև ֆաբգործուսի դպրոցների կանոնադրությունը, որով սահմանվեցին այդ դպրոցների տարատեսակները: Դրանք հետևյալներն էին. ա) գործարաններին, ֆաբրիկաներին և հանքերին առընթեր ֆաբգործուսի դպրոցներ; բ) ինքնուրույն ֆաբրիկագործարանային (դպրոց-գործարան, դպրոց-ֆաբրիկա); գ) շրջանային ֆաբգործուսի; դ) ուսուցման և դաստիարակության դեռահաս բանվորների տներ անհատական և բրիգադային ուսուցման կարգով[480]:

Կանոնադրությամբ սահմանված էր ֆաբգործուսներ ընդունել 14-16 տարեկան պատանիներ ու աղջիկներ:

Արդյունաբերության բուռն զարգացումը և արդյունաբերական ձեռնարկությունները նորագույն տեխնիկայով վերազինումը նոր պահանջներ էին առաջադրում ինչպես բանվորներին, այնպես էլ պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության ողջ համակարգին: Գնալով հասունանում էր բանվորական կադրերի պատրաստման հրատապությունը: Ուստի անհրաժեշտություն զգացվեց բանվորական կադրերի պատրաստումը կենտրոնացնել պետական միասնական մի համակարգում, որը պետք է զբաղվեր տարբեր մասնագիտությունների որակյալ բանվորական կադրերի պատրաստման գործով: Այդ նպատակով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1940 թ. հոկտեմբերի 2-ին ընդունում է հրամանագիր «ԽՍՀՄ պետական աշխատանքային ռեզերվներ ստեղծելու մասին»: Խնդիր էր դրվում կազմակերպված կարգով քաղաքի և գյուղի երիտասարդությունից ստեղծել անհրաժեշտ ռեզերվներ արդյունաբերության համար:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը անհրաժեշտ էր համարում մետաղագործներ, քիմիագործներ, լեռնագործներ, նավթագործներ, էլեկտրատեխնիկ, բետոնագործներ և

---

[480] Միքայելյան Ս., Նշվ. աշխ., էջ 11-12:

այլ բարդ մասնագիտությունների տեր բանվորական կադրեր պատրաստելու նպատակով ստեղծել արհեստագործական ուսումնարաններ՝ երկու տարվա ուսման տևողությամբ: Երկաթուղային տրանսպորտի համար բացվեցին երկամյա երկաթուղային ուսումնարաններ, իսկ զանգվածային մասնագիտությունների գծով որակյալ բանվորական կադրեր պատրաստելու նպատակով ստեղծվեցին ֆաբգործուսի դպրոցներ՝ վեցամսյա ուսման տևողությամբ[481]: Սովորողների բոլոր ծախսերը (ուսուցում, սնունդ, հագուստ) կատարվում էր պետության միջոցներով:

Շրջանավարտները պարտավոր էին իրենց մասնագիտությամբ արտադրության մեջ աշխատել ոչ պակաս 4 տարի, ստանալով օրենքով սահմանված վարձատրություն:

ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր ստեղծվեց աշխատանքային ռեզերվների գլխավոր վարչություն, իսկ մյութենական հանրապետություններում՝ աշխատանքային ռեզերվների վարչություն:

Կոլտնտեսությունների ղեկավարները և քաղաքային խորհուրդները պարտավոր էին ամեն տարի 14-15 տարեկան պատանիներ գործուղել արհեստագործական, երկաթուղային ուսումնարաններ և 16-17 տարեկան երիտասարդներ՝ ֆաբգործուսի դպրոցներ:

Աշխատանքային ռեզերվների ստեղծումով Հայաստանում ֆաբգործուսի դպրոցների թիվն ավելացավ 5-ով և հասավ 9-ի[482], իսկ Երևանում, Լենինականում, Կապանում, Ալավերդում ստեղծվեցին նոր արհեստագործական ուսումնարաններ:

Համկ(բ)կ Կենտկոմի 1935 թ. դեկտեմբերյան պլենումի որոշման համաձայն հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում ևս բավականաչափ աշխատանք է կատարվում մեթոդական նոր հիմունքներով տեխնիկական մինիմում հանձնելու ուղղությամբ: Դրանք հանձնելու համար սահմանված էր երեք աստիճան: Տեխնիկական մինիմումի առաջին աստիճանը հանձնում էին բոլոր բանվոր-ծառայողները: Երկրորդ աստիճանը վերաբերում էր միայն ստախանովյան բանվորներին, իսկ երրորդ աստիճանը սոցիալիստական աշ-

---

[481] Նույն տեղում, էջ 16:

[482] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940 гг.), с. 113:

խատանքի վարպետներին և երկարամյա կուրսերում սովորող ստախանովական բանվորներին:

1936 թ. Լենինականի տեքստիլ կոմբինատում տեխմինիմումը հանձնում են 289 բանվոր-ծառայողներ, Քանաքեռհէկի շինարարությունում՝ 287, Կիրովականի քիմիական կոմբինատում՝ 281, իսկ Երևանի պահածոների գործարանում՝ 502 բանվործառայողներ[483]:

1936 թ. Հանրապետության 20 արդյունաբերական ձեռնարկություններում կազմակերպվում են ավելի քան 560 տեխմինիմումի խմբակներ: Լենինականի տեքստիլ կոմբինատում կազմակերպված 80 խմբակներում և դասընթացներում սովորում էին ավելի քան 1100 տեքստիլագործներ, Երևանի սինթետիկ կաուչուկի կոմբինատի շինարարությունում կազմակերպվում է 37 խմբակ, ուր ընդգրկված էին 426 բանվոր-ծառայողներ[484]:

Գնալով տեխմինիմումների ցանցն ընդլայնվում էր, ավելանում սովորողների թիվը: Կիրովականի քիմիական կոմբինատում 1939 թ. որակավորված 316 բանվորներից 238-ը կամ 69% անցել էր տեխմինիմումի խմբակներով, իսկ Լենինականի մայիսյան ապստամբության անվան մանվածքաղոծվածքային ֆաբրիկայում՝ 283-ից 179 կամ 63,3%[485]: 1937 թ. միայն Ալավերդու պղնձաձուլական կոմբինատում կազմակերպվել էր 8 տեխմինիմումի խմբակ, որտեղ սովորում էին 183 բանվորներ:

1936 թ. Հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող 13902 բանվորից 7121-ը կամ 51,2% ավարտում է առկա կարճատև դասընթացները, իսկ 5515-ը հանձնում տեխնիկական մինիմումի քննությունները[486]:

Բանվորական կադրերի պատրաստումը և որակավորման բարձրացումը արտադրության մեջ կատարում էին նաև արտադրատեխնիկական խմբակներն ու դպրոցները: Գրանք հանդես եկան 1930-ական թթ. երկրորդ կեսին: Այդ խմբակներում ու դպրոցներում ուսուցումը տարվում էր 4 փուլով: Առաջին փուլում բանվորի վերապատրաստումն իրականացվում էր անհատական կամ խմբակային ձևով, մինչև 8 ամիս տևողությամբ: Այնուհետև բանվորները քննություն էին հանձնում և

---

483 ՀԱԱ, Ֆ.1, g. 25, գ. 3:
484 ՀԱԱ, Ֆ.187, g.2, գ. 228, pp. 47-51:
485 Հարությունյան Հ.Մ., նշվ. աշխ., էջ 123:
486 ՀԱԱ, Ֆ.1, g.24, գ. 232:

ստանում՝ 3-րդ կամ 4-րդ տարիֆային կարգ: Ուսուցման երկրորդ փուլում՝ 5-6 ամիս տևողությամբ, բանվորներն ստանում էին 5-րդ կամ 6-րդ կարգի որակավորում: Երրորդում՝ 10 ամիս տևողությամբ՝ 6-7 կարգի որակավորում, իսկ չորրորդում՝ կրտսեր անձնակազմի աշխատողներ (բրիգադավարներ և վարպետներ՝ համապատասխանաբար 4 և 15 ամիս տևողությամբ[487]:

Արտադրատեխնիկական խմբակներ ու դպրոցներ Հայաստանում գործում էին գրեթե բոլոր արդյունաբերական ձեռնարկություններում ու արտաղրամասերում, ուր բացվել էին 700-ից ավելի այդպիսի խմբակներ ու դպրոցներ: Միայն Երևանի արդյունաբերական ձեռնարկություններում սովորում էին մոտ 7000 երիտասարդ բանվորներ[488]:

1928 թ. վերջերին Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում աշխատում էին ավելի քան 400 տեխնիկական մասնագետներ, որոնք կրթություն էին ստացել նախահեղափոխական Ռուսաստանի բարձրագույն և միջնակարգ տեխնիկական ուսումնական հաստատություններում և արտասահմանում[489]: Սոցիալիզմի կառուցման տարիներին հին մտավորականությունը իրեն լիովին արդարացրեց և խանդավառությամբ կատարում էր իր մասնագիտական պարտականությունները:

1929 թ. հանրապետությունում գործում էր 3 բուհ՝ Երևանի պետական համալսարանը, Երևանի պետական կոնսերվատորիան և Անդրկովկասյան անասնաբուժական ինստիտուտը՝ 1366 ուսանողներով:

1929 թ. վերջերին Երևանի պետական համալսարանը վերակառուցվեց: Մի շարք ֆակուլտետների հիմքի վրա ստեղծվեցին նոր, ինքնուրույն ինստիտուտներ՝ ինժեներա-տեխնիկական (շինարարական), առևտրակոոպերատիվ, բժշկական, մանկավարժական, գյուղատնտեսական ինստիտուտները: Դա բխում էր ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման պահանջներից: Հետագայում, 1933 թ. Երևանի

---

[487] Հարությունյան Հ.Մ., նշվ. աշխ.,էջ 121:
[488] Նույն տեղում, էջ 121-122:
[489] Григорьянц А.К., Формирование и развитие технической интеллигенции Армении (1920-1965), Е., 1966, с. 116.

պետական համալսարանը վերաբացվեց իր ֆակուլտետներով[490]:

Երևանի շինարարական ինստիտուտը ստեղծվեց համալսարանի երկու ֆակուլտետների հիմքի վրա, որը 1933 թ. վերակառուցվեց պոլիտեխնիկական ինստիտուտի երկու ֆակուլտետներով՝ շինարարական և քիմիատեխնոլոգիական[491]:

Ձեռնարկած միջոցառումները մեծ թափ հաղորդեցին արդյունաբերական կադրերի պատրաստման գործին: Այսպես, օրինակ՝ 1928-1936 թթ. արդյունաբերական և շինարարական մասնագիտությունների գծով հանրապետության բուհերում սովորողների թիվն աճել է 3,5 անդամ, 237 մարդուց հասնելով 829 մարդու[492]: Արտադրական մտավորականությունն արագ կերպով աճեց: Եթե մինչև առաջին հնգամյակը և առաջին հնգամյակում պատրաստվել է ընդամենը 130 ճարտարագետ, ապա 1933-1940 թթ. ճարտարագետների թիվը հասավ 751-ի[493]: Միայն Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը 1933-1940 թթ. պատրաստում է 190 ջրաշինարար-ճարտարագետ, որոնց մեծ մասը աշխատանքի անցավ հանրապետության էլեկտրակայաններում[494]:

Հանրապետությունում տեխնիկական կրթության կազմակերպման և բարձրորակ ճարտարագետ տեխնիկական կադրեր պատրաստելու գործում մեծագույն ծառայություն են մատուցել անվանի և վաստակաշատ գիտնականներ Ստեփան Ղամբարյանը, Ալեքսանդր Հակոբյանը, Հովհաննես Նավակատիկյանը, Արշակ Տոնյանը, Լևոն Ռոտինյանը, Զապետ Խոջանեթյանը, Տիգրան Ջրբաշյանը, Գուրգեն Օգանեսովը, Լևոն Մանուչարյանը, Մարտին Կասյանը, Օգսեն Սապոնջյանը, Թորգոմ Խաչատրյանը և ուրիշներ[495]:

Բազմաթիվ հայ պատանիներ ու աղջիկներ բարձրագույն կրթություն ստացան Մոսկվայի և Կիևի պետական համալսարաններում, Մոսկվայի Բաումանի անվան բարձրագույն տեխ-

---

490 ՀԱԱ, Ֆ.113, ց.1, գ. 346, թ. 2:

491 Григорьянц А.К., նշվ. աշխ., էջ 162:

492 Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով, էջ 205:

493 Социалистическое строительство Армянской ССР (1920-1940 гг.), с. 114.

494 Հովակիմյան Ս.Գ., Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը, Ե., 1977, էջ 37:

495 Խաչատրյան Գ., Հայաստանի սոցիալիստական ինտելիգենցիայի կազմավորումն ու զարգացումը, Ե., 1968, էջ 83:

նիկական ուսումնարանում, Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտում և Ռուսաստանի այլ բուհերում: Միայն Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանում 1936-1937 ուստարում սովորել են 76, 1937-1938-ին՝ 64, 1938-1939-ին՝ 62, 1939-1940-ին՝ 64, իսկ 1940-1941-ին՝ 53 հայեր[496]: Բազմաթիվ երիտասարդներ ավարտելով Ռուսաստանի տարբեր բուհեր, վերադառնում էին Անդրկովկաս (նաև Հայաստան) ժողովրդական տնտեսության, մշակույթի, գիտության տարբեր ճյուղերում աշխատելու համար:

1933-1937 թթ. բարձրագույն և միջին որակավորում ունեցող մասնագետների կշիռը էապես աճեց: Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները գրեթե հագեցան բարձրորակ կադրերով: Այսպես, 1939 թ. արդյունաբերության մեջ զբաղված ճարտարագետ-տեխնիկական աշխատողների թիվը 1937 թ. համեմատությամբ 1033-ից վելացավ 530-ով և կազմեց 1563 կամ աճեց 51,3 %[497]: Վերը նշված տարիներին արդյունաբերության մեջ կատարվեցին բուռն տեղաշարժեր: Ընդհանուր բնակչության կազմում աճեց բանվոր դասակարգի թիվը, որը 1940 թ. կազմեց 92.4 հազար, իսկ բանվոր-ծառայողներինը՝ մոտ 156 հազար[498]: Այդ թվականին արդեն Հայաստանի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ կազմեց 78 %[499]:

Այսպիսով, նախապատերազմյան տարիներին Հայաստանը դարձավ առաջավոր հանրապետություն: Ստեղծվեցին արդյունաբերական բոլորովին նոր ճյուղեր՝ մեքենաշինական, քիմիական, շինանյութերի, թեթև և սննդի: Հանրապետությունում վերացվեց անգրագիտությունը, ստեղծվեցին բանվոր դասակարգի և մտավորականության որակյալ կադրեր, հիմք դրվեց բարձրագույն կրթությանը: Բանվորական և ճարտարագետ-տեխնիկական այս կադրերն էլ լուծեցին արդյունաբերության ամենաբարդ խնդիրները:

---

[496] Հայրապետյան Ս.Պ., Սոցիալիզմի կառուցումը և կադրերի պատրաստումը Հայաստանում, էջ 115:

[497] Նույն տեղում, էջ 116-117:

[498] Փահլևանյան Գ. Ա., Սովետական Հայաստանը Մեծ հոկտեմբերի 60-ամյակին, Ե., 1977, էջ 76:

[499] Հարությունյան Գ., Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը ՀԿ(բ)Կ 13-րդ համագումարին, Ե., 1940, էջ 16:

HAIK VIRABYAN
Institute of History, NAS RA

FROM THE HISTORY OF TRAINING OF THE INDUSTRIAL SPECIALIST IN SOVIET ARMENIA (the 1920-1930s)

Summary

During the years of the Soviet power the training of the workers with high technical skills became a very important and urgent issue in Soviet Armenia. Considerable works were carried out in that field. There were opened new institutions of technical education, technical schools and the working faculties. The People's Commissariat of Education was responsible for training qualified labour force and specialists. For this purpose the leadership of the Armenian Soviet Republic put the task of the usage of all means, taking into consideration the perspectives of the development of the National economy and the importance of training of the technical staff.

Thus, during the pre-war years Armenia became a technically progressive republic. There were created new industrial branches (engineering, chemical building materials and etc.). Illiteracy was abolished, qualified staff of the working class and intelligentsia was trained and the bases of the higher education were founded in Soviet Armenia. The most complex problems of the development of industry were in the process of solving by the trained specialists.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԱՅԵՐՆ ՈՒՐԱԼՈՒՄ, ԱՒԲԻՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ XX դ. 20-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

XX դարի 20-ական թթ. նախորդած շրջանը հայ ժողովրդի համար ունեցավ ճակատագրական նշանակություն, մեծ մասով պայմանավորեց ազգի գոյապահպանման և զարգացման խնդրի առաջնայնությունը: Առաջին Աշխարհամարտն ու Արևմտյան Հայաստանում հայության ցեղասպանությունը, ռուսական հեղափոխությունն 1917 թ. և նրան հաջորդած քաղաքացիական պատերազմը Ռուսաստանի տարբեր անկյուններում ծվարած հարյուր հազարավոր հայ փախստականների համար մղձավանջային տարիներ դարձան: Ռուսաստանի հայաշատ գաղթօջախները համալրվեցին նոր հայ զանգվածներով, որոնք, աստիճանաբար, ընդլայնեցին իրենց բնակության աշխարհագրությունը: Ռուսական Հյուսիսային Կովկասը, Դոնը, Պովոլժիեն, Ղրիմը, Թուրքեստանը և այլ հայաշատ համայնքներն ու նրանց պատմությունն ունեցել են իրենց ուսումնասիրողները,[500] հրապարակի վրա են գիտական մեծարժեք աշխատություններ, որտեղ համակողմանիորեն վեր են հանվել ռուսահայ այդ համայնքների պատմությունը սկզբնավորումից մինչև 1917 թ.:

Ռուսաստանի մի շարք երկրամասերի հայ ազգաբնակչության պատմության վերաբերյալ սակավաթիվ են համակարգված ուսումնասիրությունները, որոնք հնարավորություն կտային դիտարկելու այդ տարածաշրջանների հայության թվի աճն ու զարգացումը, նրանց պատմությունն ու տեղաբաշխման շրջանները, այլ գործընթացներ: Ռուսաստանի վերոհիշյալ տարածաշրջաններից են Ուրալը, Սիբիրն ու Հեռավոր Արևելքը, ուր թեև փոքրաթիվ, բայց գոյություն ունեցող հայ ազգաբնակչության թե ցարական, թե խորհրդային շրջանի

---

500 Բարխուդարյան Վ. Բ., Նոր Նախիջևանի հայ գաղութի պատմություն (1779-1861 թթ.), Ե.,1967; Բարխուդարյան Վ. Բ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917 թթ.), Ե., 1985; Միքայելյան Վ. Ա., Ղրիմի հայկական գաղութի պատմություն (1861-1917 թթ.), Ե., 1970; Միքայելյան Վ. Ա., Ղրիմահայոց պատմություն, Ե.,1989 և այլք:

պատմության վերաբերյալ բացակայում են դիտական ուսումնասիրություններն ու հրապարակումները:

Նախ, պետք է նշել, որ Սիբիրի, Հեռավոր Արևելքի ոչ միայն հայ բնակչությունն էր փոքրաթիվ, այլ այս տարածաշրջանները շատ նոսր էին բնակեցված: Այստեղ ժողովրդագրական մեծ շարժ սկսվեց միայն Խորհրդային տարիներին՝ գիտատեխնիկական առաջընթացի, հարուստ բնական ռեսուրսների հայտնաբերման ու շահագործման շնորհիվ: Հենց այդ տարիներին էլ ստվարանում են այս տարածաշրջանների հայ ազգաբնակչությունը, իսկ մինչ այդ հայերն այնտեղ հայտնվում էին ամենատարբեր պատճառներով: Առաջին հերթին դա հայերի առևտրական կապերն էին Ուրալի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի հետ. «Յակուտիայի հետ հայ առևտրականների կապերը սկիզբ են առել XVII դ. 80-90-ական թթ.: Այդ կապերն ավելի են ամրապնդվել Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո (1828 թ.)»[501]: Հետագայում հայերի հաստատմանը Յակուտիայում, Սիբիրի և Հեռավոր Արևելքի շրջաններում, նպաստում է հատկապես ոսկու արդյունագործությունը: Ուրալի երկրամասում նույնպես, տեղի հայության մի մասը զբաղված էր առևտրով, կային հայեր, որոնք զբաղված էին լեռնահանքային արդյունագործության մեջ: Հայ ազգաբնակչության հայտնվելն ու հաստատվելը Սիբիրում և Հեռավոր Արևելքում կապված էր նաև այն իրողության հետ, որ վերջիններս նախ ցարական իշխանության օրոք, ապա նաև Խորհրդային տարիներին դատապարտվում և իրենց պատիժը կրում էին Սիբիրի և Հեռավոր Արևելքի ազատազրկման վայրերում: Այն շարունակվել է նաև 1930-ական թթ. . «Օմսկի մարզում հայերը բնակություն են հաստատել 1930-ական թթ. երկրորդ կեսին որպես աքսորյալներ: Նրանցից շատերը հարմարվել են տեղի պայմաններին ու մնացել այնտեղ»:[502] Դեռևս XX դ. սկզբին Յակուտիայում ևս աքսորյալ հայեր կային. «1901-1916 թթ. Յակուտիայի աքսորավայրերում կային երկու տասնյակ հայեր, որոնց մի մասը հեղափոխական գործիչներ էին»[503]:

---

[501] Հայ Սփյուռք, Հանրագիտարան, Ե., 2003, էջ 468:
[502] Նույն տեղում, էջ 482:
[503] Նույն տեղում, էջ 468:

Այսուհանդերձ, 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո, ռուսական ժամանակավոր կառավարությունն արգելել է աքսորի դատապարտելը, կալանավոր հայերի մեծ մասը վերադարձել է հայրենիք, բայց հետագայում բոլշևիկները շարունակեցին կիրառել աքսորի դատապարտման նախադեպը: Արդեն XX դ. կեսերին նկատվում է նոր «աշխատանքային միգրացիայի» միտում, որն ուղղված էր վերոհիշյալ տարածաշրջաններ՝ արդյունքում բազմահազար հայ մարդիկ հայտնվում էին Ուրալի, Սիբիրի, Հեռավոր Արևելքի շինհրապարակներում. «Նովոսիբիրսկի մարզում, ինչպես նաև Արևմտյան Սիբիրի մի շարք շրջաններում, հայերի ներկայությունը կարելի է որպես երկարաժամկետ բնու-թագրել միայն XX դ. կեսից, թեև, ըստ էության, այդ ժամանակ էլ հայ տղամարդկանց մեծ մասը գալիս էր Նովոսիբիրսկ՝ ժամանակավոր շինարարական աշխատանքների»:[504]

Ուրալի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի հայ ազգաբնակչության թվաքանակի, տեղաբաշխման, զբաղվածության և զարգացման դինամիկան հնարավոր է դառնում դիտարկել XX դ. 20-ական թթ. Խորհրդային Ռուսաստանում և ԽՍՀՄ-ում անցկացված թվով երեք մարդահամարների արդյունքների ամփոփումով: Այսպես, 1920 թ. օգոստոսի 28-ին անցկացվում է Համառուսաստանյան ժողովրդագրական մարդահամար, որի արդյունքները հրապարակվել են ավելի ուշ: Այս մարդահամարի անցկացման հիմնական նպատակն էր ոչ միայն վեր հանել ՌԽՖՍՀ ազգաբնակչության ընդհանուր թիվը, այլև նրա էթնիկ կազմը: 1923 թ. Ազգությունների ժողկոմատի խնդիրն էր հանդիսանում ՌԽՖՍՀ ազգային փոքրամասնությունների նկատմամբ մշակել նոր գործելաոճ, որը պետք է ընդգրկեր նահանգային և գավառային ազգային վարչություններն ու սեկցիաները, ուստիև ՌԽՖՍՀ 48 նահանգային գործկոմներից պահանջվեց ներկայացնել 1920 թ. մարդահամարի վիճակագրական արդյունքները: Ազգությունների ժողկոմատին դժվարությամբ է հաջողվում ստանալ մարդահամարի արդյունքներն ընդհամենը 44 նահանգներից, որոնք էլ մշակումից և ստուգելուց հետո հրապարակվել են.«...չեն ստացվել և ընդգրկվել հրապարակության մեջ տվյալներ Տոմսկի, Նիժեգորոդի, Կուրսկի, Մուրմանսկի նահանգներից և նախկին Հեռա-

---

[504] Նույն տեղում, էջ 478:

վոր Արևելքի Հանրապետությունից (Ժ.Թ.Հ.)».[505] Փաստորեն, ազգությունների ժողկոմատի օրգան «Ժիզն նացիոնալնոստեյ» ամսագրում չեն ընդգրկված Հեռավոր Արևելքի վիճակագրական տվյալներն ու Սիբիրի Տոմսկ նահանգին վերաբերող մարդահամարի արդյունքները:

Այս ամենով հանդերձ,պետք է նկատել, որ 1920 թ. մարդահամարը վեր է հանել Ուրալի և Սիբիրի հայ ազգաբնակչության վերաբերյալ պաշտոնական տվյալներ, որոնք այս երկրամասերի հայության թվաքանակի, տեղաբաշխման հարցերի մասին էին, լինելով խիստ կարևոր, քանի որ, հանդիսանում էին 1920-ական թթ. անցկացված առաջին մարդահամարի արդյունքներ: Այս մարդահամարի արդյունքներով, հայ ազգաբնակչություն է առկա Ուրալի և Սիբիրի թվով 8 նահանգներում՝ Եկատերինբուրգի, Պերմի, Օմսկի, Չելյաբինսկի, Ալթայի/ առանց Կարակորում գավառի/, Ենիսեյի, Իրկուտսկի և Տյումենի նահանգներում: Ըստ մարդահամարի արդյունքների, բոլոր այս 8 նահանգներում միասին բնակվում էին 595 հայազգի քաղաքացիներ, որոնցից գյուղաբնակ էր ընդհամենը 78 մարդ կամ նրանց ընդհանուր թվի 13%-ը: Վերը թվարկված 8 նահանգներից հայ ազգաբնակչությունը գլխավորապես կենտրոնացած էր Իրկուտսկի նահանգում. «Իրկուտսկի նահանգում բնակվում էին 375 հայեր, 326-ը՝ քաղաքաբնակ, 49-ը՝ գյուղաբնակ»[506]: Իրկուտսկ նահանգի հայությունը կազմում էր վերոհիշյալ 8 նահանգների ամբողջ հայ բնակչության 63%-ը, իսկ նրա գյուղական բնակչությունը, գրեթե, նույն տոկոսն էր կազմում Ուրալի և Սիբիրի գյուղաբնակ հայության հաշվով /62,8%-ը/: Հայ ազգաբնակչության իր թվա-քանակով երկրորդն Օմսկի նահանգն էր, ուր բնակվում էին 71 հայեր, երրորդը՝ Ենիսեյի նահանգը՝ 66 հայ բնակիչներով: Եկատերինբուրգ և Չելյաբինսկ նահանգներում բնակվում էին հավասար թվով հայեր յուրաքանչյուրում 22-ական մարդ, Ալթայի նահանգում՝ 14, Պերմում՝ 21 հայ քաղաքացիներ: Հայ ազգաբնակչության թվաքանակով ամենափոքրը Տյումենի նահանգն էր, ուր բնակվում էին ընդհամենը 4 հայ: 1920 թ. օգոստոսի 28-ի մարդահամարի արդյունքներով ՌՍՖՍՀ հայ ազգաբնակչության թիվը կազմում էր 137.119 մարդ , իսկ վերը թվարկած Ուրալի և Սիբիրի հայաբնակ 8 նահանգների հայության տոկո-

---

[505] Жизнь национальностей, книга I (VI), М.,1924, с. 129.

[506] Նույն տեղում, էջ 135:

սային կշիռը ՌԽՖՍՀ ամբողջ հայ ազգաբնակչության հաշվով կազմում էր 0,43%: Ուրալի և Սիբիրի հայաբնակ նահանգների փոքրաթիվ հայ ազգաբնակչության թվարկումն ըստ նահանգների անհրաժեշտ է և խիստ հետաքրքրական, քանի որ այն արտացոլում էր 20-ական թթ. առաջին, մեկնարկային մարդահամարի արդյունքները, որն առաջինը լինելով հանդերձ, տեղեկատվական ե փորձի առումով լուրջ հիմք հանդիսացավ հաջորդ մարդահամարների ժամանակ:

ԽՍՀՄ Կենտրոնական Վիճակագրական Վարչությունը հաջորդ մարդահամարն անցկացրեց 1923 թ. մարտի 15-ին, որն ընդգրկում էր քաղաքային և քաղաքատիպ ավանների բնակչությանը: 1923 թ. քաղաքային մարդահամարի արդյունքների 4-րդ մասի հրատարակումը ԽՍՀՄ ԿՎՎ ժողովրդագրական բաժանմունքի կողմից, հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել ԽՍՀՄ քաղաքային բնակչության թիվը, էթնիկ կազմը, սեռը, զբաղվածությունը /ինքնագործ, ոչ ինքնագործ/: ՌԽՖՍՀ կազմում գտնվող Ուրալի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի մարզերն /այսուհետ մարզեր/ ամբողջությամբ ընդգրկված էին 1923 թ. քաղաքային մարդահամարի գործընթացում: 1923 թ. մարդահամարի արդյունքներն, որոնք վերաբերում էին հայ ազգաբնակչությանը, ամփոփված էին Ուրալի երկրամասում՝ ՌԽՖՍՀ Եվրոպական մասի Սվերդլովսկ /Եկատերինբուրգ/, Չելյաբինսկ, Պերմ մարզերով, Սիբիրի երկրամասում՝ Ալթայ, Ենիսեյ, Իրկուտսկ, Նովոսիբիրսկ, Օմսկ, Տոմսկ, Տյումեն մարզերով, Հեռավոր Արևելքի երկրամասում՝ Ամուր, Անդրբայկալ, Պրիմորիե մարզերով և Բուրյատա-Մոնղոլական ԻԽՍՀ-ով:

Այս երկրամասերի հայ ազգաբնակչության թիվը որոշ մարզերի կտրվածքով լուրջ փոփոխություններ չի կրել, թեև առկա է նաև տարբերություն 1920 թ. մարդահամարի արդյունքների համեմատ:

Հայերն Ուրալում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում, ըստ 1923 թ. քաղաքային մարդահամարի

ՈՒՐԱԼ	ամ բողջը	այդ թվում՝ ինքնա գործ	արա կան	այդ թվում՝ ինքնագործ	իգա կան	այդ թվում՝ ինքնա գործ
	47	38	37	34	10	4
1.Զևյարինսկի մարզ	10	7	9	7	1	-
2.Սվերդլովսկ	32	26	24	23	8	3
3.Պերմ	5	5	4	4	1	1
ՍԻԲԻՐ	364	182	243	163	121	19
1. Ալթայ	6	4	4	3	2	1
2. Ենիսեյ	25	17	18	14	7	3
3. Իրկուտսկ	235	104	154	97	81	7
4. Նովոսիբիրսկ	14	7	9	6	5	1
5. Օմսկ	62	36	44	37	18	5
6. Տոմսկ	17	11	10	9	7	2
7. Տյումեն	5	3	4	3	1	-
ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ	374	211	258	198	116	13
1. Ամուր	48	23	32	23	16	-
2. Անդրբայկալ	73	48	54	45	19	3
3. Պրիմորիե	214	123	148	115	66	8
4. Բուրյատա-Մոնղոլական ԻԽՍՀ	39	17	24	15	15	2
Ընդհանուրը՝	785	431	538	395	247	36

Ինչպես նախորդ մարդահամարի արդյունքներով, այնպես էլ 1923 թ. քաղաքային մարդահամարով, ամենամեծ թվով հայ բնակչություն ուներ Իրկուտսկի մարզը. «Իրկուտսկի մարզում բնակվում էին 235 հայեր՝ 154 արական սեռի, 81-ը

իգական»:[507] Պարզորոշ երևում է, որ Իրկուտսկի մարզի հայ բնակչության թիվը նվազել է 1920 թ. մարդահամարի արդյունքների համեմատ՝ 326 մարդուց հասնելով 235-ի: Հայ ազգաբնակչության թվաքանակի նվազում է առկա նաև Ենիսեյ, Օմսկ, Ալթայ և այլ մարզերի կտրվածքով, ինչը թերևս, բացատրվում է այն հանգամանքով, որ 1920 թ. մարդահամարի ժամանակ որոշակի թերացումներ են եղել, իսկ քաղաքային մարդահամարով թվական տվյալները ճշգրտվել են: Հայ ազգաբնակչության թիվը նոր մարդահամարով, նվազել է, կամ ավելի ստույգ ճշգրտվել նաև Ուրալի հայության շրջանում: Այսպես, նկատելի է հայերի թվաքանակի նվազում Պերմի և Զելյաբինսկի մարզերում, փոքր աճ՝ Սվերդլովսկի մարզում:

Առաջին անգամ հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ արդյունքեր կան Հեռավոր Արևելքի մարզերից, որոնք իրենց հայ բանակչության թվով փոքր-ինչ գերազանցում են Սիբիրի հայությանը: Հեռավոր Արևելքի քաղաքային հայ բնակչության 57,2%-ը կենտրոնացած էր Պրիմորիեում, իսկ Սիբիրի հայության 64,5%-ը՝ Իրկուտսկի մարզում: Իրկուտսկի և Պրիմորիեի քաղաքաբնակ հայությունը միասին կազմում էին Ուրալի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի քաղաքաբնակ ողջ հայության ավելի քան 57%-ը:

Ուրալում, Սիբիրում և Հեռավոր Արևելքում միասին բնակվում էին 785 քաղաքաբնակ հայեր,որը կազմում էր ՌԽՖՍՀ ամբողջ քաղաքային հայ բնակչության (125794 մարդ) 0,62%-ը: Այս երեք տարածաշրջանների հայության 68,5%-ը արական սեռի, 31,5%-ը իգական սեռի ներկայացուցիչներ էին: Սեռերի միջև էական թվային տարբերությունն ուներ իր պատճառներն ու հանգամանքները, որի մասին խոսվել է ավելի վաղ:

1923 թ. մարդահամարի ժամանակ առաջին անգամ տվյալներ կան Ուրալի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի հայ բնակչության ինքնագործ և ոչ ինքնագործ խմբերի թվաքանակի վերաբերյալ, ինչը բավարար չափով ցույց է տալիս բնակչության զբաղվածության աստիճանը: Ինքնագործը բնակչության այն խումբն էր ներկայացնում, որն ուներ գոյատևման միջոցներ, աղբյուր (աշխատավարձ, եկամուտ): Ինք-

---

[507] Итоги Всесоюзной городской переписи 1923 г.,часть IV, М.,1927, с. 44-45.

նաղորդ բնակչության խմբին էին դասվում պետական և հասարակական հիմնարկների խնամքի ներքո գտնվողները, այդ թվում դինծառայողները: Ոչ ինքնագործ խմբին էր դասվում բնակչության այն հատվածը, որոնք չունենալով ապրուստի սեփական միջոցներ, նյութապես գտնվում էին ուրիշների խնամքի ներքո: Մինչև 10 տարեկան երեխաները ևս մտնում էին ոչ ինքնագործ խմբի մեջ, թեև բացառիկ դեպքերում ունեին սեփական աշխատանք: Ինքնագործ խմբի մեջ էին մտնում, նաև այն անձինք, ովքեր վարձով ծառայություն էին մատուցում կամ բնակարան, տարածք և գույք էին տրամադրում:

Ուրալի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի ողջ հայության 54,9 %-ն ինքնագործ խմբին էր դասվում իր խնամքի ներքո պահելով բնակչության մյուս հատվածին: Պետք է նկատել, որ հայ ազգաբնակչության արական հատվածի շրջանում զբաղվածության ցուցանիշը բավականին բարձր էր ընդհանուր տոկոսից և կազմում է 73,4%: Սեփական եկամուտի աղբյուր ունեցողների տոկոսային հարաբերությունը հայության իգական սեռի շրջանում հասնում էր 14,5%-ի, որը ցածր ցուցանիշ էր:

Այսպիսով, դիտարկելով բնակչության ինքնագործ խմբի տոկոսային կշիռն, ակնհայտ է դառնում զբաղվածության մակարդակը, խնամքի կարոտ և կերակրվողի կարգավիճակ ունեցող հայության այդ հատվածի իրական թվային պատկերը:

Սիբիրի հայության շրջանում բնակչության ինքնագործ խմբի տոկոսային կշիռը կազմում էր 50%, իսկ Հեռավոր Արևելքում՝ 56,4%: Հեռավոր Արևելքի Պրիմորիեի մարզի հայության շրջանում ինքնագործ բնակչության կշիռն ավելի բարձր էր՝ հասնելով 57,4%-ի, իսկ Իրկուտսկի մարզի հայության ինքնագործ խմբի տոկոսային կշիռը ցածր էր ամբողջ Սիբիրի երկարամասի հայության նույն ցուցանիշից և կազմում էր 44,2%:

Ուրալի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի ամբողջ հայ ազգաբնակչության զբաղվածության մակարդակը բավականին բարձր էր, իսկ, եթե, նկատի ենք առնում հանգամանքը, որ հայ ընտանիքի կերակրող ձեռքը հանդիսանում է տղամարդը, ապա առավել քան բարձր էր աշխատանք ունեցողների տոկոսային կշիռը հայության շրջանում:

Ուրալի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի հայ ազգաբնակչության վերաբերյալ առավել համակողմանի վիճակագրական տվյալներ է վեր հանված 1926 թ. դեկտեմբերի 17-ի համամիութենական մարդահամարի արդյունքում: Համամիութենական մարդահամարի հարցումները վեր են հանել ոչ միայն բնակչության թվաքանակը, նրա էթնիկ կազմն ու սեռը, այլ նաև լեզվական պատկանելիությունը, գրագիտության մակարդակը՝ ընդ որում նաև ազգային լեզվով: 1926 թ. մարդահամարի երկրորդ կարևորագույն առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ այն համընդհանուր էր, անցկացվել էր թե՛ քաղաքային, թե՛ գյուղական վայրերում, ինչը հնարավորություն է ընձեռում առաջին անգամ ամփոփ արդյունքներ ունենալ Ուրալի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի գյուղական հայ ազգաբնակչության վերաբերյալ: 1926 թ. համընդհանուր մարդահամարով, որը վերջինն էր 20-ական թթ., վերջնականապես ճշգրտվել է Ուրալի Սիբիրի և Հեռավոր Արևելքի հայության իրական թվաքանակը, տեղաբաշխումը և այլն: Այս մարդահամարի ընթացքում ՌԽՖՍՀ վերոհիշյալ 3 երկրամասերի կազմում ընդգրկված վարչատարածքային միավորների նոր վերախմբավորում է կատարվել՝ արդյունքում Բուրյատա-Մոնղոլական ԻԽՍՀ-ն Հեռավոր Արևելք երկրամասից դուրս է հանված և հանդես է գալիս Սիբիրի երկրամասի կազմում, իսկ վերջինիս մաս կազմող Տյումենի մարզն ընդգրկվել է Ուրալի կազմում: Այս երկրամասերի կազմում գտնվող վարչա-տարածքային միավորները վերանվանվել են օկրուգներ, այդ թվում՝ ստեղծվել են նորերը: Հեռավոր Արևելքի երկրամասի օկրուգների հետ միասին հանդես է գալիս Յակուտիայի ԻԽՍՀ-ն՝ դիտվելով այս տարածաշրջանի մաս: Վարչատարածքային միավորների՝ մի երկրամասից մյուսի կազմ տեղափոխելու արդյունքում ինչպես նաև հայության թվի վերջնական ճշգրտմամբ, զգալի տարբերություններ են առաջացել այս կամ այն երկրամասում հայ ազգաբնակչության ընդհանուր թվաքանակի միջև, որն ստացել է հետևյալ պատկերը.

Հայերն Ուրալի մարզում, Սիբիրի և Հեռավոր Արևելքի երկրամասերում, ըստ 1926 թ. դեկտեմբերի 17-ի մարդահամարի

1.ՈՒՐԱԼ[508]	ամբողջը	արական	իգական	մայրենի լեզու		դրագետ	դրագետ ազգ. լեզվ.
				հայ.	ռուս.		
	121	91	30	92	25	98	48

որից՝

Սվերդլովսկի օկրուգ	22	18	4	18	4	19	11
2. Սիբիր[509]	575	415	160	384	181	429	200

որից՝

Իրկուտսկի օկրուգ	215	141	74	148	65	142	60
3.Հեռավոր Արևելք[510]	256	181	75	163	87	179	84

որից՝

Վլադիվոստոկի օկրուգ	116	77	39	66	45	84	36
Բուրյատա-Մոնղոլական ԻԽՍՀ	29	18	11	15	14	17	8
Յակուտիայի ԻԽՍՀ	4	4	-	3	1	3	1
Ամբողջը միասին	985	709	276	657	308	726	341

---

[508] Всесоюзная перепись населения 1926 г., Т. IV, Вятский район, Уральская область, Башкирская АССР, М.,1928, с.104.

[509] Всесоюзная перепись населения 1926 г., Т. VI, Сибирский край. Бурято-Монгольская АССР, М., 1928, с.12.

[510] Всесоюзная перепись населения 1926г., Т. VII, Дальне-Восточный край. Якутская АССР, М., 1928, с. 8.

1926 թ. համամիութենական մարդահամարի ժամանակ գրանցված արդյունքներով Ուրալի մարզի մեջ մտնող 16 օկրուգներից միայն մեկում՝ Կոմի-Պերմյակական օկրուգում, առկա չէ հայ ազգաբնակչություն, մնացած բոլոր օկրուգներում հայ ազգաբնակչության թիվը կազմում էր մեկ-երկու տասնյակ մարդ: Հայ բնակչության թվաքանակով ամենամեծը Սվերդլովսկի օկրուգն էր, իսկ մյուս օկրուգներն, ուր բնակվում էին հայեր հետևյալներն էին՝ Վերխնեկամսկ, Զլատոուստ, Իրբիտ, Իշիմ, Կունգուրսկ, Կուրգան, Պերմ, Սարապուլ, Տագիլ, Տորոլսկ, Տրոիցկ, Տյումեն, Չելյաբինսկ, Շադրինսկ:

Ուրալի մարզի հայության թվի աճը պայմանավորված էր վարչատարածքային նոր ձևավորումներով, թեև այն դեռևս փոքրաթիվ էր: Ուրալի մարզի հայության 4/5-ը քաղաքներում էր բնակվում, իսկ արական սեռի ներկայացուցիչները կազմում էին 3/4-ը: Հայերենը իր մայրենի լեզուն էր համարում Ուրալի հայության 3/4-ից ավելին, իսկ մեկ քառորդից պակասի համար դա ռուսերենն էր: Պետք է նկատել, որ մարդահամարի անցկացման ընթացքում, ըստ հարցումների, մայրենի լեզու էր համարվում այն լեզուն, որով հարցվողը սովորաբար խոսում էր կամ տիրապետում էր ավելի լավ: Մանկահասակ երեխաների պարագայում, նրա մայրենի լեզուն էր համարվում երեխայի մոր կողմից նշված լեզուն, իսկ, եթե, հարցի պատասխանը դժվարանում էր, ապա գրանցվում էր երեխայի մոր էթնիկ, ազգային լեզուն:

Ուրալի հայության 4/5-ը գրագետ էր, իսկ նրանց մոտ կեսը գրագետ էր նաև իր ազգային լեզվով: Ուրալի հայության շրջանում, ինչպես գրեթե բոլոր տարածաշրջաններում, եղել են հայեր, որոնք դժվարացել են պատասխանել կամ առանձնացնել, թե որն են համարում մայրենի լեզու, բայց վերջիններիս թիվը աննշան է: 1926 թ. մարդահամարի արդյունքներն ամփոփած ԽՍՀՄ ԿՎՎ հրատարակության VI-րդ հատորը ներառում է Սիբիրի երկրամասի և Բուրյատա-Մոնղոլական ԻԽՍՀ տվյալները: 1923 թ. քաղաքային մարդահամարի ժամանակ Սիբիր երկրամասը կազմված էր 7 վարչատարածքային միավորներից, իսկ 1926 թ. մարդահամարի ժամանակ երկրամասն ընդգրկում էր 21 վարչական միավոր օկրուգ, որոնցից միայն երեքում առկա չէր հայ ազգաբնակչություն (Ռուբցովսկի օկրուգ, Օյրաթական ԻՕ, Կրասնոյարսկից առանձնացված Տուրուխանսկ): Սիբիրի հայության հիմնական մասը դեռևս շա-

բունակում էր հանդիսանալ Իրկուտսկի օկրուգի հայ ազգաբնակչությունը, իսկ միայն Իրկուտսկ քաղաքում կենտրոնացած էր ամբողջ Սիբիրի երկրամասի հայության մոտ 16%-ը (90 հայեր): Պետք է նկատել, որ այս կտրվածքով Օմսկ քաղաքի հայ բնակչությունը ևս նկատելի մաս էր կազմում սիբիրահայության մեջ, նրա տոկոսային կշիռը հասնում էր մոտ 9%-ի (50 հայեր): 1923 թ. մարդահամարի ժամանակ, գրանցված արդյունքների համեմատ Սիբիրի քաղաքաբնակ հայության թիվը 1926 թ. աճել է 15%-ով(55 հայ): Թեև Ուրալի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի հայությունը, ճնշող մեծամասնությամբ, քաղաքաբնակ էր, բայցևայնպես, Սիբիրի գյուղաբնակ հայության (27,1%) մեծ մասը բնակվում էր Իրկուտսկի օկրուգում: Նշված օկրուգներից բացի, Սիբիրի հայությունը տեղաբաշխված էր նաև Աչինսկի, Բաբաբինսկի, Բարնաուլի, Բիյսկի, Կանսկի, Կամենսկի, Կիրենսկի, Կրասնոյարսկի, Կուզնեցկի, Մինուսինսկի, Նովոսիբիրսկի, Սլավգորոդի, Տարսկի, Տոմսկի, Տուլունի և Խակասկի օկրուգներում, ուր հայ ազգաբնակչության թիվը նրանցից յուրաքանչյուրում առանձին վերցրած, հասնում էր մեկից մի քանի տասնյակ մարդու: Սիբիրի երկրամասի հայ ազգաբնակչության 72%-ը արական, 28%-ը իգական սեռի բնակիչներ էին, որը, գրեթե նույն հարաբերակցությամբ դիտվում է Ուրալում ու Հեռավոր Արևելքում: Հայերենը մայրենի լեզու էր հանդիսանում Սիբիրի հայ ազգաբնակչության 2/3-ի համար, իսկ 31,4%-ի համար դա ռուսերենն էր: Մնացյալ 1,7%-ի համար դժվար է եղել առանձնացնել իր մայրենի լեզուն: Անշուշտ, այն հայերը, որոնք իրենց մայրենի լեզուն են համարել ռուսերենը, տիրապետել են նաև հայերենին, ուղղակի նրանց համար ռուսերենը հանդիսացել է առօրյա շփման լեզու կամ առավել լավ են տիրապետել այն: Սիբիրի երկրամասի ամբողջ հայության 74,6%-ը գրագետ էր, որոնցից 46,6%-ը գրագետ էր նաև իր ազգային լեզվով: Բուրյատա-Մոնղոլական ԻԽՍՀ բնակչության թիվը 1926 թ. մարդահամարով նվազել է 1923 թ. գրանցված բնակչության թվի համեմատ (10 մարդով): Այսպիսով, Սիբիրի և Բուրյատա-Մոնղոլական ԻԽՍՀ հայ ազգաբնակչությունը միասին, 1926 թ. մարդահամարով կազմում էր 604 մարդ և իր թվով ավելի մեծ էր Ուրալի և Հեռավոր Արևելքի հայության ընդհանուր թվից: 1926 թ. մարդահամարի արձանագրած արդյունքների շնորհիվ, վեր

հանվեց նաև Հեռավոր Արևելքի հայության թվաքանակը, թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակչության շրջանում: Նախկին մարդահամարի ժամանակ այս երկրամասն ընդգրկում էր 4 վարչատարածքային միավոր, իսկ 1926 թ. այն բաղկացած էր 9 օկրուգից, ինչպես նաև Յակուտիայի ԻԽՍՀ-ից, որն ավելի շուտ դիտվում էր Հեռավոր Արևելքի մաս, քան ինչպես նախկինում էր՝ Սիբիրի:

1923 թ. քաղաքային մարդահամարի ժամանակ Հեռավոր Արևելքի հայության թիվն 374 մարդ էր, իսկ 1926 թ. մարդահամարով և նոր վարչատարածքային սահմաններում, արձանագրվել է նրանց իրական թվակազմը, որը, Յակուտիայի ԻԽՍՀ հայ բնակչության հետ միասին, կազմում էր 260 մարդ: Հեռավոր Արևելքի հայության 82,4%-ը քաղաքաբնակ էր, իսկ երկրամասի հայության 29,2%-ը բնակվում էր Վլադիվոստոկ քաղաքում (75 մարդ): Վլադիվոստոկի օկրուգում էր կենտրոնացած ամբողջ Հեռավոր Արևելքի հայ բնակչության 45,3%-ը, իսկ Զիտայի օկրուգում՝ մոտ 20%-ը: Հեռավոր Արևելքի երկրամասում արական սեռի հայ բնակչության տոկոսային կշիռը կազմում էր 70,7%: Այս երկրամասի հայության 63,6%-ի համար մայրենի լեզու էր հանդիսանում հայերենը, իսկ 33,9%-ի համար՝ ռուսերենը: Հայ ազգաբնակչության շրջանում բավականին բարձր էր գրագիտության ընդհանուր մակարդակը, որը կազմում էր 69,9%-ը, իսկ գրագետ հայերի 46,9%-ը գրագետ էր նաև իր ազգային լեզվով: Հեռավոր Արևելքի վերը թվարկած օկրուգներից բացի, հայաբնակ էին նաև հետևյալները՝ Ամուրի (34 հայ), Զեյսկի (3 հայ), Կամչատկայի (2 հայ), Նիկոլաևսկի (12 հայ), Սախալինի(10 հայ), Խաբարովսկի (26 հայ) և Սրետենսկի (2 հայ) օկրուգները: Ինչ վերաբերում է Յակուտիայի ԻԽՍՀ-ին, ապա 1926 թ. այնտեղ բնակվում էին 4 հայեր, թեև 1923 թ. ոչ մի հայ բնակիչ արձանագրված չկար:

Այսպիսով, 1926 թ. դեկտեմբերի 17-ի համամիութենական մարդահամարն, որն անցկացվեց քաղաքային բնակավայրերում մեկ շաբաթվա ընթացքում, գյուղական բնակավայրերում երկու շաբաթվա ընթացքում (այսինքն՝ մինչև 1927 թ. հունվարի 1-ը), ամբողջությամբ վեր հանեց Ուրալի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի հայության թիվը, տեղաբաշխումն ու վերը թվարկած մյուս տվյալները 20-ական թթ.:

Ռուսաստանի այս երկրամասերն, որոնք ընդգրկում են հսկայածավալ տերիտորիաներ, հաջորդ տասնամյակների ընթացքում արագ տեմպերով բնակեցվեցին, ստվարացավ նաև հայ ազգաբնակչությունը: Եթե XX դ. 20-ական թթ. Ուրալում, Սիբիրում և Հեռավոր Արևելքում միասին վերցրած բնակվում էին մոտ 1000 հայազգի քաղաքացիներ, ապա հաջոդ տասնամյակներում, և արդեն դարավերջին, հայության թիվն այս երկրամասերից յուրաքանչյուրի առանձին վարչական միավորներում անցնում էր տասնյակ հազարից:

Այսպես, վերցնելով Յակուտիայի ԻԽՍՀ-ում հայ բնակչության թվաքանակը 1926 թ. որպես օրինակ, պետք է նշել, որ խիստ նոսր բնակեցված այս տարածքը հայաբնակ էր դեռևս XIX դ. «Յակուտիայի տարածքում 1897 թ. բնակվում էին 19 հայեր»:[511] Արդեն XX դ. առաջին քառորդում, 1926 թ. մարդահամարով, նկատվում է Յակուտիայի հայ ազգաբնակչության թվի նվազում, որի պատճառներից էր ասիմիլյացիոն գործընթացը, որը նկատելի էր նաև մյուս էթնիկ խմբերի մոտ: Ինչպես նկատելի է մարդահամարի արդունքներից, Յակուտիայի փոքրաթիվ հայերը ոչ միայն տիրապետում էին իրենց ազգային լեզվին, այլ նաև հավատարիմ էին իրենց եկեղեցական հավատքին: Յակուտիայի այն ժողովուրդները, որոնք հնդեվրոպական լեզուներով էին խոսում ուղղափառ քրիստոնյաներ էին. «...բացի հայերից, որոնք հանդիսանում էին իրենց հայ լուսավորչական եկեղեցու հետևորդներ»:[512] Հետաքրքրական էր փաստը, որ 1897 թ. մարդահամարի ժամանակ Յակուտիայում, այլ եկեղեցական դավանանք ունեցող հայեր էին հայտնի՝ 3 հայ կաթոլիկներ, որոնք հետևում էին հռոմեական կաթոլիկ եկեղեցուն:

Յակուտիայի (ինչպես նաև Սիբիր և Հեռավոր Արևելքի) հայ ազգաբնակչության պատմության երկրորդ շրջանն ընդգրկում է հաջորդ տասնամյակները, երբ հայերն այստեղ հայտնվում էին կա՛մ որպես կալանավոր, կա՛մ որպես մասնագետ՝ տարածաշրջանում հետզհետե ուժեղացող «աշխատանքային միգրացիայի» հետ կապված. «Յակուտիայում այլ էթնիկ խմբերի կազմավորման կարևոր հիմք էր հանդիսանում ԽՍՀՄ

---

[511] Игнатьева В. Б., Национальный состав населения Якутии, Якутск, 1994, с.19.

[512] Նույն տեղում, էջ 27:

շատ ժողովուրդների պարտադրված վերաբնակեցումը, այսպես կոչված «պետական հանձնարարությամբ»: Հյուսիսային շրջանների հսկայական տարածքներ 30-ական թթ. հանձնվեցին ԽՍՀՄ ՆԳԺԿ-ին և վերածվեցին յուրօրինակ համակենտրոնացման ճամբարների և Դալստրոյի բանտերի»:[513] Յակուտիայի ազգաբնակչության մեջ էթնիկ լուրջ փոփոխություններ կատարվեցին Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին այստեղ տարագրված ժողովուրդների շնորհիվ. «ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի գործողություններով Յակուտիայի հատուկ բնակավայրեր տեղափոխվեցին չեչենները, ինգուշները, կարաչայցիները, բալկարները Չեչենա-Ինգուշական ԻԽՍՀ-ից և Կարաչայա-Չերքեզական ԻՄ-ից (1944 թ.), Ղրիմի թաթարները, հույները, բուլղարներն ու հայերը, որոնք արտաքսվել էին Ղրիմից (1944 թ.) և այլն»:[514]

Եթե, 1926 թ. Յակուտիայում կար 4 հայ, 1959 թ.՝ 295 հայ, ապա 1989 թ. նրանց թիվը 1138 մարդ էր: Ներկայումս, մոտ հաշվարկներով, Յակուտիայում բնակվում է 8000 հայ, իսկ համայնքը շարունակում է ավելի ու ավելի մեծ դերակատարություն ստանձնել, ստեղծվել է Յակուտիայի հայկական մշակութային ֆոնդ, և «Ռուսաստանի հայերի միության» տարածքային կազմակերպություն:

Ուրալի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի երկրամասերի հայ ազգաբնակչության վերաբերյալ տվյալների և նյութի բացակայությունը անհրաժեշտ է դարձնում գիտական ուսումնասիրություններն այդ թեմաներով, ուստիև փորձ է արվել.

- Վեր հանել այս տարածաշրջանների հայ ազգաբնակչության թվակազմը, նրանց տեղաբաշխումը, լեզվական պատկանելիությունը, գրագիտության մակարդակն ու զբաղվածության աստիճանը 20-ական թթ.:
- Շեշտել այն իրողությունը, որ դեռևս նախախորհրդային շրջանից այս երկրամասերը հայաբնակ էին, չունեին ազգային-կրթական, հոգևոր օջախներ քանի որ համայնքները փոքրաթիվ էին, բայց հայերի շարժը այս տարածա-

---

[513] Նույն տեղում, էջ 42:
[514] Նույն տեղում, էջ 43:

շրջաններ կատարվել է դեռևս ցարական Ռուսաստանի օրոք:

- Ուրալի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի փոքրաթիվ հայ ազգաբնակչության և համայնքների վերաբերյալ հայ պատմագիտության մեջ քիչ են ուսումնասիրված և հրապարակված աշխատությունները, գիտական հոդվածները.
- Ներկայումս, Ուրալի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի երկրամասերի հայ ազգաբնակչության թիվը նրանցից յուրաքանչյուրում անցնում է մի քանի տասնյակ հազարից, ստեղծվում են ազգային-հայրենակցական միություններ, կրթական-հոգևոր օջախներ, ուստիև կարևորվում են այս տարածա-շրջանների հայության անցյալի և ներկայի մասին ուսումնասիրություններն ու գիտական հրապարակումները:

Ահա այս խնդիրներն էին ու նրանց արդիականությունը, որով կարևորվում է վերոհիշյալ երկրամասերի հայ ազգաբնակչության վերաբերյալ ուսումնասիրության անհրաժեշտությունը:

HOVHANNES ALEKSANYAN
Institute of History, NAS RA

ARMENIANS IN URAL, SIBERIA AND FAR EAST IN THE 20^{s} OF THE 20th CENTURY

Summary

Although the problems of the history of the Armenian communities in Russia (the Tzarist and the Soviet periods) have been studied from different aspects in the Armenian historiography, it is necessary to continue researches, involving the history of the Russian regions (the Urals, Siberia and Far East) where the number of Armenians increased during the Soviet period. Armenians settled in those regions for several reasons:

1. commercial relations of Armenians with the mentioned regions,

2. the imprisonment and exile of some Armenians during the Tzarist and Soviet periods.
3. migration of Armenians to those regions for seasonal work.

The research of the location and the dynamics of the increase of the number of the Armenian population has been done on the basis of the data of the census of the 1920s (August 28, 1920, March 15, 1923, December 17, 1926) both in Soviet Russia and generally in the USSR.

ԱՐՑԱԽԱՀԱՑԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՐՍԿԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏՈՒՄ
/1943 թ. հուլիսի 5 - օգոստոսի 23/

Հայրենական մեծ պատերազմի երկրորդ շրջանի կարևոր իրադարձությունը դա Կուրսկի ճակատամարտն էր: Չնայած Ստալինգրադի ճակատամարտում գերմանաֆաշիստական զորքերի ջախջախիչ պարտությանը Հիտլերը չէր ցանկանում անձնատուր լինել և, օգտվելով Եվրոպայում երկրորդ ճակատի բացակայությունից մտադրվեց Օրյոլ-Կուրսկ-Բելգորոդ շրջանում իրականացնել հսկայածավալ հարձակողական գործողություն, հույս ունենալով վրեժ լուծել Ստալինգրադի համար և վերադարձնել կորցրած ռազմավարական նախաձեռնությունը: Հայրենական մեծ պատերազմի ամենախոշոր ու վճռական նշանակություն ունեցող Կուրսկի ճակատամարտը սկսվեց 1943 թ. հուլիսի 5-ին և ավարտվեց օգոստոսի 23-ին: Այն ընթացավ երկու փուլով՝ պաշտպանողական (5-11 հուլիսի) և հարձակողական (12 հուլիսի - 23 օգոստոսի): Երկու կողմերից ճակատամարտին մասնակցեց ավելի քան 4 միլիոն մարդ[515]: Մարտական գործողություններն իրականացնում էին Կենտրոնական, Վորոնեժյան, Բրյանսկի և Տափաստանային ռազմաճակատների զորքերը, որոնց դիմակայում էին գերմանական «Հյուսիս» և «Հարավ» բանակային զորախմբերը: Կուրսկի ճակատամարտի կարևոր իրադարձություններից էին հուլիսի 12-ին Պրոխորովկայի մոտ տեղի ունեցած տանկային հանդիպակաց ամենախոշոր ճակատամարտը, որին երկու կողմից մասնակցում էր 1200 տանկ և ինքնագնաց հրանոթ (միայն այդ օրը հակառակորդը կորցրեց շուրջ 400 տանկ), օգոստոսի 5-ին Բելգորոդ և Օրյոլ, օգոստոսի 23-ին՝ Խարկով քաղաքների ազատագրումը: Կուրսկի ճակատամարտում ոչ միայն ամբողջովին ջախջախվեց հակառակորդի 30 ընտիր դիվիզիաներից (այդ թվում 8 տանկային) բաղկացած զորախումբը, այլև ընդմիշտ թաղվեց գեբելսյան ստահոդ քարոզչության ստեղծած այն սին առասպելը, թե խորհրդային զորքերն ընդունակ են

---

[515] Великая Отечественная Война, кн. 2, Перелом, М., 1998, с. 283.

հաղթել միայն ձմեռային պայմաններում: Կուրսկի աղեղում կրած պարտության հետևանքով լիովին կործանվեց գերմանա-ֆաշիստական զորքերի հարձակողական ռազմավարությունը, գերմանական բանակը ստիպված էր ամբողջ ճակատով մեկ անցնել պաշտպանության: Ռազմավարական նախաձեռնությունն ամբողջովին իր ձեռքը վերցնելով, խորհրդային հրամանատարությունը նպաստավոր պայմաններ ստացավ զարգացնելու հարձակումը տարբեր ճակատներում ազատագրելու Ձախափնյան Ուկրաինան և դուրս գալ Դնեպրի ձախ ափ[516]:

Կուրսկի ճակատամարտում տարած հաղթանակի գործում ռուսների, ուկրինացիների, բելոռուսների և ԽՍՀՄ մյուս ժողովուրդների ներկայացուցիչների հետ միասին, Կարմիր բանակի տարբեր զորատեսակների կազմում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև մի քանի հազար հայորդիներ, որոնց մեջ զգալի թիվ էին կազմում արցախահայերը: Հրե աղեղում ծավալված արյունահեղ մարտերում ցուցաբերած խիզախության և կատարած սխրանքների համար, նրանցից շատերն արժանացան կառավարական պարգևների, իսկ մարտերում առավել աչքի ընկած մեկ արցախահայի շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Այդ հերոսը Բրյանսկի ճակատամարտի 11-րդ գվարդիական բանակի 11-րդ գվարդիական հրաձգային գնդի 9-րդ վաշտի դասակի հրամանատար, գվարդիայի լեյտենանտ Վլադիմիր Աբրահամի Իոնոսյանն էր (Ստեփանակերտի շրջանի Ռև գյուղից): Իոնոսյանը հերոսի կոչման արժանացավ 1943 թ. հուլսի 12-13-ը Օրյոլի մարզի Ուլյանովոյի շրջանի Տրոստյանսկ և Բելիյ Վերխ գյուղերի մոտ տեղի ունեցած մարտերում ցուցաբերած խիզախության համար: Սակայն նրան բախտ չվիճակվեց իմանալու հայրենիքի բարձր կոչման արժանանալու մասին, քանի որ 1943 թ. օգոստոսի 3-ին նա զոհվեց Բրյանսկի մարզի Կարաչև քաղաքի մատույցներում տեղի ունեցած մարտերում: Իսկ գվարդիայի լեյտենանտ Վ. Իոնոսյանին հերոսի կոչում շնորհվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1943 թ. օգոստոսի 27-ի հրամանագրով[517]: Հերոս արցախցու կատարած սխրագործության մասին իր հուշերում մի շարք էջեր է հատկացրել 11-րդ գվարդիական բանակի հրամանատար Հովհաննես Բաղրամյանը. «Տրոստյանկա գյուղի մոտերքը, - գրում է նա, - Իոնոսյանը հինգ մարտիկներով, հրե-

---

[516] Նույն տեղում, էջ 285:

[517] Книга о Героях, Е., 1985, сс. 30-31.

տանային կրակի պաշտպանությամբ թափանցեց թշնամու խրամատը: Կարճատև գոտեմարտում մար-տիկները ոչնչացրին հիսուն ֆաշիստի, գերի վերցրին տասնութ հոգու: Հաջորդ օրն էլ այդ դասակը մարտնչեց նույնպիսի խիզախությամբ ու հմտությամբ: Երբ Բելի Վերխ գյուղի համար մղվող մարտում հետևակը ստիպված եղավ պառկել հակառակորդի կրակի տակ, Իոնոսյանը յոթ ռազմիկներով անցավ հիտլերականների թիկունքը և անակնկալ կերպով հարձակվեց նրանց վրա: Ֆաշիստները որոշեցին, որ շրջապատված են, և խուճապահար սկսեցին այս ու այն կողմ նետվել: Օգտվելով դրանից, այդ խումբը ոչնչացրեց տասնյոթ ֆաշիստի և գրավեց հաստոցավոր գնդացիր: Հետագայում Վլադիմիր Իոնոսյանն իր դասակով գործեց թշնամու զորքերի դասավորության մեջ՝ շփոթությունն առաջացրեց նրանց բանակում, դարաններ սարքեց նրանց նահանջի ճանապարհին: Ոչնչացնելով մի քանի կրակակետեր, նա հեշտացրեց մեր զորամասերի կողմից Ուլյանովո շրջանային կենտրոնի ազատագրման գործը... Նրա մարտական սխրանքների մասին դիվիզիայի թերթի համար փայլուն ակնարկ գրեց Իլյա Էրենբուրգը... Շատ ցավալի, որ խիզախ սպան հերոսի կոչման շնորհելու բերկրանքը չճաշակեց. նա զոհվեց Կարաչևի համար մղված մարտերում, որտեղ էլ մենք նրան թացեղինք գետի գեղատեսիլ ափին: Քաղաքի բնակիչները հերոսի շիրիմին պսակ դրին, որի ժապավենի վրա գրված էր. «Մենք քեզ հավերժ կհիշենք մեր ազատարար...»[518]:

Հովհաննես Բաղրամյանը Կուրսկի ճակատամարտի օրերին հանդիսանում էր 11-րդ գվարդիական բանակի հրամանատարը: Նրա բանակը գործել է Օրյոլի ուղղությամբ և հուլիսի 12-ից մինչև օգոստոսի 18-ը հարձակողական մարտերով առաջ անցել ավելի քան 200 կմ, թշնամուց ազատագրել շուրջ 5000 քառ. կմ տարածք՝ 700 բնակավայրերով հանդերձ, որոնց թվում Ուլյանովո, Զնամենսկոյե, Իլյինսկոյե շրջանային կենտրոնները, Կարաչև քաղաքը և այլն: Այդ ընթացքում գվարդիականները ոչնչացրել են հակառակորդի 71400 զինվոր ու սպա, վերցրել 2651 գերի, գրավել 119 ինքնաթիռ, 914 տանկ, 918 հրանոթ, 741 ականանետ, 3104 գնդացիր, 1540 ավտոմեքենա, մեծ քանակությամբ զինամթերք, պարենի, հագուստի և

---

[518] Բաղրամյան Ի., Այսպես մենք հասանք հաղթանակի, Ե., 1979, էջ 264, 295:

վառելանյութի պահեստներ[519]: Այդ ամենը զգալի չափով նպաստեց Կուրսկի ճակատամարտի հաղթական ավարտին, ցույց տվեց գեներալ-լեյտենանտ Բաղրամյանի վարպետությունը հարձակողական գործողության ընթացքում: Հայրենիքը բարձր գնահատեց Կուրսկի ճակատամարտում 11-րդ գվարդիական բանակի գործողությունների ղեկավարման գործում Հ. Բաղրամյանի օպերատիվ-ռազմավարական դիտելիքներն ու հմտությունները և 1943 թ. օգոստոսի 27-ին նրան շնորհեց գեներալ-գնդապետի կոչում, ինչպես նաև պարգևատրեց Սուվորովի 1-ին աստիճանի, այն ժամանակվա բարձրագույն զորավարական շքանշանով[520]:

Կուրսկի ճակատամարտի օրերին 2-րդ և 5-րդ օդային բանակների գործողությունները՝ Բելգորոդ-Խարկով ուղղությամբ կոորդինացնելու համար, Սուվորովի 1-ին աստիճանի շքանշաններով պարգևատրվեց նաև Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի հրամանատարի տեղակալ և շտաբի պետ, ավիացիայի գեներալ-լեյտենանտ (հետագայում մարշալ) Սերգեյ Ալեքսանդրի Խուդյակովը (Արմենակ Արտեմի Խանփերյանցը, Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղից): Մինչ այդ նա եղել էր Արևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի, ապա 1-ին օդային բանակի հրամանատար, 1943 թ. մայիսին առաջ քաշվել Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի հրամանատարի տեղակալի և ռազմաօդային ուժերի շտաբի պետի պաշտոնում: Կուրսկի ճակատամարտում Գերագույն գլխավոր հրամանատարության զորակայանի հանձնարարությունները հմտորեն կատարելու համար արցախցի զորահրամանատարը Սուվորովի 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրվելուց բացի արժանացավ ավիացիայի գեներալ-գնդապետի, իսկ 1944-ին՝ ավիացիայի մարշալի կոչման:

Օրյոլից հարավ՝ Մալոարխանգելսկ քաղաքի շրջանում ճակատամարտի առաջին օրը հակառակորդի տանկային ուժերի առաջին հարվածն իր վրա վերցրեց Բրյանսկի ռազմաճակատի 13-րդ բանակի 74-րդ հրաձգային դիվիզիան, որի հրամանատարն էր գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը (Շուշիից): Հուլիսի 5-ի առավոտյան թշնամու ավիացիայի և հրետանում

---

[519] ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 11-րդ գվարդիական բանակի, ց. 5916, գ. 180, թ. 116:
[520] Маршал Баграмян, Сб. док. и матер., Е., 1997, с. 54.

հուժկու հարվածներից հետո դիվիզիայի պաշտպանած տեղամասի վրա նետվեցին ֆաշիստական տանկերը, որոնց մեջ զգալի տեղ էին գրավում «Վաղրերն» ու «Ֆերդինանդ» ինքնագնաց հրանոթները: Նրանց հետևից առաջ էին շարժվում հետեակի մեքենայացված ուժերը: Թշնամուն թվում էր, թե այդ տեղամասում այլևս դիմադրության չի հանդիպի, քանի որ գերմանական ավիացիան ու ծանր հրետանին ռնբակոծել էին այդ տեղամասի յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրը: Սակայն նա չարաչար սխալվում էր: Հենց որ ֆաշիստական տանկերը մոտեցան դիվիզիայի պաշտպանության առաջին գծին, նրանց վրա հրետանային հուժկու կրակ բացվեց: Սկսեցին ծխալ առաջին մեքենաները, նրանց հետևից եկող հետեակի վրա ականանետայի, գնդացրային և հրետանային կրակի հեղեղ թափվեց: Գրոհի անցած հակառակորդի շարքերն իրար խառնվեցին: Սակայն թշնամին համառորեն առաջ էր շարժվում: Դիվիզիայի գնդերից մեկը, որն իր վրա էր վերցրել հակառակորդի գլխավոր հարվածը, ծանր կորուստներ կրեց: Շարքից դուրս եկավ հրամանատարական կազմի մեծ մասը: Մի պահ թվում էր, թե այդ տեղամասում թշնամի ուր որ է կճեղքի դիվիզիայի պաշտպանությունը: Գնահատելով ստեղծված իրավիճակը գեներալ Ղազարյանը շտաբային սպաների հետ հայտնվեց գնդի առաջավոր դիրքերում, արագորեն վերականգնեց զորամասի ստորաբաժանումների ղեկավարությունը և անձամբ վարեց մարտը: Շնորհիվ դիվիզիայի հրամանատարի քաջության ու վճռականության գունդը ետ մղեց թշնամու գրոհը և պահպանեց դիրքերը: Հինգ օր շարունակ թշնամին կրկնում էր հակագրոհները, բայց հաջողության չէր հասնում: Միայն ճակատամարտի առաջին մարտերում գեներալ Ղազարյանի դիվիզիան ոչնչացրեց հակառակորդի ավելի քան 30 տանկ, մարտական այլ տեխնիկա, հազարից ավելի զինվոր ու սպա: Դիվիզիայի գործողությունները հմտորեն ղեկավարելու ու ցուցաբերած անձնական խիզախության համար գեներալ-մայոր Ա. Ղազարյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի և Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշաններով[521]:

Կուրսկի ճակատամարտին ակտիվորեն մասնակցեց նաև Վորոնեժի ռազմաճակատի 1-ին տանկային բանակի 3-րդ մեքենայացված կորպուսի 3-րդ մեքենայացված բրիգադի հրամանատար, գնդապետ Համազասպ Բարաջանյանը: Նրա բրի-

---

[521] Казарян А., Война, люди, судьбы, кн. 1, Е., 1975, с. 178.

դադը ճակատամարտի սկզբից դիքեր էր դրավել Օբոյան քաղաքի շրջանում՝ Կուրսկ-Բելգորոդ ավտոմայրուղու մի հատվածում: Հուլիսի 5-ին, ճակատամարտի առաջին օրը, այդ ուղղությամբ հարձակվում էին հակառակորդին «Ադոլֆ Հիտլեր», «Մեռած գլուխ», «Ռայխ» տանկային և մեքենայացված «Մեծ Գերմանիա» էսէսական ամենարնտիր դիվիզիաները, որոնք ամբողջապես զինված էին «Վագր» և «Հովազ» նոր տիպի տանկերով, «Ֆերդինանդ» հզոր ինքնագնաց հրանոթներով: Բարաջանյանի բրիգադը աջակցում էր 6-րդ գվարդիական բանակի զորամասերին, որոնց թվում 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիային: Մինչև հուլիսի 11-ը տևած կատաղի մարտերում ի վերջո հաջողվեց կանգնեցնել հակառակորդի հարձակումը: Բարաջանյանի տանկիստները աչքի ընկան նաև Կուրսկի ճակատամարտի երկրորդ շրջանում հատկապես Բոգոդուխով-Վալկի ուղղությամբ տեղի ունեցած մարտերում: Օգոստոսի 7-ին 1-ին տանկային բանակի զորքերն ազատագրեցին Խարկովի մարզի Բոգոդուխով քաղաքը: Կուրսկի ճակատամարտում հակառակորդի տանկային զորամիավորումների հարվածները կասեցնելու, ապա հարձակողական մարտերում ձեռք բերած հաջողությունների համար գնդապետ Համազասպ Բարաջանյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի և Կարմիր աստղի շքանշաններով, իսկ նրա 3-րդ մեքենայացված բրիգադը վերակազմավորվեց 20-րդ գվարդիական մեքենայացված բրիգադի[52]:

Կուրսկի ճակատամարտում իր խիզախությամբ աչքի ընկած արցախահայ տանկիստներից էր 18-րդ տանկային կորպուսի 181-րդ տանկային բրիգադի 1-ին տանկային գումարտակի հրամանատար, մայոր Եփրեմ Գրիգորի Ղարիբյանը (Մարտունու շրջանի Գիշի գյուղից), որը մինչ այդ մասնակցել էր Ստալինգրադյան ճակատամարտին և պարգևատրվել Կարմիր դրոշի շքանշանով: Միայն Պրոխորովկա բնակավայրի մոտ հուլիսի 12-ին տեղի ունեցած տանկային ճակատամարտում, խիզախ տանկիստ-հրամանատարը երկու անգամ հակագրոհի տարավ իր գումարտակը հակառակորդի հարձակվող տանկերի դեմ և հանդիպական մարտում կանգնեցրեց նրանց առաջխաղացումը: 181-րդ տանկային բրիգադի հրամանատար, փոխգնդապետ Պուզիրյովը մայոր Ղարիբյանի պարգևատրման թերթիկում նշել է. «1-ին տանկային գումարտակի հրամանա-

---

52 ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 33, g. 682524, գ. 494, թ. 308:

տար, մայոր Ե. Գ. Ղարիբյանը 1943 թ. հուլիսի 12-ին երկու անդամ թշնամու դեմ գրոհի տարավ իր գումարտակը: Մարտի ժամանակ նա գործում էր վճռական և արիաբար: Անձամբ ոչնչացրեց հակառակորդի 2 տանկ, հակատանկային 2 հրանոթ, մեկ դասակից ավել զինվոր ու սպա: Մարտի թեժ պահին վիրավորվելով, մայոր Ղարիբյանը չթողեց մարտադաշտը, այլ շարունակեց հմտորեն ու խիզախորեն ղեկավարել գումարտակի գործողությունները մինչև գրոհի ավարտը: Ցուցաբերած քաջության և տոկունության համար արժանի է պարգևատրման՝ Կարմիր դրոշի շքանշանով»[523]: 5-րդ գվարդիական տանկային բանակի հրամանատար, տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ Պ. Ռոտմիստրովի 1943 թ. սեպտեմբերի 2-ի թիվ 44 հրամանով մայոր Եփրեմ Ղարիբյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[524]: Պրոխորովկայից հետո մայոր Ղարիբյանը ակտիվորեն մասնակցեց Կուրսկի ճակատամարտի երկրորդ շրջանի մարտերին՝ Բելգորոդ-Խարկով ուղղությամբ և հերոսաբար զոհվեց Խարկովի ազատագրման մարտերում՝ հետմահու պարգևատրվելով Լենինի շքանշանով[525]:

Խարկովի մարզի ազատագրման մարտերում հերոսաբար զոհվեց նաև 18-րդ տանկային կորպուսի 110-րդ տանկային բրիգադի 1-ին տանկային գումարտակի հրամանատար, մայոր Ռուբեն Զաքարի Ղարիբյանը (նույնպես Մարտունու շրջանի Գիշի գյուղից): Մարտական մի շարք շքանշանների ու մեդալների ասպետ տանկիստը թաղվել է Խարկովի մարզի Շելեստյովսկ գյուղի եղբայրական գերեզմանոցում: Ռ. Ղարիբյանը Կարմիր բանակի շարքերում էր ծառայում 1935 թ., 1938-ին ավարտել էր տանկային, իսկ 1939-ին՝ կրտսեր լեյտենանտների ուսումնարանները: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել էր 1941 թ. հունիսի 22-ից, մարտնչել Հարավարևմտյան, Արևմտյան, Հյուսիս-արևմտյան և Վորոնեժի ռազմաճակատներում, եղել վաշտի հրամանատար, գումարտակի շտաբի պետ, ապա տանկային գումարտակի հրամանատար: Նա այն հայ զինվորներից էր, որին բախտ էր վիճակվել մասնակցելու 1941

---

[523] Նույն տեղում, g. 682526, գ. 1459, թ. 305:
[524] Նույն տեղում:
[525] Նույն տեղում, g. 686043, գ. 22, թ. 341:

թ. նոյեմբերի 7-ին Մոսկվայի Կարմիր հրապարակում տեղի ունեցած զորահանդեսին[526]:

Խարկովի աղատագրման մարտերի ակտիվ մասնակիցներից էր 89-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի քաղբաժնի պետի տեղակալ, գվարդիայի մայոր Վիկտոր Ասլանի Մուրադյանը (Հադրութի շրջանի Կեմրակուճ գյուղից, հետագայում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր): Դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Միխայիլ Սերյոգինի հանձնարարությամբ նա ՏԱՍՍ-ի ֆոտոթղթակից, կապիտան Դմիտրի Զեռնովի և ավտոմատավոր Ֆիրսովի հետ 1943 թ. օգոստոսի 23-ի առավոտյան հաղթանակի դրոշը բարձրացրեց Խարկովի կենտրոնական հրապարակում գտնվող «Երրորդ ինտերնացիոնալ» (այժմ՝ «Խարկով») հյուրանոցի տանիքին[527]: Այդ պահը հավերժացվում է զինթղթակից Զեռնովի կողմից, իսկ պատմական լուսանկարն այսօր էլ իր մշտական տեղն է գրավում Կիևի «Ուկրաինան Հայրենական մեծ պատերազմում» թանգարանի ցուցանմուշներում:

Հեռահար գործողության ավիացիայի շարքերում Կուրսկի ճակատամարտին ակտիվ մասնակցություն ունեցավ նաև 17-րդ գվարդիական ռմբակոծիչ ավիադնդի էսկադրիլիայի շտուրման, գվարդիայի կապիտան Կոնստանտին Կապրիելովը (Շուշիից): Նա Հայրենական մեծ պատերազմին մասնակցում էր 1941 թ. հուլիսի 7-ից, իսկ Հեռավոր ավիացիայի մարտական գործողություններին՝ 1943 թ. մարտից: Կուրսկի ճակատամարտի առաջին շրջանում առաջադրանքները հաջողությամբ կատարելու և այդ ընթացքում ցուցաբերած խիզախության համար շտուրման Կապրիելովը 1943թ. հուլիսի 21-ին պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[528]:

Նման պարգևի արժանացավ նաև 17-րդ օդային բանակի 262-րդ ավիադիվիզիայի 993-րդ գիշերային ռմբակոծիչ ավիագնդի ավիաօղակի հրամանատար, լեյտենանտ Կոլյա Ներսեսի Մանուչարյանը (Մարտակերտից): Նա աչքի ընկավ Խարկովի ուղղությամբ տեղի ունեցած մարտերի ընթացքում, երբ օդից

---

[526] Пролог Великой Победы. Военный Парад 7 ноября 1941 года на Красной площади в Москве, М., 2001, с. 156.

[527] Школа мужества. Ветераны вспоминают дни боевые, Е., 1971, с. 257.

[528] ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 33, g. 690306, գ. 2594, թ. 100:

անգնահատելի օգնություն էր ցույց տալիս ցամաքային զորքերի գործողություններին[529]:

Կուրսկի ճակատամարտում ցուցաբերած խիզախության համար Կարմիր աստղի շքանշանով պարգևատրվեց 69-րդ բանակի 106-րդ գվարդիական առանձին սակրային գումարտակի հրամանատար, գվարդիայի մայոր Մամիկոն Մարտինի Առուսամյանը (Շամխորի շրջանի Բարսում գյուղից): Միայն հուլիսի 10-ին, նրա գումարտակի տեղադրած ականների վրա պայթեց գերմանական 11 տանկ, և կասեցվեց թշնամու գրոհը[530]:

Ճակատամարտում կատարած սխարանքների համար Կարմիր աստղի շքանշանով պարգևատրվեց նաև 129-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 518-րդ հրաձգային գնդի հրաձգային դասակի հրամանատար, լեյտենանտ Արկադի Հայկի Քոչարյանը (պատմական Զարդախլու գյուղից), որի դասակը առաջինների թվում օգոստոսի 5-ին մտավ Օրյոլ: Օրյոլի ազատագրման ժամանակ մարտական առաջադրանքները օրինակելի կատարելու համար «Մարտական ծառայությունների համար» մեդալով պարգևատրվեց նույն դիվիզիայի 664-րդ հրետանային գնդի հրետանային արհեստանոցի պետ, ավագ տեխնիկ-լեյտենանտ Գրիգոր Իսահակի Ավագյանը (Մարտունու շրջանի Խերխան գյուղից): Նման պարգևի արժանացածների թվում էին 636-րդ հրաձգային գնդի տրանսպորտային վաշտի 2-րդ դասակի հրամանատար, գվարդիայի կրտսեր լեյտենանտ Շահեն Սարգսի Գասպարյանը (Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղից), 94-րդ առանձին բժշկասանիտարական գումարտակի սայլապան, կարմիրբանակային Մատուր Մեսրոպի Սահակովը (Շուշիի շրջ-նի Շրլան գյուղից), 401-րդ առանձին հակատանկային կործանիչ գիվիզիոնի ականանետի նշանառու, շարքային Վահան Հովհաննիսյանը (Ստեփանակերտի շրջանի Ուլաբաբ գյուղից) և շատ ուրիշներ[531]:

---

[529] Նույն տեղում, g. 666044, գ. 650, թ. 54:
[530] Նույն տեղում, գ. 656, թ. 246:
[531] Նույն տեղում 129-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի, g. 2, գ. 9, թ. 74; գ. 5, թ. 139; գ. 7, թթ. 9, 15, 24 և այլն:

HAKOB GRIGORYAN

THE PARTICIPATION OF ARMENIANS FROM ARTSAKH IN THE KURSK BATTLE (JULY 5-AUGUST 23, 1943)

Summary

The very important event of the second stage of the Great patriotic War was the Kursk battle. Together with Russians, Ukrainians, Byelorussians and the representatives of other peoples of the USSR several thousand Armenians contributed to the victory by fighting in different regiments of the Red Army. There was a considerable number of Armenians from Artsakh who were awarded with high orders of the USSR. Among them were lieutenant Vladimir Ionossyan, general-lieutenant Sergey A. Khudyakov (Artyom Khanperyants), colonel Hamasasp Babajanyan (later Marshal), major Eprem Gharibyan, major Ruben Darbinyan, major Victor Muradyan, captain Constantine Kaprielov, lieutenant Kolya Manucharyan, major Mamikon Arustamyan. lieutenant Arcadi Kocharyan, lieutenant Grigor Avagyan, lieutenant Shahen Gasparyan, soldiers Tsatur Sahakov, Vahan Hovhannisyan and many others.

ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ԱրՊՀ

ՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԼՂՀ -ՈՒՄ 1992 Թ. ՀՈՒՆԻՍ-ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ

Շուշիի ազատագրումից եւ շրջափակման ճեղքումից հետո թվում էր, թէ ԼՂՀ-ում հանդարտվել են ներքաղաքական հակասությունները, սակայն հունիսի 2-6-ը տեղի ունեցած ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի (Գխ) առաջին նստաշրջանը ապացուցեց հակառակը: Նստաշրջանում ԼՂՀ Գխ նախագահի ընտրությունների ժամանակ իրենց նորից զգացնել տվեցին ներքին հակասությունները, որոնք ավելի սրվեցին Հայաստանի ղեկավարության ազդեցության հետեւանքով: Իրադարձությունների զարգացումը, երկրում ստեղծված իրավիճակը հանգեցրեցին մի շարք արմատական փոփոխությունների ԼՂՀ ներքաղաքական կյանքում:

Շահումյանի եւ Մարտակերտի կորուստը մեծ աղմուկ բարձրացրեց Հայաստանի ներքին կյանքում:

Մինչդեռ Շահումյանի ու Մարտակերտի անկումը կարելի է բացատրել փոխկապակցված, թերեւս իրար լրացնող մի շարք գործոններով: Մինչեւ այսօր փորձեր չեն ձեռնարկվել օբյեկտիվության եւ առողջ տրամաբանության հիման վրա վերհանել անկման պատճառները: Հաշվի առնելով խնդրի բարդությունն ու խճողվածությունը, ինչպես նաեւ նրա քաղաքական շահարկումները հեղինակները հիմնականում շրջանցել են այն: Սակայն շրջանառության մեջ կան տարբեր տեսակետներ, բայց մի բան ակնհայտ է, որ ԼՂՀ եւ ՀՀ ուժային համակարգերը տեղյակ էին ադրբեջանական բանակի խոշոր կուտակումների մասին[532]:

Ստեղծված ծանր կացությունից դուրս գալու նպատակով ԼՂՀ Գխ նախագահությունը փորձեց համապասխան ուղիներ որոնել: Հունիսի 16-ի ԼՂՀ Գխ նախագահության ընդլայնված նիստի ժամանակ հանձնարարվեց ԼՂՀ նախարարների խորհրդին (Նխ) ստեղծել Շահումյանի եւ Մարտակերտի

---

[532] ԼՂՀ պետարխիվ, Ֆ.254, g.4, պ.մ.1, կ.1, էջ 94:

շրջանից ադրբեջանական բանակի կողմից բռնադազմված հայ բնակչության ընդունման, տեղավորման համակարգիչ չտար:

Նկատի ունենալով Ադրբեջանի ազգային բանակի լայնածավալ հարձակման հետեւանքները՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը նպատակահարմար գտավ դիմում հղել Արցախի բոլոր սպաներին, կադրային զինվորականությանը:

Հունիսի 17-ին ԼՂՀ պաշտպանության խորհուրդը (ՊԽ) հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ մասնավորապես ասվեց. «Առաջնորդվելով մարդասիրական սկզբունքներով եւ հարգելով կրոնական զգացմունքները, ինչպես նաեւ բնակչության շրջանում համաճարակի բռնկումը կանխելու նպատակով, ԼՂՀ ՊԽ-ն Ադրբեջանի զինյալ կազմավորումներին առաջարկում է ռազմաճակատի ամբողջ երկայնքով 10 ժամ դադարեցնել ռազմական գործողությունները սկսած հունիսի 17-ի ժամը 10-ից: Այդ ընթացքում ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը (ԻՊՈՒ) հնարավորություն կտան հավաքել ադրբեջանցի զինվորների դիակները, որոնց թիվը ռազմաճակատի միայն մի հատվածում 400-ից ավելի է»: Այդ առաջարկությունը ռազմավարական քայլ էր, որը երեւի նպատակ էր հետապնդում ԻՊՈՒ-ին հնարավորություն տալ օգտվել ստեղծված ժամանակավոր հրադադարից, համախմբել իրենց ուժերը եւ կարողանալ արժանի դիմադրություն ու հակահարված տալ: Սակայն ադրբեջանական կողմը չընդունեց այն: Շարունակվեց լայնածավալ հարձակումը: Ծանր կացությունից դուրս դալը եւ ծառացած օրախնդիր հարցերի լուծումն առանց կարգուկանոնի, ուժերի ու միջոցների համախմբման անհնար էին: Ուստի հունիսի 18-ին տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ եւ ՆԽ համատեղ նիստ: Քննարկվեց հանրապետությունում տիրող ռազմաքաղաքական իրավիճակը: Ադրբեջանի աննախադեպ հարձակման հետեւանքները վերացնելու եւ հանրապետությունում կարգուկանոնը վերականգնելու նպատակով՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը եւ ՆԽ-ն որոշեցին հանրապետության ամբողջ տարածքում հայտարարել արտակարգ դրություն մեկ ամիս ժամկետով: Ընդլայնվեց ՊԽ կազմը՝ նրան տալով ԼՂՀ պետական իշխանության եւ կառավարման մարմինների կարգադիր եւ գործադիր լայն լիազորություններ: ՊԽ կազմի մեջ մտան պաշտպանության կոմիտեի (ՊԿ) նախագահ Ս. Սարգսյանը, ԼՂՀ ներքին գործերի (ՆԳ) նախարար Ա. Իսադուլովը, ԼՂՀ ազգային անվտանգության վարչության (ԱԱՎ) պետ Ա. Խաչատրյանը, ԼՂՀ ՀԽ քարտուղար Վ. Հակոբյանը, ԼՂՀ ԳԽ

արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Լ. Մելիք-Շահնազարյանը, հատուկ տնտեսական ծրագրերի վարչության պետի տեղակալ Լ.Պետրոսյանը[533]: ԼՂՀ «Արտակարգ դրության մասին» օրենքի 20-21 հոդվածների համապատասխան արգելվեց առանց հատուկ թույլտվության ԼՂՀ-ից փոխադրամիջոցների եւ քաղաքացիների մեկնումը: Ըստ ամենայնի, թշնամու ագրեսիային դիմագրավելու նպատակով որոշվեց հունիսի 20-ից հանրապետության տարածքում անցկացնել մասնակի զորահավաք՝ 18-40 տարեկան զինապարտների, իսկ սպաները՝ մինչեւ 50 տարեկան, հատուկ պատրաստություն ունեցող կանանց՝ 19-ից մինչեւ 30 տարեկան[534]: Ընդունվեց որոշում, որով կոչ էր արվում զենք կրելու ընդունակ բոլոր շահումյանցիներին, բոլոր նրանց, ում համար թանկ էր հայրենիքն ու ազատությունը, պարտիզանական պայքար ծավալել թշնամու կողմից զավթած ամբողջ տարածքում[535]:

Իսկ խուճապը կանխելու եւ նյութական արժեքները փրկելու նպատակով ԼՂՀ ՊԽ նախագահ Գ. Պետրոսյանը կարգադրեց հունիսի 19-ին Մարտակերտի հիմնարկ-ձեռնարկությունների տնօրեններին եւ ղեկավար կազմին անհապաղ մեկնել Մարտակերտի շրջան եւ ձեռնամուխ լինել իրենց ծառայողական պարտականությունների կատարմանը, իսկ կարգազանցներին խոստացավ պատժել արտակարգ դրությանը հատուկ խստագույն օրենքով[536]:

Հունիսի 21-ի ԼՂՀ ԳԽ նախագահության նիստի ժամանակ քննարկվեց ԼՂՀ Շահումյանի շրջանի եւ Մարտակերտի շրջանի մի հատվածի բռնազավթման հարցը: ԼՂՀ ԳԽ նախագահության որոշմամբ, կատարվածի հանգամանքների ուսումնասիրման գործը դրվեց ԼՂՀ ԳԽ հետեւյալ՝ պետական կառուցվածքի, իրավունքի եւ օրինականության, մանդատային, պարկեշտության, մարդու իրավունքների եւ ազգությունների, պաշտպանության եւ անվտանգության, ագրարային հարցերի գյուղական կյանքի հանձնաժողովների վրա: Հանձ-

---

533 ԼՂՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության եւ ՆԽ 1992 թ. հունիսի 18-ի համատեղ նիստի արձանագրություն N 32:

534 ԼՂՀ կառավարության ընթացիկ արխիվ, ԼՂՀ ՆԽ որոշումներ, որոշում N 53 առ1992թ. հունիսի 19-ի արձանագրություն N 6:

535 «Երկիր» , 20.06.1992:

536 «Արցախ», 20.06.1992:

նարարվեց հանձնաժողովներին իրենց աշխատանքը կատարել՝ պատգամավորների եւ ակտիվի լայն ընդգրկումով[537]:

Տեղի տալով ժողովրդավարական հոծ զանգվածների միահամուռ պահանջին հունիսի 22-ին Երեւանում կրկին ՀՀ Գխ արտակարգ նստաշրջան հրավիրվեց, որտեղ պետք է շարունակվեր Արցախի հարցի քննարկումը: Նստաշրջանն արտասովոր էր նրանով, որ անցնում էր ԼՂՀ Գխ նախագահության անդամների մասնակցությամբ: Եղան տարբեր առաջարկություններ, եւ նորից լսվեցին փոխադարձ մեղադրական կոչեր՝ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանն իր ելույթում մեղադրեց ԼՂ ղեկավարությանը, իբր այն ինքնագլուխ որոշումներ է կայացնում եւ անտեսում Հայաստանի Հանրապետության կառավարության տեսակետները: Օրինակ բերվեց հունիսի սկզբին Հռոմում ԵԱՀԽ Մինսկի խմբի ԼՂ-ին նվիրված խորհրդակցությանը ԼՂ պատվիրակության չուղարկելը: ԼՂՀ Գխ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանն իր ելույթում մի քանի խոսքով անդրադարձավ ՀՀ նախագահի կշտամբանքին, ապա հեռացավ դահլիճից[538]:

Հունիսի 27-ին տեղի ունեցավ ԼՂՀ Գխ արտակարգ նիստ, որտեղ քննարկվեցին մի շարք օրախնդիր հարցեր[539]: Այդ նիստի ժամանակ ԼՂՀ Գխ նախագահությունը աննպատակահարմար գտավ ԼՂՀ պատվիրակության մասնակցությունը 1992 թ. հունիսի 29-ին Հռոմում կայանալիք խորհրդաժողովին: Այդ առնչությամբ ԼՂՀ Գխ նախագահությունը ուղերձ հղեց ԼՂ հակամարտության հարցով Մինսկի խորհրդաժողովի նախագահ Մ. Ռաֆայելիին եւ Հռոմում կայանալիք նախապատրաստական հանդիպման մասնակից երկրներին, ուր մասնավորապես նշվեց. «...Մեզ հղած հրավերքում, ինչպես նաեւ ընդունվող փաստաթղթերում ԼՂՀ օրինական ընտրված իշխանությունների կարգավիճակը իջեցվում է մինչեւ «հայկական համայնքի ներկայացուցիչների» կամ նույնիսկ «Ստեփանակերտի ներկայացուցիչների կարգավիճակի»: Դրանով հանրապետության բնակչության 90 տոկոսի ընտրած իշխանությունների ներկայացուցչությունը հավասարեցվում է ադրբեջանական համայնքի ներկայացուցչությանը, ինչը միանգամայն անընդունելի է:

---

537 ԼՂՀ պետարխիվ, Ֆ. 254, g.1, պ. մ. 3, կ.1, էջ 52:
538 Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ181:
539 ԼՂՀ պետարխիվ, Ֆ. 254, g.1, պ.մ.3, կ.1, էջ 54-60:

Մեր կարծիքով, Հռոմի նախնական հանդիպման գործունեության ուղղվածությունը այդ հիմնահարցի լուծման նկատմամբ միակողմանի մոտեցում է ենթադրում հօգուտ Ադրբեջանի, այսինքն՝ ԼՂ-ն պահել ԱՀ կազմում: Դրա հետեւանքով լրիվ անտեսվում է ժողովրդի ինքնորոշման օրինական իրավունքը, որը արտահայտված է 1991 թ. դեկտեմբերի 10-ի համաժողովրդական հանրաքվեով (Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օր):

Ափսոսանքով պիտի հայտնենք, որ ԼՂՀ ԳԽ նախագահության 6 ժամ տեւած արտակարգ նիստում որոշում կայացվեց ձեռնպահ մնալ Հռոմի խորհրդաժողովի նախնական աշխատանքին մասնակցելուց: Այս որոշման վրա ներգործել են ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի ագրեսիայի հերթական ուժեղացումը եւ վերը շարադրված մեր մտահոգությունը»[540].

Սակայն ներքին եւ արտաքին ճնշումների հետեւանքով հուլիսի 1-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը ստիպված որոշում ընդունեց մասնակցել ԵԱՀԽ Մինսկի խմբի ԼՂ-ին նվիրված խորհրդակցությանը: Ուստի հուլիսի 4 - 7-ը Հռոմի նախապատրաստական հանդիպմանը մասնակցելու համար ստեղծվեց պաշտոնական պատվիրակություն հետեւյալ կազմով՝ ԼՂՀ ՆԽ առաջին տեղակալ Բ. Առուշանյան՝ պատվիրակության ղեկավար, Հ. Խաչատրյան, Ռ. Քոչարյան, Հ. Բալայան[541].

Ինչպես եւ ակնկալվում էր, Ղարաբաղի հարցերով ԵԱՀԽ Հռոմի խորհրդաժողովը չարդարացրեց որոշ հայ քաղաքական գործիչների հույսերը: Հուլիսի 5-ին հայկական պատվիրակությունը լքեց նիստը, քանի որ ոչ միայն չէր ճանաչվում ԼՂՀ պատվիրակության իրավահավասար կարգավիճակը, այլ նաեւ հրաժարվում էին դատապարտել Ադրբեջանի ագրեսիան եւ Շահումյանի ու Մարտակերտի շրջանի մեծ մասը զավթելու փաստը: Հետագայում ԼՂՀ պատվիրակությունը հեռացավ բանակցությունների սեղանից, երբ հայտնի դարձավ, որ միջնորդ իրավական կազմը սկսել էր խուսափել Ղարաբաղի պատվիրակությանը հատուկ կարգավիճակ տալու խոստումը կատարելուց[542].

---

[540] ԼՂՀ Աժ ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության 1992 թ. հունիսի 27-ի նիստի արձանագրություն N 34:

[541] «Արցախ», 03.07.1992:

[542] Աբրահամյան Հ., ճակատագրին ընդառաջ, Ե., 2001, էջ 182:

Հանրապետության տարածքը բռնատեզահանված բնակչության կողմից լքումը կանխելու նպատակով, ինչը կարող էր հանգեցնել համընդհանուր խուճապի, հունիսի 29-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում կայացրեց արգելել հանրապետության սահմաններից դուրս քաղաքացիների անկախ սեռատարիքային պատկանելության մեկնումը, բացառությամբ հատուկ գործուղվածների[543].

Հուլիսի 6-ին Ստեփանակերտ ժամանեց ՀՀ ԳԽ պաշտոնական պատվիրակությունը՝ ԳԽ նախագահի տեղակալ Ա. Սահակյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին ՀՀ պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը, քաղաքական կուսակցության ներկայացուցիչներ: Հուլիսի 7-ին տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահության եւ ՀՀ պատգամավորական պատվիրակության համատեղ նիստ: Քննարկվեցին Արցախում ստեղծված ռազմաքաղաքական ծանր իրավիճակի հետ առնչվող մի շարք հարցեր: Պատվիրակությունը մասնակցեց նաեւ ԼՂՀ ՆԽ նիստին, ուր քննարկվեցին փախստականների տեղավորման եւ առաջին անհրաժեշտության պարագաների նվազագույն ապահովմանն ուղղված միջոցառումների ծրագիրը[544].

Հուլիսի 9-ին կայացավ ԼՂՀ ԳԽ եւ ՆԽ համատեղ նիստ, որի ընթացքում որոշում կայացվեց ընդունել ԼՂ հարցով ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի նախագահ Մ. Ռաֆայելիի առաջարկը՝ 1992 թ. հուլիսի 9-ից 01 ժամից 30 օրով կրակը դադարեցնելու վերաբերյալ[545].

Թեև Ադրբեջանի կառավարությունը պաշտոնապես հայտարարել էր, թե ընդունում է Մ. Ռաֆայելիի առաջարկը, սակայն ռազմական գործողություններն ավելի սաստկացան: Այդ առնչությամբ ԼՂՀ ԳԽ նախագահությունն ու ՆԽ-ն հանգես եկան համատեղ հայտարարությամբ:

Հուլիսի 12-ին տեղի ունեցած ԼՂՀ ԳԽ նախագահության նիստին մասնակցում էր ՀՀ ԳԽ պատվիրակությունը՝ Պ. Քաջարյանի գլխավորությամբ: Նրանք նպատակ էին հետապնդում օգնել տեղական մարմիններին լուծել բոլոր խնդիրները՝ կապված բարեգործական օգնության բաշխման, փախստականների տեղավորման, կենցաղային, բուժական եւ այլ

---

543 ԼՂՀ պետարխիվ, Ֆ. 254, g.1, պ.մ.3,կ.1, էջ 61-63:
544 «Արցախ», 09.07.1992:
545 ԼՂՀ պետարխիվ, Ֆ. 254, g.1, պ.մ.4,կ.1, էջ 9-10:

սպասարկման հետ[546]: Օրակարգ մտցվեց ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանի եւ ԼՂՀ ԳԽ քարտուղար Վ. Հակոբյանի զբաղեցրած պաշտոններից հրաժարականների հարցը: Սակայն ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց մերժել նրանց հրաժարականները[547]:

ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության անդամների եւ այլ քաղաքական գործիչների շրջանակներում կան տեսակետներ, որ ԳԽ նախագահի պաշտոնակատարի ու քարտուղարի հրաժարականի պատճառը քաղաքական ճնշումների հետեւանք էր, եւ այդ քայլի նպատակն էր կանխել հետագա պառակտումը հանրապետության համար ստեղծված այդ դժվար պարագայում:

Վերջին իրադարձությունների կապակցությամբ ԼՂՀ ԳԽ նախագահության հունիսի 18-ի նիստում քննարկվեց ՀՀ-ԼՂՀ փոխհարաբերությունների հարցը: Հաշվի առնելով ՀՀ իշխանությունների ու ԼՂՀ իշխանությունների փոխհարաբերությունների եւ Արցախյան հիմնահարցի ըմբռնման գործում ՀՀ մոտեցման ճշգրտումը՝ ՀՀ իշխանությունների հետ բանակցություններ սկսելու համար ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում կայացրեց ուղարկել ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակություն հետեւյալ կազմով՝ Գ. Պետրոսյան, Վ. Հակոբյան, Վ. Աղաբալյան, Վ. Ալեքսանյան, Կ. Բաբուրյան, Վ. Ղազարյան, Հ. Խաչատրյան[548]:

Բանակցությունների ընթացքի վերաբերյալ կան իրարամերժ կարծիքներ, սակայն, հաշվի առնելով այդ ժամանակաշրջանի որոշ քաղաքական գործիչների վկայությունները եւ ուսումնասիրելով հունիսի 27-ի ԼՂՀ ԳԽ նախագահության դռնփակ նիստի սղագրությունը, որտեղ ներկայացվել էին ՀՀ իշխանությունների հետ բանակցած ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակության անդամների կարծիքները, գտնում ենք որ ՀՀ նախագահը կարծես թե ցանկանում էր ձերբազատվել ԼՂՀ ԳԽ նախագահության «անհնազանդ» անդամներից՝ պահանջելով վերջիններից ստեղծել մի մարմին

---

546 «Ազգ», 23.07.1992:
547 ԼՂՀ պետարխիվ, Ֆ. 254, ց.1, պ.մ.4,կ.1, էջ 14-16:
548 Նույն տեղում, էջ 22-23:

եւ տալ նրան օրենսդիր ու գործադիր մարմինների բոլոր պարտականությունները:[549]

Պատահական չէր նաեւ օգոստոսի 11-ին Հանրապետության ՆԽ նախագահ Օ. Եսայանի դիմումը ԳԽ նախագահությանը՝ իր հրաժարականի հարցի քննարկման վերաբերյալ: Նա իր քայլը բացատրում էր իշխանության գոյություն ունեցող կառույցների եւ ռազմական իրավիճակի պահանջների անհամապատասխանությամբ: Նա առաջարկեց մինչեւ 1992 թ. վերջը Հանրապետությունում ռազմական դրություն մտցնել, ինչպես նաեւ ստեղծել պաշտպանության խորհուրդ եւ ԼՂՀ ԳԽ եւ ՆԽ լիազորությունները հանձնել այդ մարմնին[550]*: Իսկ հաջորդ օրը՝ օգոստոսի 12-ին, նույն հարցով ԼՂՀ ԳԽ նախագահությունը դիմեց նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը, սակայն նախագահությունը որոշեց մերժել Գ.Պետրոսյանի հրաժարականի դիմումը*[551]*:*

Ադրբեջանի կողմից լայնածավալ ագրեսիայի եւ ԼՂՀ մի մասի բռնազավթման կապակցությամբ ԼՂՀ ԳԽ նախագահությունը օգոստոսի 12-ին որոշում ընդունեց ԼՂՀ-ում հայտարարել ռազմական դրություն 6 ամիս ժամկետով: Այդ հրամանագրի համաձայն հայտարարվեց ԼՂՀ արական սեռի 1947-ից մինչեւ 1974 թթ. ծնված քաղաքացիների զորահավաք: Որոշվեց միջոցներ ձեռնարկել ԼՂՀ սահմաններից դուրս գտնվող զորահավաքի տակ ընկնող ԼՂՀ քաղաքացիներին մեկ շաբաթվա ընթացքում վերադարձնելու համար: ԼՂՀ ԻՊՈՒ շտաբին, ՆԳՆ, ԱԱՎ, պարետությանը, զինվորական կոմիսարիատին եւ դատախազությանը հանձնարարվեց ապահովել սույն հրամանագրի կատարումը պատերազմական ժամանակի օրենքներին համապատասխան:

Ընդունված որոշման մասին եռօրյա ժամկետում իրազեկվեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն ու ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը[552]*:*

---

549 ԼՂՀ առաջին գումարման ԳԽ քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու հանգուցյալ Վ.Հակոբյանի անձնական արխիվ: ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության 1992 թ. հուլիսի 27-ի դռնփակ նիստի սղագրություն:

550 Աբրահամյան Հ. , նշվ. աշխ., էջ 182:

551 ԼՂՀ պետարխիվ, Ֆ. 254, ց.1, պ.մ.4,կ.1, էջ 31-34:

552 Նույն տեղում, էջ 34:

գանքու համար «ԼՂՀ ա
մասին» սահմանադրա
ածի համապատասխան, ստ
միտե (ՊՊԿ):
նշանակվեց Ռ. Քոչար
ակալ նշանակվեց ԼՂՀ
Առուշանյանը, ՊՊԿ նա
ահության անդամ, պեն
հարցերի եւ օրինակա
ի նախագահ Կ. Բաբուր
ԼՂՀ ԳԽ նախագահ
նվտանգության հանձն
ՂՀ ՊԿ նախագահ Ս. Ս
գուլովը, ԻՊՈՒ հրաման
:
եց ՆԽ՝ «ԼՂՀ նախարա
ատեսված բոլոր պար
թյան ռեժիմի իրականա
նախատեսված են «Ռա
ախագահության 1992 թ
ԳԽ նախագահության
փոխանցվեցին ՊՊԿ-ին:
նախագահի լիազորությ
ովում էր 6 ամիս հե
ունը ներկայացնել ԳԽ-

Այսպիսով, նշված ժամանակաշրջանի քաղաքական գործընթացների ուսումնասիրությունն ու նրանց վերլուծությունը ցույց է տալիս, որ 1992 թ. հունիս-օգոստոսյան ռազմական անհաջողությունները ունեին խորքային:

Այսօր որոշ քաղաքագետներ, մոռացության տալով կամ անտեղյակ լինելով անցյալի քաղաքական գործընթացներին եւ միգուցե ելնելով քաղաքական շահերից, միտումնավոր ձեւով կեղծում են Արցախի ազատագրական պայքարի որոշ դրվագներ[554]: Նշված վիճահարույց հարցերը պետք է լուրջ ուսումնասիրության առարկա դառնա:

TARON HAKOBYAN
STATE UNIVERSITY OF ARTSAKH

THE STATE FORMATION AND POLITICAL PROCESSES IN THE NKR IN JUNE-AUGUST, 1992

Summary

After the liberation of Shushi and the break of the blockade it seemed that the inner political contradictions had been calmed in the NKR; on June 2-6 was summoned the First Session of the Supreme Assembly of the NKR which proved the contrary. In the course of the election of the Chairman inner contradictions again became perceptible which had been deepened under the influence of the attitude of the leadership of the Republic of Armenia. The occupation of the region of Shahumyan and part of the region of Martakert by the enemy forces aggravated the situation.

The further victories of the Armenian liberating forces, along with military-stratigic actions were also due to the political developments in the NKR.

The research of political processes of the given period has been done on the basis of the archive documents.

---

554 Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994 թթ., (Հանրագիտարան 1 հատորով): Եր., 2004, 864 էջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԾՈՎՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆՆ ՈՒ ԿԱՅԱՑՄԱՆԸ (1992 - 2003 թթ.)

ԽՍՀՄ փլուզումից հետո ամբողջ ընդլայնված սևծովյան տարածաշրջանը վերածվեց քաղաքական անկայունության կենտրոնի: Զինված ընդհարումները շղթայական ռեակցիայով տարածվեցին ամբողջ տարածաշրջանով, դրանց գումարվեցին նաև ներպետական բազմաթիվ բախումներ: Հակամարտությունները Բալկաններում, Ղարաբաղում, Մերձդնեստրում, Աբխազիայում, Հարավային Օսիայում և այլն, բավականին դժվարացրեցին տարածաշրջանի պետությունների քաղաքական երկխոսությունը: Այդ իսկ պատճառով 1990-ականների սկզբին խոսել սևծովյան տարածաշրջանում քաղաքական կամ ռազմաքաղաքական լուրջ համագործակցության մասին ավելի քան անհնարին էր և անիրատեսական: Սակայն քաղաքական, ռազմական և այլ խնդիրներից զատ, Սև ծովին ափամերձ պետությունները և դրանց հարակից երկրներն ունեին ապաքաղաքականացված կամ նվազ քաղաքականացված ընդհանուր բազում խնդիրներ, որոնց լուծումն անհնարին էր առանց միջպետական համագործակցության:

1992 թ. հունիսի 25-ին տասնմեկ պետությունների և կառավարությունների գլուխներն[555] Ստամբուլում կայացած գագաթնաժողովի ժամանակ ստորագրեցին Սևծովյան տնտեսական համագործակցության հռչակագիրը և Բոսֆորյան հայտարարությունը ազդարարելով համագործակցության նոր ձևաչափի Սևծովյան տնտեսական համագործակցության ստեղծումը[556]: Ստամբուլյան փաստաթղթերն ուրվագծեցին ՍԾՏ համագործակցության հիմնական սկզբունքները և ուղղությունները որպես տարածաշրջանի պետությունների հա-

---

555 Ալբանիա, Հայաստան, Ադրբեջան, Բուլղարիա, Վրաստան, Հունաստան, Մոլդովա, Ռումինիա, Ռուսաստան, Թուրքիա և Ուկրաինա:

556 Корнилович С. Г., Торопыгин А. В., Развитие межгосударственной интеграции в ЕВРАЗЭС, Развитие сотрудничества с ПАЧЕС. Проблемы современной экономики, N 3(11), СПб., 2004, с. 10-12.

մագործակցության ձևաչափ ունեցող կառույցի: Ստորագրելով Ստամբուլյան հռչակագիրը՝ կողմերը պայմանավորվեցին խրախուսել համագործակցությունը առևտրի և արդյունաբերություն, տրանսպորտի, կապի, գիտության և տեխնիկայի, էներգետիկայի, գյուղատնտեսության, զբոսաշրջության և բնապահպանության ոլորտներում:

Ստամբուլյան գագաթնաժողովի գաղափարը պատկանում էր Թուրքիային, որը Խորհրդային Միության փլուզումից հետո քաջ գիտակցում էր, որ քաղաքական և տնտեսական իրողությունները սևծովյան տարածաշրջանում անդառնալիորեն փոփոխվելու են: Անշուշտ, այս նախաձեռնությունն առաջ քաշելով՝ Թուրքիան փորձում էր նաև յուրատեսակ հակակշիռ ստեղծել ձևավորվող Եվրոպական միությանը՝ առաջարկելով ըստ էության սևծովյան «ընդհանուր շուկայի» ստեղծման գաղափարը[557]:

Հայաստանը հանդիսացավ ՍՄՏՀ-ի ակտիվ մասնակիցներից մեկը կառույցի ստեղծման առաջին իսկ օրերից: ՀՀ-ի պարագայում ՍՄՏՀ-ն հանդիսացավ ոչ միայն երկրի առջև ծառացած տնտեսական, սոցիալական և այլ խնդիրների լուծման տարածաշրջանային համագործակցության մեխանիզմ, այլ նաև վերածվեց չափազանց հարմար ֆորումի՝ քաղաքական երկխոսություն ծավալելու համար: ՍՄՏՀ-ն հիմք ապահովեց, այսպես կոչված, բազմակողմ դիվանագիտության շրջանակներում որոշակի բնույթի հարաբերություններ հաստատելու համար նաև Ադրբեջանի և Թուրքիայի հետ:

Ստամբուլի հռչակագրի ընդունումից հետո ութ ամիս անց՝ 1993 թ. փետրվարի 26-ին կրկին Ստամբուլում ՍՄՏՀ մասնակից ինը պետությունների՝ Ալբանիայի, Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի, Ռումինիայի, Ռուսաստանի, Թուրքիայի և Ուկրաինայի խորհրդարանների նախագահները սևծովյան երկրների միջև բազմակողմ տնտեսական համագործակցությանը խորհրդարանական աջակցություն ցուցաբերելու և տարածաշրջանային կայունությունն ապահովելու նպատակով ընդունեցին ՍՄՏՀ խորհրդարանական վեհաժողով հիմ-

---

557 Heinz Kramer, Changing Turkey: Challenges to the Europe and the United States, New York, Brookings Institution, 2000, pp. 93-93.

նելու մասին հռչակագիրը ազդարարելով Համագործակցության խորհրդարանական վեհաժողովի ստեղծման փաստը[558]:

1993 թ. ապրիլի 12-ին Ստամբուլյան հռչակագիրն արժանացավ ՀՀ Գերագույն խորհրդի հավանությանը: ՍԾՏՀ խորհրդարանական վեհաժողովին ՀՀ անդամակցության մասին որոշման մեջ, մասնավորապես, նշվում էր. «Հավատարիմ մնալով ՀՀ անկախության մասին հռչակագրի սկզբունքներին, ՀՀ Գերագույն խորհուրդն որոշում է հավանություն տալ ՀՀ անդամակցությանը Սևծովյան տնտեսական համագործակցության վեհաժողովին»[559]:

Թերևս ՍԾՏՀ ստեղծման առաջին իսկ օրերից Համագործակցության բոլոր մասնակիցների համար պարզ դարձավ, որ համագործակցության ավելի սերտ մակարդակի և ծրագրերի ավելի արդյունավետ իրագործման հնարավոր է հասնել միայն որոշակի ինստիտուցիոնալ կառույցներ ստեղծելու միջոցով: Դեռևս 1994 թ. մարտի 15-ին ՍԾՏՀ անդամ պետությունները որոշում կայացրեցին կառուցվածքային փոփոխություն կատարել համագործակցության շրջանակներում և Ստամբուլում հիմնել Մշտական քարտուղարություն: Սա առաջին քայլն էր այդ միջազգային մշտական խորհրդակցությունը միջազգային կազմակերպության վերածելու ուղղությամբ: 1995 թ. ՍԾՏՀ քաղաքականության հետևողականության ապահովման նպատակով ներառվեց նաև, այսպես կոչված, «տրոյկայի» ինստիտուտը, որը կազմված էր ՍԾՏՀ նախկին, գործող և ապագա նախագահներից:

1998 թ. աչքի ընկավ Հայաստանի և ՍԾՏՀ-ի միջև համագործակցության սերտ մակարդակով: 1998 թ. ապրիլի 30-ին Երևանում տեղի ունեցավ ՍԾՏՀ արտաքին գործերի նախարարների տասնմեկերորդ հանդիպումը: Այս հանդիպմանն առաջին անգամ արտաքին գործերի նախարարի պաշտոնում մասնակցեց Վ. Օսկանյանը: Իր ելույթում նախարարը մասնավորապես ընդգծեց, որ Հայաստանն ՍԾՏՀ-ն դիտում է «որպես մեր երկրների սոցիալական և տնտեսական աճի կարևոր տարր», որը թույլ է տալիս զարգացնել բարիդրացիական հարաբերությունները մեր տարածաշրջանում և ապահովել կա-

---

558 Հունաստանը դարձավ Վեհաժողովի լիիրավ տասներորդ անդամը 1995 թ. հունիսին, իսկ Բուլղարիան անդամակցեց կառույցին միայն 1997 թ. հունիսին:

559 Տե՛ս ՀՀ Գերագույն խորհրդի 1993 թ. ապրիլի 13-ի որոշումը:

յունությունն ու անվտանգությունը, ինչպես նաև խթանել մասնակից պետությունների ինտեգրումը եվրոպական կառույցներին»[560]: Երևանյան հանդիպման ժամանակ տեղի ունեցավ նաև ՍԾՏՀ կանոնադրության նախաստորագրումը:

1998 թ. հունիսի 5-ին Յալթայում կայացած գագաթնաժողովի ժամանակ հանդիսավոր արարողությամբ ՍԾՏՀ մասնակից պետությունների և կառավարությունների ղեկավարներն ստորագրեցին ՍԾՏՀ կազմակերպության կանոնադրությունը: ՀՀ անունից կանոնադրությունն ստորագրեց ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանը: Անդամ պետությունների կողմից վավերացվելուց հետո այն ուժի մեջ մտավ 1999 թ. մայիսի 1-ին:

Միջազգային տարածաշրջանային տնտեսական կազմակերպության վերածվելուց հետո հստակեցվեցին ՍԾՏՀ կազմակերպության գործունեության հիմնական ոլորտները՝ միջկառավարական (գագաթնաժողովներ և անդամ պետությունների նախարարների խորհրդի նիստեր), միջխորհրդարանական (Խորհրդարանական վեհաժողով), մասնավոր հատված (ՍԾՏՀ Գործարար խորհուրդ), բանկային գործունեություն և ֆինանսներ (Առևտրի և զարգացման բանկ), գիտաակադեմիական համագործակցություն (Սևծովյան հետազոտությունների միջազգային կենտրոն):

Բացի ՍԾՏՀ կազմակերպության կանոնադրությունից, Յալթայում տեղի ունեցած հանդիպման ժամանակ ընդունվեց նաև ՍԾՏՀ մասնակից պետությունների ու կառավարությունների գլուխների հռչակագիրը: Հռչակագիրն արձանագրեց, որ «Այսօր ՍԾՏՀ-ն ծառայում է ավելի քան մեկ նպատակի: Այն տնտեսական և սոցիալական առաջընթացն արագացնելու և, հետևաբար, մեր երկրներում ժողովրդավարական հաստատությունների համախմբման անվիճելի փոխլրացնող միջոց է: Այն նաև նախապատրաստական հիմք է 21-րդ դարի միացյալ եվրոպային ինտեգրվելու համար»[561]: ՀՀ-ն դարձավ Սևծովյան տնտեսական համագործակցության խարտիան (կանոնադրությունը) վավերացնող առաջին պետություններից մեկը: ՀՀ

---

[560] Տե՛ս Statement by Foreign Minister Vartan Oskanian at the 11th Meeting of Foreign Ministers of the Black Sea Economic Cooperation, Yerevan, April 30, 1998. http://www.armeniaforeignministry.am/ 28.03.2006 թ.:

[561] Տե՛ս Yalta Summit Declaration, Yalta, 5 June 1998.

առաջին դումարման Ազգային ժողովը 1998 թ. դեկտեմբերի 1-ին որոշում կայացրեց վավերացնել ՍԾՏՀ կանոնադրությունը[562]:

1999 թ. հունիսի 21-ին, ի կատարումն Ստամբուլյան ՍԾՏՀ կանոնադրության դրույթների, Սալոնիկում վերջնականապես սկսեց իր աշխատանքները ՍԾՏՀ ֆինանսական հենասյունը՝ Առևտրի և զարգացման սևծովյան բանկը: Առևտրի և զարգացման սևծովյան բանկի մասին համաձայնագիրը կնքվել էր դեռևս 1994 թ. հունիսի 30-ին Թբիլիսիում: Սևծովյան բանկում նախնական կապիտալը բաշխված է հատուկ բաժանված քվոտաներին համապատասխան: Թուրքիան, Հունաստանը և Ռուսաստանն այդ բանկի ամենախոշոր բաժնետերերն են, նրանցից յուրաքանչյուրի բաժինը կազմում է 16,5 տոկոս: ՀՀ բաժնեմասը բանկում կազմում է ընդամենը 1 տոկոս:

1999 թ. սեպտեմբերին Ուկրաինայում Նախագահ Լեոնիդ Կուչմայի նախաձեռնությամբ անցկացվեց Բալթիկ և Սև ծովերի համագործակցության գագաթնաժողովը: Գագաթնաժողովին մասնակցություն ունեցավ նաև ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը, որը, 1999 թ. սեպտեմբերի 11-ին հանդես գալով ելույթով, անդրադարձավ Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնայնություններին նշելով, որ Հայաստանի համար եվրաինտեգրման գործընթացն այլընտրանք չունի. Հայաստանը ձգտում է իր ուրույն և արժանի տեղն զբաղեցնել եվրոպական կառույցներում: Հավելելով նշվածը՝ ՀՀ Նախագահը նաև ընդգծեց, որ «ԱՊՀ և ՍԾՏՀ շրջանակներում մենք կարողացել ենք տարածաշրջանային համագործակցության փորձ կուտակել: Թույլ տվեք նշել, որ այստեղ՝ Ցալթայում, կայացած վերջին ՍԾՏՀ գագաթնաժողովի ընթացքում սկսվեցին կոնկրետ ծրագրերի և նախագծերի պատրաստումն ու իրագործումը»[563]:

1999 թ. նոյեմբերի 17-ին Ստամբուլում կայացավ ՍԾՏՀ անդամ պետությունների և կառավարությունների գլուխների հերթական գագաթնաժողովը, որը, փաստորեն, նախորդեց ԵԱՀԿ ստամբուլյան գագաթնաժողովին: Գագաթնաժողովի մասնակիցներն ընդունեցին Ստամբուլի հռչակագիրը, որում արձանագրեցին արդեն իսկ ձևավորված կազմակերպության

---

562 ՀՀ Ազգային ժողովի 1998 թ. դեկտեմբերի 1-ի Ն-303-1 որոշումը:

563 Տե՛ս President Robert Kocharian's speech at the Baltic and Black Sea Cooperation Summit September 11, 1999, http://www.armeniaforeignministry.am/ 28.03.2006 թ.:

նվաճումները և դրա առջև ծառացած նորանոր խնդիրները: Հռչակագրում ՍԾՏՀ անդամ պետություններն ընդգծեցին, որ կիսում են այն ընդհանուր մոտեցումը, որ յոթմյա գոյության ընթացքում ՍԾՏՀ-ն մեծապես նպաստել է տարածաշրջանում խաղաղության և կայունության ամրապնդման գործընթացին՝ ելնելով այն պրագմատիկ մոտեցումից, որ տնտեսական համագործակցությունը վստահության ամրապնդման արդյունավետ միջոց է և ծառայում է որպես եվրոպական նոր ճարտարապետության հենասյուն:

2000 թ. օգոստոսի 24-ին ՍԾՏՀ Կենտրոնականյանի մասին համաձայնագիրն ուժի մեջ մտավ: Այն թույլ տվեց անդամ պետություններին հիմնել իրենց մշտական ներկայացուցչությունները, որոնք հավատարմագրված կլինեին ՍԾՏՀ-ին: Արդյունքում ձևավորվեց Մշտական ներկայացուցիչների խորհուրդը, որը պարբերաբար հավաքվում է ծրագրերի հետագա իրագործումն ապահովելու համար:

Ստամբուլում ՍԾՏՀ հավատարմագրված մշտական ներկայացուցչություն ստեղծեց նաև Հայաստանը, սակայն այդ կառույցը հանդիսացավ ավելին, քան սոսկ միջազգային կազմակերպությանն առընթեր ներկայացուցչություն: Հաշվի առնելով Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը մշտական ներկայացուցչությունը կարողացավ որոշակի իմաստով ապահովել Հայաստանի Հանրապետության ae jacto պաշտոնական դիվանագիտական ներկայությունը Թուրքիայի տարածքում[564]:

Հայաստանի Հանրապետության և ՍԾՏՀ միջև համագործակցության զարգացման տեսանկյունից մեծ նվաճում հանդիսացավ 2000 թ. նոյեմբերի 28-30-ին ՍԾՏՀ Խորհրդարանական վեհաժողովի տասնվեցերորդ նստաշրջանի անցկացումը Հայաստանում, որին մասնակցություն ունեցան ՍԾՏՀ բոլոր 11 երկրները ներկայացնող մոտ 100 պատգամավորներ, ներառյալ Թուրքիայի և Ադրբեջանի խորհրդաբանականները: Դիտորդի կարգավիճակով Երևանյան նիստին մասնակցեցին նաև Եգիպտոսի, Իսրայելի, Սլովենիայի պատվիրակները և միջազգային

---

564 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Наша безопасность основана на многих составляющих. Эксклюзивное интервью агентству "АРМИНФО" Рубена Шугаряна, заместителя министра иностранных дел. Мариам Левина, АРМИНФО, 27 января, 2005 г. http://www.arminfo.am/politika_ru-issue34.html 28.03.2006թ.:

կազմակերպությունների ներկայացուցիչները: 2000 թ. նոյեմբերի 29-ին «Նոյյան ասպան» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանն ընդգծեց, որ սա Ադրբեջանի և Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյաների առաջին այցն է Հայաստան վերջին 12 տարիների ընթացքում: Ադրբեջանի պատվիրակության կազմում էին Միլիմեջլիսի փոխխոսնակ Արիֆ Ռահիմզադեն և պատգամավոր Յաշար Ալիևը: Վեհաժողովի աշխատանքներին մասնակցում էին նաև Թուրքիայի 8 պատգամավորներ:

Ընդհանրապես, 2002 թ. հոբելյանական էր ՍԾՏՀ-ի համար, քանի որ լրանում էր Համագործակցության ստեղծման տասնամյակը: Անցյալ տասնամյակի նվաճումները և հաջողություններն ի մի բերելու նպատակով Ստամբուլյան հռչակագրի ընդունման օրը՝ 2002 թ. հունիսի 25-ին, Համագործակցության ծննդավայրում անցկացվեց ՍԾՏՀ-ի տասնամյակին նվիրված գագաթնաժողովը: Ստամբուլյան գագաթնաժողովի մասնակիցները տասնամյակի հռչակագրում արձանագրեցին, որ «Անցյալ տասնամյակի ընթացքում ՍԾՏՀ-ն ապացուցեց վստահության, ըմբռնման և համագործակցության ֆորումի իր արժեքը: Այն խթանեց իր անդամ պետությունների ժողովրդավարության, շուկայական տնտեսության և բաց հասարակության կայացման քաղաքականության նշանակալի առաջընթացը դրանով իսկ աջակցելով այսօրվա աշխարհում մեր տարածաշրջանի ավելի լավ դիրքավորմանն ուղղված ջանքերին, որում պետություններն ընթանում են դեպի ավելի մեծ շիտակություն և տնտեսական ինտեգրում»[565]:

2003 թ. ապրիլի 18-ին ՍԾՏՀ Նախարարների խորհրդի ութերորդ հանդիպումը տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում: Հանդիպմանը նախորդեց Բարձրաստիճան պաշտոնյաների կոմիտեի հանդիպումը, որը կայացավ ապրիլի 16-17-ին: Երևանյան հանդիպմանը մասնակցություն ունեցան դիտորդներ Ավստրիայից, Ֆրանսիայից, ԳԴՀ-ից, Իտալիայից և Լեհաստանից, ինչպես նաև մի շարք միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ի պաշտոնե նիստը նախագահում էր ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը: ՍԾՏՀ Նախարարների խորհրդի

---

[565] Տե՛ս Istanbul Decennial Summit Declaration "Looking Beyond Ten Years of Cooperation and Progress Istanbul, 25 June 2002.

Երևանյան հանդիպմանն ուղերձով դիմել էր ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Քոֆի Աննանը, որը հանդիպման ընթացքում նրա անունից ընթերցեց Ժնեում ՄԱԿ-ի դրասենյակի գլխավոր տնօրեն, փոխքարտուղար Սերգեյ Օրջոնիկիձեն: Երևանյան հանդիպման ժամանակ Վ. Օսկանյանը, ամփոփելով ՍՄՏՀ-ում ՀՀ նախագահության անցած վեց ամիսները, մասնակիցների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքին, որ ՍՄՏՀ-ի ծրագրերի զարգացման հիմնադրամի ստեղծումը կարևոր հիմք կարող է հանդիսանալ ընդհանուր տնտեսական նախագծերի և ծրագրերի իրագործման համար:

Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության նախարարների խորհրդի հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ Բաքվում՝ 2003 թ. հոկտեմբերի 31-ին: Հայաստանը հանդիպման ժամանակ ներկայացնում էր ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Ռուբեն Շուգարյանը: Ռ. Շուգարյանը, ելույթ ունենալով Բաքվում, նշեց, որ համատեղ ջանքերով անցած վեց ամսվա ընթացքում հնարավոր եղավ հասնել նշանակալի հաջողությունների այնպիսի կենսական նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ, ինչպիսիք են էներգետիկան, տրանսպորտը և զբոսաշրջությունը, դրական առաջընթաց արձանագրվեց նաև առևտրի և տնտեսական զարգացման բնագավառներում: Փոխնախարարն ընդգծեց նաև խորհրդարանական վեհաժողովի աճող դերը տարածաշրջանային համագործակցության զարգացման ոլորտում: Ընդհանուր առմամբ, ՍՄՏՀ-ում նախագահության անցումը Հայաստանից Ադրբեջանին որոշակի դրական ներդրում ունեցավ երկու պետությունների միջև համագործակցության ձևավորմանը՝ ապահովելով պաշտոնական հարաբերությունների որոշակի մակարդակ նաև Ղարաբաղյան հակամարտության հետ չկապված համագործակցության բնագավառում:

Չմեղանչելով ճշմարտության դեմ, այդուհանդերձ, կցանկանայինք նշել, որ շատ դեպքերում, ցավոք, Կազմակերպության գործունեության արդյունավետությունն ու հաջողություններն արտացոլվում են միայն թղթի վրա և իրականում չեն իրագործվում: Պատահական չէ, որ դեռևս 1994 թ. նախագծված Առևտրի և զարգացման սևծովյան բանկի ստեղծումը հնարավոր դարձավ միայն 1999 թ.: Անշուշտ, այս ամենի հիմքում նաև քաղաքական դրդապատճառներն էին: Այդուհանդերձ, համագործակցության ստեղծված ձևաչափը իր ճկունությամբ և առաձգականությամբ, չափազանց կարևոր է

ՍՍՏՀ անդամ յուրաքանչյուր պետության համար, ու նրանցից և ոչ մեկը չի ցանկանում, ելնելով կազմակերպության գործունեության ոչ արդյունավետ լինելու հանգամանքից, վերացնել ձևավորված յուրահատուկ բացառիկ ձևաչափը:

KHACHATUR ADUMYAN
YEREVAN STATE UNIVERSITY

CONTRIBUTION OF THE REPUBLIC OF ARMENIA TO THE CREATION AND STRENGTHENING OF THE BLACK SEA ECONOMIC COOPERATION (1992-2003)

Sumary

The paper is an overview of the Black Sea Economic Cooperation formation and strengthening, as well as the role of the Republic of Armenia in the development and transformation of this unique regional structure.

After the collapse of the USSR, the Black Sea region needed a new cooperation format. Despite numerous political problems and military conflicts, all the states of the region were well aware of the existence of issues that could not be resolved without regionwide cooperation. The Black Sea Economic Cooperation initiative was aimed at modifying the situation and creating a novel format of regional cooperation.

Created originally as a regional conference, the BSEC gradually acquired features of an international structure - finally becoming an international regional organization.

The importance of Armenia's membership to the BSEC has been twofold: (i) a vehicle to seek economic cooperation with other countries in the region, and (ii) a multilateral diplomacy framework within which to establish a certain relationship with the Republics of Azerbaijan and Turkey (which, indeed, has partially filled the

gap arising out of the absence of any bilateral diplomacy between Armenia, on the one hand, and either of these states, on the other).

The Republic of Armenia - as an active participant in the BSEC - has always attached and continues to attach great importance to the cooperation in this framework. Such commitment was manifestly expressed during Armenia's chairmanship of the organization.

Even though official and academic circles often rightfully criticize this organization for being passive, none of its participants want to reject this unique format of regional cooperation, which contains enormous potential for development.

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐԴԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

(Ըստ «Գերմանիայի Հայ Ակադեմիականների Միության Տարեգրքի. 2001-2002»)

Սփյուռքահայ գաղթօջախների կյանքում տարեգրքերի հրատարակումը ինքնակազմակերպման և ինքնապահպանման հրատապ, ինչպես նաև պատմագիտական և մշակութաբանական կարևոր դեր ու նշանակություն ունեցող իրողություն է։[566]

Օտարության մեջ ազգային ինքնության պահպանման այդ մղումով է, որ դերմանարնակ մեր հայրենակից, Գերմանիայի Բոխում քաղաքի Ռուրի Համալսարանի Պատմության ֆակուլտետի Արևելյան Եվրոպայի Երկրների Նոր և Նորագույն Պատմության ամբիոնի դոկտորանտ Ազատ Օրդուխանյանը հրատարակել է «Գերմանիայի Հայ Ակադեմիականների Միության տարեգիրք. Jahrbuch des Armenisch-Akademischen Vereins – 1860 (2001-2002)» (Երևան, 2002, 260 էջ) հատորը։

Հեղինակը ներածության մեջ նշում է, որ գերմանահայ բազմաշերտ գաղութի պատմությունը տակավին խոր և համակողմանի ուսումնասիրության չի արժանացել, ուստի «...գաղութի անցյալի ու արդի վիճակի ուսումնասիրման գործը նախ և առաջ օրվա հրամայականի պես անհրաժեշտ է տեղի հա-

---

566 Ինչպես՝ Սերոբեան Մ., Ամերիկահայ տարեցոյցը, Պոստոն, 1912-1913; Աճեմեան Լ., Եգիպտահայ տարեցոյցը, Գահիրէ, 1913-1917; Ֆրանսահայ տարեգիրքը, Փարիզ, 1926-1928; Յունահայ տարեցոյցը, Աթէնք, 1927-1928; Գարագաշ Յ., Պիոնեան Կ., Պարսկահայ տարեցոյցը, Թեհրան, 1927-1930; Պուլկարահայուն տարեցոյցը, Պլովտիվ, 1935; Եիրիքեան Լ., Դամասկահայ ամենուն տարեգիրքը, Դամասկոս, 1958; Գեղարդ. Սուրիահայ տարեգիրքը, Հալէպ, 1975-մինչև օրս և այլն։

մայնքային, գիտամշակութային ու աղգային-հասարակական կյանքը կազմակերպական նոր որակի բերելու համար»:[567]

Ա. Օրդուխանյանը տարեգրքի հրատարակման նպատակն է համարում նաև «զորաշարժի» ենթարկել և արդյունավետ ու նպատակային գործունեության շուրջ համախմբել գերմանահայ ուսանողությանն ու երիտասարդ մտավորականներին, նրանց ներգրավել գաղութային կառույցների աշխատանքին, ինչպես նաև ապահովել հատկապես վերջին 10-15 տարիների ընթացքում Հայաստանից տեղափոխված և ավանդաբար Գերմանիայում ապրող հայերի համերաշխ գործակցությունը: Տարեգրքում Ա. Օրդուխանյանը պատմագետ-հետազոտողին հատուկ խնամքով ներկայացրել է Գերմանիայի հայ գաղութի ձևավորման ու զարգացման պատմական ուրվագիծը 7 որոշակի շրջափուլերով. 10/11 դդ. – 19 դ. կես, 19 դ. կես – 1915 թ., 1915 – 1939 թթ., 1939 – 1945 թթ., 1945 թ. – 1950-ական թ. սկիզբ, 1950 – ական թ. սկիզբ – 1960-ական թ. կես, 1960-ական թ. կես – 1990-ական թ. վերջ:[568] Պատմական այս ժամանակագրությունը ներառում է տարբեր զբաղմունքների տեր հայ առաջին պանդուխտ անհատների և ընտանիքների, ապա ուսանողների, տնտեսական ու քաղաքական հետապնդումների ենթարկված տարագիրների, Հայոց ցեղասպանությունից մազապուրծ գաղթականների, Հայաստանի խորհրդայնացման հետևանքով վտարանդվածների, Երկրորդ աշխարհամարտի ռազմագերիների և հայրենազուրկ հայերի, ինչպես նաև Թուրքիայից, Իրանից, Մերձավոր Արևելքի երկրներից, իսկ վերջերս նաև Հայաստանից և նախկին Խորհրդային Միության հանրապետություններից արտագաղթած հայերի հոսքը դեպի Գերմանիա: Ներկայումս ամբողջ Արևմտյան, Հյուսիսային և Հարավային Եվրոպայի երկրների հայ գաղութների շարքում Գերմանիայի հայությունն իր 35.000-40.000 թվաքանակով Ֆրանսիայի հայ գաղութից հետո զբաղեցնում է երկրորդ տեղը:

Գերմանիայի ժամանակակից հայ գաղութը, որպես վերջին տասնամյակների միգրացիոն գործընթացների հետևանքով արդեն իսկ ձևավորված գաղութ, թեպետ կրում է եվրոպական

---

567 Օրդուխանյան Ա., Գերմանիայի Հայ Ակադեմիականների Միության տարեգիրք. Jahrbuch des Armenisch-Akademischen Vereins – 1860 (2001-2002), Ե., 2002, էջ 12:

568 Նույն տեղում, էջ 19-20:

հայ գաղութների համանման զարգացման ընթացք, «...այնուամենայնիվ իր ձևավորման ուղու տարբեր ելևէջներում արձանագրում է նաև բավականին մեծ տարբերություններ, որոնք, ի շարս այլ առանձնահատուկ զարգացումների, սերտորեն առնչվում են նաև գերմանահայ ուսանողություն կոչվող հետաքրքիր երևույթի հետ», ընդ որում «Գերմանիայում հայ ուսանողության ներկա պատկերը հար և նման է գերմանահայ գաղութի ընդհանուր պատկերին...», - գրում է հեղինակը:[569]

Ի տարբերություն ԱՄՆ-ի, Մերձավոր ու Միջին Արևելքի և Սփյուռքի այլ հայաշատ գաղութների, Գերմանիայի հայերը, այդ թվում նաև ուսանողները, համախմբված տեղաբաշխում չունեն, այլ տարածված են երկրի տարբեր քաղաքներում ու ավաններում: Հետևաբար դժվար է ոչ միայն նրանց համախմբելն ու միություններ կազմակերպելը, այլ նաև Գերմանիայում ապրող հայերի և մասնավորապես հայ ուսանողության թվի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրություն ունենալը: Նախնական տվյալներով ներկայումս Գերմանիայի 200-ից ավելի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են տարբեր երկրներից ժամանած ավելի քան 750-800 հայ ուսանող և դոկտորանտ (ասպիրանտ), իսկ նրանց առավելագույն համախմբումը այս կամ այն համալսարանում կազմում է 20-25 անձ:[570]

Թվաքանակի սակավության, ընդարձակ Գերմանիայով մեկ տարածված լինելու, ինչպես նաև հայ երիտասարդի անհատապաշտական բնավորության ու լեզվամտածողության ուրույն մշակույթներ ներկայացնելու հանգամանքները օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարություններ են ստեղծում երկրի հայ մտավորականության համախմբման համար: Հեղինակը հայ մտավորական երիտասարդության կազմակերպման դժվարություններից է համարում նաև Հայաստանից և նախկին Խորհրդային Միության հանրապետություններից եկած հայ ուսանողության նվազ հակվածությունը համայնքային կամ ազգային-հասարակական կառույցներ ստեղծելուն, քանի որ ի տարբերություն Սփյուռքի իրենց արևմտահայ տարեկիցների, որոնք տակավին մանկապատանեկան տարիներից արդեն ակումբահամայնքային կյանքի դպրոց են անցել՝ մասնակցելով ազգային, համայնքային, կուսակցական համապատաս-

---

[569] Նույն տեղում, էջ 19, 21, 22:
[570] Նույն տեղում, էջ 22:

խան կառույցների աշխատանքներին, արևելահայ երիտասարդությունը գերազանցապես զուրկ է եղել համայնքային կամ հասարակական կառույցներում աշխատելու փորձառությունից:

Կազմակերպմանը խոչընդոտող հանգամանքներից են նաև գերմանական համալսարանական համակարգի աշխարհագրականորեն ոչ կենտրոնացած լինելը և ուսանող-երիտասարդության հարաշարժ լինելը: Բացի այդ, Գերմանիայում գործող հայկական կազմակերպությունները (բացառությամբ Գերմանահայոց Կենտրոնական Խորհրդի և Քյոլնի Տիկնանց Միության), համայնքային ու եկեղեցական կառույցները, հակառակ նյութական հնարավորությունների առկայության, չունեն ուսանող երիտասարդական շարժմանը նպաստող ծրագրեր: Այս առումով հեղինակն ահազանգում է. «...Գերմանահայության համար այսօր օդի պես անհրաժեշտ է հայ ուսանողներին և երիտասարդ մտավորականներին աջակցելը և նրանց դեռևս միակ միավորմանը՝ ՀԱՄ-ին, զարկ տալը, այլապես վաղը...առանց կազմակերպված ներուժի, գաղութը չի ունենա իր գոյատևման ամենակարևոր երաշխիքը՝ հայ համայնքային մտավորականությունը, որը դերմանահայության ուծացման դեմ պայքարի առաջին պատնեշը պիտի լինի»:[571]

Հեղինակը ժամանակագրական վերլուծությամբ ներկայացնում է Գերմանիայում հայ ուսանողության անցած ուղու պատմական ուրվագիծը՝ սկսած XIX դ. կեսից մինչև ներկա ժամանակները, և նշում, որ դեռևս 1860-ական թթ. Գերմանիայում ուսանող հայ երիտասարդների կողմից միավորվելու առաջին փորձերն են կատարվել: Եթե XIX դ. երկրորդ կեսին և XX դ. առաջին քառորդին հայ երիտասարդները նախընտրում էին ուսանել հիմնականում Գերմանիայի Լայպցիգ, Բեռլին, Ենա, Հալլե, Դրեզդեն, Մյունխեն, Մարբուրգ և Հայդելբերգ քաղաքների համալսարաններում, ապա այժմ երկրի գրեթե բոլոր համալսարաններում կան հայ ուսանողների զգալի (Բեռլին, Բոխում, Մյունխեն, Ֆրանկֆուրտ, Քյոլն, Համբուրգ, Լյուբեկ) և հետզհետե ստվարացող (Ավեն, Ֆրայբուրգ, Թրիեր, Հանովեր, Մարբուրգ) համախմբումներ, սակայն այլևս բացա-

---

[571] Նույն տեղում, էջ 27, 28:

կայում է նախկինի նման մի քանի կրթօջախներում ուսանելու նախապատվություն տալու ավանդույթը:[572]

Միաժամանակ, եթե XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին Գերմանիա ուսանելու էին մեկնում հիմնականում ռուսական կայսրությունում բնակվող արևելահայերը (Շուշի, Թիֆլիս, Բաքու, Նոր Նախիջևան, Երևան, Շամախի, Ախալքալաք-Ախալցխա, Արդվին և այլն) և սակավաթիվ էին օսմանյան կայսրությունից ժամանած արևմտահայերը (Կ. Պոլիս, Էրզրում, Վան և այլն), ապա 1920-1950 թթ. դադարին հաջորդած ժամանակաշրջանում ընդհուպ մինչև մեր օրերը, ակտիվացել է սփյուռքահայ տարբեր գաղթօջախներից (Պարսկաստան, Սիրիա, Լիբանան, Թուրքիա, ԱՄՆ, Ֆրանսիա, Հունաստան, Բուլգարիա, Իրաք և այլն), ինչպես նաև նախկին Խորհրդային Հայաստանից և ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից հիմնականում դեպի նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն, ապա հատկապես 1990-ական թթ. սկսած, Հայաստանի Հանրապետությունից դեպի միացյալ Գերմանիա ուսանելու մեկնող հայ երիտասարդների հոսքը: Այնպես որ, այսօր Գերմանիայում ուսանող հայ երիտասարդությունն իրենից ներկայացնում է բազմաշերտ հավաքականություն, որն, ըստ հեղինակի, «...բնորոշվում է, ոչ միայն նրա աշխարհագրական գործոնով, այլ շատ հաճախ նաև ղրանով պայմանավորված աշխարհայացքային և լեզվամտածողության, տարբեր երկրներում ձեռք բերած սոցիալ-քաղաքական կողմնորոշմամբ և իրենց վրա կրող իրարից լրիվ տարբեր մշակութային ազդեցություններով: Այդ հստակ արտահայտված տարբերությունները, մի կողմից, հարստացնում են դերմանահայ ուսանողությունն կոչվող ընդհանուր երևույթը, մյուս կողմից չափազանց դժվարացնում նրա կազմակերպչական կառույցների ստեղծման ու համատեղ աշխատանքների գործը»:[573]

Հեղինակը, ներկայացնելով Գերմանիայում հայ ուսանողության դիմագրաված ֆինանսատնտեսական և բարոյահոգեբանական դժվարությունները, անդրադարձել է նաև արևելահայ և արևմտահայ լեզվամշակութային փոխըմբռնման և փոխհարաբերությունների հարուցած դժվարություններին, որի արդյունքում հայ ուսանողությունը նախընտրում է ընկերային հարաբերություններ հաստատել իրեն հարազատ լեզ-

---

[572] Նույն տեղում, էջ 30-31:
[573] Նույն տեղում, էջ 33:

վամշակութային հայկական ընդհանրությունների հետ: Ընդհանուր առմամբ, «...մյուս ազգերի ուսանողները չափազանց հարևանցիորեն են ներկայանում նրանց առօրյա կյանքում»:[574]

Վերջին 20-25 տարիների ընթացքում հայկական Սփյուռք ունեցող որոշ երկրներից և Հայաստանից դեպի Գերմանիա շարունակվող արտագաղթի արդյունքում իր վերջնական ձևավորման հանգրվանին հասած դերմանահայ գաղութում նկատելի է դարձել դերմանահայ մասնագիտական կառույցների կազմավորումը: Այդպիսիններից է 2001 թ. հունվարի 7-ին Բոխումում վերաբացված Գերմանիայի «Հայ Ակադեմիականների Միություն-1860» գիտաուսումնամշակութային կազմակերպությունը (նախագահ՝ Ա. Օրգուիանյան), որն այժմ դերմանահայ կազմակերպությունների մեջ ամենաբազմանդամներից ու ամենագործունյաներից մեկն է:[575] ՀԱՄ-ը, որպես 1860 թ. Գերմանիայում (Լայպցիգ) գործած և երբեմնի աշխույժ ուսանողական-ակադեմիական կյանք ունեցող (Գերմանիայում են ուսանել Գրիգոր և Անդրեաս Արծրունի եղբայրները, Կոմիտասը, Ավետիք Իսա-Հակյանը, Մանուկ Աբեղյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը և այլոք) համանուն միության իրավահաջորդ ու ավելի քան 140-ամյա հարուստ ավանդույթների շարունակող, նպատակ ունի «...վերակենդանացնել դերմանահայ ուսանողության պատմական հարուստ ավանդույթները և փորձել հնարավորին չափ կազմակերպել հայ ուսանողության և երիտասարդ մտավորականների ստեղծագործական և հասարակական կյանքը Գերմանիայում»:[576]

ՀԱՄ-ը ունի եռաշերտ կառուցվածք. անդամագրում է կազմակերպության հիմնական առանցքը հանդիսացող Գերմանիայի, ինչպես նաև սփյուռքահայ տարբեր գաղթօջախներից և Հայաստանից ժամանած բարձր դասարանների դերմանահայ աշակերտներին, ուսանողներին, ինչպես նաև երիտասարդ մտավորականներին, որպեսզի համատեղ աշխատանքի ընթացքում հնարավոր լինի ապահով հիմքերի վրա պահել իրարահաջորդ սերունդների գործունեությունը «պահպանելու համար երեկվա և այսօրվա հայ ուսանողության կապը»:[577]

---

[574] Նույն տեղում, էջ 35:
[575] Նույն տեղում, էջ 41, 42:
[576] Նույն տեղում, էջ 221, 223:
[577] Նույն տեղում, էջ 131, 221:

Միությունը ձգտում է ակադեմիական հենքի վրա միավորել դաղութահայ կյանքի կառույցներից հեռու մնացած նախկին հայասաանարնակներին, նրանց կարողություններն ու հնարավորություններն ուղղել գերմանահայ գաղութի համախմբմանը, ընդհանուր զարգացմանն ու հայ-գերմանական բարեկամական հարաբերությունների ավելի ընդլայնմանն ու խորացմանը առավել իմաստալից ու բովանդակալից դարձնելու համար նրանց ուսումնառության տարիները Գերմանիայում: Միությունն իր գործունեության կարևորագույն խնդիրներից մեկն է համարում նաև լայնակի կապերի հաստատումը Գերմանիայի գիտաուսումնական և մշակութային համակարգի տարբեր կառույցների հետ՝ դառնալով կապող օղակ Գերմանիայի և Հայաստանի համապատասխան հաստատությունների միջև:[578]

ՀԱՄ ջանքերով Բոխումում գործում է հայկական մեկօրյա դպրոց, ուր դասավանդում են հայերեն (գրել, կարդալ), հայոց պատմություն, հայ գրականություն, Հայաստանի աշխարհագրություն:[579]

Միության մշակած գործունեության ծրագրերի մեջ է մտնում նաև տարբեր երկրներից Գերմանիայում սովորել ցանկացող հայ երիտասարդներին ուսուցման հետ առնչվող համապատասխան տեղեկատվություն, խորհրդատվություն տրամադրելը, դիմորդների գործերի ընդունելը, ֆինանսական, իրավաբանական, բժշկական ապահովագրության, կեցության, աշխատանքի տեղավորման և բազմաբնույթ այլ հարցերի կարգավորմանն աջակցելը, ինչպես նաև աշխարհի տարբեր կողմերից բազմալեզու հայաշունչ գրականության ձեռքբերումը և Գերմանիայում տարածումը:

Նորաստեղծ ՀԱՄ-ը հաջողությամբ իրականացնում է ուսումնամշակութային միջոցառումների մի ամբողջ շարք. միությունն արձագանքում է համազգային գրեթե բոլոր ձեռնարկներին, կազմակերպում Սփյուռքի, Հայրենիքի և օտարազգի մտավորականների ու մշակույթի գործիչների հետ հանդիպումներ, ձեռնարկում ուղևորություններ դեպի Եվրոպայի հայկական համայնքներ, ինչպես նաև հոգում գերմանահայ երեխաների ու պատանիների ամառային ուսում-

---

[578] Նույն տեղում, էջ 44, 46:
[579] Նույն տեղում, էջ 51, 52:

նամշակութային հանգիստը տեղի ամառային ճամբարներում, անց կացնում Ամանորյա ճոխ հանդիսություններ և այլն:[580]

Գերմանիայի Հայ Ակադեմիականների Միության ամենամյա գործունեությունը լուսաբանող տարեգրքից բացի ՀԱՄ-ը սկսել է հրատարակել նաև միության շնորհալի անդամների ստեղծագործությունները ներկայացնող պարբերական մատենաշար:

Ա. Օրղուխանյանի հեղինակությամբ լույս տեսած «Գերմանիայի Հայ Ակադեմիականների Միության տարեգիրքը» արժեքավոր ներգրում է հետզհետե հայաշատ դարձող եվրոպական այդ գաղութի, որպես արդի Սփյուռքի մի հատվածի ներհամայնքային կյանքն առարկայորեն լուսաբանելու և պատմական ընդհանուր ուրվագիծը ներկայացնելու, օտար ափերում ազգային ինքնության բացահայտման ու պահպանման ուղղությամբ: Այն ունի նաև պատմագիտական և սկզբնաղբյուրային բացառիկ արժեք ու նշանակություն գերմանահայոց արդի պատմությանն առնչվող փաստավավերագրական նյութեր տրամադրելու առումով: Մնում է հուսալ, որ Գերմանիայի Հայ Ակադեմիականների Միությունը կզորանա և կդառնա համայնքը համախմբելու առաջնորդող և Մայր Հայրենիքի հետ կապերը սերտացնող այն մտավոր ներուժը, որը ճուլման ու օտարացման համայնակուլ միջավայրում իր գործունեությամբ և հրատարակություններով կշարունակի իրականացնել հայապահպան ու ազգանպաստ օրինակելի առաքելություն:

---

[580] Նույն տեղում, էջ 56-61:

KNARIK AVAKIAN
Institute of History, NAS RA

THE ROLE OF STUDENTS AND YOUNG INTELLECTUALS IN THE FORMATION OF THE MODERN ARMENIAN COMMUNITY OF GERMANY
(According to the "Yearbook of the Union of the Armenian Academicians' of Germany. 2001-2002")

Summary

In the life of Diaspora communities the publication of yearbooks has self-organizing and self-preserving function, as well as historical and cultural important role and meaning.

The modern Armenian Community of Germany, which has been reorganized as a result of migration processes of the last decades, along with the general similarities with other European Armenian communities, has its own, unique peculiarities, which are closely related with the Armenian student life in Germany. The Armenian students (more than 800 in number) are spread in over 200 higher educational institutions of Germany (Berlin, Bochum, Munich, Frankfurt, Koln, Hamburg, Lübek, as well as Achen, Fraiburg, Trier, Hanover, Marburg, etc.), enclosing approximately from 20 to 25 people per university. Nowadays Armenian youth of Germany present a multilevel entity with geographical (Iran, Syria, Lebanon, Turkey, USA, France, Greece, Bulgaria, Iraq, as well as post-Soviet countries, etc.) and socio-political variety and diverse mentality. Subsequently, the mentioned above multiplicity is both enriching the entire German-Armenian student and intellectual life, at the same time hampering its joint organizational and cooperative activities.

Our compatriot from Germany, young historian Asat Ordoukhanian, driven with the purpose to preserve the national identity in abroad, has published the presented volume: *"Yearbook of the Union of the Armenian Academicians' of Germany. Jahrbuch*

des Armenisch-Akademischen Vereins – 1860 (2001-2002)" (Yerevan, "Zangak-97," 2002. ISBN 99930-2-529-1, 260 p. + viii).

In this bilingual (in Armenian and German) Yearbook the author presents the general outline of the history and student life of the Armenian Community of Germany, the effective educational, academic, cultural, public, community nation-preserving activities of the recently reopened "Union of the Armenian Academicians' of Germany-1860," as well as objectively analyzes the Armenia-Diaspora relations, the assimilation and acculturation processes that are taking place particularly in the Armenian Community of Germany and makes historico-political conclusions.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. **Խաչատրյան Վ.**
Հայոց հին պետականության կառուցվածքի հարցը 4

2. **Հարությունյան Գ.**
Հայոց կաթողիկոսության դավանաբանական
կազմակերպման խնդիրները ԺԴ դարի առաջին կեսին 13

3. **Մաղալյան Ա.**
Վարանդայի Մելիք-Միրզաբեկի մահապատժի
պատճառը 30

4. **Մալոյան Ա.**
Լ.- Ֆ. Ֆերիեր-Սովբեֆի տեղեկությունները
Տրապիզոնի մասին (XVIII դ. վերջին քառորդ) 37

5. **Ամիրջանյան Հ.**
Ռուսական կայսրության քաղաքականությունը Լոռիում
XIX դ. առաջին երեսնամյակին 47

6. **Հարությունյան Գ.**
1856 թ. «Հւսթքը Հյումայունը» և
արևմտահայերի Ազգային Սահմանադրությունը 55

7. **Ստեփանյան Գ.**
Համառոտ ակնարկ Շամախու թեմական
դպրոցի պատմությունից (XIX դ. – XX դ. սկիզբ) 67

8. **Տոնոյան Գ.**
Ռուս-ֆրանսիական դաշինքը և Հայկական հարցը
XIX դ. 90-ական թվականներին 75

9. **Բոյաջյան Հ.**
Պողոս Նուբարի և Ազգային պատրիարքարանի
տարածայնություններն Արևմտյան Հայաստանի
բարենորոգումների ծրագրի շուրջ (1913 թ.) 84

10. **Խոսրոևա Ա.**
Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին 94

11. **Հովհաննիսյան Լ.**
Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1915 թվականին 108

12. **Ասրյան Ա.**
Վանի նահանգապետությունը (1915 թ. մայիսի 7-հուլիսի 18) հայոց նորագույն պետականության նախատիպ 118

13. **Ավետիսյան Ս.**
Սոցիալ-տնտեսական իրադրությունը Հայաստանում 1918-1920 թթ. և Ամերկոմի առաջին քայլերը հանրապետությանը օգնելու ուղղությամբ 132

14. **Պետրոսյան Գ.**
Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական դրությունը. հարաբերությունների վերականգնումը Ռուսաստանի հարավի հետ (1919թ. հունիս-դեկտեմբեր) 141

15. **Պողոսյան Ս.**
Կիլիկիայի հարցը 1920 թ. Սևրի պայմանագրից հետո 166

16. **Խաչատրյան Կ.**
Հայաստանը Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ կազմավորման գործընթացում 1921-1922 թվականներին 179

17. **Վիրաբյան Հ.**
Խորհրդային Հայաստանում արդյունաբերական կադրերի պատրաստման պատմությունից (1920-1930-ական թվականներ) 199

18. Ալեքսանյան Հ.
Հայերն Ուրալում, Սիբիրում և Հեռավոր
Արևելքում XX դ. 20-ական թվականներին 212

19. Գրիգորյան Հ.
Արցախահայերի մասնակցությունը Կուրսկի
ճակատամարտում /1943 թ. հուլիսի 5 - օգոստոսի 23/ 229

20. Հակոբյան Տ.
Պետաշինարարական և քաղաքական գործընթացները
ԼՂՀ -ում 1992 թ. հունիս-օգոստոս ամիսներին 239

21. Ադումյան Խ.
Հայաստանի Հանրապետության մասնակցությունը
Ամոնյան տնտեսական համագործակցության
ստեղծմանն ու կայացմանը (1992-2003 թթ.) 249

22. Ավագյան Ք.
Ուսանողության և երիտասարդ մտավորականության
դերը Գերմանիայի արդի հայ համայնքի ձևավորման
գործում (Ըստ «Գերմանիայի Հայ Ակադեմիականների
Միության Տարեգրքի. 2001-2002») 259

CONTENTS

1. Khachatryan V.
The problem of the structure of the ancient Armenian Statehood 4

2. Harutyunyan G.
The problems of the confessional organization of the Armenian Catholicate in the firts half of the 14th century 13

3. Maghalyan A.
The cause of the execution of Melik-Mirzabek of Varanda 30

4. Maloyan A.
The facts about Trebizond by L.F. Ferrieres-Sauvebocf (The last quarter of the 18th century) 37

5. Amirjanyan H.
The policy of the Russian Empire in Lory in the first three decades of the 19th century 47

6. Harutyunyan G.
"Hatt-i-Humayun" of 1856 and the National Constitution of Western Armenians 55

7. Stepanyan G.
From the history of the eparchial school of Shamakhi (the 19th c. – the beginning of the 20th century) 67

8. Tonoyan G.
The Russian - French alliance and the Armenian question in the 90s of the 19th century 75

9. Boyajyan H.
Disagreements of Poghos Nubar and the National Patriarchate concerning the program of the reforms of Western Armenia (1913) 84

10. Khosroeva A.
The Genocide of the Assyrians in the Ottoman Turkey during the World War I 94

11. Hovhannisyan L.
The Question of the autonomy of Western Armenia in 1915 108

12. Asryan A.
The provincial governorship of Van (May 7-July 18, 1915) – an archetype of the Armenian modern statehood 118

13. Avetisyan S.
Social-economic situation in Armenia in 1918-1920 and the first steps of the American Committee to help the 132

14. Petrosyan G.
Military-political state of the Republic of Armenia. Restoration of relations with the South of Russia (June-December, 1919) 141

15. Poghosyan S.
The question of Gilicia after the conclusion of the Sevres Treaty (1920) 166

16. Khachatryan K.
Armenia in the processes of the formation of the Transcaucasian Federation and the USSR in 1921-1922 179

17. Virabyan H.
From the history of training of the industrial specialist in Soviet Armenia (the 1920-1930s) 199

18. Aleksanyan H.
Armenians in Ural, Siberia and Far East in the 20s of the 20th century 212

19. Grigoryan H.
The participation of Armenians from Artsakh in the Kursk battle (July 5-August 23, 1943) 229

20. Hakobyan T.
The State Formation and political processes in the NKR in June-August, 1992 239

21. Adumyan Kh.
Contribution of the Republic of Armenia to the creation and strengthening of the Black Sea economic cooperation (1992-2003) 249

22. Avakian K.
The role of students and young intellectuals in the formation of the modern Armenian Community of Germany (According to the "Yearbook of the Union of the Armenian Academicians' of Germany. 2001-2002") 259

СОДЕРЖАНИЕ

1. Хачатрян В.
Вопрос структуры Древней армянской государственности 4

2. Арутюнян Г.
Вопросы конфессиональной организации армянского католикосата в первой половине 14-го века 13

3. Магалян А.
Причина казни Мелик-Мирзабека из Варанды 30

4. Малоян А.
Сведения Л.-Ф. Фериер-Совбефа о Трапизоне (последняя четверть XVIII века) 37

5. Амирджанян А.
Политика Российской империи в Лори в первом 30-летии XIX века 47

6. Арутюнян Г.
«Атте Юмаюм» 1856 г. и Национальная Конституция западных армян 55

7. Степанян Г.
Краткий очерк из истории Шамахской епархиальной школы (19 - начало 20 вв.) 67

8. Тоноян Г.
Русско-французский союз и Армянский вопрос в 90-ых гг. XIX века 75

9. Бояджян О.
Разногласия между Погос Нубаром и Национальным патриаршеством по поводу Реформ в Западной Армении (1913 г.) 84

10. **Хосроева А.**
Геноцид ассирийцев в Османской Турции в годы Первой мировой войны 94

11. **Оганесян Л.**
Вопрос автономии Западной Армении в 1915 г. 108

12. **Асрян А.**
Ванская губерния (7 мая-18 июля 1915 г.) как прототип новейшей армянской государственности 118

13. **Аветисян С.**
Социально-экономическое положение Армении в 1918-1920 гг. и первые шаги Амеркома по оказанию помощи республике 132

14. **Петросян Г.**
Военно-политическое положение Республики Армения и возобновление отношений с югом России (июнь-декабрь 1919г.) 141

15. **Погосян С.**
Вопрос Киликии после Севрского договора 1920 года 166

16. **Хачатрян К.**
Армения в процессе образования Закфедерации и СССР в 1921-1922 гг. 179

17. Вирабян Г.
Из истории подготовки производственных кадров в Советской Армении (1920-1930-ые гг.) 199

18. Алексанян Г.
Армяне на Урале, в Сибири и на Дальнем Востоке в 20-ых гг. XX века 212

19. Григорян А.
Участие арцахских армян в Курсском сражении (5 июля – 23 августа 1943 г.) 229

20. Акопян Т.
Госстроительство и политические процессы в НКР с июня по август 1992 г. 239

21. Адумян Х.
Участие Республики Армения в образовании и становлении Черноморского экономического сотрудничества /1992-2003гг./ 249

22. Авагян К.
Роль студенчества и молодой интеллегенции в формировании современной армянской общины в Германии 259